


«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ», 4

ԱՐԱՄ ՄԱՆԹԱՇՅԱՆ

ԱՐԱՄԸ ՉԷՐ ԿԱՐՈՂ ՍԵՅՏՈ ԼԻՆԵԼ



ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՈՒՇԵՐ



ARMENIAN GENOCIDE MUSEUM-INSTITUTE FOUNDATION
MEMOIRS OF SURVIVORS OF THE ARMENIAN GENOCIDE, 4

ARAM MANTASHYAN
ARAM COULD NOT BE SEITO

Editor, author of the preface and references
REGINA GALUSTYAN

SOKRAT MKRTCHYAN
MEMOIRS

Editor, author of the preface and references
ROBERT TATOYAN

ФОНД “МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА АРМЯН”
МЕМУАРЫ АРМЯН, ПЕРЕЖИВШИХ ГЕНОЦИД, 4

ARAM MANTASHYAN
ARAM HE MOG BYT' SEITO

Редактор, автор предисловия и примечаний
РЕГИНА ГАЛУСТЯН

SOKRAT MKRTCHYAN
ВОСПОМИНАНИЯ

Редактор, автор предисловия и примечаний
РОБЕРТ ТАТОЯН

Yerevan Ереван
2020

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԴՐԱԾՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ», 4

ԱՐԱՄ ՄԱՆԹԱՇՅԱՆ

ԱՐԱՄԸ ՉԷՐ ԿԱՐՈՂ ՍԵՅՏՈ ԼԻՆԵԼ


Խմբագիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ
ՌԵԳԻՆԱ ԳԱԼՈՒՍՅԱՆ

Handwritten signature: *ԱՐՄ*
1104092

ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՈՒՇԵՐ

Խմբագիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ
ՌՈՒԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ



Երևան-2020

ՀՏԴ 94(479.25):82-94

ԳՄԴ 63.3(52)

Մ 254

**Երաշխավորվել է տպագրության
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի
գիտական խորհրդի կողմից**

Մանթաշյան Արամ, Մկրտչյան Սուկրատ

Մ 254

**Արամը չէր կարող Մեյտո լինել / Արամ Մանթաշյան;
Խմբագիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝
Ռեզինա Գալուստյան. Հուշեր / Սուկրատ Մկրտչյան; Խմբա-
գիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Ռոբերտ
Թաթոյան.- Եր.: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինս-
տիտուտ» հիմնադրամ, 2020.- 184 էջ.- («Հայոց ցեղասպա-
նությունը վերապրածների հուշագրություններ», 4):**

Մատենաշարում ներկայացված երկու հուշագրությունները Մեծ եղեռնի արհավիրքը վերապրած ականատեսների Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերում պահվող ձեռագիր վկայություններից են:

Արամ Մանթաշյանի հուշագրությունը Հայոց ցեղասպանության ընթացքում ընտանիքի հետ Շապին Գարահիսարի գավառի Մշակնոց գյուղից տեղահանված մի տղայի պատմություն է: Պատանի Արամը կիսում է ցեղասպանության ժամանակ իսլամացված, ստրկացված, այնուհետև հայ ինքնությունը վերականգնած հայ երեխաների ճակատագիրը: Պատումի միջոցով նա սերունդներին է փոխանցում ինչպես իր, այնպես էլ իր նման հազարավորների փորձառությունը:

Սուկրատ Մկրտչյանը ներկայացնում է իր հայրենի գյուղի՝ Բիթլիսի (Բաղեշ) գավառի Խլաթի գավառակի Փրխուս գյուղի հայ բնակչության բնաջնջման, դրա արդյունքում իրեն և իր ընտանիքին բաժին ընկած փորձությունների պատմությունը:

Նախատեսված է պատմաբանների, ցեղասպանագետների, հոգեբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25):82-94

ԳՄԴ 63.3(52)

ISBN 978-9939-822-87-7

© «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, 2020

ԱՐԱՄ ՄԱՆԹԱՇՅԱՆ

ԱՐԱՄԸ ՉԷՐ ԿԱՐՈՂ ՍԵՅՏՈ ԼԻՆԵԼ



*Արամ Մանթաշյան
(լուսանկարը տրամադրել է Լիդա Մանթաշյանը)*

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

«Արամը չէր կարող Սեյտո լինել» հուշագրության¹ հեղինակ Արամ Միսակի Մանթաշյանը (1906-1981) ծնվել է Օսմանյան կայսրության Սեբաստիայի նահանգի Շապին Գարահիսար գավառի Սուշեհիր (Էնտիրես կամ Անդրեսա) գավառակի Մշակնոց գյուղում: Գյուղը եղել է հիմնականում հայաբնակ, 1910-ականներին ունեցել է մոտ 300 հայ տուն²: Բնակիչները զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով: Ուներ երկու եկեղեցի և մեկ վարժարան՝ 55 սանով: 1915 թ. դրությամբ պատմաբան Ռայմոնդ Գևորգյանը Մշակնոցի բնակչության թվաքանակը տալիս է 844՝ նշելով, որ այն գավառակի խիտ բնակեցված գյուղերից էր³: Կ.Պոլսի պատրիարքարանի հովանու ներքո գործող Հայ ազգային խնամատարություն կազմակերպության Շապին Գարահիսարի քննիչ Սահակ Սարգիսեանի 1920 թ. հոկտեմբերի 28-ի տեղեկագրի համաձայն Մշակնոցը. «350 տուն է բաղկացած գիւղ մըն էր, այսօր 15-18 միայն հաստատուն: Երկու եկեղեցի ունին, մէկուն 4 պատերը մնացած, իսկ միւրը բոլորովին քանդուած. դպրոցը՝ հիմնայատակ»⁴:

¹ Ձեռագիրը պահվում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերում, բաժին 8, ֆոնդ 69, թղթապանակ 56: Ձեռագրում հուշագրությունը վերնագրված է «1915 թ. հայկական կոտորածից», որը մենք նպատակահարմար գտանք փոխարինել հեղինակի տեքստից վերցրած ձևակերպմամբ, կարծելով, որ այն ավելի է համապատասխանում Արամ Մանթաշյանի պատմությանը:

² Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Քախշյան, Լ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների քառաբան*, հ. 3, հատորի խմբ. Թ. Հակոբյան (Երևան, Երևանի համալս. հրատ., 1991), 847:

³ Raymond Kévorkian, Paul Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman, à la veille du Génocide* (Paris: Les Editions d'Art et d'Histoire, ARHIS, 1992), 249.

⁴ Մատթեոս Էպիփաթեան, *Ազգային խնամատարություն, Ընդհանուր տեղեկագիր, ստացին վեցամսեայ, 1 մայիս 1919 – 31 հոկտեմբեր 1919* (Անթիլիաս, 1985), 489:

Սուշեհիր գավառակի հայ բնակչությունը տեղում սպանվում կամ տեղահանվում է 1915 թ. հունիսի երկրորդ կեսին՝ կայմական Ահմեդ Հիլմիի ղեկավարությամբ: Տեղահանվածների քարավանն անցնում էր Ակն-Մալաթիա ճանապարհով⁵: Արամը ճանապարհ է դուրս գալիս մոր և քրոջ հետ: Արժեքավոր դրվագներ ներկայացնելով գյուղի մինչցեղասպանական շրջանի կյանքից, տեղահանության ճանապարհից, պատումի բուն նյութը սկսվում է Մալաթիա քաղաքի մոտ Եփրատի Գըռքգյոզ կամուրջն անցնելու պահից: Արամն առաջ է անցնում մորից. «*Ես ջանք էի անում, որ մի քիչ գոնե հաց ձեռք ձգեմ ու հասցնեմ մորս*»: Երեխան կորչում է, մոր համար հաց գտնել չի հաջողվում: Սկսվում են 9-ամյա հայ տղայի դեգերումները Մալաթիայի քրդաբնակ գյուղերում՝ իր բոլոր հետևանքներով: Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ Օսմանյան կայսրությունում թուրքական կառավարության կողմից իրականացված հայ բնակչության ցեղասպանության ընթացքում երեխաների փորձառությանը՝ Արամ Մանթաշյանի վկայությունն ընդհանուր համատեքստում ներկայացնելու համար:

Հայոց ցեղասպանության ընթացքում հայ երեխաների (և կանանց) բռնի իսլամացումը և թրքացումը հայ ժողովրդին ոչնչացնելու նպատակով գործադրված մեթոդներից մեկն էր: Այս առումով հայ երեխաների բռնի տեղափոխումը թուրքական հասարակություն ցեղասպանությունների ընթացքում երեխաների բռնի փոխանցման դասական օրինակ է⁶: «Երեխաների բռնի տեղափոխումը մարդկային մի խմբից մյուսը» դրույթը, որպես ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման

⁵ Raymond Kévorkian, *The Armenian Genocide* (London - New York: I.B. Tauris, 2011), 459.

⁶ Այս մասին մանրամասն տես Էդիտա Գոլյան, «Երեխաների բռնի տեղափոխումը որպես ցեղասպանական գործողություն. ձևավորումից դեպի քրեականացում», *Տեղասպանագիտական հանդես* 8, no 1 (2020), 104:

մտադրությամբ իրականացվող գործողություն, ամրագրված է 1948 թ. Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայում: Ընդ որում, հանցագործության բնույթով պայմանավորված, որի նպատակը խմբի ոչնչացումն է որպես այդպիսին, անհատ երեխայի բռնի տեղափոխումը ևս դիտվում է որպես ընդհանրական գործողություն. ոչնչացնել երեխայի նախորդ, այս պարագայում հայկական ինքնությունը, դադարեցնել նրա միջոցով ազգի շարունակականությունը, և թրքացնել նրան: Հետևաբար երեխաներին «օգնելու», «փրկելու», «պաշտպանելու» որոշ եզակի դրդապատճառներն իրավական տեսանկյունից մեղմացուցիչ հանգամանք չեն դիտվում, թեև ցեղասպանությունը ժխտողների կողմից շարունակվում են ներկայացվել որպես «փրկություն»⁷:

Հայոց ցեղասպանության ընթացքում հայ երեխաների տեղափոխումը և ձուլումը թուրքական միջավայրում նախապես քննարկվել և կազմակերպվել է թուրքական ազգայնական գաղափարախոսների և կառավարության կողմից: Գործընթացը կարգավորելու նպատակով կառավարությունն ընդունել է օրենքներ, որոշումներ: Պատմաբան Արա Սարաֆյանն առանձնացնում է հայ ընտանիքներից երեխաների փոխանցման չորս տարբերակ. 1) ցեղասպանության սկզբնական շրջանում «կամավոր կրոնափոխություն» հետապնդումներից խուսափելու նպատակով, 2) թուրքական կառավարության կողմից պետական հատուկ որբանոցներում նրանց տեղադրում ձուլման նպատակով, 3) պետական հաստատությունների կողմից հայ երեխաների տեղաբաշխում թուրքական ընտանիքներում, 4) մուսուլմանների կողմից երեխաների անհատապես ընտրություն⁸: Վերջինի դեպքում

⁷ Նույն տեղում, 101:

⁸ Ara Sarafian, "The Absorption of Armenian Women and Children into Muslim Households as a Structural Component of the Armenian Genocide," in *God's*

կայսրության մուսուլման բնակչությանը թույլատրված էր ընտրել և վերցնել տեղահանության ենթարկված հայերի երեխաներին: Մուսուլման տերերը երբեմն նրանց վերաբերվում էին որպես որդեգիրների, սակայն հիմնականում հայ երեխաները տարվում էին թուրքերի, քրդերի, արաբների տները որպես ստրուկ, ստիպված էին լինում աշխատել օրվա հացի դիմաց, ենթարկվում էին դաժան վերաբերմունքի, սեռական բռնության, մահանում էին քաղցից, ծեծից: Թե՛ պետական, թե՛ մասնավոր մակարդակում բռնի իսլամացումը հայ երեխայի թրքացման նախապայմանն էր, որին հետևում էր անվանափոխությունը և հայերեն խոսելու արգելքը⁹: Հայ տղաների պարագայում այն ուղեկցվում էր պարտադիր թլպատմամբ: Ջրկվելով բարեկամներից, ազգակիցներից, հայ երեխաներից շատերը, նրանց մեջ նաև սույն հուշի հեղինակ Արամ-Մելտոն, հարմարվում էին կյանքի նոր պայմաններին, մոռանում մայրենի լեզուն, սկսում խոսել թուրքերեն, քրդերեն, արաբերեն, ընդունում նոր հասարակության կացութաձևը:

Պետք է նաև նշել, որ հայ երեխաների տեղափոխումը թուրքական հասարակություն համընդհանուր բնույթ չէր կրում: Չուլման պետական քաղաքականության նպատակը յուրաքանչյուր հայ երեխայի թրքացումը չէր: Երեխաները նպատակադրված ոչնչացվում էին, ինչպես հայ բնակչության բոլոր հատվածները: Մուշի որբանոցի այրված հայ սաները, Տրայիզոնի նահանգում բժշկական փորձարկումների ենթարկված, այնուհետև Սև ծովում խորտակված և Դեր Ջորի անապատներում քարանձավների մեջ ծխով խեղդամահ արված հազարավոր հայ երեխա-

Name: Genocide and Religion in the Twentieth Century, ed. Omer Bartov and Phyllis Mack (New York: Berghahn Books, 2001), 210.

⁹ Նարինե Մարգարյան, «Հայ երեխաների թրքացման գործընթացը Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 4, no 1 (2016), 26:

ներն այդ քաղաքականության փաստացի ապացույցն են¹⁰: Երիտթուրքական գաղափարախոսների և քաղաքական գործիչների կողմից գործընթացը ենթադրում էր «ներքին թըշնամի» հռչակված հայ տարրի որոշակի՝ տարիքով և սեռով պայմանավորված հեշտ փոփոխելի դիտվող մասի ներարկում թուրքական հասարակության և ստեղծվելիք թուրք ազգային պետության մեջ: Բռնի տեղափոխումը հետաանդում էր թուրք ազգի գենային նկարագիրը հարստացնելու¹¹, հայ երեխային վերցնելով նրա ունեցվածքը և ժառանգությունը յուրացնելու, պատերազմի ընթացքում թուրք բնակչության թվային անկումը հակակշռելու նայատակներ:

Արամ Մանթաշյանը ստրկացված, կրոնափոխված և անվանափոխված այս հայ երեխաներից մեկն էր: Ապրելու հաստատականությամբ օժտված 9-ամյա տղան մաքառել է իր յուրաքանչյուր օրվա համար, առաջնորդվելով հայրենի գյուղ վերադառնալու և մորը գտնելու հույսով: Հուշագրությունը մանրամասն ներկայացնում է հենց վերապրածի բռնի կրոնափոխումը՝ նախ շողոքորթությամբ, ապա մահվան սպառնալիքով: Այն ընթերցողին նաև ծանոթացնում է Մալաթիայի շրջանում տարբեր քույր և թուրք տերերի մոտ օրվա հացի դիմաց աշխատող հայ անվանափոխված տղաներ Տրիբուն-Օմարին, Խաչիկ-Հեյտոյին, Հայրապետ-Մուստաֆային, Վահան-Խալիլին, Առաքել-Սուլեյմանին, նրանց ֆիզիկական և հոգեբանական վիճակը, միաժամանակ ցույց տալով բարոյական երկրնտրանքները, որոնց ցեղասպանության պատճառով ստիպված էին առերեսվել հայ երեխաները: Հուշը հստակ ներկայացնում է նաև արդեն կրոնափոխ երեխայի հանդեպ մուսուլման հասարակության վերաբերմունքը. նրանց

¹⁰ Vahakn Dadrian, “Children as Victims of Genocide: the Armenian Case”, *Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր* 7 (2003), 8-9:

¹¹ Vahakn Dadrian, “The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians,” *Holocaust and Genocide Studies* 1:2 (1986), 184.

յուրաքանչյուր հերթական ծեծն ուղեկցվում էր «գլավուր օղլու» (անհավատ տղա) անվանարկությամբ, իսկ նրանց կյանքն արժեք չուներ: Եթե մուսուլման տերը որևէ սխալի դիմաց սպաներ նրանց, ապա իրավական պատասխանատվության չէր ենթարկվի: Արամը նաև վկայում է ոստիկանների կողմից հայ կրոնափոխ տղաների պարբերական հավաքման մասին: Նպատակը, թերևս, նույնիսկ այդ կրոնափոխների թվաքանակի նվազեցումն էր կայսրությունում:

Հուշագրությունում կան մասնակի դրվագներ, որոնք հատուկ ուշադրության են արժանի, ինչպես օրինակ Արամի անձնական վերաբերմունքը թուրք բժիշկների հանդեպ: Վերջիններս առանձնակի դերակատարում են ունեցել ցեղասպանության ընթացքում հայերի ոչնչացման գործում, այս նպատակի համար օգտագործելով նույնիսկ Կարմիր մահիկի հիվանդանոցները¹²: Վատառողջ լինելու պատճառով ոստիկանը Արամին խորհուրդ է տալիս Մալաթիայի հիվանդանոց գնալ: Վերջինս դաշտում ուղղակի ժամանակ է անցկացնում և վերադառնում, հուշում արձանագրելով. «*Հայի տղեն ու՛ր, հիվանդանոցն ո՛ւր, այդ երբեք գոյություն չունի, ավելի շուտ կարող է ոչնչացնեն*»:

Մի փոքր մանրամասները նաև ցեղասպանության ընթացքում հայ երեխաների բարոյական երկընտրանքները: Մույն հուշագրության օրինակով կարող ենք փաստել կրոնափոխ եղած և ստրկության մեջ պահվող հայ երեխաների ինչպես փոխօգնության, այնպես էլ փրկելու և ավտրոլիզմի հոգեբանական հակումները¹³: Մուսուլմանական տներում ապրող հայ երեխաներին բնորոշ վարքագիծ է նաև համեմատաբար անվտանգ կացարանից առաջին իսկ հնարավոր

¹² Նույն տեղում, 177:

¹³ Donald E. Miller, Lorna Touryan Miller, *Survivors: An Oral History of the Armenian Genocide* (Berkeley - Los Angeles - London: University of California Press, 1993), 186-187.

րության դեպքում փախուստի դիմելը¹⁴: Արամ Մանթաշյանը հետևում է համընդհանուր այդ վարքագծին:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ երեխաների մեծամասնությունը շատ վաղ հասակից ստիպված էր վաստակել իր ապրուստը: Վերապրած երեխաները խելացի էին, նրանք հեշտությամբ էին որոշումներ կայացնում և ռիսկի դիմում, ինչը շատ դեպքերում կարող էր հանգեցնել մահվան¹⁵: Սա մեծ մասամբ վերաբերում էր գողությամբ հաց հայթայթելուն: Այս պարագայում ևս Արամը բացառություն չէ. «Միրոս ամեն ինչ է ուզում ուտել, բայց ով կտա ինձ.... ոչ ոք, *բայց ես իմ ճարտիկությամբ ճարը գտնում էի*»: Հուշագրությունում նկարագրվող գողության բազմակի դրվագները պետք է դիտարկել այս համատեքստում և դրանք չհամարել երեխայի բարոյական արժեհամակարգի խաթարման արդյունք: Թեև Արամը գողանում էր նաև մուսուլման տերերի ցուցումով՝ նրանց շահի համար: Ակնհայտ է, որ տերերի նման ազդեցությունը կրոնափոխ երեխաների վրա երկարաժամկետ կտրվածքով կարող էր բացասական հետևանքներ ունենալ:

Այս ամենի մեջ հուշը նաև շատ հստակ, առանց գեղարվեստական հավելումների, ցույց է տալիս խնամքից զրկված երեխայի ապրումները: Նկարագրելով հերթական տիրոջ տուն նրա քրոջ և զավակների այցելությունը, Արամը գրում է. «Տնում կար ամեն տեսակի չոր մրգեր, պարտեզ տեսակներով չամիչ՝ թթի և խաղողի, ընկույզ, կորիզ և այլ չոր մրգեր: Ամեն օր իր երախաների գրպանները ցնում է, *բայց ինձ ոչ մի հատ չի տալիս*»:

Արամ Մանթաշյանի և նրա նման շատերի փրկությունը և վերադարձը հայկականությանը ազգապահպանության գերխնդիրն էր, որի լուծումը հնարավոր դարձավ միայն Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան

¹⁴ Նույն տեղում, 112:

¹⁵ Նույն տեղում, 114:

կայսրության պարտությունից և 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո, երբ ազգային ու միջազգային հումանիտար կազմակերպությունները վերսկսեցին իրենց աշխատանքները կայսրությունում¹⁶: Տեղեկանալով, որ Մալաթիայում որբանոց է բացվել, որն ընդունում է հայ երեխաների, Արամը թողնում է ամեն ինչ և գնում այնտեղ: Այստեղ, շապինգարահիսարցի մի քանի տղաներով հավաքվելով, օգնություն են խնդրում որբանոցի տնօրինությունից՝ հայրենի շրջան վերադառնալու համար: Գալով Մշակնոց, Արամը ողջ է գտնում հորաքրոջը և նրա աղջկան, որոնց հաջողվել էր փրկվել հարևան հունական գյուղում թաքնվելով: Կյանքը վայելել չհաջողվեց, ինչպես չէր հաջողվել 1915-ին: Բռնաճնշումների շարքն ընդհատելու և արժանապատիվ ապրելու լուծումն Արամ Մանթաշյանի համար դառնում է Խորհրդային Հայաստան մեկնելը: Հերթական ձերբակալությունը, այս անգամ Կիրեսունի նավահանգստում, նրան մեկընդմիջո՞ւ բաժանում է բարեկամներից: 1924 թ. Արամ Մանթաշյանը միայնակ, առանց անձնագրի, խաբեությամբ սողոսկելով Կ.Պոլսից Բաթում եկող նավը, միանում է ներգաղթյալների խմբին: Բաթում հասնելուն պես վերապրածն արձանագրում է. *«Աշխարհը իմն է արդեն, շատ եմ ուրախ, չնայած որ ոչ մի բան չունեմ, ոչ ոտնելիք, ոչ հագնելիք, ոչ քնելիք, և ո՛չ էլ դրամ»*:

Այսպիսով Արամ Մանթաշյանի հուշագրության պատմագիտական արժեքը կարող ենք ընդհանրացնել հետևյալ կետերով.

- Այն մասնավոր մակարդակում թրքացված հայ տղայի անհատական փորձառության վավերագրություն է, որը գալիս է լրացնելու պետական որբանոցների թրքացման համակարգով ան-

¹⁶ Էդիտա Գոյան, «Փրկություն հայ որբերին. Առաքել Չարբյանի հուշերը», *Ցեղասպանագիտական հանդես* 4, no. 2 (2016), 163:

ցած հայ որբերի վկայությունները¹⁷:

- Հուշը գրի է առնվել բավականին վաղ՝ 1932 թ., երբ Մանթաշյանն ընդամենը 26 տարեկան էր, ի տարբերություն բազմաթիվ վերապրածների, որոնց հուշերը պատմելուն կամ շարադրելուն հակել են իրենց զավակները կյանքի մայրամուտին: Սա է պատճառը նաև, որ մանկության հուշերը վառ են, նկարագրված են պարզ և առանց ինքնախմբագրումների:
- Հուշագրությունը նաև ցույց է տալիս հայերի ոչնչացման թուրքական պետական քաղաքականության շարունակականությունը հանրապետական շրջանում:

Տպագրության նախապատրաստելիս խնդիր էր հուշագրությունը լեզվական միաձևության բերելը, քանի որ լեզուն ո՛չ արևելահայերեն էր, ո՛չ էլ արևմտահայերեն, ինչը պայմանավորում ենք Մանթաշյանի՝ տեղահանության պատճառով թերի մնացած տարրական կրթությամբ և Խորհրդային Հայաստան շուտ ներգաղթելու փաստով: Նույնությամբ հրատարակել հնարավոր չէր ձեռագրում կետադրական նշանների գրեթե բացակայության և ուրիշի ուղղակի խոսքի առատության պատճառով: Փաստական այս վավերագրությունն ընթերցող լայն հասարակությանը հասցնելու խնդիրն իրականացնելու նպատակով ձեռագիրը կետադրվել է և ուղղվել են որոշ ակնհայտ տառախախտներ: Այնուամենայնիվ, կետադրությունը լիովին համապատասխանեցված չէ ժամանակակից հայոց լեզվի

¹⁷ Թուրքական պետական որբանոցով անցած հայ երեխաների փորձառության հետ համեմատելու և զուգահեռներ անցկացնելու համար արժեքավոր վկայություններ են պարունակում հետևյալ հուշագրությունները՝ Գառնիկ Բանեան, *Յուշեր Անթուրայի որբանոցի* (Պէրյութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1992), 199 էջ: Հարություն Ալրոյաջյան, *Խաչելության ճամփաներով: Հուշագրություն* (Երևան, ՎՄՎ-Պրինտ, 2005), 302 էջ:

կետադրության կանոններին: Լիակատար ճշգրտության պարագայում փոփոխության պետք է ենթարկվեր նաև շարադասությունը, ինչին հակված չէինք վերապրածի շարադրանքի անմիջականությունը պահպանելու համար: Տեքստը մատչելի դարձնելու նպատակով ծանոթագրվել են առանձնակի նշանակության տեղանունները¹⁸, արևմտահայերեն դարձվածքները, բարբառային և օտար ծագման բառերը, թուրքերեն արտահայտությունները, որոնք հեղինակը ներկայացնում էր հայերեն տառադարձմամբ: Որոշ նախադասությունների միտքն ավարտուն դարձնելու նպատակով ավելացրել ենք մեկական բառ ուղղանկյուն փակագծերում: Ողջ տեքստում արվել է նման վեց միջամտություն: Փոփոխության աստիճանը պատկերացնելու համար ստորև որպես օրինակ բերում ենք մեկ պարբերություն.

Handwritten signature

Հատված ձեռագրից.

Լույս է արտն բոլորը վեր էն կեցած գնացի աղախ կնոջը, էլի՛Ֆ անա, ինչէ Սէյտո, կովերը հավի վրա էն կոխել սատկեր է ուրէ, ախոռնէ, բեր տեսնեմ, վա՛խ քորանամ լափնէլէ եղեր, լավ տար ձգէ շանը լավ էլի՛Ֆ անա ես չեմ նետեր, կմաքրեմ ես կէփեմ կուտեմ, լավ դու գիտէս:

Տպագիր տարբերակ.

Լույս է արդեն, բոլորը վեր են կեցած: Գնացի աղախ կնոջ [մոտ].

- էլի՛Ֆ անա:
- Ի՞նչ է Սէյտո:
- Կովերը հավի վրա են կոխել, սատկեր է:
- Ո՞ւր է:
- Ախոռն է:
- Բե՛ր տեսնեմ:

¹⁸ Տեղանունները ծանոթագրելու համար օգտվել ենք «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» հինգ հատորներից:



- Վա՛խ, քոռանամ լամն էլ է եղեր, լա՛վ, տա՛ր ձգէ շանը:
- Լա՛վ, Էլի՛Ֆ անա, ես չեմ նետեր, կմաքրեմ, ես կեփեմ, կուտեմ:
- Լա՛վ, դու գիտես:

Հայոց ցեղասպանությունը վերապրած ակնաատեսի այս վկայությունը համալրում է ցեղասպանության փաստական վավերագրության շարքը, միաժամանակ ծառայելով որպես օրինակ աննկուն կամքի, պայքարի և ապրելու ցանկության: Ինչպես Արամ Մանթաշյանն է եզրափակում իր հուշագրությունը, իզուր անցան Արամի կայուն կամքը տապալելու և նրան Սեյտո դարձնելու թուրքական պետական ջանքերը:

Ռեգինա Գալուստյան,
*«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամի
Կրթական ծրագրերի բաժնի գիտաշխատող*

ԱՐԱՄԸ ՉԷՐ ԿԱՐՈՂ ՍԵՅՏՈ ԼԻՆԵԼ

Ես չգիտեմ ճշգրիտ չափով իմ ծննդյան թիվը: Բժշկական տվյալներով գուցե և մեկ տարով մեծ և կամ փոքր, ծնվել եմ 1906 թվին Թուրքիա, Շապին Գարահիսար, Էնտիրես և, կամ ներկա անունով, Սուշեհիրի շրջանի¹ Մշակնոց² գյուղում: Հայրս Էնտիրեսցի է, գյուղում ունենալով հարազատ, ազգական, թողեր էր քաղաքը ու փոխադրվեր է Մշակնոց գեղը՝ պայախս մոտ, և գյուղում ամուսնացնում ու տալիս են մի փոքրիկ ու գեշ տուն մը: Ես հիշում եմ, որ հայրս ծխախոտ կմառեր³, Տրապիզոնի լագերը կուգային հորս մոտ թութոն մառել կուտային: Մեր ընտանիքը գեղի մեջ ամենաաղքատ տունն էր. գեղի մեջ չենք ունեցեր անգամ մի հավ: Ես հիշում եմ իմ հորս գեղից պանդուխտության դուրս ելած օրը: Շատ փոքր էի, փողոցում խաղում էի, տուն եկա, տեսնեմ մայրս լաց էր լինում: Ըսի՝ մամ, ինչո՞ւ կուլաս, ըսավ՝ հայրդ գնաց, եավրո՞ւմ: Ես ոչինչ չզգացի և ըսի՝ իրիկունը կուգա ու վազի փողոց՝ երախայական խաղը շարունակելու:

Հայրս պանդուխտ գնալուց հետո մենք հինգ երախաներով մնացինք մորս խնամքին: Չէր կարողանում մեզ կերակրել, գնում էր գյուղացոնց ըռղատություն⁴ անելու և այդպիսով կիսափոր պահում էր մեզ: Ինձանից մեծ քույրս, որ կլիներ տասնևչորս տարեկան, ամուսնացրին հարևան գյուղ՝ Բուրք⁵. հայկական գյուղ է:

¹ *Սուշեհիր*, գավառակ (գյուղախումբ և քաղաք) Սեբաստիայի նահանգի Շապին Գարահիսարի գավառում՝ Շապին Գարահիսար քաղաքից հարավ-արևմուտք: Կոչվել է նաև Անդրեաս կամ Էնտիրես:

² *Մշակնոց*, գյուղ Օսմանյան կայսրության Սեբաստիայի նահանգի Շապին Գարահիսարի գավառի Սուշեհիր գավառակում:

³ *Մառել*, 1. տերևները ցողունից առանձնացնել, 2. ծակելով թելի վրա շարել՝ չորացնելու նպատակով:

⁴ *Ըռղատություն*, սպասավորություն, ծառայություն:

⁵ *Բուրք*, գյուղ Օսմանյան կայսրության Սեբաստիայի նահանգի Շապին Գարահիսարի գավառում:

Ես հիշում եմ այն օրը, երբ մայրս պիտի երթար ցորեն քաղելու, տանը ոչ մի բան չկար ուտելու, միայն կար մի քիչ եգիպտացորենի ալյուր: Թոնիրը վառեց աճապարանքով, շաղեց այդ ալյուրը և փակցուց թոնիրի պատերին: Այդ օրը մեծ քուրս՝ Խոնարիկն էլ էր եկեր մեզ մոտ: Ընդամենը կլիներ 9-ից 10 հատ ճատ⁶ փոքրիկ-փոքրիկ, ամենքս մեկ-մեկ հատ կերանք, մնացածը մայրս դրավ բաց սնտուկի մեջ և ինքը գնաց քաղի: Բայց մենք տունը հինգ հոգի կայինք, անոթի էինք, երախաներով ի՞նչ անեինք, ճատերը կերանք, իհարկե՞ դրանով չենք կշտացել: Իրիկուն եղավ, մույթը մոտ էր արդեն, մայրս եկավ տուն, անոթի էր ու հոգնած: Ուզեց ճատերից ուտել, տեսավ, որ բաց սնտուկի մեջ ճատ չկա, նեղացավ մեզ վրա ու ըսավ՝ մեկ հատ ալ ընծի հըմար թողեիք, անօրեններ, ու լացավ: Ի՞նչ աներ, ուրիշ ուտելիք ոչ մի բան չկար, մտավ Մանուշ մամեխս տունը: Թանապուր էին եփեր, ինքը կերեր էր, մի աման ալ մեզ համար էր բերեր:

Ես արդեն կլինեի հինգից վեց տարեկան, ինձ վարժատուն սովին, իսկ ինձանից փոքր եղբայրս՝ Հայկազը, տունն էր մնում: Ես վարժատնից կփախչեի, քեռիս՝ Գաբրելը ինձ կշալկեր, ծեծելով վարժատուն կտաներ: Քերական⁷ կկարդայի (այբբենարան) և այդպես հանկարծ մի օր ըսկսեցի կարդալ քերականը՝ ըսկզբից մինչև վերջը: Մեջը գրված էր Ա. Բ. Գ.՝ տարբեր ձևերով և ստացա առաջին տարի գիրքը⁸: Առաջին տարի գիրքն էլ նույն ձևերը վերջացրի և հաջորդ տարվա համար ըստացա երկրորդ տարի: Ես արդեն սովորելու համն առեր էի, մեր խմբի մեջ ամենալավը և ամենաուժեղը ես էի: Արդեն սկսել էինք տարբեր լեզուներով սովորել դպրոցում, սովորում էինք հայերեն, ֆրանսերեն և թուրքերեն լեզուներով:

⁶ *Ճաթ*, կորեկի կամ եգիպտացորենի հաց:

⁷ *Քերական*, հայերենի քերականության դասագիրք:

⁸ Նկատի ունի առաջին ուսումնական տարվա գիրքը:

Հազար ինը հարյուր 14-15 թ. ես ստացեր էի դպրոցից երկու դասագիրք. մեկը չորրորդ տարի, որի մեջ կար հայկական հին իշխանների անունները և նկարները, իսկ մյուսը Մեղրագետ⁹ էր: Շատ էի ուրախանում, բայց 1914 թ. պատերազմը խորտակեց մեր ամբողջ հույան ու սերը: 1915 թ. գարունն էր, դպրոցը արձակվեց ժամանակից շուտ: Գյուղի կյանքը տխուր էր, ջահելներս խաղում էինք, խաղալուց տուն եկա, որ գրքերս վերցնեմ ու կարդամ, նայեցի դետուդեն, չգտա: Մորս հարցուցի՝ ինչ ես արեր գրքերս, ըսավ՝ գրքերդ լցրել եմ փոքրիկ սնտուկի մեջ ու թաղեր եմ հողի մեջ, որ թուրքերի ձեռքը չանցնի: Մեր գեղը լրիվ հայկական գեղ էր, չկար ոչ մի թուրք ընտանիք: 1915 թ. գարնանն էր, հայերիս դրությունը հետզհետե վատանում էր: Ղարսա կողմերից թուրք մուհաճիբներ¹⁰ եկան, բաժանեցին գեղերի վրա և տների վրա: Կարճ ժամանակից հետո մուհաճիբները սկսեցին գյուղի մեջ իրենց գազանությունները անել, ձեռք ընկած ձեր տղամարդկանց և պատանիների սպանել: Այդ

⁹ Նկատի ունի կայսրության հայկական դպրոցներում օգտագործվող դասագիրքը (Մեղրագետ, Ա. գիրք (տարրական ընթացք), Լուսաղբիւր հրատարակչական ընկերութիւն, Կ.Պոլիս, 1913, 128 էջ; Բ. գիրք (տարրական ընթացք), Լուսաղբիւր հրատարակչական ընկերութիւն, Կ.Պոլիս, 1913, 160 էջ; Մեղրագետ, միջին ընթացք; Ա. տարի, Լուսաղբիւր հրատարակչական ընկերութիւն, Կ.Պոլիս, 1913, 176 էջ; միջին ընթացք, Բ. տարի, Լուսաղբիւր հրատարակչական ընկերութիւն, թ. 5, Կ.Պոլիս, տպարան Արաքս, 1913, 192 էջ; Մեղրագետ, Ե. գիրք. (Նախակրթարանի վերի երկու կարգերուն համար), Լուսաղբիւր հրատարակչական ընկերութիւն, թ. 8, Կ. Պոլիս, տպարան Սանճագճեան, 1914, 318 էջ; Մեղրագետ, Զ. գիրք. (բարձրագոյն կարգերու համար), Լուսաղբիւր հրատարակչական ընկերութիւն. (Օսնիկ-Տիրայր), Կ.Պոլիս, տպարան Սանճագճեան, 1914, 414 էջ): Իրենից ներկայացնում է հայկական, թուրքական, արտասահմանյան գրական ստեղծագործությունների ժողովածու:

¹⁰ *Մուհաճիբ*, արաբ. muḥājir – *տարագիր*. 18-րդ դարից մինչև 20-րդ դարի վերջերը Կովկասից, Բալկաններից պատերազմների հետևանքով Օսմանյան կայսրություն ներգաղթած մուսուլմաններին և նրանց սերունդներին տրված համահավաք անվանում: Օսմանյան կայսրության իշխանությունները մուհաճիբներին օգտագործել են Արևմտյան Հայաստանի էթնիկ կազմը փոփոխելու, այնուհետև՝ Հայոց ցեղասպանությունն իրագործելու մեջ:

գաղթվածների երախաներն էլ շամփուրները ձեռքներին պտտում էին գեղի փողոցներում: Վատ էր գեղի վիճակը. օրեցօր սպաննությունը շատանում էր, գազան էին դառեր մուսահիրները և տեղական թուրքերը: Արդեն գեղի մեջ էրիկ մարդ չէր մնացեր. մնացեր էին կանայք և անչափահաս երախաներ: Մի օր գեղի քեյհային¹¹ ստիպել են ճանտարմաները¹², որ սայլեր տան, որ բեռներ փոխադրեն: Սայլերի հետ գնացող չկար, ուզեցին ինձի սայլի հետ դրկեն, ես փախա, բայց իմ փոքր եղբայրս՝ Հայկազը ուրախացավ, որ սայլի նստի, և նստավ գնաց, էլ չվերադարձավ: Գեղից մի քանի ժամ այն կողմը ոչնչացրեր էին:

Երեք-չորս օրից հետո հրաման եղավ, որ գեղը պետք է դուրս գա իր տեղից, դիմադրողը կպատժվի: Գեղի գզիրը¹³ երդիկների վրա պռռում է տրված հրամանը և հաջորդ օր գեղը պետք է շարժվի: Առավոտ արևը ծագել էր արդեն ինչ հրամայվեց նորից: Գեղը լցված է ճանտարմաներով, ստիպում են, որ շուտ արեք, անգամ հնարավորություն չեն տալի, որ իրենց լրիվ պաշար վերցնեն: Բարձվեցին և դուրս եկավ գեղը, իսկ մենք ոչինչ չունենք բարձվելու: Մենք արդեն մնացեր էինք երեքս՝ ես, մայրս և փոքրիկ քույրս՝ Վառիկը: Մանուշ մամես մեզ համար էլ հաց-բան բարձավ իրենց էշին և եզան վրա, իսկ մայրս վերցրեց միայն մեկ հատ վերմակ՝ երեքիս համար: Գնում ենք բարձված և երբեմն լավված, շատ հեռու չգնացինք, մեզ մոտիկ հարևան գեղը՝ [անընթեռնելի] գեղը միացավ մեզ հետ, նաև միացավ քրդանոց գեղի հայերը: Տանում են մեզ, բայց չգիտենք ուր: Երբեմն ասում են, որ շուտով ետ կդառնաք ձեր տները. սուտ է:

¹¹ *Քեյհա*, գյուղապետ:

¹² Ժանդարմերիայի ինստիտուտի ստեղծման տարեթիվն ընդունված է համարել 1869 թ.: Այն իրականացնում էր ոստիկանության գործառույթ: 1909 թ. Ժանդարմերիան դարձել է պատերազմի նախարարության մաս: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ներքին կարգուկանոնը պահպանելուց բացի անմիջականորեն մասնակցել է պատերազմին ճակատում, ինչպես նաև հայ բնակչության տեղահանությանը ցեղասպանության ընթացքում:

¹³ *Գզիր*, պաշտոնյա, կատարածու:

Առաջին օրը հասանք Առդավիս¹⁴ կոչված գեղը. նույնպես կան հայեր: Այդ գեղի մոտով անցնում է գետ և գիշերեցինք այդ բաց դաշտում: Ժամանակը ամառ էր, չէինք ցրտում: Լույսը բացվեց, արևը ծագել էր արդեն, ինչ հրաման եղավ ճանտարմաներից՝ պատրաստվե՛ք շարժվելու: Վեր կեցավ քոչը, գնում ենք, բայց չգիտենք, թե մինչև ուր: Հասանք Ազպտեր¹⁵ կոչված գեղը և, նույնպես, գիշերեցինք այդ գեղի եզերքին: Ամեն օր, ամեն գիշեր և ամեն ժամ անպակաս էին սպաննությունները, թալանչությունը և ամեն տեսակի անբարոյականությունը: Վեր կեցանք Ազպտերից հասանք Ադվանիս¹⁶ գյուղաքաղաքը, գիշերեցինք այդ գյուղաքաղաքի մոտ և հաջորդ օրը շարունակում ենք ճանապարհը՝ կրելով ամեն տեսակի կսկիծներն ու դժվարությունները: Եվ վերջապես վեցերորդ օրն էր, որ հասանք Կեռչենիս¹⁷ կոչված գյուղաքաղաքը և գիշերը մնացինք այդ փոքր քաղաքի ավին: Այդ օրը դեռ մութը չէր ընկեր, Զարման մորաքույրս մորս ասեց. «Ծաղի՛կ, Զենեկը մեկ հատ ոսկի է գտեր, ի՞նչ անենք», և կարողացանք մանրացնել և ծախսեցինք, մի մասը մնաց:

Արևը բարձրացեր էր բավական, բայց այդ ճամբան, որ պիտի շարունակենք, ձոր էր, որի միջից հոսում էր Ղուռուչայ¹⁸ փոքրիկ գետակ, բայց շատ արագահոս էր: Ձորի երկու կողմերը բարձր բարձունքներ էին, և այդ ձորի երկու կողմերի բարձունքները պատել էին թուրքեր և քուրդեր: Որ սոսկալի էր

¹⁴ *Առդավիս*, գյուղ Սեբաստիայի նահանգի Շապին Գարահիսարի գավառում:

¹⁵ *Ազպտեր*, Ածպտեր Ներքին և Ածպտեր Վերին, գյուղեր Սեբաստիայի նահանգի Շապին Գարահիսարի գավառում: Պարզ չէ, թե վերապրածը որ գյուղն ի նկատի ունի:

¹⁶ *Ադվանիս*, գյուղ Սեբաստիայի նահանգի Շապին Գարահիսարի գավառում:

¹⁷ *Կեռչենիս*, քաղաք Օսմանյան կայսրության Էրզրումի նահանգի Երզնկայի գավառում:

¹⁸ *Ղուռուչայ*, գետ Եփրատի ավազանում, հոսում է Մալաթիայի շրջանում:

հայ քոչվորների դրոյությունը, մեր աչքերով տեսնում էինք, թե ինչ պիտի տեղա մեր գլխին: Փոքր ու մեծ թշնամիները զինված էին տարբեր տեսակի զենքերով, նույնիսկ շամփուրներով: Արևը մոտ էր կեսօրին, շարունակում ենք ճանապարհը ձորի միջով: Հանկարծ երկու կողմերից հարձակվեցան մեզ վրա, կոտորած էր, կողոպտում, սպաննում, ինչպես սոված գայլերը կմտնեն ոչխարի մեջ: Ջրի մեջ խեղդվում էին փոքրները ու ծեր կանայք: Մայրս, իմ և փոքրիկ քրոջս ձեռքերից բռնած, գետի միջով գնում ենք: Մեզ ամուր պահել էր, որ ջուրը չտանի մեզ, միևնույն ժամանակ շալակին կապած էր մեկ հատ վերմակ: Հանկարծ մի գազան հարձակվեց մորս վրա, ճչացինք, և ես, կարծես բնագղաբար ասեցի. «Մա՛ր, տո՛ւր թող տանի»: Եվ արագ կերպով քանդեց շալակից ու սվավ անօրենին, որ հեռացավ մեզնից: Այդ Ղուռուչայ ձորի մեջ լցված էր հայ մանուկների և կանանց դիակներով: Այդ ահեղ կոտորածն ու թալանը տևեց համարյա մեկ ժամից ավելի, լաց ու կոծի հաշիվ չկար: Արդեն կեսից ավելին մեռավ, քչացել ենք հայ քոչվորներս: Մեզ «պաշտպան» ճանտարմաները դադարեցրին կոտորածը և շարունակում ենք ճանապարհը: Կեսօրն անց էր, եղանակը՝ շոգ: Մենք՝ մնացածներս, հասանք այնտեղ, ուր այդ ձորը վերջանում, միանում է Եփրատ գետին: Պիտի անցնենք Եփրատ գետի կամուրջով, կամուրջի վրա կանգնած են ճանտարմաները և ստիպում են մնացած ժողովուրդին. «Ջյոբրու փարասը»¹⁹ տվե՛ք, կամուրջի փող տվե՛ք, թե չէ բոլորիդ ջուրն ենք լցնելու»: Անտեր ու հուսահատ ժողովուրդ, հավաքված կամուրջի մոտ, միաբերան գոռացին. «Ինչ ուզում եք, արեք, մենք պատրաստ ենք ջուրը լցվելու»: Այդ ժամանակ հրաման տվին կամուրջից անցնել, անցանք կամուրջով Եփրատ գետի մյուս կողմը: Ես ծարավ էի, ուզեցա գետից ջուր խմել, բայց Եփրատ գետի ջուրը կարմրավուն էր ու պղտոր, իսկ գետի ափին կարծես դիտավորյալ շարած լինեին

¹⁹ *Ջյոբրու փարասը*, թուրք.՝ köprü parası / կամուրջի փող (բառացի թրգմ.), նշանակում է «կամուրջով անցնելու տուրք»:

դիակները: Մինչև որ պիտի ջուրը խմեի, մի մարդ ըսավ ինձ. «Օղլո՛ւմ, օ սու իչիլմէզ, տանլը տուր»²⁰ (տղա՛ն, այդ ջուրը չի խմվիր. արյունոտ է): Չգիտեմ՝ ինչ մարդ էր, երևի բարեխիղճ մարդ է եղեր:

Շարունակում ենք ճանապարհը հոգնած, անոթի: Հասանք մի բարձունքի. դարվեր է, չենք կարողանում բարձրանալ: Քարոտ և նեղ ճանապարհ, խեղճ մայրս զգաց, որ չենք կարողանում բարձրանալ, շալակեց քրոջս՝ Վառիկին և հետո մի քիչ էլ ինձ շալակեց, չնայած որ ինքն էլ չէր կարողանում: Շատ դժվարությամբ վերջացրինք դարվերը: Արդեն ճանապարհը հարթ էր, իսկ ճամբի երկու կողմերն էլ պատված էր կանանչ արտերով: Այդ փոքր հարթությունը վերջացնելուց հետո դարձյալ իջանք մի ահռելի ձորի մեջ, որ լցված էր դիակներով, և գնում էինք ուղակի դիակների միջով: Ես տեսա և նայեցի. մերկացված երիտասարդ կին, որի կտրել էին երկու թևերը և գլուխը կիսամոթթած: Այդ բոլորը մեր աչքերով տեսնելով էինք գնում: Հասանք մի գյուղի մոտ, խորդուբորդ տեղ էր և գիշերը մնացինք այդտեղ: Եղանակը անձրևոտ էր, չունեինք ոչ մի միջոց պաշպանվելու: Մի փոքրիկ փոսիկ կար, որի մի կողմը մի քիչ բարձր էր կես մետրի չափով, մայրս մեզ այդ փոսի մեջ նստեցուց և իր փեշերը ծածկեց մեզ վրա անձրևից պաշտպանելու համար, չնայած որ ինքն էլ էր թրջվում: Մութ գիշեր էր, անձրևի տակ ահռելի տանջանքներով լուսացրինք:

Լույս էր արդեն բայց, դեռ անձրևը մաղում էր դանդաղ: Ճանտարման հրամայեց՝ վե՛ր կացեք, գնում ենք: Վեր կեցավ քոչը և շարունակում ենք ճանապարհը, օրեր է անցեր, ոչինչ չունենք ուտելու, միայն ճամբեքի եզերքներին կանանչ ու ծանոթ խոտեր պատահելիս ուտում ենք: Այդ պահին ես հիշեցի, որ մեզ հետ էր նաև տատիս: «Մար, - ասի, - ո՞ւր է իմ

²⁰ Թուրք.՝ oğlum, օ su içilmez, kanlıtir / հեղինակի կողմից տրված հայերեն տառադարձման մեջ առկա է տառախալ՝ *տանլը տուր*. այդ իսկ պատճառով էլ բերում ենք թուրքերեն ճշգրիտ տարբերակը՝ *kanlıtir-քանլըթըր*՝ արյունոտ է:

մամին»։ Մայրս նայեց ու արցունքոտ աչքով ըսավ. «Եավորում, մամին մատաղ եղավ մեզ համար, որ մենք սաղ մանք»։

Գնում ենք խորհուրդորդ ճամբեքով։ Հանկարծ տեսա երկու անօրեն թուրք հարձակվեցան մի հատ շատ երիտասարդ կնոջ վրա, չգիտեմ հարս էր, թե աղջիկ, բռնեցին երկու թևերից ու քաշեցին դուրս, քոչի միջից չգիտեմ մայրն էր, թե կիսուրը, դժալեն ուրուրի նման վրա հասավ, բայց տանում էին։ Երկրորդ կինը ճչալեն վրա հասավ ու փաթաթվեց երիտասարդին։ Այդ ժամանակ այդ անիծված անօրենները բաց թողին երեքին և խառնվեցան քոչի մեջ։

Բոբիկ էր ոտներնիս, ցավում է, քարի էր դիպչում, փուշ էր մտնում, ի՞նչ անեինք։ Մայրս քրչերի կտորներ փաթաթեց մեր ոտներին, որ մի կերպ պաշտպանվի քարից ու փշից։ Գնում ենք օրերով, բայց որքան պետք է երթանք, աստված գիտի։ Մի փոքր փոս տեղ էր ճանապարհը։ Կանանչոտ ճամբի եզերքին կար մեկ ծառ, լայն տարածված ճյուղերով և կանաչ ծառի տակին կանաչ խոտերի մեջ կային ոչ խոշոր քարեր։ Հենց այդ ծառի տակին էր, որ շատ երիտասարդ մայրը մորթել էին և մարմինը բաց, ծծկեր երախան դեռ կենդանի ծծում էր մոր ցամաքած ծիծը։ Ես նայեցի երկու վայրկյանի չափ այդ նկարին և նկարվեց իմ սրտի մեջ. անջնջելի նկար է և չջնջվիր ցմահ։ Իսկ մի ծեր կին ձեռքերը բարձրացրած վերև աստված էր կանչում։ Ո՞ր էր այդ պահին աստվածը։

Գնում ենք անջուր, փոշոտ ու քարոտ ճամբեքով, սովածությունը մի կողմից, թափվում ընկնում են և կամ նստում մնում են և հետզհետե վերջանում ենք։ Հասել ենք Եփրատ գետի ափին Ակն քաղաքը։ Նստանք գետի ափին, որ պիտի գիշերենք այդտեղ, շատ կանանչոտ գեղեցիկ տեղ էր։ Այնտեղ դեռ կային չգաղթված հայեր, գետի ափին կային տարբեր տեսակի խոշոր ծառներ, բայց այդ ծառների տակ նստած էին շատ ծեր կանայք, քաղցածությունից խոսել չէին կարողանում, դառել էին ոսկրացած կմախք։ Ո՞վ էր նրանց տերը, ո՞վ պիտի

Նրանց մի պատահ հաց տար, ոչ ոք և ինքնատիճքյան մեռնում էին: Ես դեռ ժիր էի, վազեցի բախչեքը²¹, միրգ հավաքեցի բավականին, լցրի ծոցերս ու բերի, կերանք երեքով և մի քիչ աչքերնիս բացվեց: Մի գիշեր մնացինք այդտեղ, ինձ ոչ հալալ²² Մանուշ տատիս էր, որ նստավ ու մնաց այդ ծառների տակ և ըսավ. «Ես թող մեռնեմ այս ծառների տակ»: Մանուշ տատիս մոտ կանգնած դիտում էի գետը: Մի երիտասարդ մայր, չգտեմ թե որքանով էր հոգներ իր կաթնակեր երախայից, որ գոնդաղ էր արեր գեղեցիկ կերպով և երկու ձեռքերի վրա բռնած հանգիստ կերպով հանձնեց Եփրատին: Բայց գետը շատ խաղաղ էր հոսում, երախան գոնդաղուկ գնում էր ջրի երեսով, դեռ չէր ընկղմվել: Ես և մայրը նայում էինք, գետի ոլորումներից էլ չտեսանք երախային: Մայրը աչքերը արբելով հեռացավ, իսկ ես դեռ նայում էի նստած ծերերին: Մութը հասավ վրա. գետի ափին ամենքը իրենց հարազատներով հավաքված մի տեղ, ոմանք քնում են, ոմանք էլ լաց են լինում, թե ուր պիտի հասնի մեր վիճակը:

Լույս բացվեց, արևը ծագել է արդեն: Ճանտարման հրաման տվեց՝ վեր կացեք, շարժվելու ենք: Քոչը սկսեց շարժվել առաջ, թե ուր, ոչ ոք չգիտի: Գնում ենք անջուր և վատ ճամբեքով, որպեսզի ծարավությունից ու սովածությունից մեռնեն, իսկ հետ մնացողին ճանտարման հրացանի խզակոթով խփում ու զցում էր: Ամբողջ օրը քայլում ու չենք օգտվել ոչ մի կաթիլ ջրից և ոչ մի պատահ ուտելիքից: Արևը դեռ մայր չէր մտեր, հասանք Արապկիր²³ կոչված քաղաքը և ճանտարման հրամայեց, որ նստեք այստեղ, գիշերը մնալու ենք այստեղ: Արևը մայր մտնելու մոտ էր, երկինքը պարզ ու փայլուն էր: Անտթի էինք, ուտելու ոչ մի բան չունեինք, մայրս գնացեր, մի քանի հատ

²¹ *Բախչա*, պարտեզ, այգի:

²² *Ոչ հալալ*, ոչ արունակից:

²³ *Արապ(բ)կիր*, քաղաք Օսմանյան կայսրության Խարբեղի նահանգի Արաբկիր գավառակում:

խաղողի թուփ էր ճարեր և մեկ հատ ալ ժանգոտ թիթեղի կտոր: Չոր խոտի մանրուքներ հավաքեց, կրակ ճարեց ու վառեց, ժանգոտ թիթեղի վրա այդ տերևները խորովեց ու կերանք, և քնեցինք բաց ու անձածկ: Լուսը բացվեց հրաման եղավ, որ վեր կացեք, շարժվում ենք առաջ: Արևը արդեն ծագել էր, քոչը սկսեց շարժվել: Այնպիսի մի տարածություն էր, խոպան ու անջուր փշախոտ, երկար էր ճանապարհը: Այդ պահին տեսնեմ Ջարման մորաքույրս մտել էր մորս թևը: Հարցուցի՝ մորաքույր, ինչո՞ւ ես մորս թևից բռներ, մայրս պատասխանեց ինձ՝ սիրտս ցավում է:

Արդեն երեկոյան մոտն էր, որ հասանք Գըռքկյոզ կամուրջը, որի տակով անցնում է Թոխմախ²⁴ գետը: Այդ գետի ափին նստած էին տարբեր տեղերից բերված հազարավոր հայեր: Այդ Մալաթիա քաղաքն էր: Ես ավելի շուտ անցա կամուրջից քան մայրս, քույրս ու մորաքույրս: Ես նայում էի բազմությանը, որը բռնած էր հսկայական տարածություն, բայց մայրս անցեր է կամուրջը, չեմ տեսեր ու սկսեցի այս կողմ, այն կողմ նայել, որ տեսնեմ մորս, բայց չտեսա, կորցրի մորս: Ես ջանք էի անում, որ մի քիչ գոնե հաց ձեռք ձգեմ ու հասցնեմ մորս: Մալաթիայի շրջակա գյուղերի թուրքերը և քուրդերը բերած հաց ու մածուն էին ծախում, ես ամեն կերպ ջանք էի թափում, որ անպայման մի բան հասցնեմ մորս: Շատ դեսուդեն վազեցի այդ հսկայական բազմության մեջ, բայց չգտա մորս և ոչ մեկին:

Շվարել էի, ինչ անելս կանգնած մտածում ու չորս կողմ էի նայում, հանկարծ մածուն ծախող չգիտիմ թուրք է, թե քուրդ. նայեց երեսիս ու ասաց. «Օղլո՛ւմ կելիրսին սէնի կեթորեղիմ եանըմա» (տղա՛ս, կգաս՝ քեզ տանեմ մոտս): Ես լրիվ չհասկացա, բայց գուշակեցի ու ասի՝ հա: Անմիջապես հաց ու մածուն տվավ ու ըսավ՝ կե՛ր: Բայց իմ ուշքս ու միտքս մորս վրա է, թե ինչ եղան: Արևը մտնելու մոտ էր, ես հուսահատված էի, թուրքը ասեց՝ դե՛հ հայդե, երթանք, ու ինձ նստեցուց իշուն

²⁴ Թոխմախ կամ Մեկաս, Եփրատ գետի աջակողմյան վտակներից:

և ինձ տանում է իրեն տուն: Օրը արդեն անցեր էր, մութ էր, բավականին գնալուց հետո ես հանկարծ հիշեցի մորս և համարձակվեցի ասելու, չնայած թուրքերեն խոսել չգիտեի, բայց մի կերպ ձեռքով հասկացրի: Թուրքը արդեն հասկացավ ինձ, թե ինչ եմ ուզում ասել, ու ասեց. «Գնա՛, ազատ եմ անում քեզ»: Եվ ինձ իջեցրեց իշուց ու բաց թողեց:

Ժամանակը կեսգիշեր էր համարյա, ես ուր պիտի գնայի, չգիտեմ, որ կողմը պիտի գնամ, բայց ուշք ու միտքս մորս հասնելն էր: Մնացի անծանոթ դաշտում, ուշ գիշեր, բայց գնում էի: Հասա մի գեղի մոտիկ ուռենիներ ու փշատի ծառների, և ծառների տակը առու էին փորեր: Չոր էր, մտա այդ առվի մեջ. ասի՝ այստեղ պաշտպանվեմ մինչև լուսանա: Քուն չունեմ. ես կորած եմ, ուր պիտի գնամ մտքերի մեջ կույ եմ եկած՝ առվի պատին փակած: Բայց այդ պահին լսում եմ կացնի հարվածի ձայն, ինչ որ ծառ են կտրում, ես ավելի եմ սոսկում, որ հանկարծ ինձ կտեսնի ու ինձ կսպանի և տառապում եմ այդ ահուդողի մեջ:

Վերջապես լուսացավ, ես վեր կեցա տեղիցս և սկսեցի գնալ դեպի այդ գյուղը: Մինչ գեղ մտնելս մի մարդ հանդիպեց ու ինձ բռնեց, բայց նա իսկույն հասկացավ, որ ես հայու տղա եմ: Տարավ ինձ գեղ մի կնոջ մոտ ու ըսավ՝ էս տղան թող մնա քեզ մոտ, մարդ չունես, արտոդ կվարի: Ինձ հարցրեց. «Կարո՞ղ ես արտ վարել»: Լրիվ չեմ հասկանում, բայց զգում եմ հա՛, ըսի, և անմիջապես հաց, մածուն բերավ ու, կե՛ր, ըսավ: Ուտելուց հետո ըսավ՝ մի քիչ քնի, հանգստացիր: Ես քնեցի, վեր կեցա, դարձյալ հաց ու մածուն տվավ, ըսավ՝ կե՛ր, ես նորից կերա, բայց միտքս մորս հասնելն է, մոր սերը տանջում է ինձ: Միտքս դրի փախչել, բայց ո՞ւր, քանի որ չգիտեմ որ կողմը պիտի գնամ, և վեր կեցա կամաց-կամաց գեղի եզերք ելա ու սկսեցի արագ վազել: Հարթ տարածություն է, թաքնվելու տեղ չկար: Վազում էի, հետ նայեցի, տեսնեմ գեղը դուրս է թափեր իմ հետևից: Ես կայծակի արագությամբ հիշեցի խաղաղ պայմաններում

դպրոցում սովորած զինվորական վարժությունները: Ճամբի եզերքին կար մի հերկված արտ, մի քանի փոքր թփուտներ հանդիպեցին և ես անմիջապես թփուտների ուղղությունից ինձ նետեցի հերկված արտի մեջ և մի խոր ակոսի մեջ պառկեցի փորիս վրա այնպես, ինչպես պետք է: Ճամբից հեռու 35-40 քայլ հազիվ լիներ և գեղացիք հասան ու անցան: Ցրվել են, ապշածի նման վազում են դեսուդեն, հրաշք էր, այս ինչ էր, ուր կորավ մեր առջևից: Վազվզում են, իսկ ես պառկած հերկած արտի ակոսի մեջ, թներս փաթաթած ճակատիս վրայի ուղղությամբ, նույնպես ոտներս պառկացրած, աչքիս տակով նայում եմ նրանց: Զինված էին փայտով, լաբաթկայով²⁵, կացնով, երկաթի կտորով և այլն, բայց այդ բոլորը գուր անցավ և իրենց մոտիկ մարդուն չկարողացան բռնել:

Երկուսից ավելի ժամեր անցան, կեսօրն անցեր էր համարյա, ոչ ոք չկար, խաղաղություն էր տիրում: Նոր ես վեր կեցա հերկի միջից ու քաղված խոզան²⁶ արտերով գնում էի մորս հասնեմ, այնինչ երկու օր անցեր էր արդեն, բավականին հեռացեր էի, ինչ տեսնեմ, մի հսկա մարդ, գլխին դրած էր քրդական երկար քյաչաներից²⁷ և գույնզգույն փուշին²⁸ էլ փաթաթած էր քյաչայի չորս կողմը: Ձեռքին կար մի հատ երկար վարոց²⁹, վազում էր դեպի ինձ: Ես կյանքիցս հույսս կտրել էի արդեն, վազեց ու կտրեց առջևս, հասավ ու բռնեց ինձ, տարավ իր հետ իրենց կալը: Կալը ծեծում են դաշտերում, ամեն դեգ իր տեղում և էրանում են³⁰ քամիով: Նստեցուց ինձ կամի³¹ վրա,

²⁵ *Լաբաթկա*, ռուս.՝ лопатка / բահ:

²⁶ *խոզան*, հատիկային կուլտուրաների բերքահավաքից հետո դաշտում մնացած արմատներով ցողունների ստորին մասը:

²⁷ *Քյաչա*, քեչա՝ թաղիք, կտորի տեսակ. այստեղ. ըստ երևույթին. դրանից պատրաստված գլխարկ:

²⁸ *Փուշի*, մետաքսյա փայլուն գլխաշոր:

²⁹ *Վարոց*, ճիպոտ, փայտ, դագանակ:

³⁰ *էրանել*, քամիարել, ցորենը հարդից բաժանելու համար քամուն տալ:

³¹ *Կամ*, հացահատիկ կալսելու գործիք:

բայց ես կամի վրա չեմ կարողանում կանգնել և սկսեցի նստած կամ քշել, իսկ ես քրդերեն բուլբուլին չգիտեի: Մալաթիայից Հասանբեկ անունով մի թուրք այդ քուրդի գյուղն էր բերեր մեկ հատ հայ կին իր երախաներով և պատվիրել էր, որ եթե այս ընտանիքին որևէ բան պատահի, սաղ գեղը կվառեն: Կարճ ժամանակից հետո քուրտը կալը կվերջացնի և ինձ ինչ կանի, ինչ չի անի, ես ինձանից ոչինչ չեմ զգում և ոչ մի ցավ: Բայց այդ հայ կինը կնկատի, որ ինձ տարան գեղին անմիջապես մոտիկ փոքրիկ ձոր կա և միջից հոսում են ակերի ջրեր, և ինձ կնետի այդ ձորի ջրերի մեջ: Հայ կինը կհետևի և կգա ինձ մոտ: Կտեսնի, որ դեռ կենդանի եմ, կհանի ինձ այդ ջրից կվազնի դեմքս կիսամերկ վիճակում և ինձ ճանապարհ ցույց կտա ու կասի՝ այս ճամբան բռնե ու գնա: Բայց ոչ մի բան չէի զգում. թեկուզ ինձ կտոր-կտոր անեն, և ես, անկախ իմ զգայնությունից, գնում եմ ցույց տրված ճամբայով: Այդ քուրտը ինձ կծեծի գազանաբար և կլցնի վրես սառը ջուր, նորից կսկսի ծեծել և արդեն՝ կվեռնի կամ մեռած է ասելով ինձ կնետի այդ ձորի մեջ: Իրիկուն է, արևը մայր է մտեր, հասա մի գյուղի, որի անունն է Հիլան: Ղրզրլբաշ թուրքեր են ապրում, համեմատաբար խղճով են մյուս թուրքերի մեջ, իս³² չեն երթում, աղոթք չեն անում, պաշտում են միայն իրենց պապերին՝ անկախ նրանից պապը ջահել է, թե՛ ծեր, միայն թե ժառանգական լինի: Հասել եմ այդ գյուղին, մութը վրա է տալի: Գեղի մի փողոցով գնում եմ, գեղի երախաները սկսում են ինձ քարկոծել «կիավուռ է»³³ ասելով, բայց ցավ չեմ զգում, որ ինձ քարերով խփում են: Մի հատ մեծահասակ բարեխիղճ կին կհանդիպի, որը ունի մի հատ տղա՝ Մուհամմեդ անունով, երդիկն են քնում: Լակոտների ձեռքից կառնի ու կտանի կտուր՝ իրեն մոտ, ճաշ կկերցնի, բայց

³² Իդ ալ սոհա կամ կուրբան բայրամ (զոհաբերության տոն), մուսուլմանական տոն, որով ավարտվում է ուխտագնացությունը Մեքքա: Տեքստում վերապրածն ի նկատի ունի հենց ուխտագնացությունը՝ «իս չեն երթում»:

³³ Կիավուռ, թուրք.՝ gâvur / անհավատ, օգտագործվում է որպես ոչ մուսուլմաններին անվանարկելու արհամարհական և ստորացուցիչ բառ:

չեմ ուտում, չեմ զգում, քանի անգամ գիշերը անկախ ինձանից կտուրից ցած եմ ընկնելիս եղեր, բայց այդ բարեխիղճ կինը ազատեր է ինձ վայր ընկնելուց: Լուսացեր է, արևը ծագեր է, ինձ ճաշ է կերցնում մի կերպ, տանիքից իջեցնում ու ճամբա է ցույց տալիս:

Գեղից ոչ հեռու փոքրիկ ձորակ կա, որի միջով անցնում է ջաղացի բավականին ջուրը: Հասնում եմ այդ ջրին և ինձ հանդիպում է ինչ-որ մի [կին]՝ հսկա բարձր բոյով ու հաստ, իսկ դեմքը՝ ահռելի տզեղ: Այդ կնոջ անունն է տելի³⁴ Մարջան, միևնույն ժամանակ գյուղի անբարոյականն է եղեր: Ընկնում եմ դրա ճանկը: Ես մերկ եմ եղեր, այդ տելի Մարջանը կվերցնի ինձ, մոտ երկու մետրի չափ բարձրություն ունեցող ժայռից կնետի ջրի մեջ, կտեսնի որ դեռ չեմ մեռել, կրկին կհանի կշարտի այդ քարոտ ջրի մեջ, բայց ես անգամ չեմ զգում ինձ, և ոչ մի բան: Դարձյալ չեմ մեռել, տեսնում է, որ դեռ վրես շունչ կա, կվերցնի երրորդ անգամը շարտելու, վրա կհանի ջաղացյանը՝ Հուսեին անունով մի մարդ: Կանապատվի տելի Մարջանին, կառնի ձեռքիցը, այդ նույն ջրում կվազնի մարմինս և կգրկի ու կտանի իրեն տուն, կյուղի մարմինս, կփաթաթի շորերով ու կպառկեցնի: Մի քանի օր այդպես կինամի ինձ և կտեսնի, որ կամաց-կամաց ուշքի եմ գալի: Այդ օրերին Իբրահիմ պապը կուզա և կտեսնի ինձ, Հուսեինը կպատմի պապին, իսկ պապը խիստ կպատվիրի, որ լավ նայեն ինձ:

Շատ կարճ ժամանակում ես առողջանում եմ և հասնում եմ նորմալ կյանքի: Անունս կնքում են Սեյտո, քրտու անուն է: Ունեին խաղողի բաղ և երկու հատ ձի: Հուսեինը պանդուխտ չգնալու համար նորջարչություն³⁵ էր անում, ձիերով բեռներ էր տեղափոխում, զանազան հեռու տեղեր գնում մինչև Մերսին, Պեսնի, Ատրջաման, Խարբերդ և Տիգրանակերտ քաղաքները, իսկ ես բաղ էի գնում, նայում էի բաղին և աշխատում մանր

³⁴ *Տելի*, թուրք.՝ *deli* / խելագար:

³⁵ *Նորջարչություն*, ծառայություն:

գործերով: Արդեն ինձ սկսեցին ստիպել, որ ինչով պիտի հասկանանք որ դուն իսլամ ես, դրա համար դու պետք է ասես և սովորես մեր աղոթքը: Երախանների հետ խաղալիս սովորեցնում էին, իսկ ես լրիվ թուրքերեն չգիտեի, դժվարանում էի ասելու: Ինձ հետ խաղացող տղերքը ասում էին. «Ով որ օխտը³⁶ կիավուտ սպաննի, նրա հոգին դրախտ կգնա, իսկ դուն դեռ կիավուտ ես, իսլամ չես»: Ամեն օր, ամեն իրիկուն ինձ կքաշեին առաջ և կստիպեին, որ ասեմ լեյլահալիլլահի Մուհամեդեռե ռեսուտ ըլլա³⁷, իսկ ես շատ էի դժվարանում, չէի կարողանում ասել, նեղանում էին ինձ վրա: Օրեր շարունակ այդպես ստիպում էին ինձ, երբեմն էլ՝ ծեծում: Մի օր տեսնեմ Հուսեյնի դռանը հավաքված են: Մահապը, գեղի մեծն է և հարուստը, բոյով մարդ էր, հագած էր արաբական, մեջը սև ու ճերմակ գծերով, գլխից հագած գործած սպիտակ թեռլիկ³⁸: Կանչեցին ինձ ու Մահապն ասաց. «Տեսնո՞ւմ ես, էս ձին է, էս էլ չուվանը³⁹, թե չասես աղոթքը, քեզ կապելու եմ ձիու ագիից, ես էլ նստելու եմ ձիան վրա ու ճրոթը քշեմ, թե կարող ես, մի ասա»: Ես լաց էի լինում միայն, բայց արժեք չունեք: Չուվանը կապեց մեջքիցս և մյուս ծայրը ձիու ագիից, կողմերից ասին, որ՝ մի՛ քշի, ասե՛, ասե՛: Վերջին անգամ Մահապը կրկնեց ու ասեց. «Ասա՛, Սեյտո՛, լեյլահալիլլահի էշվետու էննե Մուհամմեդեռե ռեսուտ ըլլա»: Եվ ես, ոչ լրիվ չափով, կարողացա ասել: Այդ ժամանակ ինդացին ու ասին՝ լա՛վ, լա՛վ, արդեն իսլամ է, ավելի լավ կսովորի, արձակեցին ձիու ագիից: Իմ դեմքին արդեն

³⁶ *Օխտը*, յոթ:

³⁷ Հայերեն տարբերակով շահադալի աղավաղված գրությունն է: Արաբերեն լատինատառ տառադարձմամբ՝ «La-ilaha-illallah-muhammadur-rasulullah», որի թարգմանությունն է՝ «չկա աստված բացի Ալլահից և Մուհամմադը նրա մարգարեն է»: Համաձայն իսլամական ավանդույթի՝ շահադալի անկեղծ կրկնությունը երեք անգամ մարդուն մուսուլման հավատացյալ է դարձնում:

³⁸ *Թեռլիկ*, տղամարդու հին արտահագուստ, որը հիշեցնում է երկար կաֆտան՝ նեղ իրանով և կարճ թևքով:

³⁹ *Չուվան*, չվան՝ թոկ, պարան:

նորախոյան ժայտ էր եկել, մոռացել էմ արդեն մոր սերը:

Անցավ մի տարի, Մեյտոն դեռ լրիվ իսլամ չէ, պետք է իսլամական օրենքը լրիվ կատարվի, սունաթ⁴⁰ պետք է անենք: Գյուղի մեջ կային մի քանի հոգի, որոնց վրա դեռ չէր կատարվել այդ օրենքը: Միացրին ինձ էլ իրենց թուրքերի հետ, կատարեցին իրենց օրենքը, բայց դրանով էլ իրենց նպատակին չեն հասնի. դրանցով Մեյտոյի (Արամի) սիրտը չի պղտորվում, հայկական արյունը լի էր ու առատ Արամի սրտի մեջ: Հավատացած են, որ Արամը արդեն հարյուր տոկոսանոց իսլամ է և ընդունած է հաք տինը⁴¹, բայց ես արդեն լեզուն տիրապետեցի կարճ ժամանակում և աշխատում եմ ինչպես իրենց որդին: Ժիր էի, գյուղի մեջ ինձ հասակակից տղերքից ոչ մեկը չէր կարող ինձ ծեծել:

Օր մը Հուսեին աղաս տուն եկած էր բեռ տեղափոխելուց, ձիանը տարի ախորը կապեցի, կեր տվի, տուն գնացի, կանչեց ինձ ու ասաց. «Մեյտո՛, խալայրն զրզրնը պուլմուշուկ»⁴²: Ես մտածում եմ, թե ինչ բան է խալան, չգիտեմ. «Մորաքույրիդ ենք գտեր, մեր մոտիկ գյուղումն է՝ Թելեթում»⁴³ և վաղը պիտի գա մեր տունը»: Հաջորդ օրը բաղումն էի, ինձ խաբար արին⁴⁴, որ տուն գնամ: Եկա և ներս մտա: Նստած էին չորս-հինգ հոգի, որ տեսա արյունը քաշեց ինձ և գնացի գիրկը նստա, սկսան աչքերից արտասուքի կաթիլները թափել: Այդ ժամանակ թույլ տվին մեզ, որ դուրս գանք ու մայրենի լեզվով խոսենք իրար հետ: Եվ դուրս եկանք, դռանը խոսեցինք ու պատմեցինք մեր գլխից անցածները: Ես հարցուցի՝ ուր մնացին մայրս ու քույրս, պատասխանեց տխուր. «Լանտերեյում արյունոտ ձորում մա-

⁴⁰ *Սուննաթ*, թլպատում:

⁴¹ *Հաք տին*, «ճշմարիտ կրոն», արտահայտություն, որը մուսուլմաններն օգտագործում են իսլամը նշելու համար:

⁴² Թուրք.՝ halayın kızımı bulmuşuk / մորաքրոջդ աղջկան ենք գտել:

⁴³ Թելեթ, գյուղ Խարբերդի նահանգի Մալաթիայի գավառում, Խարբերդ քաղաքից մոտ 36 կմ հարավ:

⁴⁴ *Խաբար արին*, լուր տվին:

հացան երկուսն էլ, իսկ ինձ էլ մի թուրք վերցրեց»։ Այդ մեզ հարևան Բուրք գեղից Մայրամ մորաքույրիս աղջիկ Ադունն էր։ Բաժանվեցինք ու գնաց իրենց գեղը՝ Թելեք։

Անցավ ժամանակ, ես հիվանդացա մալարիայով, օրեցօր թուլանում ու նիհարում եմ և միևնույն ժամանակ աչքից ընկնում⁴⁵։ Հանդիպում էի մորքուրիս աղջկա մոտ, ձմերուկ և ուտելիքներով կօգնեի, բայց ինքն էլ էր վախենում։ Միրտս միս էր ուզում, աչքս տնկած եմ արտին, վախենում եմ, որ ասեմ սիրտս միս է ուզում։ Գիտեմ, որ պիտի հայիոյեն ինձ և չտան, և մտածեցի ինչ անեմ։ Ես քնում եմ ախոռում քրքրված չուլի մեջ։ Ունենք երկու հատ հավ, որոնք թառում են մսուրի վրա։ Որոշեցի, որ հավի մեկը սատկեցնեմ։ Սկսել էր լույսը բացվել, հավերը թառած էին մսուրի վրա։ Մի փայտ վերցրի ու ուժեղ թափով զարկի հավի գլխին և անձայն վայր ընկավ մսուրից։ Լույս է արդեն, բոլորը վեր են կեցած։ Գնացի աղայիս կնոջ [մոտ]։

- Էլի՛Ֆ անա։

- Ի՞նչ է Սեյտո։

- Կովերը հավի վրա են կոխել, սատկեր է։

- Ո՞ր է։

- Ախոռն է։

- Բե՛ր տեսնեմ։

- Վա՛խ, քոռանամ լավն էլ է եղեր, լա՛վ, տա՛ր ձգե շանը։

- Լա՛վ, Էլի՛Ֆ անա, ես չեմ նետեր, կմաքրեմ, ես կեփեմ,

կուտեմ։

- Լա՛վ, դու գիտես։

Տարի աղբյուրը լվացրի, մաքրեցի, օջախը արդեն մշտական վառ է, կրակը՝ թեժ, բայց Հուսեփինը տանը չէր, ոչ էլ եղբայրը՝ Եուսուպը։ Դրանք սատկածի միս չեն ուտի իրենց կյանքում։ Ես հավը կրակի վրա խորովեցի, մաքուր գեղեցիկ տեսք ստացավ և սկսեցի ուտել։ Տեսնեմ Էլի՛Ֆ անաս նայում է ինձ, նայեց ու

⁴⁵ Աչքից ընկնել, այստեղ՝ անուշադրության մասնավել։

ըսավ՝ Սեյտո, Սեյտո, հըր մի քիչ էլ ինձ տուր համը նայեմ: Մի պուտը տվի, կերավ ու ասում է՝ օ՛հ, ի՞նչ համեղ էր: Իհարկե դա չի բուժի իմ հիվանդությունը, բայց մասամբ օգնեց իմ առողջությանս: Սիրտս ամեն ինչ է ուզում ուտել, բայց ով կտա ինձ.... ոչ ոք, բայց ես իմ ճարպիկությամբ ճարը գտնում էի:

Կալիտորի⁴⁶ մեջ մոտ երկուսուկես մետրի վրա տախտակով կտրված էր և բարձրանում են աստիճանով: Այնտեղ դրված էր դավուրման և թթվեղեն: Գիշերը ուշ ժամանակ ես վեր էի կենում և ինչ-որ ինձ պետք էր, անում էի: Մի օր էլ բարձրացա վերև, դավուրման դրած էր այդտեղ փայտից պատրաստված տուփի մեջ և վրան էլ մի քար էր դրած: Վերցրի քարը, բացի տուփը և դավուրմայի կեսից ավելին վերցրի, քարը մի կողմի ձգեցի, դավուրմայի մանրուքներից էլ դեսուղեն թափեցի և իջա: Իմ քնելու տեղը՝ փալասի մեջ, նստա ու կուշտ կերա, մնացածը առավոտյան հետս թաքուն կերպով բաղ տարա: Ամբողջ օրը ուտում էի խաղող և դավուրմա. դեռ մնացեր էր: Մի մաար իրիկունը տուն գնալիս ճամփին փշերի մեջ պահեցի, որ հաջորդ օրը բաղ գնալուց վերցնեմ, բայց՝ չգտա: Ըստ երևույթին, աղվեսներն էին կերեր: Առավոտյան Էլիֆ անան ինձ կանչեց ու ըսավ.

- Սեյտո՛:

- Ի՞նչ է, էլիֆ անա:

- Վա՛յ քոռանամ, կատուները դավուրման կերեր են, մի քիչ բան են թողեր, չորս կողմը սաղ թաթփեր են, երևի մի քանի հատ են եղեր, որ էդքան դավուրման մի քիչ են թողեր: Ամա⁴⁷, Սեյտո՛, Հուսեինին բան չսես, ինձ կսպանի:

- Չէ՛, բան չեմ ասի:

Եվ այդպես սկսեց կամաց-կամաց առողջությունս վերականգնիլ:

Մի օր ես և աղայիս հորեղբոր աղջիկ Էմինեն բաղից տուն

⁴⁶ Կալիտոր, ռուս.՝ коридор / միջանցք:

⁴⁷ Ամա, սակայն, բայց:

Էինք գալիս: Իմ ձեռքին ձի կար, իսկ արևը մայր էր մտնում: Էմիլենն ինձնից մի քիչ մեծ էր: Կես ճանապարհին Էմիլենն ըսավ.

- Սեյտո՛, արի քարկտիկ խաղանք, իսկ ով որ տարվի, նա նրան պիտի շալակի մինչև 20 քայլ պիտի տանի:

- Հըբը ձին ի՞նչ անենք:

- Ձին կապենք ծառից:

Ըսկսեցինք խաղալ և առաջին խաղում նա տարվեց և շալակեց ինձ ու տարավ նշանակված տեղը: Երկրորդ խաղում ես տարվա, մինչև որ պիտի շալակեի, ձին փախավ ու էլ չհաջողվեց շալակել: Ժամանակը մութ էր արդեն, ձին գնացեր էր տուն, իսկ ես ու Էմիլենն միասին տուն գնացինք: Հուսեին աղաս դռանը կանգնած էր և այնտեղ կար կտրված ծառի քյոթուկ⁴⁸: Հենց որ ինձ տեսավ. «Կիավոտ պապյըն սինինե...»⁴⁹ քյոթուկը վերցրեց ու զարկավ իմ կրծքին: Ես քյոթուկի հետ միասին գլորվեցա: Այդ պահին Սեվլեր տատին դուրս եկավ ու էլ չթողեց ձեռելու:

Մի քանի օրից հետո մի թուրքի տղայի հետ կազմակերպվեցինք, որ փախչենք ու Ադանա գնանք: Ես չնայած կասկածում եմ թուրքի տղին, բայց վստահ եմ ինձ վրա. որ ինձ հաղթել չի կարող: Որոշեցինք գնալ, բայց պիտի տեսնել որոշ պատրաստություն: Իմ աղայիս տունը առաջին փոքրիկ հայաթ⁵⁰ է իր շվաքով, հետո տունը, հետո ախոռը, խազինան⁵¹ և մարագը: Մինչև այդ անցնում էր արդեն հաջորդ փողոցը: Փողոցի կողմից մարագի պատի տակ թափված էր աղբը, այդ աղբի ուղղությունից թե ինչպես է եղեր, որ շունը պատը ծակեր է, հողի պատ է ու ներսը էրթի վրա ծներ է: Իսկ ես այդ քանից տեղեկություն չունեմ: Որոշել եմ, որ այդ ծակից պիտի մտնեմ

⁴⁸ *Քյոթուկ*, կոճղ, հաստ փայտի կտոր:

⁴⁹ *Թուրքերեն հայոցանք*:

⁵⁰ *Հայաթ*, բակ:

⁵¹ *Խազինա*, պահոց, մառան:

մարագը, մարագից՝ խազինա և պիտի վերցնեմ հաց, պանիր, թութուն և Եուսուպի ատրճանակը և գնամ Ադանա: Ես անցա գործի, բայց թուրքի տղին բան չեմ ասեր, միտքս փոխեր եմ, որ մենակ գնամ: Երկու թևերս երկարացրած գլխիս ուղղությամբ սուր կերպով մտա անցքը, արդեն կես մարմինս անցեր էր ներս, հանկարծ հաֆ՝ թևիցս շունը բռնեց: Այդ րոպեին իր ձագերին կերակրելիս է եղեր, և ես նույն վիճակում արագ կերպով հետ քաշվեցի: Վեր քաշեցի թևս, տեսնեմ թևիս միսը մի խորովածուի չափ պոկեր էր, որի հետքը մինչև հիմա էլ աջ թևիս մկանի ուղղությամբ հինգ սանտիմետրի երկարության չափով մնում է: Թևս քաշած վերև վազեցի տուն ու ասի՝ «Սեվեր տատի, տուն էի մտնում, շունը մտեր էր մեր շվաք ոսկոր էր ուտում, դուռը որ բացի թե չէ, հարձակվեց վրաս ու ես ընկա, ու թևիցս խածավ»: Սեվեր տատին աղայիս մայրն է, որ տեսավ թե չէ. «Վա՛յ քոռանամ, - ըսավ, - շուտ լոբի բերեք»: Կլիներ տասը հատի չափ ճերմակ չոր լոբի, ամեն մեկը երկու դափաղ արավ ու շարեց վերքիս մեջ և վրայից էլ մեկ հատ խոշոր թթի տերև դրեց ու կապեց: Այդպիսով ձախողվեց իմ ծրագիրը և մնացի տեղումս, իսկ վերքս շատ շուտ լավացավ:

Խաղողի բաղումս եմ: Բաղում կան նաև լավ տեսակի ծիրաններ և սալորներ՝ տարբեր տեսակի: Կան նաև մեր բաղին կից ուրիշ բաղեր: Ես բաղում կանգնած էի, տեսնեմ հարևանի տղան՝ Մամոն և իր հետ Ղանաբեր տեսեն (պապը)՝ խոշոր կազմով երիտասարդ մարդ է, երկուսով եկան մոտս, բայց Մամոյի ձեռքին կար հին ձևի որսորդական գապսուղով հրացան: Մամոն հայարտ կերպով դեմքը ծած ինձ ասում է. «Սեյտո՛, ինչո՞ւ համար մեր միշմիշները (ծիրանները) քաղում ես»: Ու հայարտացած, հրացանը ձեռքին, չորս կողմս պտտում է՝ ուժ առնելով Ղանաբեր պապից: Ես ձայն չեմ հանում ու, գոռալով ինձ վրա, բռնեց շորիցս ու սկսեց քաշքշել. «Ասա՛, թե չէ զարնում եմ քեզ»: Ղանաբեր պապը տեսավ, որ ես շատ եմ ճնշվում, ըսավ. «Լավ, Մամո՛, էս անգամ կներենք, բայց մյուս անգամ էլ չենք ների»: Եվ հեռացան ու գնացին:

Հաջորդ օրը ես դարձյալ մենակ բաղումն էի և սպասում էի Մամոյին: Տեսնեմ Մամոն եկավ իրենց բաղ: Այս անգամ ես կանչեցի նրան, պոռացի՝ Մամո՛, արի՛՛ էստեղ մոտս: Մամոն, կատաղած հայիոյելով, հպարտ, ուռչացած եկավ, ես կանգնած եմ էստեղ: Մամոն որ եկավ մոտս հասավ 5-6 քայլի վրա, ես վերցրի խաղողի թփի տակ տնկած փայտերից մեկը, քաշեցի և առաջին հարվածից Մամոն գլորվեց՝ ա՛ռ քեզ թֆանկը: Մամոն իր կյանքում այդպիսի ծեծ չէր կերած: Մամոն վեր կեցավ, կուչ եկած ու լալով գնաց: Գնացեր է աղայիս մոտ, Եուսուային գանգատվեր են իր մոր հետ: Բաղումն եմ, փոքր աղաս՝ Եուսուպը եկավ ու պոռաց՝ Սեյտո, արի մոտս: Մոտս ունեի թութոն, ամիջապես հողի մեջ պահեցի ու գնացի մոտ: Աս ի՞նչ է էս տղի մարմինը՝ ու ինձ առավ ոտների տակ, տրորեց ինձ իր ուզածի չափ: Թողեց ինձ, և ինքը Մամոյի հետ գնացին: Մեկ ժամից հետո ես որոշեցի փախչել և փախա:

Ցերեկ ժամանակ էր, գնացի հեռու, մի փոքրիկ գյուղի հանդիպեցի: Գյուղի մեջ կար մի հատ որբևայրի կին և այդ կինը ինձ ընդունեց մոտը: Աղքատ կին էր, բայց գեղի տղերքը ինձ ասում էին, որ այդ կինը հայու երախա է եղեր: Թե ինչպես է մանկությունից ընկեր ձեռները, չգիտեմ: Լավ էր նայում ինձ, արտ էի վարում, բայց երկար չմնացի: Չմեռ էր, փետրվարի վերջերն էր, հագիս մաքուր շոր չկար, ոտքիս չարոխները փչացեր էին: Դուրս եկա այդ գյուղից և գնացի Գրոքկյոզ կամուրջի մյուս ափին մի քրտու գյուղ, որոնք զբաղվում են ուղտապահությամբ և ոչխարապահությամբ: Այդտեղ է, որ ամբողջ հայ քոչվորները նստում էին Թոխմախ գետի ափին, ուր կա նաև ճանտարմաների դարաղուլ⁵², հենց այդտեղ էր, որ կորցրի իմ հարազատներին: Չյունով ծածկված էր գետինը, իսկ օդը՝ ցուրտ: Իմ հագիս շոր չունեի, արևը մայր էր մտնում արդեն, որոշեցի գնալ այդ քուրտի գյուղը: Արդեն մութը վրա էր տվեր, հասա գետի ափին, ձյուն էր մինչև ծունկս: Մոտեցա մի տան,

⁵² Ղարաղուլ, ոստիկանների պահակատեղի:

դեռ շատ մոտիկ չէի տանը, երկու շուն հարձակվեցան վրաս: Ես ճչացի՝ ձեռներս շարժելով, և կարծես շները հասկացան ինձ, թողին ու հեռացան: Բայց ես դողում եմ. ոտներս կիսաբաց և անոթի՝ մտա գեղի մեջ: Մի շվաք կար, որի տակին պառկած էր մի հատ ուղտ: Կամաց մոտեցա ուղտին ու մտա վզի տակ: Կարծես ուղտը մտել էր իմ դրոսի մեջ և հասկանում էր ինձ. չէր խանգարում ինձ: Չսայած մի կողմն չոր գետնին էր, բայց մի կողմն ոտներս ուղտի բրդերը տաքացնում էին թեթևակի, իսկ ես շուտ-շուտ կողմն դարձնում էի: Այդպիսով լույսը բացվեց, տանտերը վեր էր կեցեր արդեն, բացվեց տան դուռը, դուրս եկավ մի կին: Հանկարծ որ ինձ տեսավ, ճչաց ու ներս փախավ, ու դուրս եկավ տան երկի մարդը: Նայեց ինձ, հասկացավ, որ դուրսը մնացած հայու տղա եմ, թևիցս բռնեց ներս տարավ, նստեցուց օջախի առջև, հաց բերավ, մածոն բերավ կերա, փորս կշտացավ, տաքացա լավ: Գեղի մեջ տարավ ինձ մի մարդու մոտ, և այդ մարդը ինձ ընդունեց: Ուներ ուղտեր և ոչխարներ, հարուստ էր, բայց ես չէի կարողանում ուղտերին դեկավարել. չար էին շատ: Երկու ամսի չափ պահեց ինձ, արդեն օրերը տաքացեր էին, ինձ ճամբա ցույց տվեց և գնացի բոլորովին նոր տեղ՝ Արապուշաղի⁵³ անունով մի գյուղ:

Այդ գյուղում կային երեք հայի տղաներ, որոնցից մեկը մեր գեղացի է, անունը՝ Առաքել, երկրորդ անունը՝ Մուլեյման, իսկ մյուս երկուսը, մեկը արապկիրցի էր՝ մայր անունը⁵⁴ Մուրեն, երկրորդ անունը՝ Տուռան, իսկ երրորդը՝ Ակն քաղաքից, հայ անունը Պարույր էր, թուրք անունը՝ Դահիթ: Երկու տղերքը մնում էին երկու եղբայրների մոտ, իսկ մեկը՝ ուրիշ մարդու մոտ, իսկ ես մնացի դահիթ Հրսբասեի մոտ: Շատ զազան ու անօրեն մարդ էր, սպաններ էր նաև Մուրենի մորը և ուրիշ շատ հարյուրավոր հայերի: Ես մուտը մնացի կարճ ժամանակ,

⁵³ *Արաբուշաղի*, գյուղ Օսմանյան կայսրության Խարբերդի նահանգում, Մալաթիա քաղաքից հյուսիս, Սեբաստիա տանող ճանապարհի աջ կողմում, Եփրատ և Նրա աջակողմյան վտակ Թոխմա գետերի միախառնման տեղում:

⁵⁴ *Մայր անունը*, նկատի ունի իսկական, հայկական անունը:

Առաքելը ինձ խորհուրդ տվեց, որ մտոր չմնամ. հայ կանանց պատկացնում է, աջ ոտքը դնում է ձախ ոտքի վրա և իր ոտքը դնում է պառկողի վրայի ոտքին և կացնի հարվածով խփում գլխին, և այդպիսի հարյուրավորներ: Մյուս թուրքերը եզդի էին անվանում այդ ցեղին:

Ես չմնացի մտոր և փախա գնացի մի այլ գյուղ: Այնտեղ դարձյալ տեղավորվեցի մի թուրքի մոտ: Երիտասարդ տղա էր, հայր, մայր չուներ, բայց ինքը ունևոր էր: Այդ գյուղում նույնպես հանդիպեցի երեք հայու տղաների, ամեն մեկը առանձին մարդու մոտ, բոլորս էլ չորան ենք: Տղերքից մեկը երզնկացի էր, հայ անունը Խաչիկ էր, իսկ քուրտ անունը՝ Հեյտո: Ես և Հեյտոն արդեն եղբայրներ ենք, դաշտ գնալուց ամեն օր ոչխարները կմիացնեինք իրար և միասին կանցկացնեինք օրը:

Իմ աղայի քույրը իր երախաներով եկած էր եղբոր մոտ, շատ տգեղ կին էր, ատամները դուրս ցցված: Տե՛ում կար ամեն տեսակի չոր մրգեր, պարտեզ տեսակներով չամիչ՝ թթի և խաղողի, ընկույզ, կորիզ և այլ չոր մրգեր: Ամեն օր իր երախաների գրպանները լցնում է, բայց ինձ ոչ մի հատ չի տալիս: Ես տեսնում եմ, բայց ոչինչ չեմ կարողանում ասել: Դաշտում Սեյտոս ու Հեյտոս պատմում ենք իրար, բայց մյուս երկու հայի տղաները մեզ հետ չեն: Ասի՝ Հեյտո ես դրա ճարը կգտնեմ: Խազինան գտնվում էր տանից դուրս, բայց դռները իրար մոտ էին: Դռան փակը պատրաստված էր փայտից, իսկ բանալին դարձյալ փայտից, իր վրան ուներ երեք հատ իրարից քիչ հեռու ցցված մատներ: Ես լավ ուշադրություն դարձրի բանալուն և վերցրի մի հատ եզիպատացորենի քոք և նույն հեռավորության վրա երեք հատ ամուր չոփեր տնկեցի և լույս ու մարդ չեղած ժամանակ փորձեցի, բացվեց: Եվ ես ուրախ եմ արդեն, Հեյտոյին տեսա ու ասի. «Հեյտո՛, - ի՞նչ է Սեյտո, - ճարը գտել եմ արդեն»: Իմ չորանի տաղարճուխս⁵⁵ մեծ էր: Քնում եմ ախոռի մեջ: Գիշերվա ուշ ժամանակ ես վեր կեցա, բացի

⁵⁵ *Տաղարճուխ*, պայուսակի տեսակ:

դուռը ու ցրի տաղարճուխս և պահեցի դրսում: Ոչխարը դուրս տանելու ժամանակ վերցրի ու դաշտում միացանք Հեյտոյի հետ և ամեն օր ուտում ու ուրախանում էինք:

Ականջս ընկավ, որ հայերի տղերքին հավաքում են և հրաման է եղեր. «Ում մոտ որ հայու տղա կա, պետք է հանձնի, հակառակ դեպքում իրեն կտանենք նրան տեղը»: Մի առավոտ կանուխ ոչխարի մեկը նոր էր ծնած, ախոռն ու քնելու սենյակը մի տեղ են, հանկարծ տեսնեմ մի հատ բոյով ճանտարմա դիք կայնավ մոտս. «Դե, կիավուռ օղլու⁵⁶, շո՛ւտ արա, թող ամեն ինչ ու ընկիր առջևիցս»: Խոր մտքի մեջ եմ, ինչպես անեմ, որ ազատվեմ: Բռներ եմ գառը, ժամանակ եմ ուզում անցկացնել: Պոռաց՝ դե՛, շուտ դո՛ւրս, թևը գառը մի կողմի հրեց, ասի՝ գոնե մի հաց առնեմ, սոված եմ: Դեմքը թեթեց դեպի ներս ու ասաց՝ շուտ մի հաց տուր սրան: Ճանտարման դեմքը թեթեց թե չէ, ես կայծակի արագությամբ դուրս թռա ու փախա: Հետևից դուրս թռան ճանտարման և աղաս պոռում են՝ Սեյտո՛, մի փախչի, ես հաշվի չեմ առնում: Երկու անգամ կրակեց ճանտարման, բայց չդիպավ: Հասա Թոխմախ գետի ափին մի բլուր կար, բլրի երեսին մի հատ աղվեսի ծակ կար և մտա հակառակ ձևով՝ ոտներս ներս, գլուխս դուրս մտա բնի մեջ: Բայց գլխիս կեսը դուրսը դիտում եմ կողմերս:

Արևը բարձրացել էր բավականին, մարտ ամիսն էր: Դուրս ելա տեղիցս և գնացի բլուրովին նոր գյուղ, Եփրատ գետի ափին քուրտի գյուղ էր: Մտա մի երիտասարդ մարդու մոտ: Այդ գյուղում ևս հանդիպեցի մի հայ տղի, որի դեմքը ծանոթ էր և մեր գեղացի է, բայց վախենում եմ, որ հարցնեմ: Մի եղբոր մոտ նա է մնում, մի եղբոր մոտ՝ ես: Հայ անունը Տրիբոն է, քուրտ անունը Օմար: Վարոցով զարկել են աչքին, ձախ աչքն էր, աչքը ուռեր ու ծածկվեր էր, աչքն ու ունքը կապտած խառնվեր էին իրար: Երկուսով մի տեղ ենք աշխատում, էշերով աղբ ենք կրում արտը:

Մի օր իմ աղայի մատղաշ եզն (Եփրատ գետի մեջ կղզի

⁵⁶ *Կիավուռ օղլու*, թուրք.՝ kafir oğlu / անհավատ տղա:

կար և հարուստ էր կանաչ խոտով) անցել է կղզին և արածել է, խփել են ոտքը վիրավորել, քիչ թոփալում է: Այդ օրը օրն իրիկվան մոտեցեր էր, դեռ սոված էի և հոգնած: Տրիբունին ասի՝ ես էլ չեմ կրում, անոթի եմ, առավոտվանից բան չեմ կերել: Մի քիչ նստանք, հանգստանում էինք, աղաս եկավ ահռելի բարկությամբ, թե ինչո՞ւ եք նստեր, չեք կրում: Օսարն ասեց Մելյոնն սոված է: Որ այդ խոսքը լսեց, քաշեց ինձ առավ ոտքի տակ, դեռ չէր կշտացեր ծեծելուց, քաշեց տարավ կախեց գետի մեջ, ջուրը մտցնում, հանում էր, իսկ ես միայն ճչում էի, ուրիշ ոչինչ: Վերջապես կշտացավ ու ասեց՝ դե, գնա՛, ա՛ղբը կրեցեք և Տրիբունի հետ սկսեցինք հեծկլտալեն աղբը կրել: Արևը մտնելու մոտերքն է, ես որոշեցի փախչել, Տրիբունին էլ կազմակերպեցի, որ իրիկվա մթին դուրս գանք: Նրա աչքը ուռած է, խոստացավ, ասեց. «Կգամ, քեզ ազդանշան կտամ: Ազդանշանս այն է, որ դուռը բաց անեմ ու ներս նայեմ»: Իրիկունը մուլթն էր արդեն, ես դեռ գոմն էի, վախիցս ոչ մի բան էլ չեմ ասում: Մոտեցավ քնելու ժամը: Ես գնացի Տրիբունենց տունը, տեսնեմ երկու եղբայրներ նստած են օջախի առջև, իսկ Տրիբունը՝ կանգնած: Բոլորն էլ տեսան ինձ, ես հետ քաշվեցի, հինգ վայրկյանի չափ սպասեցի, դուրս եկող չեղավ: Նրանից հույսս կտրեցի, եկա տուն քնելու: Փալասս պատրաստեցի քնելու համար, բայց ի՛նչ քնել:

Իմ աղաս նոր ամուսնացած է, կնոջ ոտին առել էր մի զույգ չուստ, կրունկը սուր ու երկար՝ բռնել-քաշելու համար: Կինը նստած էր դեռ օջախի առջև, ասի՝ մի դուրս գնամ գամ, չստերը ոտքս անցրի, դռնից որ դուրս ելա, չստերը ձեռքս առա, որ ոտնաձայնը դուրս չգա: Մութ և ամպոտ գիշեր էր, սկսեց վազել դաշտերով՝ առանց վախենալու որևէ բանից: Արդեն շատ հեռու էի գեղից, հանգիստ էի գնում դաշտերի մեջ, տեսնեմ մի ճրագի լույս էր երևում և այդ լույսի ուղղությամբ գնում եմ: Առջևս մի փոս խանդակ⁵⁷ պատահեց, մտա այդ խանդակի մեջ: Աննշան ջուր էր, բայց մի կողքի քաշվեցի ու նստա և

⁵⁷ *խանդակ*, բնական կամ արհեստական երկար ու խորը փոս:

կոնակս դեմ արի ժայռին ու մտածում եմ, որ կարող է գայլեր պատահեն: Կեսգիշերն անց էր, երկինքը ամպամածություն էր, վեր կեցա տեղիցս, շարունակեցի գնալ, բայց այն ճրագը դեռ չիանգած գեղին մոտիկացա: Մի ցորենի արտ կար, մտա այդ ցորենի մեջ, մի քիչ պառկա առանց քնելու: Արդեն առավոտյան արշալույսն էր և ես իմացա, որ ինձ ծանոթ վայրեր են: Այդ ճրագը այն գյուղն է, որ ճանտարմայի ձեռքից փախա: Դուրս եկա ցորենի մեջից, այնտեղ կար ոչ մեծ հողամաս, ցանված էր սոխ և սպանախ: Շատ լավ և երկար-երկար սոխեր էին, իսկ սպանախը՝ փարթամ տերևներով: Քաղեցի երկուսից էլ բավականին, խուրձ արի, կապեցի ցորենի ճյուղերով և գյուղից անցա ու գնացի ինձ ծանոթ դաշտերը, որտեղ կան երկու հատ բլուրներ՝ մեկը մեծ, մեկը՝ փոքր: Բարձրացա մեծ բլուրի կատարը, որ կա մի փոքրիկ հարթություն, նստա և սպասում եմ անհամբեր արևին, որ ծագի ու արևոտի բլրին: Մրսում էի, սկսեցի սպանախն ու սոխը ուտել: Արևը ծագել է արդեն և տեսնում եմ բլրի գագաթից չորանները գալիս են արդեն, իսկ ես Հեյտոյին հեռվից ճանաչում էի իր ոչխարներից և իր շարժումներից: Կարճ ու լիքը սողա էր: Հեռվից տեսնեմ Հեյտոն գալիս է իր ոչխարներով: Եկավ ու բլուրի ցածի մասերումն է արդեն: Ես ցած իջա բլուրից և հասա Հեյտոյին, փաթաթվեցինք ու ասավ՝ էս ինչ է պատահեր Սեյտո, և ես սկսեցի պատմել: Չսայած որ սոխն ու սպանախը կերել եմ, դարձյալ սոված եմ: Հեյտոն (Խաչիկը) ըսավ. «Սեյտո՞, գիտեմ՝ դու անոթի ես, ես ոչխարի գլուխը բռնեմ, դու ծծի՛»: Ասի՝ չի լիներ, կարող է խելոք չկայնի: «Հըբըր ի՞նչ անենք», - ըսավ նա: Մի քար ճարեցինք, ծեծեցինք գետինը փոսացրինք ու ոչխարը կթեցինք փոսի մեջ, հացը փրթեցինք մեջը և ես կերա: Մի շաբաթ ես դաշտումն էի մնացած, ցորենների մեջ կքնեի և Հեյտոն օրեկան երկու անգամ ինձ կերակրում էր կաթով և հացով:

Մի օր Հեյտոն եկավ ու ասավ. «Սեյտո՞, աղաղ ձիուն նստած քեզ է փնտրում, փախի՛ր ստեղծերից, որ բռնեց, սպանելու է»: Նույն օրը կորա այդ ստեղծերից ու գնացի բոլորովին նոր գյուղ:

Մտա մի հատ որբւայրի քուրտ կնոջ մոտ, ուներ մի աղջիկ և ինձ հասակակից մի տղա: Այդտեղ դարձյալ չոբան էի և այդ գյուղում դարձյալ հանդիպեցի երկու հայ տղաների: Երկուսն էլ մնում էին այդ գյուղի մեծ Ահմեդ Բեկի մոտ: Տղի մեկը մեզ հարևան Բուրք գեղացի էր, հայ անունը Հայրապետ էր, իսկ քուրտ անունը՝ Մուստաֆա: Մյուս տղեն տարբեր շրջանից էր: Դաշտում միշտ երեքս միասին էինք լինում, ոչխարները միացնում էինք իրար, բայց այդ գյուղում կար նաև մի աղջիկ չոբան: Մի օր Մուստաֆան և Խալիլը, այսինքն՝ Հայրապետն ու Վահանը, կազմակերպվել են և ինձ էլ ասին, որ վաղը պետք է գնանք այսինչ ուղղությամբ: Հաջորդ օրը առավոտյան երեքս միասին դաշտում ենք, այդ մասերում ցորեններ էին ցանված ու քուրտի աղջիկ չոպանը նույնպես մեր մոտերքումն է: Տղերքը ինձ ասին. «Դու գնա՛, ոչխարներին՝ նայիր՝ ցորնի մեջ չլցվեն»: Եվ ես նայում եմ ոչխարներին, իսկ մյուս երկու տղերքը բռնում են քրտու աղջկան և նեղում են: Թե ինչպես է եղել, չգիտեմ, հանկարծ տեսնեմ՝ այդ աղջիկը պոռակեն փախչում է՝ «արք Ֆլահ էմա փիսկրըն»⁵⁸ ասելով: Կմտտիկանա արտ ջրող մի մարդու, հակառակ՝ դա էլ հայու տղա է, դարձյալ մեր գեղացի հայ: Անունը Արշակ է, քուրտ անունը՝ Տասուն, իսկույն գլխի կրնկնի, որ մենք ենք: Արդեն իրիկուն է, տուն ենք գնում, իսկ աղջիկը գնացեր, խաբար էր սվեր տղերքի աղային: Բեկը տղերքին երկուսին էլ լավ ծեծեց, բայց իմ խանրմը անգամ չնեղացավ ինձ վրա, բայց ինձ համար մեկ է, կա՛մ նրանց է ծեծել, կա՛մ ինձ:

Հաջորդ օրը առավոտյան կազմակերպվեցինք, որ փախչենք, բայց ո՞ր պիտի փախչենք: Տղերք, ասի, կգնանք Հիլան: Դա այն գյուղն էր, ուր ջաղացպանը ինձ ազատել էր տելի Մարջանի ձեռքից: Հավանություն տվին տղերքը, իսկ ես. «Տղե՛րք, -

⁵⁸ Նախադասությունը քրդերեն է, որտեղ *արք*-ն ունի կոչական իմաստ, *ֆլահ*-ը քրդերի կողմից հայերին տրված նվաստացուցիչ անվանումն է, ինչպես *գյավորը*՝ թուրքերի պարագայում: Մոտավոր թարգմանությունն է՝ «հե՛յ, հայերն ինձ վատ բան արեցին»:

ասի, - դուրսն ենք քնում, բոլորս էլ, գիշերը կուգամ ձեզ խաբար կաննեմ, դուք պատրաստ վիճակում եղեք»: Խանըմիս տղան էլ մի դանակ ուներ, այդ դանակն էլ ջեպս եմ ձգեր: Ժամանակը կեսգիշերն անց էր, վեր կեցա, գնացի տղերքիս ազդանշան տվի ու երեքից չորս բուպե սպասեցի 30 քայլ հեռու: Վեր կեցան տղերքը և փախանք:

Լուսնյակ փայլուն գիշեր էր, գնում ենք երեքով, լույսը մոտ էր: Նստանք մի տեղ, հանգստացանք բավականին և շարունակում ենք ճանապարհը: Հասանք այն գյուղը, որը որ նախատեսեր էինք՝ Հիլան գյուղը: Տղերքից երկուսը տեղավորվեցին այն մարդու մոտ, Մահապի մոտ, որ ինձ կայել էր ձիու ազիցից իսլամական օրենքը ասելու համար, իսկ ես՝ մի ուրիշ աղքատ մարդու մոտ: Բայց բախտի բերմամբ իմ հին աղաս՝ Հուսեինը ոչ մի բան չասեց ինձ: Աղքատ էր իմ վերջի աղան, ուներ մի կին և մի աղջիկ: Կորեկի հաց էր կերածին: Ես և իրեն աղջիկը միասին կքնեինք, իսկ մյուս երկու տղաները չորս-հինգ օրից հետո փախել էին՝ առանց ինձ լուր տալու: Լսեցի նրանց փախուստը, ծրագրեցի ես էլ փախչեմ: Մեկ հատ մեջքի գոտի ունեին, աջեմ շալ⁵⁹ են ասում: Առավոտյան արշավույսին վեր կեցա, այդ գոտին կապեցի մեջքս ու դուրս եկա գյուղից: Ժամանակը ամառ էր, դուրսն էինք քնում: Բավականին հեռու գյուղ է գնալիս տեղը՝ Արապուշաղին: Դա այն գեղն է, որտեղ կան երեք հայու տղաներ, որոնցից մեկը մեր գեղացի Առաքելն է: Մնացի այդտեղ հյուրի նման, օգնում էի Առաքելին:

Արապուշաղի գեղին մոտիկ կար 7-8 ընտանիքից բաղկացած փոքրիկ գյուղ: Այդ գյուղի մեծը Մուստաֆա աղան է՝ գեղի հարուստը, խոշոր, հաղթանդամ ու կոպիտ դեմքով մարդ էր, ու կինը նույնպես սոսկալի հաստ էր և բարձր: Ես դրանց մոտ մնացեր էի կարճ ժամանակ: Ինձ լավ չէին նայում, ծեծում էին, սոված էի մնում, իսկ ես ճարահատյալ զոդություն էի անում, ախոռում քրքրված փալասների մեջ էի քնում:

⁵⁹ Աջեմ շալ, թուրք.՝ acem / պարսկական, հավանաբար՝ պարսկական շալ:

Հավ շատ ունեք, մեծ մասը անում էին: Գիշերը գողանում էի մի քանի հատ հավկիթ և դուրս ճամբիս վրեն պահում էի ու դաշտ գնալուց պահած տեղից առնում, հետս էի տանում: Միանում էի Առաքելի հետ, գետինը փորում, վրեն բարակ հող էինք ցնում և կրակը վառում: Այդ ձևով հավկիթները եփում, ուտում էինք Առաքելի հետ և նույնպես հավ էի տանում: Մի օր տեսնեմ խանրմըս ըսավ. «Սեյտո՛, էս ի՞նչ բան է, շատ քիչ ձու եմ վերցնում մսուրներից, չլինի՞ գողանում են ախոռից»: Ես զգացի, որ պիտի բռնվեմ, իսկ եթե բռնվեմ, էլ փրկում չկա: Պատճառ եղավ, որ եզան մեկը կորել էր, դրա համար ինձ ծեծեց, իսկ եզը գտնվեց, իսկ ես արդեն հեռացա իր մոտից:

Առավոտյան արևը ծագել էր, արդեն պիտի գնայինք արտ վարելու: Առաքելը ինձ ասեց. «Սեյտո՛, եզները քշի գնա, ես կհասնեմ քեզ»: Ես եզները ձգեցի առաջ, գնում էի, հանկարծ ճամբին Մուստաֆա աղան պատահեց, բռնեց ինձ ծեծեց և այն գոտին կար ինձ վրա, առավ վրայիցս և այն շատերը, որ փախցրել էի: Ես հետ դառա տուն: Տուն գնացի, լաց էի լինում, գեղի կանայք խորհուրդ տվին, որ երթամ Գըռքկյոզի դարադուլը ճանտարմաներին բողոքեմ: Եվ ես գնացի դարադուլ, Թոխմախ գետի ափին է: Բողոքեցի ճանտարմաներին, ճանտարմաների բաշչավուշը⁶⁰ ըսավ. «Մնա՛ այստեղ, մեր ձիերին կնայես. կլողացնես գետում»: Եվ մնացի ճանտարմաների մոտ, ձիերին եմ խնամում, քանակով ութ հոգի էին:

Մի օր մի հատ կին էին բերել դարադուլ. գիշերն այդ կինը երգում էր «աման տոքթոթ» երգը, որը նոր էր դուրս եկած: Առավոտյան լուսացավ, ճանտարմաները ամեն մեկը գնացին տարբեր գյուղեր իրենց գործերով: Ղարադուլում մեկ հատ ճանտարմա [մնաց], նա էլ հիվանդ էր: Միևնույն ժամանակ մեկ հատ բռնավոր քուրտ կար, խոշոր հաղթանդամ մարդ էր, սպանություն էր կատարել, Պեանի⁶¹ քաղաքի գյուղերից էր:

⁶⁰ *Բաշչավուշ*, ոստիկանապետ:

⁶¹ *Պեանի*, *Բեանի* կամ *Բեհեանի*, գյուղաքաղաք Խարբերդի նահանգի Մալաթիայի գավառում:

Ձեռքն ու ոտները երկաթե օղակներով փակած էին: Գիշերվա կեսն էր համարյա, միջանցքում ենք քնում ես և ճանտարման: Ճանտարման ինձ ասեց՝ դու քնի բանտի դռանը, նույն միջանցքի մեջ, ինքն էլ միջանցքի դռան մոտ: Գիշերվա ուշ ժամանակ տեսնեմ բռնավորը ինձ ձայն է տալիս կամաց ձայնով, ասում է. «Ինձ փախցրո՛ւ այս տեղից, քեզ փող կտամ»: Ես ասի՝ փողն իմ ինչին է պետք: Աղաչում էր ուղղակի, վերջը որոշեցինք, որ իրեն հետ փախնենք Պեսնի: Այդ խոսքը ինձ դուր եկավ և ես մեկ հատ փոքր մեխ ճարեցի ու անցա գործի, իսկ հիվանդ ճանտարման խոր քնի մեջ է: Բանտի դուռը զգուշությամբ բացի, ձեռքի կողպեքը բացի և երկուսով աշխատում էինք, որ ոտքի կողպեքը բանայինք: Ոտքի կողպեքը տարբեր էր և ամուր: Այդ սուղ ժամին հանկարծ մի գոռոց եկավ դռսից՝ դուրս եկեք ձերին, գող է գալի: Այդ ժամանակ ճանտարման զարթնեց ու ասաց. «Ուլան կիավուտ օղում աթլարն եանընա գեթ»⁶² (գլավուրի տղա, ձերի մոտ գնա): Միջանցքը մուտ էր՝ բախտի բերմամբ, ես արագ կերպով նույնությամբ կողպեքները կողպեցի ու դուրս գնացի ձիու մոտ: Դա այն կինն էր, որ ճանտարմաները գիշերը պահեցին իրենց մոտ: Առավոտյան ճանտարմաները, որ գնացին իրենց գործերով, այդ կինը չի գնացեր, դրսերում ժամանակ է անցրել: Մի վերմակ ունեի, վերցրի գնացի ախոռ և այդ կնոջ հետ քնեցանք իմ վերմակի տակ: Շատ չանցավ լույսը բացվեց, վեր կեցանք և այդ կինը գնաց մոտակա գյուղ: Իսկ ես սկսեցի ձիուն կեր տալ և զոմը մաքրել, բայց ուրախացա, որ ճանտարման հիվանդոտ էր, գլուխը չբարձրացրեց և հաջող փրկվեցի վտանգից:

Ճանտարմաները դեռ չեն վերադարձել գեղերից, պատահում է 2-3 օրով գնում են, միայն մի ճանտարման էր վերադարձել: Քսելու համար ինձ տված էին մեկ հատ վերմակ՝ գեղեցիկ և ծաղկավոր: Այդ օրը ես էլ ինձ լավ չէի զգում: Վերադարձող ճանտարման ասաց՝ գնա Մալաթիա՝ հիվան-

⁶² Թուրք.՝ ulan, gavur ođlan, atları yanına git.

դանոց, ստիպեց ինձ, որ գնայի: Հայի տղեն ու՛ր, հիվանդանոցն ու՛ր, այդ երբեք գոյություն չունի, ավելի շուտ կարող է ոչնչացնեն: Ես գնացի ճամբեքի վրեն դաշտում ժամանակ անցրի մինչև իրիկվա մոտերը և արևամուտին եկա դարադուլ և ասի՝ հիվանդանոցը չընդունեց ինձ: Նույն այդ ճանտարման էր, քնելու ժամին տեսնեմ վերմակիս երեսը չկա, հարցրի, ասի՝ ի՞նչ է եղել վերմակիս երեսը, այդքան մի բան: Լուսացավ հաջորդ առավոտը, արևը բարձրացել էր բավականին: Դեռ առավոտյան ոչինչ չէի կերել, ճանտարման սկսեց ինձ ծեծել, թե ինչու համար, ինձ հայտնի չէ: Հաջորդ ճանտարման տեսավ, որ ինձ անխնա է ծեծում, ասաց՝ «նէ իստիյորսուն չոճուզ տան»⁶³ (ի՞նչ ես ուզում երախայից), ինձ ձեռքիցը սռավ ու՛ հայտե օղլում տղա՛ս, թող գնա: Ոտներս բոբիկ են, ես գնացի գետի ակիին այն գյուղը, ուր ուղտի վզի տակ քներ էի՝ Սինաա: Գյուղի մի կողմը Թոխմախ գետն է կտրում, իսկ հյուսիսից՝ բլուրներ: Մի բլուրի գագաթին մի քուրտ կալ է ծեծում, կամ է քշում: Ես հեռվից տեսա, որոշեցի գնալ այդ կալ անող մարդու մոտ և գնում եմ: Բլրի մի երեսից բարձրանում եմ, դուն մի ասա այն ճանտարման որքան որ ինձ ծեծել էր, չի բավարարվեր, ուզեցեր է ինձ անպայման սպաննի և հետևիցս եկեր է զինված շաշկայով⁶⁴ և գենքով: Բլրի մի երեսից ես եմ բարձրանում, մյուս երեսից՝ ճանտարման, ես տեղեկություն չունեմ: Շատ քիչ էր մնացեր, որ հասնեի կալ անողին, հանկարծ ճանտարմի գլուխը տեսա և մի ակնթարթում հետ թռա թռչունի արագությամբ խորդուբորդ տեղերով: ճանտարման կրակում է հետևիցս, բախտը բերմամբ ոչմի գնդակ չդիպավ ինձ: Վազում էր, որ հասնեի ետևիցս, բայց ինձ հասնել հնարավոր չէր: Վերջացավ խորդուբորդ տեղերը, ընկել եմ Եագուխան կոչված խոպան տարածության մեջ, վազում եմ բոբիկ ամեն արագությամբ, համոզված եմ, որ ճանտարման այլևս ընդունակ չէ ինձ հասնելու, նրա ոչ

⁶³ Թուրք.՝ ne istiyorsun çocuktan?

⁶⁴ Շաշկա, ռուս.՝ шашка / սուր, թուր:

գնդակը և ո՛չ էլ շաշկեն: Հեռվից էշերով և ուղտերով կարավան էր գալիս: Ճանտարման ազդանշան տվեց, կրակեց, որ կտրեն առջևս, բայց ես կարավանի ուղղությունից անցած էի արդեն: Վազեցին ու փորձեցին, բայց իզուր էր, չկարողացան և չէին էլ կարող շարունակել, որովհետև կարավան ունեին: Հետ դառան իրենց գործին: Ճանտարման հուսալքված է, նպատակին չհասավ, ջանքերը իզուր անցավ, բայց ես զգում եմ, որ արդեն ազատված եմ: Բայց քայլել չէի կարողանում, կարծես մոռացեր էի քայլելը, և վազում էի անընդհատ: Բոքիկ ոտով չեմ զգում թե ոտքս քարի է դիպչում, թե՛ փուշ է մտնում:

Օրը իրիկվա մոտ է, դեռ վազում եմ: Պատկերացումով պատկերացնում եմ, որ ես վազքով հասել եմ Արապուշաղի գյուղի ուղղությունը: Արևը մայր մտնելու մոտ է, ուղղությունս փոխեցի դեպի Արապուշաղի: Այդ կողմը արդեն դեպի ձոր է գնում: Այդ փոս տեղերում կան գյուղեր, բայց ես ոչ մի գյուղի չեմ հանդիպում: Իջա ձոր, որի միջով անցնում է Թոխմախ գետը և գետը ճեղքեցի անցա մյուս ափը: Ուղղությունս ճիշտ եմ վերցրած, մինչև Արապուշաղի գեղի սահմանները հասնելը մութն ընկնում էր արդեն: Գյուղի մոտերքում արտի մեջ մեկը կալ էր էրնում քամիով, ցորենը էրթից⁶⁵ զտում են քամու միջոցով, չունեն քամհար մեքենա: Գնացի տեսնեմ Սուլեյմանն է, մեր Առաքելը, կալ էր էրնում: Ինձ որ տեսավ, քթի տակից խնդալով ասաց. «Հը՞, Մելտո՞, ի՞նչ է պատահեր էլի»: Ես սկսեցի պատմել եղածը, բայց ձախ ուսիս վրայից սուր ծակոց էի զգում: Առաքելը ասաց շատ վազելուց է եղել ու մի հաստ մեծ ձմերուկ պահել էր թիլի⁶⁶ մեջ, բերավ կտրեց կերանք հետը, և ես մտա էրթի մեջ քնեցի: Առավոտյան Առաքելի հետ տուն գնացինք և ինձ հաջողվեց մտնել Առաքելի աղայի եղբոր մոտ: Այդ տնում տղամարդ չկար: Առաքելի խանրմի անունը Հյունու էր, իսկ իմինը՝ Կյուլու: Ամուրի գեղեցիկ աղջիկ էր,

⁶⁵ Էրթ, երդ, հարդ:

⁶⁶ Թիլ, բլուր, հողաբլուր:

ուներ ինձ հասակակից եղբայր, անունը Ղազի էր: Ինձ լավ էր նայում, իսկ այդ գյուղում եղած մյուս երկու հայ տղերքը մնում են Հասան աղայի մոտ: Ես Առաքելի հետ եմ աշխատում, գործերնիս մի տեղ է, իսկ այդ գյուղում եգիպտացորեն շատ են ցանում:

Հասան աղան Թոխմախ գետի ափին մի մեծ արտ եգիպտացորեն էր ցանած: Ամեն օր քաղում էի 15-20 հատ, դաշտում խորովում, Առաքելի հետ ուտում ենք և նույնպես գառտող⁶⁷, ձմերուկ: Հասան աղան ինձ ասում է. «Սեյտո՛, դուն մեր գառտողները քանդում ես, եգիպտացորենները քաղում ես, հերիք է»: «Հասա՛ն աղա, ես այդպես բաներ չեմ անում, դաշտումն էինք, կամ էինք քշում Առաքելի հետ»: Հասան աղան հավատաց: Ասի՛ Սուլեյման, գնամ ամենքիս 10 հատ եգիպտացորեն բերեմ, խորովենք ու ուտենք, իսկ դուն փայտ պատրաստի: Ասեց՝ լավ, ու ես անցա գործի: Եգիպտացորենը շատ ուժեղ էր, մարդ մեջը կորսվում էր, և խոշոր: Ես արդեն արտի մեջն եմ, ամենախոշորներից քաղել եմ 20 հատ, դարսել եմ թևիս վրա, որ պիտի արտից դուրս գամ: Ըհր՛, հանկարծ թևիցս ամուր բռնեց, ես արդեն մնացի մոլորված, արդեն բռնել են ինձ արտի մեջ: Այդ Հասան աղան էր և Սանամ խանըմը: Երկուսն էլ ծեղ էին: Հասան աղան և Սանամ խանըմը խորհրդակցում են, թե ինչ անենք սրան, ձեռքն ու ոտքը կապենք, ձգենք գետը, թող երթա, սատկի կիավուռը, կամ թե չէ կապենք, տանք ճանտարմին: Շատ չափ ու ձև անելուց հետո, որոշեցին ձեռներս կապել ու հանձնել ճանտարմաներին: Կուկուռուզի⁶⁸ արտին կից կա մի կանանչ ու բարձր բլուր, ձեռքերս հետևիցս կապեցին, ունեին հետները բարակ և երկար չուվան, միևնույն ժամանակ ունեին երկու հատ էշ: Ձեռներս կապել են արդեն, իրենք էլ նստան էշերին, ինձ առին մեջտեղ: Սանամ խանըմը չուվանի մի ծայրից բռնած հիտևիցս է գալիս,

⁶⁷ Գառտող, ռուս.՝ картофель / կարտոֆիլ:

⁶⁸ Կուկուռուզ, ռուս.՝ кукуруза / եգիպտացորեն:

Հասան աղան՝ առջևից, ու արտի թմբով գնում ենք, իսկ ես գոռում եմ կամաց-կամաց մի կերպ թուլցնեմ ձեռքիս կապը և թուլացրի բավականին: Մի քիչ էլ, մի քիչ էլ, արդեն հասցրել եմ մատներին ծայրին: Սպասում եմ արտից դուրս գան, հասնեն բլրի տակ: Որ հասանք բլրի տակ թե չէ, ձեռներս հանի կապից ու փախա դեպի բլուրը դարվեր: Սանամը պոռում է. «Հասան աղա, Սեյտոն փախավ, բռնի՛»: Սեյտոն թռավ, Հասան աղան էլ որտե՞ղ հասնի: Բարձրացա բլուրը, իսկ բլուրի մի կողմը քիչ հարթություն է: Գնացի Առաքելի մոտ. «Հը՞, ի՞նչ է, բռնվեցա՞ր», - ըսավ ինդալեն: Ասի՝ հա՛: Այդ օրը ես տուն չգնացի վախիցս, մնացի դաշտում, մտա դեզի մեջ, քնեցի:

Լուրը լավեց, որ նորից են հավաքում հայ տղերքին թուրքերի, քրտերի մոտից, իսկ ես Մալաթիայի շրջանների գյուղերի մեծ մասին ծանոթ էի, գիտեի որտեղ, որ գյուղում քանի հայու տղա կա: Գեղեզեղ պետք է վազեի, լուր հասցնեի տղերքին, որ փախչեն դաշտերն ու իրենց պաշտպանեն վտանգից: Ես ինձ վրա վստահ էի, վախկոտ չէի, կարողանում էի բլուր տեսակի փորձանքներից ազատվել, և ես լուր հասցրի մի շարք գյուղերի հայ տղերքին: Բայց մի բան կար, որ հեշտությամբ չէինք ճանաչվում ոչնչով, ազատվել ենք հավաքույթի վտանգից: Ամենքը նորից իրենց տեղերն են, իսկ ես դարձյալ մի նոր գյուղ՝ Թոխմախ գետի ափին փոքր քուրտի գյուղ [գնացի]:

Գյուղի աչքի ընկնողը տղվա Հասանն էր, բարձրահասակ, քյաչան գլխին փաթաթած սիրուն մարդ էր: Ես մնացի տղվա Հասանի մոտ, չոքան եմ: Ուներ բավականին ոչխար, իսկ ես քնում եմ ոչխարների աղբյուրում⁶⁹, մի գեշ փալասի կտոր էին տված, ոչխարի մեջ ընկնում, քնում էի: Այդ գյուղում կար մի հատ փախստական զինվոր: Ինձ ասեց զիշերը մի հատ ուլ մորթենք, աղբի մեջ եփենք, ուտենք: Բայց, ասաց, վախենում

⁶⁹ Աղբը, ոչխարների փարսխ, գոմ:

եմ մոլլան թուղթ անի, մեզ բռնի⁷⁰: Ես երբեք չեմ վախենում, որ մոլլան թղթով մեզ կբռնի, չոբանը ես եմ. կորուստին ես պիտի պատասխանեմ: Որոշեցինք մորթել գիշերվա ուշ ժամանակ: Ուլը մորթինք, մի հատ թիթեղի կտոր ճարեցինք, աղըլի մեջ օջախի տեղ կար, կրակ աղինք, մի մասը խորովեցինք կերանք, իսկ մի մասը մնաց: Ավելցուկ բաները հողի մեջ թաղեցինք, բայց ուլը մերը չէր, հարևաններինն էր: Հաջորդ օրը ուլի տերը իմացավ, որ ուլը չկա, եկավ իմ աղայի մոտ, հետաքրքրվում է ինձանից: Ես իրիկունը ոչխարը ուշ եմ տուն բերում, հետ է մնացեր ոչխարից, գալերը տարել են և այդպիսով արդարացա: Տոլմա Հասանը նան ուներ շատ հավեր, որոնք նույնպես թառում էին աղըլում, ուշադրություն չէին դարձնում և համարյա հաշիվն էլ չէին իմանում: Ես համը առել էի, սիրտս ուզած վախտ մեկի գլուխը կքաշեի ու կպահեի, ոչխարը դուրս տանելուց հետո կտանեի, դաշտում կեփեի, կուտեի: Մի օր էլ նորից մի հավ մորթեցի ու հետո տարի դաշտ, բայց այդ օրը հետո ոչ աղ ուներ և ոչ էլ հաց: Դաշտից չոր խոտի չոփեր հավաքեցի, կրակ արի, ոչխարնին հավաքեցի մի տեղ և հավը եփում եմ: Ոչխարը չէր մնում մի տեղ, գնում էին դետուդեն, կրակն էլ վատ էր, բայց հավը այնքան յուղոտ էր, որ կրակը հանգցնում էր: Ճարահատյալ կիսանփած հավը վերցրի հանգած կրակից և սկսեցի ուտել, բայց որ կծում էի, յուղը լողգում էր սաղ կուրծքս:

Դեկտեմբեր ամիսն էր, տոլմա Հասան աղաս ինձ ասաց. «Մեյտո՛, հարևանների լավ ոչխարներից երեք հատ մեր ոչխարների հետ կքշես մեր աղըլը, որ դավուրմա պիտի անես»: Շատ լավ՝ ըսի և երեկոյան երեք ոչխար մեր ոչխարի հետ ներս գցի: Հաջորդ օրը իրիկունը հինգ ոչխար դավուրմա է լի՛նում.

⁷⁰ Թուղթ անել (խոսակց.), հմայել, կախարդել, թուղթ ու գիր անել: Մերձավոր Արևելքում, հատկապես արաբների մոտ, մինչ օրս էլ կիրառվող գուշակության տեսակ: Ենթադրվում է, որ ջրի և թղթի միջոցով իրականացվող ծեսով մոլլան կարողանում է գտնել գողության և այլ տեսակի հանցագործությունների մեղավորներին:

թեժ կրակը վառում է օջախում, երկու հատ խակկիններ⁷¹ դրած կրակի վրա եփում են:

Իրիկունը ուշ ժամանակ էր, ճաշեցինք, աղայիս կինն ինձ ասաց՝ Սեյտո, գնա երկու վետրո⁷² ջուր բեր: Լուսնյակ գիշեր էր, իսկ աղբյուրը գյուղից ցածր փոս տեղ կար և այդտեղից ակ էր բխում. այդ էր մեր աղբյուրը: Գնացի ջուրը լցրի, տուն եմ գալիս, տեսնեմ շունչս կտրվում ու թևերս սոսկալի քորվում են: Ամեն 20 քայլի վրա հանգստանում եմ: Թևս մի քիչ վերև քաշեցի, տեսնեմ թևս ուռած է: Տուն եկա, վախենում եմ ասելու, ինձուինձ ասում եմ երևի բորոտվել եմ, բայց համբերությունս կտրվում է, մտալ չեմ կարողանում: Վերջապես ցույց տվի աղայիս կնոջը: «Վա՛յ, - ասեց, - դաբաղ⁷³ ես եղել»: Դուրս փոքր փոս կար, որի մեջ ջրով լիքն էր, բայց սառած: Աղաս ասեց շուտ դուրս արի, ձեռքին մի վետրո, փոսի մոտ ասեց՝ շուտ, հանի շորերդ, ենթարկվում եմ: Հանեցի շորերս, սառույցը ջարդեց, վետրոյով սառը ջուր շիեց վրաս և երկրորդ վետրոն ու ասեց՝ շուտ հագիր շորերդ: Հագա շորերս, բերավ մի հատ մեծ սոխ տվեց ձեռքս ու ասաց՝ կեր, կրակին մի մոտիկանար: Ես դեռ սոխի ուտելը չէի վերջացրել, տեսնեմ մարմնիս վրա ոչ մի բան չկա և արդեն հանգիստ եմ:

Անցավ ձմեռը, ամառ ժամանակ է: Մեր գեղի դիմաց գետի մյուս ափին կա մի քուրտի գյուղ: Այդ գյուղում նույնպես կան երկու հայ տղերք: Նրանք էլ ինձ նման չոբան են, գետից անցնում են մեր կողմը և երեքս միանում ենք իրար, երեկոյան բաժանվում ենք: Մի օր երեքս միասին որոշեցինք, որ մեր ոչխարը մոտեցնենք քուրտ չոբանի ոչխարին և գողանանք

⁷¹ *խակկին*, լայնաբերան մեծ կաթսա, պոլինձ:

⁷² *վետրո*, ռուս.՝ ведро / դույլ:

⁷³ *Դաբաղ*, կենդանիների սուր վարակիչ հիվանդություն, որը նաև կենդանուց փոխանցվում է մարդուն: Այն ուղեկցվում է տենդով, բերանի, լեզվի լորձաթաղանթի վրա, ինչպես նաև միջմատային ծայրերում ու եղունգների շուրջը առաջացած բշտիկներով, որոնք կարճ ժամանակում փոխարինվում են խոցերով: Հիվանդությունը բուժելի է:

երեք ոչխար: Հաջողությամբ ձեռք բերինք երեք ոչխարը, որոնք պետք է դաշտում դավուրմա անենք: Ամառ ժամանակ է, ոչխարը տուն չենք տանում դաշտումն ենք մնում: Մոտակա գյուղից խալկին բերել տվինք մի անծանոթ մարդու: Այդ դաշտում կար մի հատ եգիպտացորենի արտ, այդ արտի տերն էր, որ խալկինը բերավ: Ղավուրման պատրաստեցինք, կես և ավելցուկ մասերը տվինք խալկինի տիրոջը, իսկ մնացած ղավուրման լցրինք մեր տաղարճովները: Մինչև հաջորդ օրը իրիկունը բոթը հասավ ճանտարմային: Իմ աղան ինձ ասեց, որ չվախենաս, կասես՝ ես խաբար չեմ: Հինգ հատ ճանտարմաներ էին եկել իմ աղայիս տունը, հյուրասիրեց նրանց: Ինձ հարցրին, ես տեղեկություն բոլորովին չունեմ, բայց ես շատ էի վախենում, որ հանկարծ նրանց հետ չլինի այն ճանտարման, որը որ ցանկացավ ինձ սպանել, բայց չհաջողվեց:

Հուլիս-օգոստոս ամիսներին էր, լուրը տարածվել է, որ Մալաթիայում որբանոց է բացվել և հայ տղերքին հավաքում են որբանոց: Այդ բարի լուրը հասավ իմ ականջին, և ես առանց ժամ կորցնելու թողի ամեն ինչ և վազի Մալաթիա, գտա որբանոցը և մտա ներս:

Շատ տղերք էին հավաքվել և ոմանք էլ հետ էին փախչում, որովհետև չի իմանում որտեղացի լինելը և ոչ էլ իրեն ազգանունը: Բայց որբանոցը դեռ շատ աղքատիկ էր, ոսպ էին եփում և վեց-յոթ հոգի մի մեծ թեշտի մեջ լցնում էինք և ուտում էինք, դարավանա⁷⁴ էինք ասում: Մեկ ամսվա չափ մնացի որբանոցում: Մեր սուշեհիրցի 14 տղաներ դիմել էին որբանոցին, որ իրենց դրկեն հայրենի ծննդավայր և այդ հաջողվեց: Ես էլ միացա նրանց հետ, դառանք 15 հոգի և մեզ դրկեցին: Մեզ ուտելիքով և ճանապարհաձախսով բավարարեցին: Ութ օրից հասանք Սեբաստիա, քայլելով՝ իհարկե:

⁷⁴ *Բարավանա*, մետաղե տարա, որով բանակում կերակուր էին բաժանում: Զինվորների մոտ տարայի անունը փոխանցվել է կերակուրին. այնուհետև՝ տարածում գտել:

Ներկայացանք խնամատարություն⁷⁵, այնտեղ դարձյալ մեզ հոգացին: Ամենքին մեկ-մեկ մեճիտիե տվին, այսինքն՝ 20-ական թուրքական դուրուշ: Մեկ ամիս մնացինք և դարձյալ մեզ ամեն ինչով բավարարեցին և շատ ուրախ մեզ ճամբեցին դեպի Սուշեհիր: Երեք օրից քայլելով հասանք Սուշեհիր՝ ծննդավայր:

Նախքան քաղաք հասնելը ես գնացի մեր էքին (պարտեզ), տեսնեմ մի մարդ գարի է ջրում բախչի մեջ և մոտիկացա, տեսնեմ ինձ բարեկամ է՝ Նահապետը: Նայեց դեմքիս, բայց ինձ չճանաչեց, ասաց՝ ով ես դու: Ես ծանոթություն տվի ու ճանաչեց: Մի քիչ խոսելուց հետո ասավ Եադուտ հորքուրդ տունն է, գնա մոտը, բայց քանդված, ավերակ էր հայկական ամբողջ թաղամասերը: Մեկ-մեկ բացառություն էր կազմում, որ թողել էին, բայց ես քաղաքի տան տեղը չէի մոռացեր, ուղղակի գնացի և գտա: Ներս մտա, տեսնեմ Եադուտ հորքուրս նստած է: Ինձ տեսնելուց ամիջապես ճանաչեց ու փաթաթվեց և ես սկսեցի պատմել մեր կրած տառապանքերը: Իրենք էլ թաքնվել են ծանոթ թուրքերի մոտ ու մի կերպ ազատվել են:

Երկու օր մնալուց հետո Եադուտ հորքուրս ըսավ. «Թեյիկ հորքուրդ Մշակնոց է, գնա՛ մոտը»: Եվ ես գնացի գյուղ: Դժվարացա փողոցները իրարից տարբերել, այն աստիճան ավերել էին անոթի թուրքերը, որ փողոց չէր ճանաչվում: Ընդամենը մնացեր էր ութ տուն, որը խաղաղ ժամանակ 250 տուն էր: Նայեցի չորս կողմերս, մտածեցի, որ գտա կենտրոնական փողոցը, երեք տուն իրար մոտ մնացեր էին: Գնացի այդ տներից մեկին հարցնելու, բայց երկյուղի մեջ եմ, որ հանկարծ թուրքերը

⁷⁵ Կարող է լինել Հայ Ազգային խնամատարությանը պատկանող որևէ հաստատություն: Կազմակերպությունը հիմնվել է 1919 թ. 4. Պոլսի Հայոց պատրիարքարանի նախաձեռնությամբ, որի տնօրենն էր հասարակական գործիչ Մատթեոս Էպիփանյանը: Նպատակը մուսուլմանական գերությունից հայ որբերին և կանանց ազատագրելը, նրանց և համակենտրոնացման ճամբարներից վերադարձածներին նյութական աջակցություն տրամադրելն էր: Այս նպատակի համար հիմնել է տարբեր հաստատություններ, որբանոցներ, մասնավորապես՝ Շապին Գարահիսարում և Սուշեհիրում ունեցել է որբանոցներ:

չհարձակվեն ինձ վրա: Գնում էի փողոցով, մի կին ինձ տեսավ ու հարցրեց. «Ո՞վ ես դուն, ո՞ւմն ես ուզում»: Ծանոթացրի իմ ուզածին և ինձ ցույց տվեց տունը: Եվ ես գնացի, տեսնեմ դռանը նստած էին, հենց որ մոտիկացա, նայեց ու իսկույն փաթաթվեց ու սկսեց լալ: Մի քիչ հանգստացավ և սկսեց հետաքրքրվել գյուղացիների մասին, ի՞նչ եղան, ո՞ր մնացին, և ես պատմեցի այն բոլորը, ինչ որ տեսել եմ: Նրանք էլ թաքնվել են հարևան հույն գյուղում և այդպիսով ողջ են մնացել:

1920-1922 թթ. վարուցան ենք անում ու ապրում: 1923 թ. դուրս եկավ մի Թոփալ Օսման⁷⁶ ավազակապետ՝ իր 300 բանդիտներով: Տրապիզոնցի էր, դեռ չէին կշտացել հայերի արյունը խմելուց: Թաք-թաք մնացուկներն էլ այդ լկտի ավազակը սկսեց ձեռք բերածը սպանել: Ես ուզում էի Պոլիս գնալ մի ուրիշ տղի հետ, անհաջող անցավ: Շապին Գարահիսար քաղաքի մեջն էինք, այդ ավազակները մտան մի հայ ընտանիքի տուն, բայց մեզ չեն ճանաչում, թե մենք ինչ ազգ ենք: Այդ խեղճ ընտանիքում սարսափելի լաց ու դժոցներ էին, ամեն տեսակի սպաննություն կանանց նկատմամբ և մաքրեցին տունը: Իսկ

⁷⁶ *Թոփալ Օսման*, Օսման աղա (1883-1923), ծնվել է Տրապիզոնի նահանգի Կիրեսուն քաղաքում: Մասնակցել է 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներին, որտեղ վիրավորվել է ոտքից և ստացել «թոփալ»՝ կաղ ծածկանունը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ղեկավարել է Կիրեսունի կամավորական գունդը: Անձնապես մասնակցել է Հայոց ցեղասպանությանը, մասնավորապես՝ Տրապիզոնի հայերի տեղահանությանը, կոտորածին և ունեցվածքի բռնագրավմանը: Պատերազմի ավարտից հետո կարողանում է փախչել պատասխանատվությունից և իր հրոսակախմբի հետ հարում Մուստաֆա Բեմալի թուրք ազգայնական շարժմանը, նշանակվում Բեմալի թիկնապահական գնդի հրամանատար: 1921 թ. իր չեթներով մասնակցում է Սև ծովի ափամերձ շրջանների հույների տեղահանությանը և կոտորածին: Աչքի է ընկել իր դաժանությամբ և զոհերին խոշտանգելու հակումներով: Բեմալի առաջադրանքով սպանել է մի շարք ընդդիմադիր թուրք քաղաքական գործիչների: Այլևս անվերահսկելի դառնալով, կրկին նրա հրամանով, 1923 թ. Օսմանին համախոհների հետ շրջափակում են, իսկ բռնելուց հետո գնդակահարում: Մարմինը կախում են խորհրդարանի դարպասից՝ ի տես հանրությանը: 2007 թ. Կիրեսունում կանգնեցվել է նրա հուշարձանը:

մենք՝ իմ ձեռքին մի գույգ չարոխ կար, ճամբի եզերքին կանգնած իբր թե չարոխ ենք կարում, առանց նրանցից քաշվելու: Ավերակ էր նույնպես Շապին Գարահիսարը:

Արշակի հետ վերադարձանք գյուղ: Մայիս-հունիս ամիսներին է, դեռ ցորենները չէին հասեր: Այդ սրիկա արյունախում ավազակը եկավ մեր գյուղերը, մեր հարևան գյուղն էր հասեր: Լուրը մեզ հասավ, հորքորս տանը չէր, ես մենակ կանգնած էի: Հանկարծ մեկը ներս մտավ, հարևան թուրքերի գյուղերից է, ավազակային խմբումն է, բայց ծանոթ է հորքորիս: Ասաց՝ ուր է Թեփկը: Ինչին՝ հորքորիս և աղջկան՝ Թագուհուն, ասի, հիմա կանչեմ զան: Ես դուրս ելա տանից ու փախա: Ցորենի արտի առվի երկու կողմերը մանր թփուտներ էին և երկու կողմից կանաչ խոտով ծածկված: Մտա այդ առվի մեջ, թաքնվեղ եմ, բայց խոտերի արանքից նայում եմ: Մի թուրք և մի բանդիտ, թուրքը պոռում է. «Արամ, Արամ, մի վախենա, որտե՞ղ ես, դուրս ել», ինձանից 7-ից 8 քայլ հեռու են: Ես անշունչ պառկել եմ առվի մեջ, իհարկե իզուր էր նրա շողոքորթ լեզուն ու գոռոցները: Հեռացան, իսկ գյուղի մեջ մնացեր էինք հայերի երեք ընտանիք, այն էլ՝ ոչ լրիվ անդամներով: Փախել էին գեղից, իսկ թուրքերը դարձյալ թալանեցին անասունները և չնչին ապրուստի միջոցները:

Այդ օրերում քրտերի ապստամբություն⁷⁷ եղավ, իսկ Թո-

⁷⁷ Քրդական ազգայնական շարժումները սկսվել են Օսմանյան կայսրությունում 1919 թ. և նպատակ ունեին հասնել քրդական սահմանափակ ինքնավարության: Առաջին նման ապստամբությունը բռնկվել է Դեթիմի շրջանում 1920 թ.: Այն հեշտությամբ ճշվել է ներքին ցեղային և դավանաբանական անհամաձայնության պատճառով, թեև Թուրքիայի Ազգային մեծ ժողովում տեղի է տվել սահմանափակ ինքնավարության վերաբերյալ որոշ քննարկումների: Քրդական ինքնավարության հարցը փակվել է 1923 թ. Լոզանի հաշտության պայմանագրով: Հաջորդ ապստամբությունը բռնկվել է արդեն 1925 թ. և Թուրքիայի Հանրապետությունում դարձել պարբերական: Թուրքական իշխանությունների կողմից քրդական յուրաքանչյուր ապստամբության ճշումն ուղեկցվում էր խաղաղ բնակչության տեղահանությամբ,

փալ Օսմանը իր չեթեներով⁷⁸ գնաց քուրտերի վրա: Արդեն մեկ ամիս անցել էր, նորից եկավ մեր կողմերը: Իրիկունը ուշ ժամանակ էր, հորքուրիս աղջիկ Թագուհին գնաց մեր հայ հարևանի տուն: Այնտեղ կան երկու երիտասարդ հայ կանայք, երեքը մի տեղ են: Մեր դռան առջև ճամբա էր, իսկ ճամբի մի կողմը պարտեզ էր և մեկ մետրից ավելի պատ: Իրիկունը ուշ ժամանակ հանկարծ երկու չեթե ներս մտան: Ես և հորաքուրս ենք, ծեր կին է, իսկ չեթեն նույն ծանոթ մարդն էր, ինչ որ առաջին անգամ եկավ: Հորաքուրս հյուրասիրում է, ձվածեղ է անում, ոչ մի բան չեն ուտում, իսկ ահ ու դողը մեզ տիրել է: Ինչ անենք, քնելու ժամն անցեր է արդեն: Հորաքուրս տեղաշոր պատրաստեց, բայց չեն քնում: Զինված են հրացանով, նռնակով և դամաներով՝ ծայրը սուր հանչալով: Գիշերվա կեսն անց էր, տեսնեմ վեր կեցան, կիավուռ օղլու՝ կիավուռի տոբա, վեր կաց: Ես վեր կեցա: Հորքուրս աղաչում է, բայց ոչ մի նշանակություն չունի աղաչանքը. «Ո՞ր է աղջիկդ, ինչո՞ւ փախցուցիր»: Ինձ դուրս հանին երկուսը միասին, ինձ առաջ ձգեցին ու ասում են. «Շո՞ւտ Թագուհուն կգտնես, թե չէ քեզ կմորթենք»: Լուսնյակ գիշեր է, խոր մտքի մեջ գազանների առջևից ընկած գնում եմ: Դեռ 30 քայլ չանցած վճռականապես որոշեցի մտքիս, որ պիտի չենթարկվել և կանանց կյանքը չդավաճանել: Որոշեցի թռնել առջևներից և մի ակնթարթում թռա ու պատն անցա: Ճարպիկությամբ հասա այն տունը, որտեղ երեք երիտասարդ կանայք քնած են, զարկի դռանը ու ասի՝ շուտ դուրս փախեք: Եվ ես անհայտացա վերանանների՝ ավերակների մեջ: Գեղի եզերքում Ալի Բեկը բոստան էր ցանած, մտա մի հատ մեծ սեխ պոկեցի ու մի քիչ հեռու նստա, ջարդեցի կերա, մի քիչ փոս տեղ կար ու այդտեղ պառկեցի առանց քնել: Զգույշ նայում էի չորս կողմս: Արդեն լույսը բացվել էր, տեսնեմ ինձանից 60-70 քայլ

ունեցվածքի բռնագրավմամբ և թուրդ երեխաներին թուրքական հատուկ հաստատություններ տեղափոխելով:

⁷⁸ *Չևթե*, հրոսակ, ավազակախումբ:

հեռավորության վրա անցան ու գնացին, իսկ տունը մնացած ծեր կնոջը ոչինչ չէին արել: Այստեղ ևս իմ վճռականության և ճարպիկության շնորհիվ չորս հոգիս ազատվեցինք գազազած արյունախումների ձեռքից:

Այնուհետև ես վճռականորեն որոշեցի՝ այդ հողը մեր հայրենիքը չէ, մենք այստեղ ապրել չենք կարող. մինչև ե՞րբ պիտի տառապենք շուն թուրքի ճիրանների տակ: Ասացի՝ հորքուր, թափիր ամեն ինչ, հրաժարվենք այս գարշելի հողից ու հորքուրս համակրեց ինձ:

1923 թ. աշնանն էր, թողեցինք ամեն ինչ, մի մասը ծախեցինք: Մոտիկ գեղացի քուրս ծանոթներ ունեինք, որոնք շատ էին հարգում հորքուրիս: Բերին իրենց ձիերը, բարձվեցանք ու դուրս եկանք գեղից: Հարևան կինը կանչում էր. «Արամ ջան, հետ նայիր՝ մեկ էլ տեսնեմ դեմքդ»: Բայց ես հետ չնայեցի ու, անիծելով գարշելիներին, շարունակեցի քայլերս:

Երեք օրից հասանք Կիրեսունի նավահանգիստը: Պոլիս գնացող նավը պատրաստի կանգնած է նավահանգստից համարյա կես կիլոմետր խորքը: Շոգենավը առաջին ազդանշանը տվեց մեկնելու, մոտերն է⁷⁹ նավակը միացած է նավահանգստին, բեռները լցրինք նավակը: Հորաքուրս, նրանք էլ նստան, իսկ ես քայլս վերցրի, մինչև նավակ իջնելու հանկարծ մեկը թևիցս բռնեց ու հետ քաշեց: Նավակը շարժվեց դեպի նավ, նրանք գնացին, ես դարձյալ մնացի գազազած վիշապների ձեռքին: Բաժանվեցի հարազատներից, ես լաց էի լինում, իսկ մեզ բերող քուրս Հուսեփինը սիրտ էր տալի ինձ ասելով, թե մի վախեցիր, բան չկա:

Իրիկուն է, ուշ ժամանակ ինձ տարան խան, քուրս Հուսեփի ձիերի մոտ, ու [այդ] ժամանակ տեսնեմ եկան երկու հոգի, ինձ տարին առանձին տեղ, հանեցին շորերս, չուքիներս⁸⁰, մաքուր խուզարկեցին և ոչ մի բան չգտան: Ասին՝ հագի շորերդ: Հագնվեցի, բայց մութ էր ինձ համար աշխարհը,

⁷⁹ *Մոտերն է*, թերևս՝ մոդեռն, ժամանակակից:

⁸⁰ *Չուքի*, ռուս.՝ чулки / գուլպա:

տխրության մեջ կորած, խանում նստած մտքերի մեջ էի ընկեր ելքը գտնելու համար: Առավոտվա լույսը բացվել էր արդեն, տեսնեմ եկավ մեր քիրաչի⁸¹ քուրտ Հուսեփնը ձեռքին կերակրելու և ինձ ասաց, որ մի մտածի, ես դեռ այստեղ եմ ու սիրտ էր տալի: Երկու օր անցել էր արդեն, երրորդ օրն էր, Հուսեփնը արդեն պիտի մեկնե՞ր տուն: Վերջին անգամ եկավ մոտս ու ասաց. «Արամ, Պոլիս գնացող նավ կա, և տաս փանկնոտ (լիրա) կաշառք եմ տվել, որ քեզ դրկեմ, մի մտածի, քեզ կճամբեմ, ես նոր կգնամ տուն»: Եվ այդպես էլ արավ, ինձ նստեցուց նավ, ճամբին ուտելի պաշար տվավ, երթաս բարով ասաց ու բաժանվեցինք: Ես արդեն կես չափով եմ ուրախ, նրա համար, որ դեռ տեղ չեմ հասել: Վերջապես նավը հասավ Ստամբուլ և դուրս եկա նավից ու գնացի գտա այն հասցեն, որը որ ինձ պետք էր: Եվ այնտեղ էր հորեղբայրս՝ Պետրոսը: Ապրում էր քաղաքում, պատերազմից շուտ քաղաքից դուրս էր՝ պանդուխտ, որի մասին ես ոչ մի տեղեկություն չունեի:

1924 թ. գարնանը լսեցի, որ մեծ թվով հայեր փոխադրվում են Հայաստան: Այդ լուրը ինձ շատ դուր եկավ, իսկական իմ սրտով, ես վաղուց էի երազում Հայաստանի մասին և ուրախանում, թե արդյոք պիտի հասնեմ այդ օրվան, ու մտքերի մեջ էի ընկել, թե ինչ անեմ, որ կարողանամ գալու ճարը գտնեմ: Հորեղբայրս Ստամբուլի Հայտարիաշա թաղամասում հացթուխ էր աշխատում: Գնացի մոտը և ասի.

- Հորեղբայր, ինձ փո՞ղ տուր, ես Հայաստան պիտի երթամ:
- Ինչպե՞ս կերթաս, - ըսավ, - պասպորտ չունես, քեզ կբռնեն, ծովը կնետեն, - ըսավ, ոչ մի բան չտվավ:
- Մնաս բարով, - ըսի, - նետում են, թող նետեն:

Եվ հեռացա մոտից: Թավուխպազար թաղամասում կար մի չայխանա՝ թեյարան, որը գտնվում էր Մարգար աղայի տրամադրության տակ: Թեյարանում նստած քարտ էինք խաղում և ջահելներս, և մեծերը: Այդ պահին հանկարծ լսեցի, որ այսօր արդեն գնացողները դուրս են գալի և պատրաստ վիճա-

⁸¹ *Քիրաչի*, թուրք.՝ kiraçi / վարձակալ:

կում սպասում են Ղալաթա նավահանգստում: Տղերք, ասի, ես կերթամ, կոր և բոլորը խնդացին ինձ վրա, արհամարհելով, թե ինչ ունես և ինչպես կերթաս: Պատասխանեցի՝ ոչ մի բան չունեմ և ոչ մի կոպեկ, բայց ինչ գնով ալ ըլլա պետք է երթամ Հայաստան: Բոլոր ծանոթ մեծերին և փոքրերին ձեռք ձեռքի տալով մնաք բարի ըսի ու շարժվեցի թեյարանից դուրս: Անձրևոտ օր էր, գնացի Ղալաթա նավահանգիստ: Նավը խորն էր կանգնած, նստում էին խոշոր նավակներով և հասնում շոգենավ: Ես առանց որևէ բան հարցնելու համարձակորեն նստա լոտկա⁸²: Նավակի բեռը լրիվ էր, շարժվեց դեպի նավը: Արդեն աստիճանով բարձրանում ենք նավ, ես վերջինն էի: Անձրևը ուժեղ գալիս էր, աստիճանի ծայրին կանգնած էր մի ուստիկան, պահանջեց պասապորտ, իսկ ես համարձակ կերպով ասի. «Ինչպե՞ս կարելի է էս անձրևի տակ պասապորտ հանել, ներս անցնես, ստուգի՛ր»: Արդեն մտա նավ, շատ ուրախ եմ, ջանդամին, թե ոչինչ չունեմ, բայց իմ նպատակին կհասնեմ: Նավի մեջ ստուգումների ժամանակ դարձյալ հաջող անցրի և անվտանգ: Շոգենավի մեջ կային կանայք, որոնց հետ ծանոթացանք, մեր կողմերից էին, ինձ կօգնեին հացով, թեթև ուտելիքով: Արդեն հասել ենք Բայթում, շոգենավը միացավ ցամաքի հետ և արդեն ժողովուրդը դուրս են գալիս նավից, իսկ բեռները աստիճանով գլորում են նավից դուրս: Երկու անգամ դուրս ելա, պասապորտ ուզեցին, ասի՝ ես դեռ չեմ դուրս գալիս. բեռ եմ դուրս գլորում: Մսացել էր արդեն մի կապված բեռ և ես այդ վերջինի հետ դուրս ելա: Նորից պասապորտ ուզեց, բայց նեղանալով ասի.

- Քանի՞ անգամ պասապորտ կտան:

- Բա ո՞ր է:

- Ես ի՞նչ գիտեմ, ձեռքումդ է, քեզ եմ տվեր, ստուգի՛ր պասապորտների մեջ:

Իսկ ձեռքին այնքան շատ էր դարսված պասապորտներ,

⁸² *Лотка*, րուս.՝ лодка /նավակ:

որ ժամանակ չէր ունենա մեկ-մեկ ստուգելու և ասաց՝ անցիր: Աշխարհը իմն է արդեն, շատ եմ ուրախ, չնայած որ ոչ մի բան չունեմ, ոչ ուտելիք, ոչ հագնելիք, ոչ քնելիք, և ո՛չ էլ դրամ: Այդ մասին բոլորովին չեմ էլ մտածեր:

1924 թ. աշնանը մի քանի հոգու Լենինականից ուղարկեցին Անիպեմզա հանքերը: Բայց մինչ հանքեր գնալը ամառվա սեզոնին աշխատեցի Լենինականի շրջանի Կապս գյուղում Շիրակի ջրանցքի վրա, և հետո՝ Անիպեմզա: 1924 թ. նոյեմբերից մինչև 1925 թ. մայիս ամիսը մնացի Անիպեմզայի հանքերում: Նույն թվի հունիսին փոխադրվեցի Երևան, մտա կոմինդրի գործարան, աշխատեցի օրավարձ բանվոր: Օրական լավ աշխատելու համար 60 կոպեկ կատանայի, իսկ ուրիշները՝ 40-50 կոպեկ: Չմեռը վրա տվեց, 1925 թ. դեկտեմբերին գործը կանգնեց: Ես մնացի անգործ և չունեի գիշերելու տեղ: Մի ծանոթ տղա կար, նրա մոտ քնեցի մեկ ամիս և այդ ծանոթ տղի միջոցով 1926 թ. հունվարին ծանոթացա մի նալբանտի⁸³ հետ: Նալբանտը նորեկ էր, թրքախոս: Ես ձիերի ոտները կրոնեի, նալբանտն էլ կնալեր: 1926 թ. ամառը նալբանտի միջոցով ծանոթացա ներկա ընտանիքիս հետ, իսկ նալբանտը ամեն իրիկուն 5 կոպեկ կտար, կգնայի դանդարի⁸⁴ տակ խանում կքնեի: Նալբանտի և ուրիշ ծանոթ դարբինի միջոցով ինձ ամուսնացրին որպես տան փեսայի: Նշանված օրվանից գոքանչս այլևս թույլ չտվեց ձիու ոտ բռնել⁸⁵: Մտա «Կարմիր հոկտեմբեր» ատաղձագործարան, աշխատեցի և սովորեցի արհեստը:

Իզուր անցավ թուրք ստրկատերի ջանքերն ու նպատակը, որ չկարողացան Արամի կայուն կամքը տապալել ու լիակա-

⁸³ Նալբանտ(դ), պայտար:

⁸⁴ Զանդար, մեծ կշեռք շուկայում, այստեղ՝ «կամար» իմաստով:

⁸⁵ Վերապրածի դուստր Լիդա Մանթաշյանը փաստում է մորական տատի՝ Եղիաբեթ Փափագյանի յուրահատուկ վերաբերմունքն իր հոր նկատմամբ: Հուշի խմբագրի հետ հանդիպման ընթացքում նա նաև պատմել է, որ տատի պնդումով հայրը նույնիսկ ստացել է երաժշտական կրթություն:

տար Սեյտո դարձնել: Արամ չէր կարող ուրանալ իր սիրելի հայ ազգին ու Սեյտո լինել: Վախկոտ չէի, ամուր էր իմ կամքը և դիմացա բոլոր տեսակի տաժանակիր ծեծերին, չարչարանքներին ու տառապանքներին մանուկ հասակից, մինչև որ ոտք դրեցի սիրելի հայրենի սեփական հողի վրա և լիակատար ազատագրվեց կյանքս:

Շերիֆ աղան, դաման (դաշույնը) ձեռքին, էլ չի կարող ասել՝ ըհը, ըհը, ըհը և ըհը, այսինքն՝ հինգիդ էլ կծեծեմ, կամ մյուս թուրքը, որ ձիու պոչին կապի ու ստիպի. «ասա լեյլա հաիլլալահ»: Չկան այլևս այդպիսիք:

Ապրում եմ Երևանում, ունեմ հինգ զավակներ, տղա և աղջիկ թոռներ⁸⁶: Եվ ես ինչ էի, ի՞նչ դառա...

Արամ Միսակի Մանթաշյան

⁸⁶ Ինչպես նշվել է խմբագրի խոսքում, հուշը գրի է առնվել 1932 թ., սակայն այս նախադասությունն ավելացվել է ավելի ուշ: Մանթաշյանն ամուսնացել է 1927 թ. ցեղասպանությունը վերապրած անկարացի Վերոնիկ Փափազյանի հետ: Նրանք ունեցել են վեց զավակ՝ Հայկազ, Սերոժ, Սեդա, Լիդա, Լենա, Արաքսյա: Վերապրածի երկրորդ որդին՝ Սերոժը մահացել է 1932 թ. հիվանդության պատճառով երկու տարեկան հասակում, այդ իսկ պատճառով հուշում զավակների թիվը նշված է հինգ:

ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՈՒՇԵՐ



*Սոկրատ Մկրտչյան, 1930-ական թթ.
(Սոկրատ Մկրտչյանի ընտանեկան արխիվ)*

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սոկրատ Հակեյի Մկրտչյանի հուշագրությունը Մեծ եղեռնի արհավիրքը վերապրած-ականատեսների՝ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտական ֆոնդերում պահվող շուրջ 480 ձեռագիր վկայություններից մեկն է (Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդեր, բաժին 8, ֆոնդ. 24, թղթապանակ 29-30):

Հեղինակը ներկայացնում է հայ ժողովրդի համար ճակատագրական՝ 1915 թվականին իր հայրենի գյուղի՝ Արևմտյան Հայաստանի Բիթլիսի (Բաղեշ) նահանգի Բիթլիսի գավառի Խլաթի գավառակի Փրխուս գյուղի հայ բնակչության կոտորածի և թալանի, դրա արդյունքում իրեն և իր ընտանիքին բաժին ընկած փորձությունների պատմությունը: Գոյատևման այդ պայքարի՝ մահվան մշտական սպառնալիքից փրկվելու նպատակով ամեն օր, եթե ոչ ամեն ժամ, թույլ և վայրկյան, մաքառման ընթացքում Սոկրատ Մկրտչյանը կորցնում է հորը, մորը և ծծկեր տարիքը չանցած փոքր եղբորը, փրկվում է միայն ինքը՝ հեղինակը և նրա փոքր քույրը՝ Մարգարիտը:

Հեղինակը բաժանել է հուշագրությունը հինգ գլուխների: Առաջին գլխում, որը կրում է «Մեր գյուղը, նրա նիստուկացը» անունը, նա ներկայացնում է ծննդավայր՝ Փրխուսը, նրա շրջակայքը՝ «ջինջ ու կապուտակ» Նազիկ լիճը, գյուղից դեպի հարավ ընկած «նոթոտ ու մշտապես մռայլ» Նեմրութ լեռը, իր ընտանիքը, ուսումը գյուղական դպրոցում և այլն: Ուշագրավ են Փրխուսի և գավառի առօրյա կյանքի, բնակչության զբաղմունքի, առանձին սովորույթների և ծեսերի մասին հեղինակի դիտարկումները:

Երկրորդ՝ «Իմ մանկությունը» վերնագրված գլխում, հեղինակը շարունակում է ներկայացնել իր ընտանիքի պատմությունը մինչև 1914 թվականը՝ Առաջին աշխարհամարտի

բռնկվելը: Տաս տարեկանը հազիվ բոլորած տղայի հիշողությունների թելը մեզ հաղորդակից է դարձնում Մեծ եղեռնի նախաշեմի արևմտահայ գյուղում կյանքի անշտապ ընթացքին: Մեր առջև պատկերվում է արևմտահայ գյուղացու դժվար և զրկա՛նքներով լեցուն առօրյան: Ինքը՝ հեղինակը, մանկուց ներգրավվել էր գյուղատնտեսական աշխատանքներին՝ օգնելով հորը որպես հոտաղ՝ վարի եզների լուծին՝ նստող կամ լուծի առջևից քայլող ու եզներին քշող տղա: Հուշերի այս հատվածի ուշագրավ դրվագներից են փոքրիկ Սոկրատի՝ նահանգի կենտրոն՝ Բիթլիս (Բաղեշ) քաղաք, ինչպես նաև հարևան Բուլանըխի գավառակ ճանապարհորդությունների նկարագրությունները:

Վրա է հասնում Առաջին աշխարհամարտը և 1915 թվականը: Հայոց ցեղասպանության առաջին փուլը հայ տղամարդկանց ոչնչացումն էր աշխատանքային գումարտակներում. Սոկրատի հորը, Փրխուսի ու գավառակի գյուղերի բազմաթիվ տղամարդկանց հետ միասին, տանում են բանակ՝ որպես բեռնակիր («դամուռ բաշի») և նա այլևս երբեք չի վերադառնում, անհետ կորում է:

Հուշագրության երրորդ՝ «Պատերազմ» գլխի առանցքային դրվագը Փրխուս գյուղի եղեռնի նկարագրությունն է: Ռուսական բանակի գրոհի տակ Բայազետի գավառից նահանջող Հասնացի քրդական աշիրեթը 1915 թ. ապրիլին «քաղցից ոռնացող գայլերի ոհմակի գազանությամբ» ներխուժում է իր ճանապարհին ընկած Փրխուս գյուղը. անպաշտպան բնակչության մեծ մասը սրի է քաշվում, հայերի ունեցվածքը՝ հացահատիկը, անասուններն ու գույքը, թալանվում է: Բնակչության ողջ մնացած խլակները, որոնց մեջ նաև հուշագրության հեղինակն իր մոր, ծծկեր եղբոր ու քրոջ հետ, փախչում են ավերված Փրխուսից:

Սոկրատի և նրա հարազատների դեգերումների ողիսականը ներկայացված է հուշագրության չորրորդ («Գեր-

ություն») և հինգերորդ («Փրկություն») գլուխներում: Այդ ճանապարհի ամեն քայլափոխին նրանց մահ էր սպառնում: Հեղինակի մայրը, իր որդու կյանքը փրկելու նպատակով, նրան հանձնում է տեղացի մի քրդի՝ Բինբոյին, որպես հովվի օգնական՝ հոտադ: Հեղինակը ստիպված է լինում հետևել ռուսական բանակի առաջխաղացումից փախչող քրդերին՝ թողնելով թիկունքում մորը և քրոջը (իր ծնկեր եղբայրն այդ ընթացքում մահացել էր), անցնում է Մշո դաշտ և այնտեղ միայն կարողանում փախուստի դիմել: Տարբեր արկածներից հետո, որոնց նկարագրությունը չմարող հետաքրքրությամբ է ընթերցվում, Սոկրատին ի վերջո հաջողվում է անցնել ռուսական զորամիավորումների կողմից զբաղեցրած տարածք: Հետդարձի ճանապարհին հեղինակը ողջ է գտնում միայն քրոջը՝ մայրը, չկարողանալով դիմանալ զրկանքներին, մահացել էր: Այնուհետև Սոկրատն իր քրոջ հետ միանում է ռուսական զորքերի հետ նահանջող մշեցի և բիթլիսցի հազարավոր փախստականների քարավանին և շարժվում դեպի Արևելյան Հայաստան: Էջմիածին հասնելուց հետո նրանք սկզբից տեղավորվում են այնտեղի մանկատներից մեկում, այնուհետև տեղափոխվում Մոսկվայի հայկական կոմիտեի հովանու տակ գործող Աշտարակի մանկատուն¹: Մանկատան կյանքի հակիրճ նկարագրությամբ, հաստատության դաստիարակներին և ուսուցիչներին ուղղված ջերմ խոսքերով և ավարտվում է այս ծավալով ոչ մեծ, սակայն խիստ ուշագրավ հուշագրությունը:

Հեղինակի հետագա ճակատագրի մասին մենք իմանում

¹ Նշենք, որ Սոկրատ Մկրտչյանի (13 տարեկան) և նրա քույր Մարգարիտի (9 տարեկան) անուններն ընդգրկված են Մոսկվայի հայկական կոմիտեի Աշտարակի որբանոցի որբերի՝ առ 1916 թ. մայիսի 14-ի դրությամբ անվանացուցակում, որը գետեղվել է Կովկասի հայոց բարեգործական ընկերության կողմից հրատարակվող «Համբավաբեր» հասարակական-քաղաքական շաբաթաթերթի 1916 թ. դեկտեմբերի 4-ի համարի հավելվածում: Նրանց հետ միասին նույն որբանոցում պահվում էր Փրկուս գյուղից թվով 28 երեխա (տե՛ս *Համբաստեղ* (Թիֆլիս), 4 դեկտեմբերի 1916, № 49, Յուելուած. 3):

ենք հուշագրությանը կցված կենսագրական ժլատ տողերից: Մանկատանը հեղինակը ստանում է միջնակարգ կրթություն, ուսումն ավարտելուց հետո ամուսնանում է և քրոջ հետ միասին լքում հաստատությունը: Յոթ տարի ծառայում է խորհրդային Կարմիր բանակում, զորացրվում 1930 թվականին: Նույն տարում ընդունվում է Համամիութենական անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտ, որն ավարտում է 1934 թ.՝ ստանալով անասնատեխնիկի մասնագիտություն: 1935 թ. հունվարին ընդունվում է աշխատանքի Ժողկոմխորհին կից ռադիոհաղորդումների կոմիտե՝ որպես քաղաքական-մասսայական հաղորդումների ղեկավար: 1937 թ. փոխադրվում է քաղաքական հաղորդումների պատասխանատու խմբագրի պաշտոնին: 1940 թ. հունիսից նշանակվում է «Վերջին լուրեր» հաղորդման գլխավոր խմբագիր: Հայրենական մեծ պատերազմի սկսվելուց հետո՝ 1941 թ., մեկնում է ռազմաճակատ, իսկ 1943 թ. զորացրվում հիվանդության պատճառով: 1943-1946 թթ. աշխատում է Սոցիալական ապահովության մինիստրությունում, 1947-1954 թթ.՝ «Կոմունիստ» թերթի խմբագրությունում որպես Մարտունու, Կամոյի և Բասարգեչարի շրջանների սեփական թղթակից: 1960-ական թթ. նա աշխատանքի է անցնում «Ռյաթագա» քրդալեզու թերթում որպես գրաքննիչ: Այնուհետև հիվանդության պատճառով անցնում է թոշակի և վախճանվում 1986 թ. փետրվարին:

Սուրբատ Մկրտչյանի հուշագրությունը արժեքավոր է մի շարք առումներով: Նախ այն եզակի պատմական սկզբնաղբյուր է՝ Արևմտյան Հայաստանի հայկական բնակավայրերից մեկի՝ Փրխուսի, Խլաթի գավառակի այլ հայաբնակ գյուղերի բնաջնջման, Հայոց ցեղասպանության իրականացման մեջ քրդերի դերակատարության, եղեռնի գործադրման մեխանիզմների՝ սպանության կոնկրետ եղանակների, հայության կոնկրետ խմբերի (տղամարդիկ, երիտասարդ կանայք)

թիրախավորման, հայերի նկատմամբ գործադրված այլ բռնության ձևերի (բռնաբարություններ, խոշտանգումներ, աշխատանքային շահագործում), հայերի ունեզրկման վերաբերյալ ականատեսի վկայություն:

Բացի դրանից՝ արևմտահայության ազգագրությամբ զբաղվող ուսումնասիրողների համար կարող են որոշակի հետաքրքրություն ներկայացնել հուշագրության առաջին («Մեր գյուղը, նրա նիստուկացը») և երկրորդ («Իմ մանկությունը») գլուխներում Խլաթի հայ բնակչության առօրյա կյանքի, նիստուկացի նկարագրությունները, Մուշի ժողովրդական երգերի մի քանի նմուշներ և այլն:

Հուշագրությունն օժտված է նաև որոշակի գրափյուն-գեղարվեստական արժանիքներով: Աշխատանքն ունի կուռ կառուցվածք, պատմողական ոճը՝ հստակ ու կլանող է, լեզուն՝ պարզ և, միաժամանակ, վառ ու պատկերավոր:

Սուրբատ Հակեյի Մկրտչյանի հուշերը հավաքել և ի մի է բերել նրա ավագ դուստրը՝ Լենա Մկրտչյանը: Նա է նաև 1998 թ. մայիսին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին փոխանցել հուշագրությունը պարունակող հինգ տետրերում ամփոփված սկզբնական ձեռագիրը և այդ ձեռագրերի հիման վրա իր կողմից կազմված մաքրագիր մատյանը: Հուշերը տպագրության պատրաստելիս մենք հիմք ենք ընդունել մաքրագիր ձեռագիրը՝ անհրաժեշտության դեպքում այն համեմատելով սկզբնական ձեռագիր տարբերակի հետ և կատարելով համապատասխան ուղղումներ ու լրացումներ:

Աշխատանքը խմբագրելիս մենք առաջնորդվել ենք բնագրի մեջ հնարավորինս քիչ միջամտություններ անելու սկզբունքով: Կատարվել են հիմնականում կետադրական և քերականական ուղղումներ՝ աշխատանքի կետադրությունը համապատասխանեցվել է արդի նորմերին, շտկվել են առավել ակնհայտ քերականական անհարթությունները և ոճական թերությունները:

Մենք նաև ծանոթագրել ենք հեղինակի կողմից հիշատակվող Արևմտյան Հայաստանի աշխարհագրական անուններն ու տեղանունները, բարբառային, խոսակցական հազվադեպ օգտագործվող բառերը, որոշ դեպքերում մեր կարծիքով պարզաբանման կարիք ունեցող առանձին փաստերը: Տեղանունները ծանոթագրելու համար օգտվել ենք «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» համապատասխան հատորներից²: Ծանոթագրված բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները վերցրել ենք Ռայմոն Հարություն Գևորգյանի և Փոլ Փաբուջյանի «Հայերը Օսմանյան կայսրությունում ցեղասպանության նախօրյակին» գրքից³:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունից օգտվել է հայ ուսումնասիրող, քանահավաք-ցեղասպանագետ Վերժինե Սվազյանը, որը դրանից որոշ հատվածներ զետեղել է իր «Հայոց ցեղասպանություն. ականատես-վերապրողների վկայություններ» գրքում⁴:

Աշխատանքը պարունակում է երկու հավելված: Առաջին հավելվածով ներկայացվում է մեր հեղինակած «Մեկ բնակավայրի եղեռնը. Խլաթի գավառակի Փրխոս գյուղի բնաջնջումը 1915 թվականին» հոդվածը: Երկրորդը՝ Սոկրատ Հակեյի Մկրտչյանի վկայությունն է, որը գրի է առնվել դեռևս 1916 թ. օգոստոսի 9-ին՝ Աշտարակում Մոսկվայի Հայկական կոմիտեի որբանոցում նրա գտնվելու ժամանակ (այս վկայությունը

² Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Սո. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Հտ. 1, Ա-Դ (Երևան, 1986), Հտ. 2, Դ-Կ (Երևան, 1988), Հտ. 3, Կ-Ն (Երևան, 1991), Հտ. 4, Ն-Վ (Երևան, 1998), Հտ. 5, Տ-Ց (Երևան, 2001):

³ Տե՛ս Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du Génocide* (Paris, ARHIS, 1992):

⁴ Տե՛ս Վերժինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ* (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011), 105-108:

հիմնական գծերով երկրորդում է հեղինակի հուշագրության մեջ ներկայացված փաստերը)⁵:

Ռորերտ Թաթոյան,
*«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու*

⁵ Տե՛ս Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թորքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, հեղ. և կազմ.՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, գլխավոր խմբագիր Ա. Վիրաբյան, հատոր II, *Բիթլիսի նահանգ* (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 50-51:



Աշտարակի մանկատան սաների խմբակային լուսանկար, 1916 թ.: Վերևի շարքում ձախից երրորդը հուշերի հեղինակ Սոկրատ Մկրտչյանն է: Ներքևից երկրորդ շարքի ձախից չորրորդը Սոկրատ Մկրտչյանի քույր Մարգարիտն է (Աղբյուր՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արխիվ)



*Սոկրատ Մկրտչյանն իր քրոջ՝ Մարգարիտի (կանգնած), կնոջ
և ավագ դստեր հետ (1930-ական թթ.) (Աղբյուր՝ Սոկրատ
Մկրտչյանի ընտանեկան արխիվ)*

ՀՈՒՇԵՐ

Գլուխ I.

ՄԵՐ ԳՅՈՒՂ, ՆՐԱ ՆԻՍՏՈՒԿԱՅՑ

Մեր գյուղը՝ Փրխուսը, գտնվում է Արևմտյան Հայաստանի Խլաթ (պատմական Բզնունիք) գավառում¹, Նազիկ² լճի ափին, լայնանիստ Նեմրութ³ լեռան դեմ դիմաց, որից դեպի արևմուտք

¹ *Խլաթի գավառը* կամ, ըստ օսմանյան վարչատարածքային բաժանման՝ գավառակը (կազա), ընդգրկված էր Բիթլիսի (Բաղեշ) նահանգի Բիթլիսի գավառի կազմում: Գավառակի կազմի մեջ էին մտնում Վանա լճի հյուսիս-արևմտյան և արևմտյան շրջանները: Գավառակի հյուսիսային սահմանը Սիփան լեռնագագաթն էր, իսկ հարավային սահմանը՝ Գրգուռը և Նեմրութը: Կենտրոնն էր Խլաթ գյուղաքաղաքը:

Խլաթի ու արևելքից նրան հարևան՝ Արծկեի գավառակի տարածքները հնում պատկանել են Բզնունյաց նախարարական տոհմին և կոչվել են Բզնունիք գավառ, որից էլ առաջացել է Վանա լճի պատմական՝ Բզնունյաց ծով անունը: Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի հրահանգով 1913 թ. կազմված վիճակագրության համաձայն Խլաթի գավառակի կազմում կար 23 հայաբնակ բնակավայր՝ 1771 տուն, 13860 շունչ հայ բնակչությամբ (հաշվարկը մեր կողմից՝ ըստ վիճակագրական ցուցակի):

Փրխուսը Խլաթի գավառակի առավել հարուստ և հայաշատ բնակավայրերից մեկն էր: Համաձայն նույն՝ 1913 թ. վերաբերող տվյալների՝ Փրխուսն ուներ 207 տուն, 1939 շունչ հայ բնակչություն: Այլ տվյալներով՝ հայ բնակչության թիվը նշվածից առավել է եղել՝ մինչև 400 տուն: Ինքը՝ հուշագիրը հետագա շարադրանքում հաղորդում է, որ գյուղի հայ տների թիվը 300 էր:

² *Նազիկ*, անհոսք լիճ Հայկական լեռնաշխարհում Վանա լճից դեպի հյուսիս-արևմուտք՝ մոտ 2000 մ բարձրության վրա: Առաջացել է Սիփանի և Նեմրութի հրաբխային լավաների արգելափակումից: Երկարությունը մոտ 11 կմ է, առավելագույն լայնությունը՝ 6,5 կմ, մակերեսը՝ 40 քառ. կմ, ջրիավաք ավազանը՝ 800 քառ. կմ: Մտումը հայոցքային, անձրևային և արբյուրներից է: Ջուրը քաղցրահամ է, վճիտ, օգտագործվում է խմելու նպատակով:

³ *Նեմրութ*, լեռնագագաթ Հայկական լեռնաշխարհում, Վանա լճի հարավ-արևմտյան ափին: Լայնանիստ է և գրավում է բավական ընդարձակ տարածություն: Լեռը կոնաձև է, գագաթում մեծ ու ընդարձակ բազալտե խառնարանով, որն ունի 25 կմ շրջագիծ և 8 կմ տրամագիծ. այն աշխարհում ամենամեծ խառնարաններից մեկն է: Նեմրութի խառնարանի տարածքում

տարածվում էր Մշո դաշտը, հարավում ծփում էր Վանա լիճը, իսկ գյուղից արևելք շողշողում էր շքեղ Միփանը⁴:

Այս է եղել իմ մանկության օրորանը, այստեղ եմ առաջին անգամ աչք բացել, տեսել արևի լույսը, ճանաչել շրջապատս:

Մեր գյուղը կոչվում էր Փրխուս: Թե ի՞նչ է նշանակում այդ՝ չգիտեմ: Ծերերն ասում էին, թե իբր շատ վաղուց գյուղում գետինը փորելիս գտել են մի մեծ քար, որի վրա հայերեն տառերով, բայց քրդերեն լեզվով գրված է եղել. «Նավի մըն Մուսա, գնդի մըն Փրխուսա» (հայերեն դա նշանակում է «Իմ անունը Մուսա է, իմ գյուղն էլ Փրխուսն է»):

Բայց մեր գյուղում ոչ մի քուրդ չկար:

Մեր գյուղը ուներ ծուռումուռ փողոցներ, հողածածկ, մեկը մյուսին կից երդիկներով կտուրներ, այնպես որ մի ամբողջ թաղամաս կտուրների վրայով կարելի էր շրջել: Գյուղացիների բնակարաններն ու անասնազոմերը (թավվան) իրար կից էին. մարդիկ ու անասունները շնչում էին նույն օդը:

-2-

Երբեմն թվում է, որ ոչ թե կես դար առաջ, այլ մի քանի օր է, ինչ ինձ անջատել են մանկությանս այդ սրբազան վայրերից:

Ահա մեր գյուղի եկեղեցին, որին մենք ժամ էինք ասում: Դա սրբատաշ, կարմիր տուֆից, որով այնքան հարուստ էր մեր գյուղը, կառուցված բավականին մեծ մի շինություն էր. իր արտաքին տեսքով նա ամբողջովին իշխում էր գյուղի վրա: Նրա ամբողջ կառուցվածքում բացի դռնից ոչ մի այլ փաթուի կտոր չկար: Կրի շաղախով շարված մի ամբողջ ձուլվածք էր այն, իր սքանչելի կամարներով, խոյակներով, սալապատված հատակով ու բարձր քարե բեմով, ճարտարապետական հիասքանչ կոթող:

կան 7 լճակներ: Նեմրոթն ունի երեք հարակից գազաթներ, որոնցից ամենաբարձրը 2910 մետր է:

⁴ Միփան, լեռնագագաթ Հայկական լեռնաշխարհում, Վանա լճից հյուսիս: Հանգած հրաբուխ է, երեք գազաթներով, որոնցից ամենաբարձրը 4434 մետր է: Մեծ Մասիսից հետո Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթն է:

Մեծերն ասում էին, որ այն կառուցել են ինչ-որ սրբացած մարդիկ, կառուցել ու կորել են անհետ: Իսկ ոմանք ասում էին, որ այն կառուցել են գյուղին անձանոթ քույր և եղբայր: Կառուցել և երբ ավարտել են այն, նրա բարձունքից ցած են ընկել ու մահացել: Անգամ եկեղեցու փոքրիկ բակում, որը շրջապատված էր բարձր քարե պարիսպով, որը միշտ մաքուր ու կանաչ էր, ցույց էին տալիս նրանց միատեղ թաղված գերեզմանը: Մենք՝ երեխաներս, հավատում էինք այդ լեգենդին ու ցավում նրանց համար:

-3-

Զինջ ու կապուտակ էր մեր ծովը՝ Նազիկ լիճը, որ իր քաղցր ու վճիտ ջրերով ծփում էր Նեմրույթ, Սիփան ու Բլեջան⁵ լեռների գրկում: Նրանով ու երկնագահ Սիփանով է, որ ես դեռ պատանի հասակից զգացել եմ գեղեցիկն ու անարատը:

Դա բնության մի դյուրօխչ անկյուն էր:

Ժողովուրդը սերնդեսերունդ շքեղ լեգենդներ էր հյուսել Նազիկի մասին: Ասում էին, որ նրա լագուր ջրերի խորքում հրեղեն ձիեր են ապրում և որ արաբական նժույզները սերվել են նրանցից: Ասում էին, որ խաղաղ, լուսնկա գիշերներին նրանք լճափ են դուրս գալիս, բայց հենց որ մարդ են նկատում, սուզվում են Նազիկի լուրթ ջրերում: Մեծ չէ Նազիկը՝ մոտ տասնվեց կիլոմետր երկարություն և յոթ-ույթ կիլոմետր լայնություն ունի: Նրա ջրերում միայն ու միայն կարմրախայտ ձուկն էր լողում, որի համն ու բուժիչ հատկությունը հայտնի էր ամենքին: Լճի արևելյան ծայրից, հենց մեր գյուղի հանդից էր սկիզբ առնում Թլբի ջուր կոչվող մի գետակ, որը մոտ քսան կիլոմետր հոսելուց հետո թափվում էր Վանա լիճը: Գետի

⁵ *Բլեջան*, լեռներ և լեռնագագաթ Հայկական լեռնաշխարհում, Արածանի գետի ձախ կողմում, Վանա լճից արևմուտք: Ձգվում է հարավից հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ Նազիկ և Բուլանջի լճերի միջև, նրանցից արևմուտք: Ունի մի քանի լեռնագագաթներ, որոնցից գլխավորը 2950 մետր բարձրությամբ համանուն լեռնագագաթն է:

հոսանքով դեպի Վանա լիճ հասնող կարմրախայտը Վանա լճի աղիության պատճառով սատկում էր: Սառնաշունչ երկարատև ձմեռներին Նազիկ լիճը սառչում էր և հաճախ խոր ճեղքվածք տալիս, որից արձակված ուժեղ ու միապաղաղ սուլոցի ձախը օրերով լսվում էր դեռ շատ հեռվից:

Մեր գյուղից դեպի հարավ նոթոտ ու մշտապես մռայլ Նեմրուջ լեռն էր: Պայծառ օրերին նրա հարթ գագաթներից մեկի վրա ինչ որ մարդանման քարեր էին երևում: Ժողովուրդը լեզենդ էր հյուսել նաև այդ լեռան մասին: Պապս այդ լեզենդը պատմում էր այսպես. «Շատ հին ժամանակներում ամռանը, ինչ-որ հովիվ իր հոտի հետ բարձրանում է այդ լեռը: Հանկարծ երկինքը խառնվում է, լեռը սուզվում է անթափանց ամպերի մեջ և սկսվում է հորդառատ անձրև և իր մեծությամբ չտեսնված կարկուտ: Դրա համար էլ գյուղում երգում էին.

Երկինք ամպել, կուգա կարկուտ,

Կուգա գոյի քամբախ Նեմրուջ:

Սարսափած լեռան վրա կայծակնացայտ որոտից, ու կարկուտի արտասովոր մեծությունից, որը սպառնում է ամբողջ հոտի ոչնչացմանը, հովիվը դեն է գցում իր կուլաբը⁶, չորում գետնին ու ձեռքերը դեպի երկինք բարձրացած աստծուց փրկություն է աղերսում, խոստանալով, որ իր հոտի ամենալավ թոխլին⁷ մատաղ կանի նրան. և իբր, պատմում է պապս, կարկուտը միանգամից դադարում է, խոացած ամպաքողը պատռելով դուրս է գալիս արևը, լեռան լանջին ժպտում է ծիածանը: Փրկվում է հոտը, հրճվում է հովիվը: Բայց ընտիր թոխլու փոխարեն հովիվը իր մարմնի վրայից մի շաղ ոջիլ է բռնում, դնում իր բույժ մատների եղունգների արանքը, ջարդում այն ու գլուխը վերև բարձրացնելով գոչում. «Ամենակարող տեր, ընդունված համարիր մատաղս»:

Եվ իբր թե, այս խոսքերի վրա աստված զայրանալով

⁶ *Կուլաբ*, թաղիքից շինված հովվական վերարկու:

⁷ *Թոխլի*, մեկ տարին լրացրած ոչխարի գառ:

հովիվին իր ամբողջ հոտի հետ քար է դարձնում:

- «Էնի անաստված հովիվ էր, լառ, էդոր հապով ուր պատիժ ստացավ, լառ», - ասում էր պապա:

-4-

Մայրս փոքր-ինչ գրագետ կին էր, հասկանում ու գնահատում էր գրագիտության նշանակությունը: Նրա միակ ցանկությունն էր, որ ես գրագետ դառնամ, կարդալ գրել սովորեմ: Եվ ահա ձմռան մի օր մայրս ինձ դպրոց ուղարկեց:

- Գնա, - ասաց, - գնա մինչև մի քերեկան⁸ ճարենք, - և ձեռքս տալով մի պատահական գիրք, ինձ դպրոց ուղարկեց:

Մանկական հոգուս ամբողջ խանդավառությամբ, ոտաբոբիկ, առատ ձյունը տրորելով, ամոթից կաս կարմիր կտրած, առաջին անգամ ես դպրոց մտա: Փոքր էր մեր դպրոցը: Նա ուներ միայն մի ընդարձակ դասարան: Այս շենքը պատուհաններ ունեցող առաջին կառույցն էր մեր գյուղում: Դպրոցում բոլորս էլ նստում էինք տներից բերած փոստերի⁹ և փալասների վրա. աշակերտական գրասեղանների մասին պատկերացում չունեինք:

Մենք ունեինք միայն մեկ ուսուցիչ, որին պարոն Մելքոն կամ ուղղակի վարժապետ էինք ասում: Նա եռանդուն, իր գործին նվիրված երիտասարդ էր, շատ էր չարչարվում, որ մենք մի բան սովորենք, գրագետ դառնանք: Պարոն Մելքոնը հագնվում էր եվրոպական ձևով ու շատ էլ մաքրասեր էր: Գլխին դնում էր լայնեզր գլխարկ: Օ՛ այդ գլխարկը... Մենք շատ էինք ծիծաղում այդ գլխարկի վրա, այն նմանեցնում էինք մեր գյուղի արագիլի հինավուրց բնին ու անընդհատ ծիծաղում էինք: Նա հարկադրված էր յուրաքանչյուր աշակերտին առանձին դաս հարցնել, քանի որ ընդհանուր դասագիրք զոյություն չունեինք. ում ձեռքին ինչ գիրք ընկներ, նրանով էլ դպրոց էր գալիս: Մի

⁸ *Քերեկան*, հայերենի քերականության դասագիրք:

⁹ *Փոստ*, շմշակված՝ հում մորթ:

քանի օրից հետո ես արդեն «քերեկան» ունեի, շատ պայծառ եմ հիշում այդ «քերեկան» տանջարանը: Նա սկսում էր այսպես՝ այբ-բեն, այբ-բեն, գիմ-դա, գիմ-դա, և այս ձևով մենք պետք է սովորեինք բոլոր տառերը:

Իմ դպրոցական առաջին օրերի մասին խոսելիս չեմ կարող չպատմել մի մանկական միամիտ ու ծիծաղելի դեպքի մասին: Բիթլիսից եկած Մարտիրոս անունով մի չարչի մեր տան մոտ մի խանութ ուներ: Այդ չարչուց մի երկու կտոր աթարով ես մի ծայր¹⁰ առա և ուրախ-ուրախ դուրս եկա խանութից: Բայց դեռ տուն չհասած ես այն սեղմեցի եղունգիս վրա ու զարմացած կանգնեցի. ծայրը ճեղքվածք ուներ: Ուրեմն չարչին ինձ խաբել է, մտածեցի և իսկույն հետ դարձա խանութ:

- Քեդի Մարտիրոս, - ամաչելով դիմեցի ես չարչուն, - որի վրա ճետ (աքլոր) կա նկարած: ճետով ծայրը ստացա, իբր թե չարչուն խաբած ես դուրս թռա խանութից, անհամբերությամբ հենց փողոցի նեղիկ անկյունում ճետով ծայրը փորձեցի:

- Տեղ աստված, էս ի՞նչ բան է, - զայրացած բացականչեցի ես, - ճետով ծայրն էլ ճեղքվածք ուներ: Ես տեսել էի, որ ինձանից մեծ տղաները ծայրը սեղմում էին եղունգով, բայց ի՞նչ նպատակով, այդ չէի հասկանում: Ամաչեցի կրկին անգամ հետ դառնալ խանութ և վճռեցի իմ նոր ճետով ծայրը փոխել մեր հարևան կլաեկցու Եղոյի հին ծայրով. բայց փոխանակումը այնպես պետք է կատարեի, որ Եղոն գլխի չընկներ, որ իմ ծայրը ճեղքված է: Նա ուրախությամբ համաձայնվեց և իր հին ծայրերից մեկը տվեց ինձ: Բայց երբ տանը այդ ծայրը փորձեցի, զայրույթից լաց եղա՝ սա էլ էր ճեղքված: Բոլորը ինձ խաբում են՝ լացակումած ասացի ինքս ինձ ու հետ վերադարձա, անկեղծորեն բոլորը պատմեցի Եղոյին: Չեռքը փորին դրած Եղոն երկար հռիռալով բացատրեց, որ ծայրը ճեղքվածք չունենա, թանաքը ոչ մի կերպ չի կարող ծայրի միջոցով հոսել և գրել:

¹⁰ Ծայր, այստեղ՝ սագի հաստ փետուր. որի ծայրը սրելով գործածում էին որպես գրիչ:

Օ՛ր անցած գյուղական իմ միամիտ մանկություն:

Մի երկու ամիս հետո ես այլևս դպրոց չգնացի. գարունը բացվեց, ես լուծ պետք է քաշեի, տավար, ոչխար պահեի: Դրանով էլ վերջացավ իմ դպրոց գնալը:

Ոչ միայն մեր գյուղի, այլև ամբողջ գավառի բնակչության ապրուստի միակ միջոցը երկրագործությունն ու անասնապահությունն էր: Գյուղում ցանում էին ցորեն, գարի, կտավատ, կանեփ: Կանեփը մեծ դեր էր խաղում գյուղի տնտեսական կյանքում: Վերամշակված կանեփի ամուր թելերից պատրաստում էին ճոպաններ, տավարի կապեր, չարխի թելեր, ինչպես նաև սամի¹¹ թելեր, իսկ նրա չորացած ցողունը կտրատում էին, վերածում փոքր չափերի և երկու ծայրերը թաթախում էին քրքուրի¹² լուծույթի մեջ, չորացնում և ձմռան ընթացքում օգտագործում լուցկու փոխարեն: Բավական էր այդ ցողունի քրքուրոտ ծայրը մոտեցնել թոնրից հանած կլակին կամ տաք մոխրին, նա իսկույն բոցավառվում էր ինչպես լուցկին: Գյուղում մշակում էին նաև բանջարեղեն՝ կաղամբ, շաղգամ:

Ուշագրավ է այն փաստը, որ մեր գյուղում, ինչպես նաև գավառի մի քանի հայկական գյուղերում, դեռ շատ վաղուց գոյություն է ունեցել շատ հասարակ կառուցվածք ունեցող փայտե շարքացան: Այն այսպիսի կառուցվածք ուներ. սովորական փայտե արորի առատամին (արորի այն մասը, որ խովի հետ մտնում է հողի մեջ) երկու կողմից մոտ մեկուկես մետր երկարությամբ, 25-28 սմ լայնությամբ և մեկուկես սանտիմետր հաստությամբ տախտակ էին խփում և, որպեսզի այդ տախտակները դիմանային հողի ճնշմանը և շարժվելիս չջարդվեն, երկու տեղով ներսից փայտե փոքրիկ ձողիկներով միացնում էին իրար հետ: Այդ հնարավորություն էր տալիս մաճկալին հետևող սերմնացանին սերմերը շաղ տալու

¹¹ *Սամի*, լծի երկու ծայրերի գույգ անցքերից անցկացվող և եզան պարանոցը երկու կողմից գրկող փայտե գույգ ձողիկներից յուրաքանչյուրը:

¹² *Քրքուր*, խոսքն, ըստ երևույթին, բաքարդի (ծծումբ) մապին է:

փոխարեն լցնել դրանք երկու տախտակների միջև, և արորի շարժման ժամանակ սերմերը հավասարաչափ ընկնում էին գետնին ու խոնավ հողը իսկույն ծածկում էր այն:

Շարքացանով այս ցանքսը կատարվում էր հոկտեմբեր ամսի սկզբներին՝ լավ մշակված ցելի մեջ: Այն առաջին անգամ գարնան վերջին վարում էին արորով ու ցաքանում, իսկ խոտհնձից առաջ այն խոր գույթանավար էին տալիս, խոնավությունը լավ պահելու համար, և ուշադրությամբ ցաքանում: Ցանքսը կատարվում էր տեղական «դիր» կոչված խոշոր սպիտակահատ ցորենով, որից և պատրաստվում էր հում ձավար: Այս ձավարից պատրաստված հարիսան առանձին հոչակ էր վայելում ամբողջ գավառում: Բացի այդ, կապե մեծ կարասներում առանձին այդ ցորենի մեջ էին պահում մեծ անուն հանած չորացրած կաթի սերը, որ այդ պայմաններում դիմանում էր անգամ ամառվա շոգերին:

Գյուղում և ամբողջ գավառում զարգացած էր նաև անասնապահությունը. ամբողջ գյուղում հայտնի էր մեր գյուղի «բալբաս» ցեղի սպիտակ դմակավոր ոչխարը, ինչպես և «դուռիկ» կոչված այծը, որից ստանում էին թանկարժեք «դֆտիկ»¹³: Դրա հետ միասին, բացի քարշուժից՝ եգներից ու գոմեշներից, պահում էին նաև կովեր, մատակներ ու ավանակներ:

-5-

Գավառը, ինչպես և մեր գյուղը, ապրում էր ինքնամիփոփ կյանքով: Նահանգային քաղաք Բիթլիսի հետ կապված էր շատ թույլ. տնտեսական անհրաժեշտ կարիքները հոգալու համար, տարին մեկ անգամ այն էլ աշնան կեսերին էին գնում քաղաք: Շատերը փող չէին ճանաչում և զուլխ չէին հանում քար ու կշեռքից: Որպես հին նահապետական սովորություն՝ կանաչք երբեք տղամարդկանց հետ ու նրանց ներկայությամբ հաց

¹³ *Դֆտիկ*, զգամ նուրբ բուրդ:

չէին ուտում, իսկ նորահարսը իրավունք ուներ միայն 12-13 տարեկան աղջիկների հետ հաց ուտելու:

Հարսանիքներում երիտասարդ աղջիկներն ու հարսերը պարում էին առանձին շարքով կամ պարում էին իրենց տղամարդ ազգականների հետ: Բարեկենդանի օրերին երիտասարդ աղջիկները լավաշի մեջ փաթաթած զանազան ուտելիքներ էին դնում ծառերի, աթարների ամրոցների ու բարձր պատերի վրա, որը կոչվում էր «բողոլ»: Այդ «բողոլը» բախտորոշ նշանակություն ուներ նրանց համար: Մի տեղ թաքնված նրանք առանձին հուզմունքով ու սրտատրոփ հետևում էին, թե անգղներն ու ագռավները դեպի ո՞ր թաղն էին տանում, կամ ո՞ւմ կտուրի վրա էին իջնում այն ուտելու համար: Դրանով էլ երիտասարդ աղջիկները որոշում էին իրենց բախտը: Համոզված էին, թե հենց այդ թաղում կամ այդ տուն հարս են գնալու: Այդ նույն նպատակով մեծ պասի օրերին չափազանց աղի բլիթ էին պատրաստում, քնելուց առաջ երիտասարդ աղջիկները ուտում էին և առանց ջուր խմելու բուռն տենչանքով անկողին մտնում: Գիշերը երազում ծարավից տոչոր ինչ երիտասարդ որ իրենց ջուր տար, հավատում էին, որ հենց նա է լինելու իրենց փեսացուն:

Նույն ձևով էլ մեծ պասի օրերին բլիթ հացի մեջ մատանի էին դնում և այդ բլիթ հացը բաժանելու ժամանակ, ում բաժնի մեջ որ երևար այդ մատանին, հավատում էին, որ նա իր ամբողջ կյանքում երջանիկ է լինելու:

Ծնողներն իրենց աղջիկ երեխաների ականջների բլթակները և քթի մի կողմը դեռ մանկության օրերին ծակել էին տալիս՝ հետագայում գինդեր կախելու և կարաֆիլներ¹⁴ դնելու համար: Եթե գյուղում մի երիտասարդ սիրահարվում էր մի աղջկա վրա, ասում էին, որ նա «աչք թալուկ»¹⁵ ունի»:

Աղջկա ամուսնության հարցը կախված էր ծնողների՝

¹⁴ *Կարաֆիլ* կամ *դարանֆիլ* (թուրքերեն *karanfil*՝ «մեխակ» բառից) էր կոչվում քթի զարդը՝ մեխակածառի չորացած ծաղկակոկոնի նմանությամբ:

¹⁵ *Թալուկ*, թալկություն, թուլություն:

հատկապես հոր կամքից: Մեր գյուղում ևս ընդունված էր փեսայից «ղալամ» պահանջել և դա որպես հին պապենական կարգ անխախտ էր մնում:

Տարվա բոլոր եղանակներին կանայք՝ այդ թվում և ջահել աղջիկներն ու հարսերը, ման էին գալիս ոտաբոբիկ: Դրա հիմնական պատճառը աղքատությունն էր: Շատ քչերը հնարավորություն ունեին հարմնացուների համար կունդուրա առնելու, որ ներկայիս կանացի կոշիկներին նմանվող կոշտ ու կոպիտ մի բան էր: Ինչ վերաբերվում է կանանց տարագին, ապա այն շատ նման էր Ղարաբաղի կանանց հին տարագին, որը դեռ մինչև հիմա էլ շատ ղարաբաղցի տարեց կանայք գործածում են:

-6-

Մեր հարևան Մեծք գյուղում, որտեղ ծնվել է ակննավոր գիտնական, ֆիզիոլոգ Էզրաս Հասրաթյանը¹⁶, ամեն տարի մայիսին թաղի ամենաընտիր և գեղեցիկ եզին զարդարում էին գյուղի լեռների ու դաշտերի բազմերանգ ծաղիկներով այնպես, որ երբ եզը շարժվում էր, թվում էր թե ծաղկազարդ մի փոքրիկ բլուր էր շարժվում տեղից:

Այդ եզան կոտոշներին նողթա¹⁷ դրած երկու-երեք պատանի հոտաղներ նրան ման էին տալիս տնից-տուն և տանտիկիկները պարտավոր էին ըստ սովորության ձու, կարագ, հավ, ձավար նվեր տալ հարազատներին. իսկ եթե այդ եզը մեկնումնեկի դռանը մեզեր, այդ դեպքում նվիրատվությունը մի քանի անգամ շատ պետք է լիներ, որովհետև այդ նշան:

¹⁶ Էզրաս Հասրաթյան (31 մայիսի, 1903, Մեծք, Խլաթի գավառ, Բիթլիսի վիլայեթ – 24 ապրիլի, 1981, Մոսկվա), հայ խորհրդային ֆիզիոլոգ: Բժշկական գիտությունների դոկտոր (1938 թ.), պրոֆեսոր (1939 թ.): ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1939 թ.), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1947 թ.). ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ:

¹⁷ Նողթա (նողոս), երասանակ, ձիու կամ էջի գլխի կապ՝ գլխամեջ առանց սանձի:

էր, որ այդ տունը տվյալ տարում առատ բերք էր ստանալու՝ բախտավորությունն ու երջանկությունը չոքում է նրա դռանը:

Ստացած նվերներից պատանի հոտաղները զանազան ուտելիքներ էին պատրաստում բնության գրկում և օրերով զվարճանում: Կասկածից վեր էր, որ եզան զարդարելը մայիս ամսին հին կռապաշտական գարնանային տոն էր, որը մեզ էր հասել դարերի խորքից:

Գլուխ II.

ԻՄ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Քեռուս ընտանիքում, որ Բիթլիսից էր եկել հաստատվել մեր գյուղում, բոլորն էլ գրագետ էին: Գրագետ էր նաև մայրս: Բայց ամուսնանալուց հետո տնտեսական դժամն պայմաններն ու ծանր աշխատանքը մոռացության էր տվել կարդալը. նա դարձել էր լռակյաց, տխուր ու անժպիտ:

Իմ գլխին արդեն սպիտակ ձյուն է նստել, ապրում եմ կյանքիս մայրամուտը, կես դար է գլորվել, աշխարհում շատ բան է կատարվել, շատ բան եմ տեսել, բայց մորս պատկերը ոչ մի ժամ աչքիցս չի հեռացել: Նրան տեսնում եմ մեր կալում, ցորենի ու տարեկանի բարձր դեզերի մոտ, դարմանից ցորենը գտելիս, սպիտակ բարակ փոշին մաշված դեմքին, տեսնում եմ ծանր կողովի տակ կքված թրիք թափելիս, մշտապես մտածկոտ, մշտապես թախժոտ:

Հիշում եմ, թե ինչպես էր զայրանում մայրս, երբ գարնանը ոտաբորբիկ բարձրանում էի մեր «դարա քոեն» և մատներով քանդելով կիսահալ ձյունը հողի տակից մորս համար գզրիկ¹⁸, գառանդմակ¹⁹ էի բերում: Երբեք չեմ մոռանա այդ քաղցր օրերը, երբ գարնանային արևը մայր էր մոնում Նեմրութ լեռան հետևում, կովերի նախիրը բառաչելով անցնում էր գյուղի նեղիկ փողոցներով, արագիլը իր հինավուրց բնում մի ոտի վրա հենված օրորվում էր, ես էլ մորս գրկում էի օրորվում ու քուն մտնում:

Շատ-շատ հաճախ եմ երագում տեսել իմ տառապյալ մորս: Տառապյալ մորս եմ նվիրել սրտաբուխ այս տողերը.

¹⁸ Գզրի, գզիրուկ կամ շամբի՝ բազմամյա, սողացող կոճղարմատներով խոտաբույսերի ցեղ:

¹⁹ Գառանդմակ կամ գառնադմակ՝ խոտաբույսերի ցեղ:

Երազ տեսա
 Պատկամ էի իմ հայրենի
 Չքնաղ լճի անուշ ափին,
 Էլի մանուկ, էլի հեքիաթ,
 Երգում էի լճի ափին:

Ինչպես ուրախ հավքերն անթիվ
 Թևին տված երգում էին,
 Զեփյուռի տակ երեկոյան
 Լեռները սեզ գերում էին:

Լճի ափին մորս տեսա,
 Պատկերի պես թախծոտ ու լուռ,
 Դեմքի վրա ես կարդացի
 Խոցված սրտի հազար մրմուռ:

Ծնկի եկա ոտքերի մոտ
 Էլի մանուկ, էլի հեքիաթ,
 Մարե, ասի, դե ծիծաղիր,
 Որդիդ եմ ես, մի բան ասա:

Նայեց-նայեց իր չար տղին
 Մի ա խ քաշեց, նայեց գետնին
 Ասաց «Տղաս, ինչո՞ւ մորդ
 Անթաղ թողիր»...

Պատկամ էի իմ հայրենի
 Չքնաղ անուշ լճի ափին
 Էլի մանուկ, էլի հեքիաթ
 Մորս գրկում լալիս էի:

-2-

Յոթ տարեկան հասակից աշխատել եմ, լուծ քաշել, տավար պահել և միշտ հորս հետ եմ եղել: Հայրս միջահասակ, լայնաթիկունք, շիկահեր մարդ էր. գլխին դնում էր դՖտիկից պատրաստված քոլոզ, հագնում հնամաշ բաճկոն ու բրդից տնայնագործած անդրավարտիք:

Մշտական տնտեսական կարիքն ու տաճկական հարկահավաքի մտրակը նրան դարձրել էր ջղային ու դյուրաբորբոք:

Հայրս շատ զգայուն սիրտ ուներ: Մերնը հողի մեջ գցելիս նա ոչ մի աղոթք չէր անում, չէր դիմում Աստծո ռոգորմածությանը, որ արև օրեր ու առատ անձրև տա: Ասում էին, որ նա գյուղի առաջին անաստված մարդն էր. ասում էին, որ նա իր ողջ կյանքում երկու անգամ է եղել եկեղեցում՝ մեկը, երբ կնքել են, մեկ էլ, երբ ամուսնացել է:

Աշխարհի ամենաանուշ վաստակը նա համարում էր երկրագործությունը: Լինելով իսկական ռանչպար, բնարյուն զավակ, գարնանը և ամռանը մոտ հինգ ամիս նա գիշերում էր բացօթյա, կանաչ արտերի մոտ, հնձած խոտի ու ցորենի բարդաների²⁰ մեջ, միշտ իր չորս եզների հետ միասին, նրանցով տարված, որպես իր ընտանիքի ապրուստի միակ նեցուկի, միակ կերակրողի: Եթե այդ եզներից մեկնումեկը փոքր ինչ վատ էր զգում ու չէր կարողանում աշխատել, հորս աչքերում ևս արտասուք էի նկատում:

Հայրս անզրագետ էր, բայց իսկական հողի ու բշխարի մասնագետ: Գյուղում հայտնի էր նրա մանգաղի քաղի արագությունը ու ձմեռվա ընթացքում նրա խնամած ոչխարը: Այս բանը նկատել էին անգամ թուրքական պաշտոնյաները, որոնք տարին մեկ անգամ գյուղից-գյուղ ընկած ոչխարներ էին հաշվում հարկ վերցնելու համար: Այդ բոլորի հետ միասին հայրս անտարբեր էր կյանքի ուրախ երևույթների նկատմամբ: Հարսանիքներ չէր գնում, գունդի ձայն լսելիս թվում էր, թե գլխին են տալիս: Բայց քրդական մելամաղձոտ երգը լսելիս փափկում էր, դառնում մտածկոտ ու զգայուն:

Որպես հայր, նա անհուն սիրով էր սիրում ինձ ու քրոջս: Բայց խեղդող կարիքը ստիպել էր նրան, որ յոթ տարեկանից աշխատեցնե՞ր ինձ՝ իր միակ տղային: Դաշտամիջում, մեր Սողած կոչված հանդում վար ու ցանք անելիս, ես անընդհատ ակնապիշ գարնանային շքեղ Սիփանին էի նայում. շատ դեպքերում հայրս նեղանում էր ինձ վրա:

²⁰ Բարդա, դեգ:

- Ի՞նչ ես քերանդ բաց մտիկ անում եղ անտեր սարին, սար ա էլի, մըժ ու դումանը գլխին սար ա էլի, - ասում էր նա ու ստիպում, որ ուշադիր լինեմ, մի պատահ հաց վաստակենք:

Բայց ո՞վ կարող էր գարնան օրերին չնայեր Սիփանին ու չհիանար նրա շքեղ տեսքով:

Հաճախ արտում, երբ սկսվում էր գարնանային տեղատարափ անձրևը, հայրս խղճում էր ինձ, իջեցնում էր լծան վրայից, արտի մի ծայրում ինձ ծածկում էր հաստ մազե ջվախներով²¹ ու առանց հոտաղի շարունակում էր վարն ու ցանքը: Ուժեղ, ջրառատ անձրևի խոշոր կաթիլները միալար ու բնական տակտով թակում էին ջվախները ու այդ երգի տակ ես ննջում էի: Կիսաքուն լսում էի իմ չորս կողմում անձրևաջրերից առաջացած պղտոր առվակների աղմուկն ու երբ կամաց գլուխս հանում էի ջվախների արանքից, տեսնում էի ինչպես հայրս ամբողջովին թրջված, թիկունքը դեմ է արել եզներից մեկին ու լուռ նայում է վարած արտին ու անհաշտ երկնքին: Երբեմն հենց հիմա էլ լսում եմ հորս խոսքերը.

- Հելի, լառ, հելի տուն գնանք, էլ վար չեղնի, ցեխ ա...

Նման բոպեներին իմ ուրախությանը չափ ու սահման չկար, չէ՞ որ տուն էինք վերադառնում: Իսկ հայրս լուռ էր, չէր խոսում. երևի նա անիծում էր երկինքը, որ չթողեց այդ օրը մի պատահ հաց վաստակել:

-3-

Մեծ եղեռնից մի երկու տարի առաջ, մի ձմեռ գյուղում հանկարծ խոշոր եղջյուրավոր անասունների ժանտախտ բռնկվեց: Մի քանի օրվա ընթացքում գյուղը զրկվեց իր քարոշող ուժի զգալի մասից: Անգրագիտության ու խավարի մեջ թաղված գյուղը չէր հասկանում այդ հիվանդության բնույթը ու տապակվում էր իր յուրի մեջ: Մեծերը՝ կանայք ու տղամարդիկ, անասունների վրա ընկած, երեխաների նման լաց էին

²¹ *Ջվախ*, կանեփաթելից կամ հաստ բրդաթելից գործած կամ ամուր ու հաստ կտորից կարած մեծ տոպրակ՝ պարկ:

լինում: Հեկեկում էր նաև իմ խեղճ հայրը. բայց ես ուրախ էի, որ բոլոր անասունները սատկում էին, քանի որ էլ տավար չէի պահի:

Բացվեց 1912 թվականի գարունը. փչեց հարավային քամին ու Նեմրոթի գագաթի վրա որոտաց առաջին ամպրոպը: Գյուղում ասում էին.

*Մարտի վեց ձյուն վըր ձյան՝ ցեց,
Մարտի ինն՝ լազլազ վըր բնին,
Մարտի տաս՝ կանգառ մըջ պաս,
Մարտի քսան՝ արորներ դաշտ կպսան:*

Մարտի քսան՝ արորներ դաշտ կպսան (հին տոմարով). և, իրո՞ք, մարտի քսանին մեր գավառում ամեն տեղ վար ու ցանքս էր: Հարևանից մի քանի օրով մի եզ վերցնելով՝ հայրս սկսեց գարնանային աշխատանքները: Նազիկ լճի ափին հորս հետ ցանքս էինք կատարում: Ճաշի մոտերը մայրս դանդաղ, գլխիկոր լեռան թեք լանջը կտրելով, բարձրացավ մեզ մոտ: Նա մեր համար տաք ճաշ էր բերել: Երբ մայրս վերադառնում էր գյուղ, հորիցս թաքուն լացակումած ասաց.

- Հորդ ասա շուտ տուն գա, մեր մատակ խատավ²²:

Հայրս այդ նկատել էր, և երբ սկսեցինք աշխատանքը, ինձ հարցրեց.

- Տղա լառ, մերդ էն ինչ ասաց քզի, - ես լուռ էի: Նա կրկնեց իր հարցը: Չկարողացա պահել և կցկտուր ձևով ասացի իրողությունը:

Հանկարծ մաճը նրա ձեռքից դուրս պրծավ, թվաց թե անտեսանելի մի ոչնչացնող հարված իջավ նրա գլխին, ամեն ինչ կորավ, տակնուվրա եղան նրա հույսերը: Նա որոշել էր ծնից հետո մատակը լծել և հարևանի եզը հետ վերադարձնել: Մենք կանգ առանք առավելում (արտի ծայրում). հայրս եզները արձակեց ու լուռ, կարծես խոսելու ունակությունը կորցրած.

²² Խատակ կամ խատնեկ, սատկել, մեռնել:

նստեց մի քարի վրա, գլուխն ափերի մեջ առավ և երկար մնաց այդ վիճակում: Հետո վեր կացավ, մոլորվածի նման մոտեցավ խուրջինին, մի քանի կտոր հաց վերցրեց ու հազիվ արտասուքը զսպելով ասաց.

- Արի մոտս, լաո, մոտս արի, - նա գրկեց ինձ, մի քանի րոպե լուռ շոյեց մազերս ու ասաց. - Արև չմտած եզներ տուն կտանես, խլուսին էլ կուզաք արոր ու լծներ կտանեք: Ես կերթամ դորբաթ (օտարություն), փարա կաշխատեմ, կուղարկեմ ձեզ:

Եվ նա կամուկախ վարարուն սրտով ճամփա ընկավ:

Չհասկանալով այդ բոլորի բուն իմաստը՝ ես նստեցի լճի ափին ու պատանեկական հետաքրքրությամբ սկսեցի դիտել կարմրախայտ ձկների կայտառ խաղը Նազիկի վճիտ ջրերում:

Հայրս գնաց, բայց նրա սիրտը մնացել էր ինձ մոտ: Նա անընդհատ հետ էր դառնում, երկար կարոտով նայում ինձ, որ գամվել էի լճի ափին, ու նորից շարունակում էր իր ճամփան: Բայց երբ պետք է վերջնականապես ծածկվեի աչքից, կանգ առավ: Երկար, շատ երկար նայեց Նազիկի լուրթ ջրերին, իր արտ ու ափին, հայրենի լեռներին, միանգամից հետ դարձավ ու հաստատ քայլերով եկավ դեպի ինձ, դեպի իր հայրենի օջախը:

- Արի, լաո, արի սիրտս բլավ, որ քեզի մենակ ու անտեր թողեցի: Ասի, գնամ իմ ճժերի մոտ, իմ տան փոշին թալեմ բերանս, հազար դիր²³ աղեկ ա ուրիշի դռնից, - ասաց նա, ու մենք տուն վերադարձանք:

Մի քանի օրից հետո հայրս հարկադրված ինձ հոտաղ տվեց մեր հարևան Զիզարա գյուղում մի ծանոթ քրդի մոտ: Իմ աշխատանքի դիմաց նրանից մի եզ վերցրեց մինչև աշնան վերջը աշխատելու, քանի որ մեր մատակը, որին նա մտադրվել էր լծել, սատկել էր: Այսպես կյանքի ապրուստի դաժան պայմանները ստիպեցին հորս իր միակ տղային դեռ ութ տարեկան

²³ Հազար դիր, հազար անգամ:

հասակում գցել քրդերի դռները, որի ոչ լեզուն էի հասկանում, ոչ էլ ծանոթ էի բռի ու բիրտ սովորություններին: Ժամանակը չի կարողացել քրքրել ու դեն շարտել իմ հոգու խորքից ամենավերջին մանրուքն անգամ:

-4-

Ի՞նչ խնդությամբ, ի՞նչ խանդավառությամբ լցվեց իմ սիրտը, երբ մի օր հայրս ասաց.

- Սոքրո (Սոկրատի փոխարեն), քեզ քաղաք պիտի տանեմ:

Քունն ու հանգիստը հեռացավ ինձանից. քաղաք պետք է գնայինք մեր հին պապենական սայլով, որի տռնին ու անիվները շարժվում էին միասին, և շփման պատճառով փայտե տռնին չայրվելու նպատակով մագուլթի փոխարեն օճառ էին քսում:

Այո, ես քաղաք պետք է գնայի, նոր աշխարհ, նոր մարդիկ պետք է տեսնեի: Եվ ահա աշնանային մի արևոտ առավոտ, երբ ծիրանագույն արևի ճառագայթները նոր էին նստել Նեմրոթի հարթ գագաթին, սայլի վրա նստած հորս հետ միասին ճամփա ընկանք դեպի Բիթլիս: Այդ օրը մեր գյուղից սայլերի ու էշերի մի ամբողջ քարավան էր գնում քաղաք. նրանք բոլորն էլ հաց էին փոխադրում: Մերկ էին աշնանային դաշտերը. բայց այդ մերկությունը չէր ազդում մեր քարավանի մարդկանց ուրախ տրամադրության վրա: Նրանք սրախոսում էին, կատակում, երգում հայկական ու քրդական ժողովրդական երգեր: Ահա այդ երգերից մի քանի կտոր, որոնք ես դեռ հիշում եմ.

Երկինք ամպել կուգա կարկուտ,

Կուգա գոլի քամբախ Նեմրոթ,

Էրվա, վառվա ես անթություն,

Աստված սիրես նաֆասս մի տար:

Չորս եզ քշի կուլուխի դուռ,

Չորս էլ տվի թությունի ջուռ,

Թություն-թություն, Մշու թույուն,

Աստված սիրես նաֆաս մի տոր:

x

*Ծանոց է կախվել տաներկու տաշեղ,
Էն տղեն կառնես անունն է Մուշեղ,
Մուշեղ ջան, Մուշեղ, դու չինար էլնես,
Թե որ զիս չառնես, բեմորագ մեռնես:*

xx

*Արի, յար, արի, խոռվ մի կենա,
Աշխարհի մալը մեզի չի մնա,
Հավկունք վըր ծովան նման արոր,
Կապեմ բեջարեմ երթամ խըր էտոր:
Արի, յար, արի, խոռվ մի կենա,
Էսօրվա օրը մեզի չի մնա:*

xxx

Լվի երգը (կատակերգ)

*Դեհ գիդի լվեր, դեհ գիդի լվեր,
Կարմիր կնտուգ, դե գիտի լվեր,
Գիշերն ելան ճվերն ի վեր,
Ցերեկն ելան սներն ի վեր:*

*Լու մի կար սև ու տղագ,
Եկավ տարավ գլխիս ի սագ,
Լուն ասաց հոռին-մոռին,
Ոջիլն ասաց կամն ու կոռին*

*Ջարկեցին պառլի տոռին,
Կործեցին մեջ ախոռին,
Դեհ գիդի լվեր, դեհ գիդի լվեր,
Կարմիր կնտուգ, դեհ գիդի լվեր:*

Սալլի վրա նստած ես անհոգ հետաքրքրությամբ դիտում

էի իմ շրջապատը, լսում ժողովրդի կենսության ու սրտաբուխ երգերը:

Նոր գզված բուրդի նման մոխրագույն և սպիտակ ամպերը քուլա-քուլա մերթ պատում էին Նեմրոսի գագաթը, լցվում նրա խորխորատները ու մերթ քամահալած չվում դեպի Գրգուր լեռը²⁴, ծածկում նրա քարքարոտ լանջերը:

Տարվա բոլոր եղանակներին Նեմրոսը մենակ մարդու հոգում ահ էր ներշնչում:

Օ՛, սրտաբուխ իմ պատանեկան երգերը շատ են փշրվել նրա տուֆակերտ քարափների վրա:

- Երևացող գեղը Թեղուտն²⁵ ա, լառ, խորոտ իշկա, խայի գեղ ա լառ, - ասաց հայրս:

ճռում էին մեր սայլերը, և էշերի քարավանը առջատ փոշի էր բարձրացնում:

Բայց դեռ գյուղ չհասած իմ աչքի առաջ բացվեց մի նոր բնապատկեր. ձգվեց կապուտակ ջրերի մի հսկա տարածություն՝ շքեղ, դյուրծիչ մի անանուն հեքիաթ:

- Վանա ծովն ա, լառ, տես իմալ խորոտ ա, ջոջ ա, - ասաց հայրս՝ դառնալով դեպի ինձ:

Ակնապիշ ես դիտում էի պատմական լիճը, մեր ժողովրդի մրրկահույզ պատմության լայնածավալ գիրքը, որ եռում էր Նեմրոսի փեշերի տակ: Նա ձգվել էր Արևմտյան Հայաստանի չորս սրբազան լեռների՝ Սիփանի, Նեմրոսի, Վարազի և Գրգուր լեռների միջև ընկած ընդարձակ հովտում: Սկզբում

²⁴ *Գրգուր*, լեռնագագաթ Հայկական լեռնաշխարհում, Հայկական Տավրոս լեռնահամակարգում, Վանա լճի հարավարևմտյան ափին, Բիթլիս-Մուշ ճանապարհից աջ, Ռահվա հովտի հյուսիսային կողմում: Ունի հրաբխային ծագում: Բարձրությունը՝ 2457 մետր: Ունի 5 ոչ սրածայր գագաթներ, հարավ-արևելքից պատկերանում է իբրև միաձուլ զանգված, որի խիստ թեք և ուղղաձիգ կողերը արևմուտքում և հարավ-արևմուտքում հակվում են անտառապատ լեռներին և բլուրներին:

²⁵ *Թեղուտը* գտնվել է Նեմրոս լեռան հյուսիսային փեշերին, Խլաթ քաղաքից մոտ 8 կմ հարավ-արևմուտք: Ըստ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913 թ. տվյալների՝ ունեցել է 260 տուն, 1599 շունչ հայ բնակչություն:

ես տեսնում էի լճի այն մասը, որ կեռի նման մտել էր ցամաքը. հենց այդ էլ նրա ամենագեղեցիկ ու ամենաբերրի ավերն էին: Այս տարածության վրա նստել էին հայկական բազմաթիվ շեն ու բերքառատ գյուղեր, այդ թվում նաև Արտամեստ գյուղը, իր հռչակավոր անմահական խնձորի այգիներով:

Մեր քարավանը անցավ Թեղուտ գյուղը և երեկոյան, դեռ մութը չընկած, հասանք Դատվան²⁶ մեծ հայկական գյուղը, որ նավահանգիստ էր լճի արևմտյան ափին: Այդ նավահանգիստը Վանը կապում էր Բիթլիսի հետ:

Երբ գիշերը իջավ քարքարոտ Գրգուռ լեռան փեշերից ու իր քողի տակ առավ ամբողջ լիճը, սայլի վրա նստած ես երկար լսում էի ավելոծված լճի ջրերի աղմուկը:

- Քնի, քնի, լառ, խլուսին Վանա ծովը էլի թամաշա կանես, - ասաց հայրս ու մի մեծ կապոց խոտ դրեց գլխիս տակ, որ հանգիստ քնեմ, և լճի այդ երգով էլ Դատվան գյուղի մի փոքրցում, բացօթյա, ջվախներով ծածկված ես քուն մտա:

-5-

Արևը դեռ չէր բարձրացել. գիշերային ավելոծությունը դադարել էր: Լճի ալիքները մեղմ կոհակներով փշրվում էին ափերին:

Ամեն ինչ մոռացած, աչքս չէի կարողանում կտրել լճի առավոտյան անդորրությունից ու կապուտակ հորիզոնից: Հեռու-հեռու, նոր եկած ձյունը գլխին գերող ջրեղությանմբ շող-շողում էր Սիփանը: Մեր քարավանը ճամփա ընկավ ու ես բաժանվեցի գերող լճից, սակայն նա ընդմիշտ անմոռաց մնաց իմ հոգում և հիշողության մեջ:

Ճանապարհին մեր քարավանի մարդիկ ինչեր ասես չէին պատմում Բիթլիսի հայերի մասին: Ասում էին, որ նրանք ներկած էշը ծախում էին որպես ջորի, ասում էին, որ Վանի

²⁶ Դատվան, ըստ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913 թ. տվյալների՝ ունեցել է 135 տուն, 1298 շունչ հայ բնակչություն:

ճարպիկ ու խորամանկ վաճառականներն անգամ չէին կարողանում նրանցից գլուխ հանել:

Երբ անցնում էինք Գրգուռի լեռնանցքով, պատմում էին, որ մեկ անգամ մի հայի ուղեկցությամբ այդ լեռնանցքով անցնում են ամերիկյան երկու միսիոներներ: Հանկարծ նրանք ենթարկվում են քուրդ ավազակների հարձակման: Սպիտակեղենն անգամ հանում են նրանց վրայից: Այդ դառն թուպեին նրանցից մեկը դիմելով հային ասում է.

- Այդ ինչպե՞ս է, այդ մարդիկ Ավետարանը ըստ Մատթեոսի չե՞ն կարդացել:

- Կարդացել են, - պատասխանում է հայը, - նրանց ավետարանը կողոպուտն ու սպանությունն է, ու սերնդեսերունդ նրանք լավ են կատարել այն:

Բիթլիս հասանք ցերեկով. քաղաքը ամֆիթատրոնի նման բազմել էր բարձրադիր բլուրների լանջին: Տների մեծ մասը մեկ հարկանի տափակ կտուրներով էին, որոնք անկանոն դասավորվել էին ծուռումուռ փողոցների երկու կողմերում:

- Քաղաքի զմեռն ուստաներ խայեր են, լառ, - ասաց հայրս՝ ցույց տալով խառնիխուռն, մեկը մյուսին կից տարբեր ապրանքների ու արհեստավորների խանութներ, որոնք ծվարել էին անձուկ մի փողոցում: Այստեղ, իրար խառնված Խլաթի ու Մշո նախշուն արախչիներով, քրդական սպիտակ քլուզներով ու թուրքական պխավոր կարմիր ֆեսերով մարդիկ առևտուր էին անում: Հայրս ևս գնումներ կատարեց:

Երբ հաջորդ առավոտ մեր քարավանը քաղաքից ճանապարհ ընկավ դեպի գյուղ, հայրս ասաց.

- Քաղաք աղել թամաշա արի՞ր, լառ: Տեսա՞ր ինչ հավա (օղ) ա, անուշ խմելու ջուր ունի: Տեսա՞ր, լառ, չարչիներ մկրատ ձեռքներին իմալ հավասար ու անհոգի կիսուզեն մեր բուրդ:

ես երջանիկ բախտ ունեցա հորս հետ նույն երկանիվ սայլով հեռանալ մեր գավառի սահմաններից, սեփական աչքերով տեսնել հայրենի մի ուրիշ գավառ ու նրա դյուրօրիչ բնությունը:

Այս անգամ մենք գնում էինք մեր հարևան Բլանուխի²⁷ գավառի Ղուլթալու²⁸ գյուղը, որը գտնվում էր Ցոփք²⁹ գյուղի մոտ, Եփրատ գետի ափին: Այստեղ, մեր հարևան գավառում, ես պետք է տեսնեի հայոց գետերից մեծագույնը՝ Եփրատը: Մեր ճամփան անցնում էր Նազիկ լճի հյուսիս-արևմտյան ծայրից. անցնում էինք Եղվակ լեռան մոտով, որի լանջին նստած էր համանուն Նազիկ գյուղը³⁰, ուր հայերն ու քրդերը ապրում էին միասին:

Երբ մեր սայլը անցավ ճանապարհի նեղ քարափոր մասը ու Նազիկ լիճը մնաց հետևում, հանկարծ աչքիս առաջ բարձրացավ սրածայր, բազմագագաթ Բլեջան լեռը, որի լեռնահովիտը մի կատարյալ դրախտավայր էր: Այստեղ հայրս երկար ժամանակով հանգիստ տվեց եզներին, որոնք մի առանձին ախորժակով սկսեցին վայելել ճամփի երկու կողմերում բարձրացած փարթամ արոտը:

Ես զարմացած էի այս գավառի՝ Բլանուխի, առատ բերքով և ընտիր սևահողով: Վերցրի մի բուռ այդ հողից, տրորեցի

²⁷ *Բլանուխ* կամ *Բուլանքիս* (*Բուլանքո*), գավառակ Բիթլիսի նահանգի Մշո գավառի կազմում: Մոտավորապես ընդգրկում էր Արածանիի միջին հոսանքի շրջանում Բուլանքիսի դաշտի տարածքը:

²⁸ Խոսքն ըստ երևույթին գնում է *Խոթանլու* գյուղի մասին, որը վարչական առումով պատկանում էր Բիթլիսի նահանգի Մուշի գավառի Մանազկերտի գավառակին: Համաձայն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի հրահանգով՝ 1913 թ. կազմված վիճակագրության՝ բնակավայրում կար 50 տուն, 400 շունչ հայ բնակչություն:

²⁹ *Ցոփք*, այստեղ խոսքն, ըստ երևույթին Բուլանքիս գառավառի կենտրոն՝ *Կոփ* գյուղաքաղաքի մասին է: Հայոց ցեղասպանության նախօրյակին բնակավայրն ուներ շուրջ 500 տուն, 5000 շունչ հայ բնակչություն:

³⁰ *Նազիկ* կամ *Նազուկ*, գյուղ Բիթլիսի նահանգի Բիթլիսի գավառի Խլաթի գավառակում: Մեծ եղեռնի նախօրյակին ուներ մոտ 8-10 տուն, 80 շունչ հայ բնակչություն:

ձեռքումս և անգամ հոտ քաշեցի: Հայրս նկատեց այդ և իր սովորական տոնով ասաց.

- Էսոր Բլանուխ կասեն, լաո, աշխարհ չունի էսման³¹ բերքաշատ սևահող: Էսոր մեջ խոզի էլ կրունի: Բլանուխ հացի ամբար ա, լաո:

Այդ օրը երեկոյան, կտրելով Մաղթվա լճի³² տղմուտ ափերը, մենք հասանք Ցոփք գյուղի փոքր ինչ հեռու ճամփի վրա գտնվող Սուրբ Դանիել վանքը: Խմեցինք նրա սառորակ աղբյուրի ջրից ու, դեռ արևը մայր չմտած, հասանք բլուրների վրա նստած Ցոփք գյուղ, որի դիմաց աջ ու ձախ ձգվում էր Մանագլետի ընդարձակ դաշտը:

Նա ողողված էր օձագալար, կարծես ծովացած ջրերով. թվում էր, որ վերջալույսի շողերը մեկառմեկ կուլ էին գնում այդ ջրերում և որ բոսորագույն բռնկումներով վերջալույսն էր վառվում այդ ջրերի հատակում: Գերված այդ բոլորով՝ ես հարցրի հորս, թե այն ինչ ծով է, որ փռված է մեր առջև.

- Ծով չէ, լաո, ջոջ Մուրադ գետն է, - պատասխանեց հայրս:

Այո, դա Արևելյան Եփրատն էր, որ ժողովուրդը Մուրադ գետ էր անվանում: Այո, դա մեր նախնիների, մեր պապերի ու հայրերի սրբազան գետն էր, որի ափերին օրնիբուն լսվում էր չարքաշ հայ գյուղացու հորովելը, լսվում էր նրա գերանդու և մանգաղի զրնգոցը:

Այդ գիշեր մենք գիշերեցինք բաց երկնքի տակ. հայրս ճամփից հոգնած, եզներին կշտացնելուց հետո, կապեց նրանց սայլի առեղից³³ ու քնեց: Իմ քունը չէր տանում: Մուլթը վաղուց էր պատել Ցոփք գյուղը, որի բնակիչների մեծամասնությունը հայեր էին: Հայրենի բնության հոգեշունչ պատկերները նստած էին իմ հոգում՝ շնչում էի նրանցով. քունս չէր տանում:

³¹ *Էսման*, այսպիսի:

³² *Մաղթվա լիճ*, խոսքն, ըստ երևույթին, գնում է Բուլանդխի գավառակում գտնվող *Բուլամա* կամ *Խաշլու* լճի մասին:

³³ *Առեղ*, սայլի թափքի երկու կողմերի հաստ ձողերը:

Կամաց-կամաց մարեցին ավանի ճրագները, դադարեց հեռվից լավող շների հաչոցը. միայն ծղլիղներն էին անվերջ շարունակում ամառային գիշերվա իրենց երգը:

Եվ ահա փարատվեց թանձրացած մութը, դուրս եկավ լուսինը և նրա լույսի տակ, ինչպես հեքիաթում, ես նշմարեցի Բլանուլիսի ընդարձակ—դաշտը, ծովացած արծաթին տվող Եփրատի անդորր ջրերը ու աջ կողմում կանգնած լուսնոտ Սիփանին:

Վերացած ես դիտում էի գիշերային այդ պատկերը ու ինձ թվում էր, թե Եփրատը հոսում է հենց իմ կողքից ու ալիքները գիշերվա լռության մեջ փսփսում էին ականջիս. «Մենք հայ ենք, ես Եփրատն եմ քո հայրենի մեծ գետը: Ճանաչի՞ր ինձ»:

Երկար, շատ երկար գերված ու անքուն մնացի, հետո չգիտեմ ինչպես կոպերս իրար են եկել ու ես քնել եմ Եփրատը կրծքումս պահած:

Մյուս օրը առավոտյան մենք Ղոթալու գյուղում, մեր հարևանի տանն էինք: Մեկ օր հետո հայրս վերադարձավ մեր գյուղը, իսկ ես մեր սայլի ու եգների հետ մի երկու շաբաթ մնացի այդտեղ, թե ինչո՞ւ, չեմ հիշում:

Մեր բարեկամը ինձ հասակակից Մուշեղ անունով մի տղա ուներ: Հաջորդ առավոտյան նրա հետ տավարը առաջներս առած գնացինք Եփրատը տեսնելու: Ամառային ջինջ առավոտ էր, արևը դեռ չէր ծագել: Գետի երկու ափերում էլ մոտիկ ու հեռու ծավալ-ծավալ, արդեն հնձելուն մոտ ցորենի արտերն էին ծփում: Օրվա այն ժամն էր, որ աշխատավոր հայ գյուղացու աշխատանքային աղմուկով լցվում էր դաշտն ու հովիտը, ու Եփրատը իր զովաշունչ ալիքների աղմուկով ողջունում էր նրանց: Ահա կանգնել եմ գետի ափին ու աչքով չափում եմ նրա ափերի լայնությունը, որ մոտ կես կիլոմետր կլիներ: Այդտեղ նա բաժանվում էր երկու մասի, մեջտեղում առաջացնելով մի փոքրիկ կղզի, ապա դեպի արևմուտք գալարվելով նրանք կրկին միանում էին ու հոսում առաջ, դեպի արևմուտք: Այդ օրերին

Եփրատի ջրերը շատ էին նվազել. տեղացիների պատմելով ջուրը այնքան էր նվազել, որ գյուղի պատանի հոտաղները գումեշներին հեծած, առանց որևէ վտանգի հանգիստ անցնում են ավից ավի: Չսայած այդ բոլորին՝ անծանոթ ու անտեղյակ մարդու համար այդ օրերին էլ Եփրատը շատ վտանգավոր էր:

Դարերի ընթացքում Եփրատը իր հունում թոնրաձև ու բավականին խոր փոսեր էր փորել. ջուրը նման փոսերում պտույտ էր գալիս և թվում էր, թե եռում է: Բայց փորձառու աչքն իսկույն հասկանում էր, որ դա Եփրատի թակարդն է:

- Գարնանը, գարնանը արի տես, թե ինչ գետ է դառնում Եփրատը: Դող է ընկնում մարդու սիրտը, երբ այդ օրերին լսում է հորդացած, իր հունից դուրս եկած Եփրատի պլտոր ջրերի մոնչունը, - ասաց հոտաղներից մեկը՝ ցույց տալով ինձ գետի լայնությունը:

-7-

1913-1914 թ. ձմեռը առատ ձյունով էր պատել դաշտն ու հովիտը, մրափած լեռները: Պարզկա մի գիշեր, երբ գյուղը դեռ չէր քնել, տղամարդիկ նոր էին դուրս գալիս օդաներից³⁴, գյուղի բնակիչները ահաբեկված դուրս թափվեցին տներից, շատերը ոտաբորիկ առատ ձյունը տրորելով բարձրացան կտուրների վրա, որ ավելի լավ տեսնեն հրաշքը՝ երկնքից կախ ընկած «պոչով աստղը», որը գիշերվա այդ ժամին սարսափ էր ազդել բոլորի վրա:

Կրծքերը շարունակ խաչակնքելով՝ գյուղի ծերերը շվարած նայում էին կաս կարմիր կտրած այդ հրաշքին ու չէին իմանում, ի՞նչ ասեն, ի՞նչ բան է այդ: Պառավներից շատերը իրենց սարսափելի գուշակություններն էին անում. ասում էին, որ «պատերազմ է լինելու, գետերով արյուն է հոսելու», ոմանք էլ այնպես էին, որ «աշխարհակործան երկրաշարժ է լինելու», մի

³⁴ Օղս, իհն տների մեջ այն բաժանմունքը, սենյակը, որը հատկացված էր ճաշելու, հյուրեր ընդունելու համար: Փոխառված է թուրքերեն oda՝ «սենյակ» բառից:

ուրիշն ասում էր, որ «աշխարհով մեկ սով է լինելու, մարդիկ իրար պետք է ուտեն, մերը մանուկը կուրանա»: Ավելի ծերերն ասում էին «աշխարհի վերջն է եկել, համատարած ջրհեղեղ է լինելու, ցամաքը ջրի տակ է գնալու, կենդանությունը վերանալու է աշխարհից»:

Ոտաբոքիկ ձյան վրա կանգնած, զարմանքով ու վախով ես նայում էի այդ հսկա «պոչով աստղին», որ կարծես համաշխարհային տիեզերական կանթեղ էր, հրաշքով կախված երկնակամարից: Գյուղը այդ գիշեր ամբողջովին ապրեց պառամների գուշակած այդ չորս համամարդկային սարսափները:

Գլուխ III. ՊԱՏԵՐԱԶՄ

Ամառ էր. 1914 թ. կիզիչ ամառ: Ընդարձակ հովտում, պարզած դրոշների պես, թերթն քամուց ալիքավորված, ծիում էին հասած ցորենի ու տարեկանի արտերը: Անուշ միալար լսվում էր հայ գյուղացու գերանդու ու մանգաղի զնգոցը, և մեկը մյուսի հետևից բարձրանում էին անհամար ցորենի ու տարեկանի բարդոցները (դեզերը): Ամեն ինչ ուրախ էր, ամեն ինչ հնձվող արտերի պես ծիծաղկոտ: Չէ՞ որ բերքահավաք էր, չէ՞ որ թափված ծով քրտինքի վարձատրման օրերն էին ու բերքն էլ առատ էր այդ տարի: Ես էլ հորս հետ գյուղից հեռու, մեր արտում բերք էինք հավաքում:

Կեսօր էր: Հնձից հոգնած հայրս բարդոցի ստվերի տակ քնել էր՝ հանգիստ տալով իր հոգնած բազուկներին: Ես նսկում էի եզներին ու դիտում հեռավոր ճամփեքն ու մեր Նեմրուօ լեռը, որ այդ օր առանց մի ամպի կտորի ցցվել էր լազուր կամարում:

Նայում էի Նեմրուօին և ահա մեր գյուղից դեպի հարևան Մեծք գյուղ տանող ճամփի վրա, որի մոտ մեր արտն էր, գնդակի նման սլացող մի ձիավորի նկատեցի, որի հետևից բարձրացած առատ փոշու ամպը ծածկում էր ճամփան:

Երբ մոտեցավ մեր արտին, ձիու գլուխը շուտ տվեց դեպի այն բարդոցը, որի ստվերի տակ քնած էր հայրս: Դա տաճկական զինված ոստիկան էր: Արաբական նժույզը քրտինքի մեջ կորած, ձգված զսպանակի նման խաղում էր նրա տակ: Նրա փոքրիկ գեղեցիկ ականջները ուշադիր կերպով լարված էին. թվում էր, նա ինչ-որ անսովոր վիճակ էր ապրում: Վախեցած ես վազեցի դեպի բարդոցը և արթնացրի հորս: Հայրս լուռ ոտքի վրա սպասում էր: Ոստիկանը մոտեցավ բարդոցին, առանց մի բառ ասելու ձիուց ցած իջավ, վերցրեց բարդոցի հովին դրած կուժը և ազահուությամբ հազեցրեց իր ծարավը, աչքերը չռեց, բեղերը ոլորեց ու անապատի իժի նման շվացրեց.

- Այսօր ամեն ինչ վերջացավ: Թուրքիան պատերազմ է

հայտարարել ձեր քեռուն՝ գյավուր մոսկովցիներին: Գնացեք գյուղ՝ զորահավաք է:

Այս շանթոդ բոթը հայտնելուց հետո, ուստիկանը արագությամբ հեռացավ՝ այդ ահավոր լուրը մյուս հայաբնակ գյուղերին ևս հաղորդելու համար: Հայրս քարացած, լուռ, գունաւտ ու շփոթված մտածում էր. թվում էր, որ նա միայն մի քանի ըռպե առաջ հասկացավ իր ընտանիքի, իր օջախի, հայրենի հող ու ջրի քաղցրությունը, հասկացավ, որ այդ բոլորի վրա մահացու վտանգ է կախված:

Նեմրոթ լեռան ընդարձակ հովտում, նրա փեշերին ու լանջերին մինչև Վանա լիճը նստել էին հայկական Տափալանք, Սպրաձոր, Թեղվուտ, Կոշտյան, Կամուրջ, Նազիկ, Մեծք, Խուլիկ, Փրիսուս, գավառային կենտրոն Խլաթ և այլ հայկական գյուղեր: Նրանցից շատերը դեռ չէին իմացել շմեցուցիչ բոթը: Տորենի խրձեր բարձած սայլերով, գեղջկական երգերը շրթներին, գյուղացիները տուն էին վերադառնում: Բայց ո՞վ էր իմանում, ո՞վ կարող էր գուշակել զարհուրելի սպանդի մասին: Ո՞վ էր մտածում, որ դա վերջին ամառն էր, վերջին երգն էր երեք հազար տարվա հայրենի հողի վրա:

- Արի, լառ, արի եզները բեր տուն գնանք, էլ չենք վարի, էլ չենք ցանի, - ասաց հայրս, և մենք տուն վերադարձանք:

Այդ լարված օրերին սարսափն ավելի ահավոր դարձավ, երբ հանկարծ օրը ցերեկով արևը խավարեց և մի քանի ըռպե երկինք ու երկիրը անթափանց խավարով պատվեց: Կանանց, երեխաների ահաբեկված լացը, ընդհանուր սարսափահար խուճապը, շների անընդհատ ոռնոցը, որ կարծես շնային իրենց բնագոյով զգում էին, թե ինչ է կատարվում, ցնցում էր գյուղը:

-2-

Անցել էր մի քանի օր: Օգոստոս ամսվա մի գիշեր կալում դեռ ցորենից չմաքրած թեղի³⁵ մեջ պառկած՝ ես լսում էի ու զգում, թե ինչպես է տնքում գյուղը:

³⁵ Թեղ, հարդախառն ցորենի կամ գարու դեզ կալում:

Զորահավաք էր. առավոտյան մեծ քանակությամբ երիտասարդներ պետք է գնային բանակ: Մինչև ուշ գիշեր գյուղի թոնիրները վառվում էին, ճանապարհի պատրաստություն էին տեսնում բանակ մեկնող երիտասարդների համար: Ահա կիսաքուն-կիսարթուն, կեսգիշերվա լոկ այդ ժամին ականջիս հասավ կարոտով լեցուն մի երգ՝ երգում էր բանակ մեկնող մի հայ երիտասարդ: Ահա այդ երգի խոսքերից մի քանի տող.

*Զինարի ծառ եղևիս՝
Ճամփին բուսնելու,
Երանի այն աչքին
Երկիր տեսնելու:
Կերթամ, կերթամ,
Զինվոր եմ, կերթամ:*

Առաջին համաշխարհային պատերազմի պայթյունի՝ հենց առաջին օրվանից հայ աշխատավորը զգաց, որ իր հայրենիքն ու իր գոյությունը մահացու վտանգի տակ են:

Տաճկական բանակ քշվող հայ զինվորը չէր հավատում, որ կրկին անգամ կտեսնի իր ծննդավայրը, իր ընտանիքն ու իր հարազատներին: Ծերերը լուռ, գլուխները կախ խորհրդավոր կերպով փսփսում էին՝ «արևը թարս տեղ է մայր մտնում. գնացողը այլևս տուն չի վերադառնա, իսկ մեր ճիժ ու պիժի գլխով ո՞վ է իմանում, ինչ կարկուտ պիտի թափվի, ո՞վ է տերը, ո՞վ է պաշտպանը»:

-3-

Աշուն էր, պատերազմի դառնաշունչ աշուն: Գյուղն անսասան հավատով առաջվա նման կպել էր կյանքին, միշտ էլ անխորտակ հույս ուներ ապրելու. ձեռքերը չէր ծալում, աշխատում էր ապրելու համար:

Այդ օրերին լուսաբացի մի առավոտ հորս հետ գնում էինք Նեմրութի փեշին աշնանացանք կատարելու: Ցուրտ էր. ոսկոր մտնող լուսաբացի ցուրտ: Քունը աչքերիցս փախել էր: Զվալի

տակից գլուխս հանած՝ ուշադիր դիտում էի աշնան լուսաբացը: Լսվում էր բներից թռչող թռչունների թևերի շփումը, տեսնում էի հեռու, լեռների հետևում ցլացող աստղերի անկման շեշտակի ընթացքը: Ինձ թվում էր, որ դա հեքիաթ է, գիշերային օրորող մի հեքիաթ:

Հայրս սայլի առեղին նստած՝ քթի տակ ինչ-որ երգ էր դնում, մեկ-մեկ էլ վարոցով խփում էր եզներին՝ տալով նրանց անունները՝ հե՛յ, Դիլբար, Ղումաշ: Մենք գնում էինք ցանք անելու, բայց ո՞ւմ համար, ի՞նչի համար. այս ահավոր հարցը նա իրեն չէր տալիս, որովհետև ապրել էր ուզում:

-4-

Մենք արդեն արտում էինք. աշնանային շաղը այնքան առատ էր նստել գետնին, որ թվում էր թեթև ձյուն է եկել: Աշնանային անգոր արևը բավականին բարձրացել էր, երբ մենք սկսեցինք ցանքսը: Բայց զարմանալի բան. այդ օրը ոչ մեր գյուղից, և ոչ էլ հարևան գյուղերից ոչ մի ոչխարի հոտ, ոչ մի տավարի նախիր չերևացին Նեմրութի աշնանային արոտով հարուստ փեշերին ու լանջերին: Լուռ էր Նեմրութը, խորհրդավոր ձևով լուռ...

Ես զգում էի, որ հայրս անհանգիստ էր: Մեկ-մեկ կանգնում էր, ձեռքը դնում ճակատին, երկար ու զննող հայացքով դիտում էր հեռուները, կենդանի շունչ էր որոնում Նեմրութի խորունկ ձորերում, նրա լանջերին ու փեշերին:

- Տղա, լսո, - հանկարծ ասաց նա, - քո աչքեր սուր են, ի՞նչ տես են անտեր սարի վրա տավար, ոչխար չկա՞ն:

Հայրս կասկածում էր: Չէ՞ որ պատերազմ էր, չէ՞ որ այստեղ խաղաղ ժամանակ էլ մենակ լինելը վտանգավոր էր: Լարված ուշադրությամբ ես դիտում էի հեռու ճամփեքին, որ տանում էին դեպի Մշո դաշտ, դեպի Վանա լիճ: Հանկարծ բլուրներից ցած իջնող ինչ-որ ձիավորների նկատեցի, որ դեպի մեզ էին գալիս: Ես այդ մասին հայտնեցի հորս, իսկ նա ինձ գոտեպնդելու համար ասաց.

- Բան չկա, լսո, ծանոթ քրդեր կլինեն, մի վախենա:

Մի վախենա: Բայց ի՞նչ դաստիարակություն էր ստանում հայ երեխան, որ չվախենար: Մանկուց պատանու հոգու մեջ արսկում էին ստրկության նյութը: Ամենահասարակ մանկական չարության համար ծնողները, հարազատները, հարևանները երեխային սաստելու համար բղավում էին.

- Զուրդը եկավ, թուրքը եկավ:

Եվ իրոք, հայ պատանին գուցե այնքան գայլից և անգամ առյուծից չվախենար, որքան քրդից ու թուրքից էր վախենում:

Նման անգիտակից դաստիարակությունը չէր կարող իր ողբալի հետևանքները չունենալ, երբ հարկ եղավ թեկուզ ձեռքերի եղունգներով ու ատամներով պաշտպանել սեփական անձը՝ չվախենալով արյուն թափելուց:

Զիավորները արդեն մեզ մոտ էին. նրանք հինգ հոգի էին: Դրանք տաճկական բանակի զինվորներ էին, որոնք իրենց գորամասից բաժանվել, ընկել էին դաշտերը թալանելու համար: Հինգից երեքը արաբ էին թուխ դեմքերով ու ձեռքերով և համարյա ոտաբոբիկ: Նրանք նստել էին կրակոտ արաբական նժույգների վրա: Արաբների մասին ձմռան երկար գիշերներին ես լսել էի, բայց այդ թույլներն ես նրանց տեսնում էի որպես իրականություն: Նրանցից երկուսը՝ թուրք զինվորները, ցած իջան ձիերից և հորիցս լուցկի պահանջեցին և ապա վերցնելով երկու դասարկ ջվալներ, ուզեցին հեռանալ: Հայրս փորձեց թույլ չտալ, կախ ընկավ ջվալներից: Թուրք զինվորները կատաղեցին: Նրանցից մեկը թափով հրացանը վերև բարձրացրեց և ուզում էր խզակոթով հարվածել հորս գլխին: Լսելով իմ ճիչը՝ արաբ զինվորները վայրկենապես շրջապատեցին նրանց և թույլ չտվեցին հորս հարվածելու: Նրանք ջվալները հետ տվեցին մեզ և համոզեցին թուրք զինվորներին հեռանալ:

- Տեսա՞ր, լառ, - ասաց հայրս, - արաբ զինվոր մարդ ա, իսկ թուրք ամեն գախ³⁶ էլ, ամեն տեղ էլ թուրք ա, էտնք սիրտ չունեն, դուշման են խայ ազգին:

³⁶ Գախ, ժամանակ, պահ:

Այդ երեկո մեր գյուղն ամբողջովին ցզկեց արաբ զինվորներով: Ասում էին, որ Բշարի Չաթոյի գորքն է, գնում է Սարիղամիշ³⁷՝ ռուսական բանակը ջարդելու: Գյուղի յուրաքանչյուր տանը այդ գիշեր չորս-հինգ արաբ զինվոր էր գիշերում: Կանայք և երեխաները սկզբում վախենում էին արաբ զինվորներից, բայց բոլորն էլ համոզվեցին, որ արաբ զինվորը բարի է, երբեք թուրք զինվորի դաժանությունը չունի: Մեծերը հետո ասում էին, որ նրանք գյուղում ոչ մի ընտանիքի նեղություն ու վիրավորանք չեն պատճառել: Նրանք թուրքերեն չգիտեին. գիտեին հատ ու կենտ մի քանի բառեր՝ հաց, ջուր, ձու, ծխախոտ, և մի քանի այլ բառեր: Նրանք առանձին կարոտով շարունակ կրկնում էին.

- Բաղդատ էիր, խուրմա չոխ...³⁸

Ծերերը զարմանքով ու կասկածանքով ասում էին. «Հոկտեմբեր ամիսը վերջանում է, շուտով նոյեմբեր ամիսն է. այս մարդիկ կիսաբոքիկ ու այսպես թեթև հազնված ինչպե՞ս պետք է կռվեն: Չէ՞ որ Հասան Ղալայի լեռներում ու Սարիղամիշում խուրմայի ծառեր չեն աճում»:

Պարզ էր, որ տաճկական հրամանատարությունը խաբել էր նրանց, ասելով, թե ճանապարհին ամեն ինչ կտրվի և տաք ու կուշտ կլինեն: Բայց որպես օրենք, տաճկական զինվորներն իրենց ձեռքի հետ միասին կուշտ էին լինում միայն հայկական գյուղերում խլելով նրանցից ամեն ինչ: Մնացած ժամանակ նրանց բաժինն էր մի բուռ գարու աղանձ, կամ մի քանի կտոր քարից ամուր պաքսիմատ, և այն էլ ոչ

³⁷ Սարիղամիշ, գյուղաքաղաք Կարսի մարզում ռուս-թուրքական սահմանի մոտ: Առաջին աշխարհամարտի ժամանակ, 1914 թ. դեկտեմբերի 26-ից մինչև 1915 թ. հունվարի 18-ը Սարիղամիշի մոտ տեղի ունեցան անեղ կռիվներ՝ ռուսական զորքերի և թուրքական 3-րդ բանակի միջև, որոնք հայտնի դարձան Սարիղամիշի օպերացիա անունով: Թուրքերն այստեղ ծանր պարտություն կրեցին:

³⁸ Բաղդադը լաֆն է, արմավը շատ է (արաբերեն):

ամեն ժամանակ կարող էին ստանալ: Այդ մարդիկ՝ արաբ զինվորները, չէին պատկերացնում, թե ինչ սպանդանոց են քշում իրենց՝ հավատացնելով, որ միայն սուրբ Փելիանբարի՝ Մուհամեդի անունը տալով աշխարհի երեսից կջնջեն գյավուր մոսկովցիներին:

Կերան, խմեցին ու մյուս օրը վաղ առավոտյան ճամփա ընկան դեպի Սարիղամիշ՝ դեպի կիսամերկ արաբ զինվորների համատարած գերեզմանոցը: Պատմում էին, որ Բշարի Չաթոյի բանակն էր, որ 1914 թ. աշնանը մեր գյուղի միջով գնաց կործանվելու:

-6-

Մեր գյուղը օրեցօր դատարկվում էր: Պարտադիր զինվորական ծառայության դիմակի տակ տաճկական ըլախիճները զինվորական ծառայության համար ոչ պիտանի հիսունհինգ-վաթսուն տարեկան հասակ ունեցող հայ տղամարդկանց քշում էին բանակ, որպես բեռնակիրներ՝ «դամուռ բաշիններ»: Հայկական լեռնաշխարհի դաժան ձմեռվա պայմաններում, Բիթլիսի, Վանի, Էրզրումի, Խարբերդի, Սեբաստիայի ու այլ վայրերից հայ մեծահասակ մարդկանց շալակն էին տալիս երեք, չորս փութ գարի, որպեսզի հայ տարեց մարդիկ սնունդ հասցնեին տաճկական բանակին Սարիղամիշում:

Դա հայ տղամարդ բնակչության սուսուփուս, ցրտից ու սովից ոչնչացնելու ամենադաժան, ամենանենգ, ամենամարդակուլու նողկալի ծրագիրն էր, որ սկսվեց 1914 թվականին՝ Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից, և հարյուրհազարավոր հայ տղամարդկանց դիակներով ծածկեց ձմեռային ձյունածածկ ճանապարհները:

Իմ հորս էլ տարան բանակ որպես բեռնակիր: Ես հիմա չեմ կարողանում հիշել, թե նա ինչպես բաժանվեց իր ընտանիքից: Նա գնաց, և մենք այլևս նրան չտեսանք:

Այդ հրեշավոր արարքը միայն մեկ նպատակ էր հե-

տապնդում դատարկել հայկական գյուղերը տղամարդկանցից, որպեսզի հետո կանանց, երեխաներին ու ծերերին մորթեն հեշտությամբ:

Հեռավոր ռազմաճակատից տարբեր ճանապարհներով գյուղ էին հասնում պատերազմի ընթացքի նկարագրերը: Ծերերը մինչև ուշ գիշերներ օդաներում նստած խոսում, պատմում էին այդ մասին: Ասում էին, որ Սարիղամիշում տաճկական բանակն ամբողջովին ջախջախվել է, որ նրանց մի մասը սառել, փայտացել է Սարիղամիշի անտառներում, որ նրանց դիակներով է ծածկվել ամբողջ անտառը: Ասում էին, որ այդ սպանդից միայն էնվեր փաշան է կարողացել ազատվել խայտառակ փախուստի միջոցով: Ասում էին, որ անվախ ռուսը, որ ձյունից ու սառնամանիքից չի վախենում, տաք հագնված քշում է աղանձակեր տաճկական բանակին, ասում էին, որ շուտով փրկություն կլինի:

Օ՛հ, ինչպես էր երագում հայ ժողովուրդը խաղաղության, անտեղյակ լինելով, որ աշխարհի շահամու, արյունոտուշտ մեծ պետությունները անխտիր կերպով շատ վաղուց նրան տորգի³⁹ են դրել: Նրանք բոլորն էլ ձգտում էին տիրանալ հայի հայրենիքին՝ առանց հայի: Դրա համար էլ իրար կոկորդից էին բռնել, զենք էին դնում տաճկական դահիճների ձեռքին, ասում էին՝ կոտորիր, թող հայը բնաջնջվի, բայց այդ արյան դիմաց զիջիր մեզ նոր տերիտորիաներ, տուր նոր արտոնություններ:

-7-

Գարուն էր արդեն. 1915 թվականի մարտ ամիսը: Հենց այդ օրերին մեր գավառ և մեր գյուղ հասան Սարիղամիշում ջախջախված տաճկական բանակի ողբալի մնացորդները՝ ցնցոտիապատ, կմախքացած ու մազակալած, ոջլի մեջ կորած, տիֆով ու դիզենտերիայով վարակված: Դրանք հրաշքով կենդանի մնացած արաբ զինվորներն էին, նրանք, որոնք մի

³⁹ Առևտրի, վաճառքի (ռուս. торг բառից):

քանի ամիս առաջ անցել էին մեր շրջանով, մեր գյուղով դեպի Սարիղամիշ, նրանք, որոնք անհուն կարոտով էին հիշում իրենց տոթակեզ հայրենիքը՝ կրկնելով «Բաղդատ էլիր, խուրմա չոխ»:

Նրանց կմախքացած դեմքերի վրա որպես կենդանության նշան փայլում էին միայն զույգ սև աչքերը: Նրանք չէին քայլում, այլ օրորվում էին հարքածի պես: Պատերի տակ նստած՝ զարնան արևը տաքացնում էր նրանց. այդ բոլորներին ոջիլների շարանը ձգվում էր այդ թշվառ մարդկանց ամբողջ մարմնով մեկ:

Չսայած այդ բոլորին՝ գյուղի բնակիչները ձեռք էին մեկնում նրանց, տեղ էին տալիս ու կերակրում, որքան հնարավորություն ունեին այդ դաժան օրերին: Կանայք, առանց մտածելու վարակման մասին, օգնում էին նրանց այդ ողբալի վիճակից դուրս բերելու համար: Հայ կանայք օգնում էին արաբ թշվառ, հիվանդ զինվորներին, բայց ո՞վ կարող էր մտածել և անգամ գուշակել, որ բառացիորեն մի երկու ամիս հետո արաբ ժողովուրդը մարդկային օգնության ձեռք կմեկնի տաճկական արյունառուտ կառավարության հրամանով տեղահան արված ու բռնի կերպով դեպի արաբական անապատներ քշված հազարավոր հայ կանանց, երեխաներին ու ծերերին:

Ո՞վ էր մտածում, որ երկարատև ճանապարհներին տանջված, խոշտանգված, սովի ու ծարավի կնիքը դեմքերին, նրանցից շատերը կփրկվեն արաբ ժողովրդի, արաբ մայրերի ձեռքերով:

- Թշվառն է միայն թշվառին հասկանում, - ասում է ժողովրդական իմաստությունը: Հայ ժողովուրդը իր սև օրերին ճանաչեց իր սրտակից, իր բարեկամ արաբ ժողովրդին:

Արաբ զինվորների միջոցով մեր գյուղում բռնկվեց հետադարձ տիֆ: Ոչ ոք չէր հասկանում այդ հիվանդության բնույթը. ասում էին «չոռ ա՛ անց կկենա»: Դաժան նյութական կարիքի ու տիֆի ճիրաններում օրեցօր հավվում էր գյուղը: Մեր ընտանիքում տիֆով հիվանդացան մայրս, քույրս և հետո ես:

Գարուն էր. 1915 թվականի եղեռնի գարուն: Հարավից եկած սարյակները ու ծիծեռնակները աշխուժորեն կարկատում էին իրենց բները: Արագիլները ամբողջ գյուղի սիրելին էին. իրենց երկար, կարմիր ոտներով, բոքիկ ջրվորի նման վերադարձել և նստել էին իրենց հինավուրց հաստաբուն քարդու ծառերի վրա ու ջանասիրությամբ պատրաստվում էին մայր դառնալու, ձագուկներ կերակրելու: Գարնանային փոփոխական եղանակը անցնում էր աննկատ: Այդ օրերին սովորական եռուզեռ, աշխատանքային խնդություն չկար: Ոչ մեկի դեմքին ժայիտ չէր գալիս, ոչ ոք կուշտ չէր քնում ամեն ինչ անորոշ ու մույթ էր:

Գյուղը ակամա, մի կերպ կիսատ-պռատ դուրս էր եկել գարնանացանի: Բայց դա թվացող գարնանացան էր, քանի որ գյուղում չկային բանող ուժ՝ տղամարդիկ, չկար կազմակերպող ձեռք, ոչ ոք չէր իմանում, ի՞նչ է լինելու վաղը. ամեն ինչ մնացել էր Աստծո հույսին: Սովորականից շատ շուտ վերադառնալով դաշտային աշխատանքներից՝ մենք քուն էինք մտնում, ավելի ճիշտ ծվարում էինք մեր խրճիթներում: Խորհրդավոր ու զուսպ լռությունն էր պատել գյուղը: Աշխարհից կտրված՝ մենք ոչինչ չէինք իմանում ռուսական բանակի առաջ շարժման մասին: Փրկության միակ հույսը տասնյակ տարիներով երազած ռուսական հաղթական բանակի գալն էր, բայց նա չկար. ասում էին՝ նա դեռ հեռու է:

Բայց սև ամպերը վաղուց կուտակվել էին, այն էլ ահավոր չափերով:

-8-

1915 թվականին Ալաշկերտի⁴⁰ անառիկ Զիլանի լեռներում

⁴⁰ *Ալաշկերտ*, գյուղաքաղաք Արևմտյան Հայաստանում, Ալաշկերտի հովտի կենտրոնական մասի հյուսիսային կողմում: Հայոց ցեղասպանության նախօրյակին կազմում էր Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Ալաշկերտի գավառակի կենտրոնը:

և ձորերում⁴¹ բնակվող Հասնացի կոչվող քրդական աշիրեթի մի մասը ռուսական բանակի առաջխաղացման պատճառով փախչում էր դեպի արևմուտք: Այդ վայրենաբարո խուժանը արյունոտուշտ տաճկական կառավարությունից խնդիր էր ստացել իր ճամփին ընկած հայկական բոլոր գյուղերը կողոպտել և սրի քաշել՝ չինայելով ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին և ո՛չ էլ ծերերին: Եվ ապրիլյան մի օր այդ խուժանը, գինված բիրդանգի հրացաններով⁴², մեր գյուղ հասավ և երեկոյան շրջապատեց այն: Դեռ մութը չընկած գերեզմանների մոտ նրանք սպանեցին մի տղամարդու. ոչ ոք սիրտ չարեց նրա մոտ գնալ տեսնել՝ նա մեռել է, թե՞ դեռ գալարվում է իր արյան մեջ: Այդ դեպքը կայծակի արագությամբ տարածվեց գյուղում, ու մահվան սարսափը գալարվեց, սողաց. մտավ յուրաքանչյուրի խրճիթը: Այն ավելի մոտեցրեց հարևաններին, նրանք ընտանիքներով հավաքվում էին իրար մոտ: Մղձավանջային գիշերը տարի էր թվում: Օղակված գյուղից ոչ ոք չէր կարող դուրս գալ. մահվան օղակում գյուղը սպասում էր լուսաբացին: Քրդական այդ ոհմակը սիրտ չարեց գիշերով գյուղ մտնել:

Առավոտյան, երբ տեսան, որ ոչ մի դիմադրություն չկա, չորս կողմից իրենց կանանց հետ միասին սպանելու ու կողոպտելու նպատակով այնպիսի վայրագությամբ գյուղ խուժեցին, ինչպիսի գազանությամբ ուշ ձմռանը քաղցից ոռնացող գայլերի ոհմակն է հարձակվում իր անգեն ու անպաշտպան որսի վրա:

Սկզբում ոչնչացնում էին միայն յոթանասուն-ութանասուն տարեկան ծերունիներին, հետո սկսեցին հնձել և պատանիներին: Իմ աչքի առաջ մեր տան շեմքի վրա սպանեցին մոտ իննսուն տարեկան պապիս: Առավոտվանից մինչև արևի

⁴¹ *Զիլանի* կամ *Զելանի ձոր* (Զելանդերե), կիրճ Վանա լիճի ավազանում: Այս կիրճով է հոսում Ծաղկանց (Ալադաղ) լեռների հարավային լանջերից սկիզբ առնող Զելան գետը, որը Արճեշ քաղաքի մոտ Վանա լիճ է թափվում:

⁴² *Բիրդանգի* կամ *բերդանկա* (հնարողի՝ ամերիկացի Բերդանի անունից), միալից հրացան, որը լայն կիրառություն ուներ Առաջին աշխարհամարտի տարիներին:

մայր մտնելը գյուղի բոլոր թաղերից անընդհատ կրակոցներ էին լսվում. ոչ մի գնդակ գուր չէր անցնում:

Շուտով փողոցներում ու առանձին տների ներսում կուտակվեցին դիակներ: Դիակներ էին ընկած նաև կտուրների ու ճամփերի վրա:

Այդ օրհասական թուփերին մայրերը կորցրեցին իրենց երեխաներին, երեխաները՝ մայրերին, որովհետև չէին թողնում մարդկանց մի տեղ մնալ. անընդհատ փողոցից փողոց էին քշում, տնից-տուն:

Ես էլ կորցրեցի մորս ու քրոջս, բայց հետո, չգիտեմ ինչպես, մայրս կիսախելագար վիճակում գտավ ինձ: Նա ինձ իր հետևից քարշ տվեց բարձր պատեր ունեցող մի կիսավեր բակ: Այստեղ մի քանի կանայք սարսափից կարծես ձուլված պատերին սարսռած դեմքերով սպասում էին: Մենք ևս կուչ եկանք պատի մի անկյունում: Չանցած մի քանի թուփեր՝ հանկարծ երկու քրդեր մի զույգ հրացանի փողեր վերևից ուղղեցին մեր վրա՝ հրամայելով դուրս գալ բակից: Հենց բակից դուրս եկանք, ծեր, ատամները թափած մի քուրդ բիրդանգի հարցանը դեմ արավ կրծքիս, ասելով.

- Տղա է, բավական է, պետք է ոչնչացնել:

Մի ակնթարթում նկատեցի, թե ինչպես մայրս կռացած համբուրում է ծեր քրդի ոտքերը և խնդրում, որ ինձ չսպանի: Քուրդը սկսեց տատանվել. ես իսկույն թողեցի մորս ու ծուռումուռ փողոցներով փախա քեռուս տան դիմացի բակը: Մի փոքր հետո մագերը արձակ, շնչահեղձ մեռելի գույն ստացած մայրս բակ մտավ՝ ասելով.

- Սպանում են, ոչ մի տղա չեն թողնում. արդեն բազմաթիվ պատանիներ իրենց արյան մեջ ընկած են փողոցներում: Գնանք, գնանք այստեղից, հիմա ուրիշ քրդեր կհանդիպեն ու կսպանեն մեզ, - ասաց նա և ուժով ինձ քարշ տվեց իր հետևից և մենք մտանք քեռուս տուն:

Այստեղ իմ հասակակից քեռուս տղային՝ Բենիամինին, մի քանի թուփեր առաջ էին սպանել, և նա անշնչացած էր իր արյան

մեջ: Մայրս արագությամբ ինձ պառկեցրեց նրա կողքին ու նրա նոր, դեռևս թարմ արյունից քսեց դեմքիս, կրծքիս, ձեռքերիս և բոքիկ ոտքերիս՝ իբր թե սպանված եմ: Հետո չզիտեմ ի՞նչ մտածեց, մի քանի բոպեից հետո ինձ ոտքի հանեց և տարավ պառկեցրեց մեր հարևանի դռանը կուտակված դիակների մեջ՝ պատվիրելով, որ անշարժ, աչքերս փակ մնամ, ձնացնեմ ինձ սպանված:

Արդենչոքլացչեր լինում, արտասուքը վաղուց էր ցամաքել, սրտերը ապառաժ էին կտրել: Կանաչ կիսախելագար պոկում էին իրենց գլխի մազերը, պատառոտում էին հագուստները, կրծքերը թակելով մոնչում, անկապ-անկապ խոսքեր էին ասում, օգնություն աղերսում, անիծում իրեն՝ ամենակարող ու արդարապաշտ Աստծուն...

Գեղեցիկ հարսներն ու ջահել աղջիկները մրով ու ցեխով այլանդակում էին իրենց դեմքերը, որ չզերվեն ու բռնի կերպով քրդի կին չդառնան: Բայց հաճախ այդ չէր օգնում և շատերին մազերից քարշ տալով բաժանում էին իրենց հարազատներից ու տանում: Բոպե առ բոպե փողոցներում և տներում բարձրանում էին դիակների կույտերը:

Ես պառկած էի դեռ մի երկու ժամ առաջ կենդանի, պայծառ դեմքերով իմ հարազատների, ընկերների, հարևանների ու համազրուղացիների դիակների մեջ, որոնց շրջապատել էին կիսախելագար կանաչք, այդ թվում և իմ մայրը, և մոնչում էին իրենց զավակների, եղբայրների ու ամուսինների սառած արյունոտ գլուխները գրկած: Շատերին՝ թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց, բռնում տանջամահ էին անում պահանջելով ցույց տալ թաքցրած ապրանքների, ոսկու ու արծաթի տեղերը: Արևը արդեն մայր էր մտել, հրացանների կրակոցները դեռ չէին դադարել, երբ կենդանի մնացած կանանց ու երեխաների մեջ լուր տարածվեց, որ ժողովուրդը փախչում է դեպի Թլքի ջուր (դա գետակ է, որ սկիզբ է առնում Նազիկ լճից, գյուղից 3-4 կմ հեռու, լճի արևելյան կողմից և 20-25 կմ անցնելուց հետո թափվում է Վանա լիճը):

Մոտ չորս հարյուր տնից բաղկացած գյուղը արյունով ու արտասուքով ողողելուց հետո, բորենիների ռիմակը հեռացավ գյուղից, իսկ խելակորույս ժողովրդի մնացորդները առանց իրենց հաշիվ տալու փախչում էին, միայն թե չտեսնեին ուրազատների, բարեկամների ու իրենց ընկերների՝ արևի տակ ուռած, այլանդակված դիակները, փախչում էին, միայն թե ազատվեն այդ մղձավանջային տեսարանից:

Մայրս, որ ամբողջ ժամանակ իմ կողքին էր, գլխի վրա արդեն մազ չէր թողել: Նա ինձ շտապ ոտքի հանեց՝ գյուղից փախչելու համար: Բայց մի երկու փողոց դեռ չէինք անցել, երբ հանկարծ դիմացի տնից դուրս եկավ մի զինված քուրդ: Հենց նույն բոպեին, վազելով դեպի ինձ, եկավ մի հալ պատանի՝ Ադեի Սիմոնը, որը փախչում էր: Զինված քուրդը թափով հարձակվեց նրա վրա: Օգտվելով ստեղծված վիճակից՝ ես կտուրների վրայով փախա դեպի մեր տուն ու արագությամբ թաքնվեցի հարևանի աթարի ամբոցի մեջ՝ սողալով աթարի կտորների տակ:

Սիմոնին սպանելուց հետո, քուրդը հետևեց ինձ, բայց արդեն ուշ էր: Խուժանը հեռանում էր գյուղից, և քուրդը այլևս գլուխ չդրեց ինձ փնտրելու... հեռացավ: Ես մնացի ամբոցում, մինչև որ անշնչացած գյուղի երկնքում երևացին գարնանային գիշերվա լռիկ աստղերը:

-9-

Ես դուրս եկա աթարի ամբոցից: Ոչ մի կենդանի շունչ չկար. լռել էին անգամ շներն ու կատուները: Դուրս եկա փողոց և ահա մեր տունը. ուզեցի ճշալ, ձայն տալ, բայց պապիս դիակը շեմքի վրա տեսնելով՝ զարհուրած հետ քաշվեցի: Որոշեցի հետ գնալ, նորից պառկել դիակների մեջ, բայց այստեղ ես գտա մորս՝ փոքր եղբորս կրծքին սեղմած: Համոզված լինելով, որ սպանված եմ, փողոցից-փողոց, կտուրից-կտուր, բակից-բակ թափառելով՝ նա շատ էր փնտրել իմ դիակը և կորած քրոջս: Մեզ չգտնելով՝ նա ևս ակամա վերադարձել էր դիակների

մոտ: Մթության մեջ ես նրա դեմքը չտեսա, բայց շարժումները խելագարի էին. իր դողացող մատներով նա շոշափում էր դեմքս, կուրծքս, գլուխս՝ չհավատալով այն բանին, որ գրկի մեջ իր որդին է, կենդանի որդին: Եվ հանկարծ սթափվեց, ճանաչեց ինձ ու անմիջապես հարևանի տուն տարավ: Այնտեղ մի խումբ կանայք ու երեխաներ մթության մեջ՝ մեծ տաճն անկյուններում կծկված սպասում էին լուսաբացին:

Ես ջուր ուզեցի: Մայրս գնաց փողան (միջանցք), ուր կուժ էր դրված, ջուր բերելու, բայց վերադարձավ առանց ջրի: Քրդերը բոլոր ամանները ջարդել էին, ուտելու և խմելու ոչինչ էին թողել:

- Համբերի՛ր, քիչ հետո կփախչենք դեպի ծովը (Նագիկ լիճը)՝ այնտեղ կխմես, - ականջիս կամացուկ ասաց մայրս:

Բայց ես համբերել չէի կարող. օրվա ամբողջ մանասարսուռ ապրումներից հետո լեզուս չորացել էր բերանումս: Մթության մեջ շոշափելով, մի քանի քայլ անելուց հետո հանկարծ ոտքս մի փափուկ բանի դիպավ ու նույն վայրկյանին լսեցի արյուն սարսուռեցնող, սիրտ բզկտող մի մռնչոց: Ես քարացա տեղումս, չէի իմանում, որ իմ մանկության ընկեր, մեր հարևանի տղան՝ Անդրանիկը, մահացու վիրավորված պառկած էր ինձանից մի քանի քայլ հեռու. մթության մեջ ես ոտքս նրա վերքին էի դրել...

Հենց նույն րոպեին աղեկտուր բառաչելով թալանի քշված կովը փախել՝ հետ էր եկել իր հորթուկին գտնելու համար. բայց նա էլ այնտեղ գտնում հորթուկ չգտավ: Օ՛հ նա՛ անլեզու անատունը, գոնե կարող էր ազատ բառաչել և մեղմել սրտի ցավը, իսկ հայ մայրերը չէին կարող անգամ մրմնջալ իրենց խոցված ու վիրավոր հարազատների վրա:

Առավոտյան, մղձավանջային գիշերից հետո, վերջին անգամ անցնելով նահատակված հարազատների, ընկերների ու հարևանների դիակների միջով՝ մայրս տագնապով ինձ մեր տուն տարավ մի քիչ ուտելու բան գտնելու հույսով, որպեսզի փախչելիս ճանապարհին ուժ ունենայի քայլելու:

Բայց մեր տանը ևս ոչինչ չէին թողել, ամեն ինչ սրբել

տարել էին. տարել էին անգամ իմ ճանների⁴³ շարանը: Ես այդ մասին ափսոսանքով հայտնեցի մորս, որը զայրացավ ինձ վրա, որ այս սև օրերին ես դեռ ճանների մասին էի մտածում: Նա արագությամբ շենքին ընկած պապիս ոտքերից հանեց չորացած տրեխները, մի կերպ կապկպեց ոտքերիս ու սարսափահար կանանց ու երեխաների խմբի հետ փախանք գյուղից դեպի Թլբի ջուր, դեպի մեր ծովը:

-10-

Գյուղից փախչող կանանց ու երեխաների խմբերը ցրիվ եկան տարբեր ուղղությամբ: Ոմանք վաղ առավոտյան ճամփեքից դուրս գալով լեռներով ու ձորերով, մի մասը լեռնահովիտներով փախան դեպի հարևան Խուլիկ հայկական գյուղը, որին շատ մոտ էր կանգնած ռուսական բանակը, և հեշտությամբ ազատվեցին: Կենդանի մնացածների մի մասն էլ փախավ Թլբի ջուր կոչված խորունկ ու ապառաժոտ ձորը: Այդ խմբի մեջ էինք և մենք՝ մայրս, քույրս, եղբայրս և ես: Փախչողներից մի կին իր շալակին տանում էր երեք վիրավոր տղա երեխաների: Մենք ձորը մտանք հուսաբեկ, քաղցած ու ծարավ: Փախստականները սկսեցին ուտել գարնանային թարմ կանաչ ու խմել վարարած գետի ջուրը՝ ծարավը հագեցնելու և մի քիչ հանգստանալու համար:

Մայրս փոքր եղբորս պառկեցրեց գետի ափին մի մեծ ժայռակտորի տակ, կանաչների վրա և ինձ պատվիրեց, որ երեխայի մոտից չհեռանամ, իսկ ինքը գնաց մոտիկ Սպռածոր⁴⁴ հայկական գյուղը՝ մի քիչ ուտելու բան ճարելու: Բայց հագիվ էր հեռացել, հանկարծ գետի ձախ ափի բարձրադիր քարաժայռից մի խումբ քրդեր սկսեցին գոռալով, հայհոյելով կրակել գետի ափին, ձորի մեջ ցրիվ եկած փախստականների՝ կանանց ու

⁴³ *Ճան*, բարակ ու տափակ փոքրիկ քար կամ ոսկորի կտոր, որով քարկտիկ են խաղում:

⁴⁴ *Սպռածոր (Սփռածոր)*, գյուղ Խլաթի գավառակում, Մեծ եղեռնի նախօրյակին ունեցել է մոտ 50 տուն, 360 շունչ հայ բնակչություն:

երեխաների վրա: Ձորը լցվեց կանանց ու երեխաների սարսափելի վայնասունով:

Թողնելով եղբորս՝ ես արագությամբ թաքնվեցի քարակույտերի արանքում: Քրդերը ձորը չմտան: Հավանական է՝ նրանք շտապում էին հարևան Սպրաձոր գյուղ, ուր մայրս գնացել էր մի կտոր հաց բերելու, բնակիչներին սոփ քաշելու և կողոպտելու համար:

Լսելով հրացանների կրակոցը՝ շնչակտուր ու հուսաբեկ մայրս հետ եկավ, կանաչների վրայից վերցրեց եղբորս ու աչքերով սկսեց ինձ փնտրել: Երբ բորենիները հեռացան ու կրակոցները դադարեցին, ես դուրս եկա քարերի արանքից ու մոտեցա մորս:

Բարեբախտաբար, գետի հոսանքի հետ ժողովրդի ցրվելու պատճառով, այդ կրակոցներից ոչ ոք չէր վնասվել: Եվ ահա Թլրի ջրի ձորով մենք սկսեցինք բարձրանալ մեր ծովը՝ Նազիկ լիճը, որը մի երկու-երեք կիլոմետր հեռավորության վրա էր: Մայրս ուզում էր լճի ափով մեզ փախցնել մեր հարևան Խիարտանք գյուղ⁴⁵, որի բնակիչների մեծ մասը քրդեր էին:

Բայց դեռ լիճը չհասած՝ մեզ վրա թափվեց քրդական քոչվորների մի ամբողջ բանակ. նրանք բազմաթիվ կրակներ էին վառել լճի ափին, սաջերի⁴⁶ վրա հաց էին թխում և հրճվում հայկական գյուղերից քշած ոչխարի հոտերով, տավարի նախիրներով ու կողոպտված տնային իրերով:

Տեսնելով մահվան սարսուռն աչքերում քաղցած ու ծարավ փախստականներին՝ գայլերի ոհմակի պես շրջապատեցին մեզ և սկսեցին ոսկի ու արծաթ փնտրել մահից ճողոպրած կանանց ու երեխաների հագուստների մեջ: Նրանցից մեկը՝ ճայրոտ աչքերով մի քուրդ, տեսնելով ոտքերիս մեծ-մեծ տրեխները, մոտեցավ ինձ, խանչալը պատյանից քաշեց և ուղղեց կրծքիս: Մայրս այդ օրհասական օրերին քրդերեն երկու խոսք էր

⁴⁵ *Խիարտանք (Խիարդանք)*, գյուղ Խլաթի գավառակում: Մեծ եղեռնի նախօրյակին ունեցել է նաև մոտ 10 տուն, 80 շունչ հայ բնակչություն:

⁴⁶ *Սաջ*, թիթեղյա տապակ՝ վրան հաց թխելու կամ ընդեղեն բովելու համար:

սովորել՝ «լընգտը ռամուսը» (ոտդ համբուրեմ), իսկույն ընկավ քրդի ոտքերը, սկսեց համբուրել նրա կեղտոտ տրեխները: Բայց այդ մարդու գուրջը չարժվեց: Նա խանչալը դրեց պատյանի մեջ և հրացանի փակադակը հետ քաշեց, փամփուշտը առաջ տարավ՝ պատրաստվելով կրակել: Բայց այդ թուպեին մի տարիքով քրդի կին վրա հասավ և հրացանի փողը մի կողմի վրա հրեց ու վեճի բռնվեց քրդի հետ: Օգտվելով առիթից՝ ես ինչքան ուժ ունեի՝ լճի ափով, հենց մեր արտի մոտով փախա դեպի Խիարտանք գյուղ: Երբ արդեն բավականին հեռացել էի, բարձրացա մեր հանդի հետ շղթա կազմած քարքարոտ մի բլրի վրա ու թաքնվեցի քարերի արանքում՝ աչքս փախստականների ու մորս վրա պահած: Վերջապես, երկար տանջվելուց ու ծաղրանքի ենթարկվելուց հետո, փախստականներին հաջողվեց փոքր խմբերով ազատվել խուժանի ձեռքից: Փախչելով՝ դեպի Խիարտանք գյուղ եկավ և մայրս: Նա քայլում էր մի կողքի վրա թեքված ու լուռ տնքում էր: Պարզվեց, որ վերջին թուպեին քուրդը հրացանի կոթով հարվածել էր նրա կողքին, գլխից պոկել էր մազերի մի մեծ փունջ:

Երեկոյան դեռ արևը մայր չմտած՝ մենք՝ մոտ հարյուր հիսուն փախստականներ, սոված ու ծարավ մտանք Խիարտանք գյուղ և պատսպարվեցինք գյուղի քուրդ բնակչության գոմերում: Նրանք թույլ տվեցին այդ: Երևում էր, որ հողի արդար վաստակի հետ կապված քուրդ բնակչության սրսով չէր տեղի ունեցած բարբարոսությունը, բայց ոչինչ անել չէին կարող: Մի քանի օր մնացինք այդ գյուղում: Ոչինչ չէինք ուզում՝ ո՛չ հաց, ո՛չ ջուր, միայն թե գյուղից չհանեին, միայն թե կրկին անգամ արյուն չտեսնեինք, միայն թե հանգիստ թողնեին:

Մենք բոլորս արդեն մուրացկաններ էինք. սարսափով, գաղտագողի քրդական փոքրիկ գյուղում տնից-տուն թափառելով հաց էինք մուրում ու ախոռների մեջ անցկացնում անորոշ ու տազնապալի օրեր՝ մտածելով, թե վաղը արդյոք կտեսնե՞նք լուսաբացը:

Մի օր էլ՝ հունիսի սկզբներին, գյուղ եկան ինչ-որ մարդիկ

(հիմա լավ չեմ հիշում, թե ովքեր էին նրանք) ու հայտարարեցին, որ սուլթանը նոր հրամանով ամեն տեղ արգելված է հայերի կոտորածը և կենդանի մնացածները բոլորն էլ իրենց գյուղերը պետք է վերադառնան:

Այդ հայտարարությանը ոչ ոք չհավատաց: Բայց մեզ բռնի ուժով գյուղ վերադարձրին, որպեսզի ավելի սոսկալի մահով նահատակեցնեն:

-11-

Մեր հետ միասին գյուղ վերադարձան մահից ճողոպրած մի քանի տղամարդիկ, որոնք ապաստան էին գտել Խիարտանքում իրենց ծանոթ քրդերի մոտ: Մեր խումբը, կազմված մոտ հարյուր փախստականներից, ճամփա ընկավ դեպի մեր գյուղ Փրխուս, որը Խլաթ գավառի ամենամեծ գյուղերից էր: Անցնելով քարքարուտ բլրաշղթան մեր առաջ բացվեց մեր ծովը՝ Նազիկ լիճը: Այդ օրը նա զարմանալիորեն խաղաղ էր. մարդկանց նկատմամբ գործած ոճիրները չէին վրդովել նրան: Բայց նրա ամերին այլևս չէին արածում մեր գյուղի բազմաթիվ ոչխարների հոտերը և ոչ էլ տավարի նախիրները: Չէին լսվում երիտասարդ աղջիկների աշխույժ երգերը:

Անցնելով Թլբի ջուր գետը լճի հենց այն մասից, որտեղից նա սկիզբ էր առնում մենք մտանք մեր Փրխուս գյուղը, որը բռնված էր դիակների զարշահոտությամբ: Հեռվում, մառախուղը ճակատին, դարձյալ կանգնած էր Նեմրույթը: Խիարտանքում մենք արդեն իմացել էինք, որ մեր գավառի քսաներեք հայկական գյուղերը, որոնց մի մասը Նեմրույթի փեշերին ու լանջերին էին նստած, ամբողջովին սրի էին քաշվել: Հիմնահատակ կործանվել էին Խլաթի գավառի հայկական բոլոր գյուղերը:

Ահա այդ գյուղերի անվանումները.

1.	Ագրակ ⁴⁷	7.	Խուլիկ ⁵³
2.	Հաղաղ ⁴⁸	8.	Խոտաձոր ⁵⁴
3.	Էյմալ ⁴⁹	9.	Ծաղկեն ⁵⁵
4.	Թեղվուտ ⁵⁰	10.	Ծղակ ⁵⁶
5.	Թուխ ⁵¹	11.	Կոշտյան ⁵⁷
6.	Տափավանք ⁵²	12.	Կծվակ ⁵⁸

⁴⁷ *Ագրակ*, գտնվել է Խլաթ գյուղաքաղաքից մոտ 10 կմ դեպի հյուսիս: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղն ուներ 21 տուն, 152 շունչ հայ բնակչություն:

⁴⁸ *Հաղաղ*, հայտնի է նաև Աղաղ անունով: Գտնվել է Վանա լճի արևմտյան ափամերձ շրջանում: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղում ապրում էր 30 տուն, 270 շունչ հայ:

⁴⁹ *Էյմալ*, նաև *Էյմալը*: Գտնվել է Վանա լճի հարավ արևմտյան առափնյա շրջանում: Ըստ 1909 թ. վերաբերող տվյալների՝ գյուղն ունեցել է 16 տուն, 132 շունչ հայ բնակչություն:

⁵⁰ *Թեղվուտ*, նաև՝ *Թեղուտ*: Խլաթի գավառակի ամենամեծ հայաբնակ բնակավայրերից էր: Գտնվել է Խլաթ գյուղաքաղաքից մոտ 15 կմ դեպի հարավ-արևմուտք, Նեմրուք լեռան հյուսիսային փեշերին: Մեծ եղեռնի նախօրյակին վերաբերող տվյալներով գյուղն ունեցել է 260 տուն, 1599 շունչ հայ բնակչություն:

⁵¹ *Թուխ*, Վանա լճի հարավ-արևմտյան առափնյա բնակավայր էր: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղն ունեցել է 50 տուն, 349 շունչ հայ բնակչություն:

⁵² *Տափավանք*, Մեծ եղեռնի նախօրյակին գյուղի հայ բնակչության թիվն էր 100 տուն, 670 շունչ:

⁵³ *Խուլիկ*, գտնվել է Խլաթից մոտ 13 կմ հյուսիս, Նազիկ լճից հյուսիս-արևելք, ձորահովտում: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղում կար 68 տուն, 670 հայ բնակչություն:

⁵⁴ *Խոտաձոր*, մեր տրամադրության տակ առկա Խլաթի գավառակի գյուղացուցակներում նման անունով հայաբնակ բնակավայր չի նշված:

⁵⁵ *Ծաղկեն*, նաև՝ *Ծաղկե*: Գտնվել է Խլաթ քաղաքից 9 կմ հյուսիս, Նազիկ լճից դեպի արևելք: Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ գյուղն ունեցել է 29 տուն, 209 շունչ հայ բնակչություն:

⁵⁶ *Ծղակ*, գտնվել է Վանա լճի արևմտյան ափին: Մեծ եղեռնի նախօրյակին ունեցել է 159 տուն, 1394 շունչ հայ բնակչություն:

⁵⁷ *Կոշտյան*, Նազիկ լճից դեպի արևմուտք գտնվող գյուղերից էր: Մեծ եղեռնի նախօրյակին հայ բնակչության թիվն էր 97 տուն, 636 շունչ:

⁵⁸ *Կծվակ*, Վանա լճի արևմտյան ափամերձ գյուղերից էր: Նախքան Մեծ եղեռնը գյուղում կար 150 տուն, 940 շունչ հայ բնակչություն:

13.	Կամուրջ ⁵⁹	19.	Շամիրամ ⁶⁵
14.	Հերսոնք ⁶⁰	20.	Ուրթափ ⁶⁶
15.	Զիզիրեն ⁶¹	21.	Զրիոր ⁶⁷
16.	Մեծք ⁶²	22.	Սպրածոր ⁶⁸
17.	Մատնավանք ⁶³	23.	Միանձուկ ⁶⁹
18.	Ջամալդին ⁶⁴		

⁵⁹ *Կամուրջ*, գտնվել է Վանա լճի հյուսիս-արևմտյան ափի մոտ, Խլաթ գետի աջ ափին: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղն ունեցել է 100 տուն, 724 շունչ հայ:

⁶⁰ *Հերսոնք*, գտնվել է Խլաթի գավառակի արևելյան հատվածում, Վանա լճից հյուսիս: Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ բնակավայրն ունեցել է 42 տուն, 397 շունչ հայ բնակչություն:

⁶¹ *Զիզիրեն*, նաև *Զիզրեն*, *Զզիրոր*: Գտնվել է Նազիկ լճի հարավային ափին: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղի հայ բնակչությունը կազմել է 10 տուն, 115 շունչ:

⁶² *Մեծք*, գտնվել է Խլաթի գավառակի արևմտյան մասում, Նազիկ լճից դեպի հարավ-արևմուտք: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղն ունեցել է 132 տուն, 1404 շունչ հայ բնակիչ:

⁶³ *Մատնավանք*, գտնվել է Խլաթ գյուղաքաղաքից 5-6 կմ հյուսիս-արևմուտք, համանուն վանքի մոտ: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղում կար 28 տուն, 170 շունչ հայ բնակչություն:

⁶⁴ *Ջամալդին*, գտնվել է Խլաթի գավառակի արևելյան մասում, Խլաթ գյուղաքաղաքից մոտ 10 կմ հյուսիս-արևելք: Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ գյուղի հայ բնակչությունը կազմել է 34 տուն, 175 շունչ հայ:

⁶⁵ *Շամիրամ*, գտնվել է Բիթլիս քաղաքից 20 կմ հյուսիս-արևելք, Վանա լճից հարավ-արևմտյան շրջանում: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղում կար 58 տուն, 440 շունչ հայ բնակչություն:

⁶⁶ *Ուրթափ*, գտնվել է Վանա լճի հարավ-արևմտյան առափնյա շրջանում: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղն ունեցել է 88 տուն, 584 շունչ հայ բնակչություն:

⁶⁷ *Զրիոր*, գտնվել է Վանա լճի հարավ-արևմտյան ափամերձ շրջանում: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղի հայ բնակչությունը կազմել է 50 տուն, 326 շունչ հայ:

⁶⁸ *Սպրածոր*, գտնվել է Խլաթի գավառակի կենտրոնական հատվածում, Փոխուս գյուղի հարևանությամբ, Նազիկ լճից մոտ 5 կմ դեպի հարավ-արևելք:

⁶⁹ *Միանձուկ*, մեզ հասանելի աղբյուրներում նման անունով բնակավայր Խլաթի գավառակում չի հիշատակվում:

Հասնելով գյուղ՝ մենք լցվեցինք գյուղի վերին մասում գտնվող մի մեծ տան մեջ: Քաղցած ու ծարավ, իրար թիկնած՝ այդ տանջալի գիշերը մի կերպ լուսացրեցինք:

Ամբողջ գիշեր, արմատի վրա խամրած ծաղիկների պես, երեխաները ջուր էին խնդրում: Բայց ո՞վ սիրտ կաներ գիշերով դուրս գալ: Գյուղում ամեն քայլափոխ հարազատների, բարեկամների ու ընկերների դիակներն էին ընկած: Ո՞վ կարող էր ոտքը տան շեմից դուրս դնել և այդ սարսափը տեսնել...

Բայց դեռ արևը չծագած՝ այդ տունը մտան մի քանի զինված թուրքեր և պահանջեցին, որ տղամարդիկ աշխատանքի դուրս գան: Խիարտանք գյուղից մեզ հետ եկած մի քանի տղամարդկանց տարան ու նրանք այլևս չվերադարձան: Նրանց մի երեք-չորս օր մահվան սարսափի տակ, քաղցած ու ծարավ, ստիպել էին փողոցներում ընկած դիակները ծածկելու համար փոսեր փորել՝ խոստանալով, որ դիակները հավաքելուց և ծածկելուց հետո ազատ կթողնեն: Վերջին փոսը փորելուց հետո նրանց կանգնեցրին այդ փոսի եզրին ու գնդակահարեցին: Այդ մասին մենք իմացանք մի քանի օր հետո մի քրդից, որ գյուղում թաղած ցորենն ու ապրանքներն էր փնտրում:

Մի քանի օր անց այդ տուն-դժոխքում, մարդկային կերպարանքը կորցրած, շրջապատի ու մահվան հանդեպ անտարբեր դարձած մարդիկ խելագարությանը հասնող վիճակում էին: Սաստիկ քաղցը ստիպում էր մեզ աչքերով ուտելիք փնտրել և զարմանալի սրատեսությամբ նկատում էինք հողի հետ խառնված ցորենի, գարու, տարեկանի և անգամ կորեկի առատ հատիկներ, որ գյուղը կողոպտելիս թալանչիները թափել էին տների մեջ, փողոցներում, հացահատիկի հորերի շրջակայքում: Հավաքում էինք այդ հողը և մեկառույթ ընտրում հատիկները, աղանձ անում և մի փոքր սպանում մեր քաղցը:

Շուտով սկսվեց տիՖն ու փորահարությունը: Իրար վրա թափված մեր տուն-դժոխքում տիրեց մի կողմից համատա-

րած տնքոցը, ջերմարյուն գառանցանքը, և մյուս կողմից՝ ննջեցյալների մարող ահավոր լռությունը:

Այդ վիճակում գյուղում ապրանքներ թաքցրած քրդերը օրեկան մի քանի անգամ ներս էին մտնում տուն, բոլորի աչքի առաջ բռնաբարում ջերմության մեջ այրվող երիտասարդ կանանց ու աղջիկներին ու հեռանում: Մի օր նրանք ներս թափվեցին և սկսեցին գեղեցիկ կանայք և աղջիկներ փնտրել: Եվ ահա որպես գեղեցիկ կին նրանք տանից դուրս տարան կանացի հագուստ հագած, մոտ քսանյոթ տարեկան կայեկցու Մոսկովին՝ մեր հարևանին, որը չհամարձակվեց գիշերով փախչել դեպի ռուսական բանակը, որ մոտ էր գտնվում: Մի քանի րոպե հետո, երբ իմացան, որ նա տղամարդ է, հենց կալերում գնդակահարեցին և նորից ներս խուժեցին տուն-դժոխք՝ մեկամեկ ստուգելու բոլորին՝ տղամարդ կամ պատանի տղա հայտնաբերելու համար: Երբ հերթը արդեն ինձ էր հասնում, դռան շեմին կանգնած ստուգող երկու քրդեր ամբողջովին տարվեցին մի երիտասարդ կնոջ սպիտակ կրծքով և ինձ վրա ուշադրություն չդարձրին: Ես արագությամբ ստուգվածների խմբին խառնվեցի և այդպես փրկվեցի գնդակահարությունից: Հաջորդ գիշեր, չնայած առատ անձրևին, մայրս մե՛ն-մե՛նակ վերցրեց ինձ, չորս տարեկան քրոջս ու մոտ մեկ տարեկան եղբորս ու դուրս եկավ մեր տոն-դժոխքից՝ փախչելով դեպի մեր ծովը, դեպի Ջիզիրեն գյուղը, որին երեք կողմից ողողում են Նազիկ լճի աղմկոտ ջրերը:

Գլուխ IV.

ԳԵՐՈՒԹՅՈՒՆ

- 1 -

Վաղ առավոտյան դեռ շարունակում էինք փախչել մեր տուն-դժոխքից, ուր մոտ քսան օր «ապրեցինք» միայն դառն աղանձով: Ճանապարհները ցեխոտ էին ու ծածկված անձրևից գոյացած լճակներով: Գյուղից դեռ դուրս չեկած, կալերի մոտ, հենց ճամպի վրամենք հանդիպեցինք մեր հարևան երիտասարդ կլայեկցու Մոսկովի դիակին, որ ընդամենը տաս-տասներկու ժամ առաջ կենդանի էր: Գիշերային առատ անձրևից նրա սև մազերը ծածկել էին լայն ճակատը: Նա խոցված էր կրծքից, ընկած էր մեջքի վրա, աչքերը բաց՝ անձրևոտ երկնքին հառած: Թվում էր, թե սառչելուց առաջ վերջին վայրկյանին նա թքել էր «արդարադատ» Աստծու երեսին ու այդպես հանգել:

Դարեդար սերնդից սերունդ ծնկի եկած մենք շատ ենք աղոթել, աղոթել ենք զիշեր ու ցերեկ, աղոթել ենք ջերմորեն, վերացած, աղոթել ու ստրկացել:

Եիշտ է գյուղում զենք չկար, բայց կար գերանդի, կացին, մանգաղ, խաչերկաթ, քար և վերջապես ունեինք ատամներ, որ կարող էինք հատու սրի նման խրել թշնամու կոկորդը, մեռցնել ու մեռնել: Ամբողջ գյուղը կողոպտելիս, կողոպուտի հետևից ընկած քրդերը գործում էին մեկը մյուսից անկախ. տներ էին մտնում, փողոց դուրս գալիս փոքրիկ խմբերով և նույնիսկ մեկ-մեկ: Ոչ մի փորձ չեղավ մեկնումեկին հարվածելու և զենքը ձեռքից խլելու: Նման բան տեղի չունեցավ, որովհետև մենք ստրկացել էինք հոգով ու դատողությամբ: Ստրկացել էինք ոչ այնքան թուրքերի ու քրդերի կողմից, որքան մեր եկեղեցու ու վանքերի սևազգեստ ծառայողների կողմից: Մանկությունից վանքերի ու եկեղեցիների կամարների տակ հայ սերունդների ականջներին հնչել է ստրկացման առաջին խոսքը. «Չարին մի՛ դիմադրի, մի այտդ ապտակում են, մյուսն էլ դեմ արա: Աստված

ամեն ինչ տեսնում է, նա ինքը կպատժի մարդասպաններին, բռնաբարողին ու ավազակին»:

Այո, մենք աղոթել, աղոթել ու ստրկացել ենք, և դրա համար էլ մեզ հեշտ մորթեցին, մորթեցին որպես անմեղ զառնուկների, և մեր մոտ չորս հարյուր տնից բաղկացած գյուղի փողոցներում ու տներում մի քուրդ տղամարդու կամ կնոջ լեշ չմնաց, նրանց ոչ մի կաթիլ արյունը չթափվեց:

Հեռանալով Մոսկովի դիակի մոտից՝ մենք անցանք գյուղից դեպի լիճ տանող բլուրների ցածրադիր շղթան ու իջանք լճի ափը, որի հյուսիսում ձյունը ճակատին երևում էր Բլեջան լեռան սրածայր գագաթը: Այս անգամ Նազիկը կատաղած էր. ավեկոժությամբ եռում, կոտորտում էր իր քարքարոտ ափերը՝ ջրի առատ փոշի շաղ տալով իր ափերին փարթամորեն աճած բուսականության վրա:

Մենք ամեն կերպ խուսափում ու հեռու էինք փախչում ճամփեքից, ուր յուրաքանչյուր քայլափոխ մեզ մահ էր սպասում: Դրա համար էլ փախչում էինք Նազիկ լճի երբեմն կտրտված, երբեմն կանաչոտ ու երբեմն ավազոտ ափերով, որպեսզի մարդկային աչք չտեսներ մեզ: Այստեղ՝ լճի ափին, իր ձագուկները արյունոտուշտ ոտիսից պաշտպանող մայր եղնիկի նման, մայրս կանգ առավ, ուշադրությամբ նայեց չորս կողմը, չորացած կրծքից եղբորս ցած դրեց, ապա խոր հառաչելով նստեց մի քարի վրա և դողդողալով ծոցից մի փաթաթած շոր հանեց, բաց արեց այն, ինձ ու քրոջս մի բուռ աղանձ տալով սասաց.

- Կերե՞ք, կերե՞ք, որ ուժ ունենաք քայլելու, փախչելու:

Ուշ երեկոյան, երբ մուրթը ծածկել էր ամեն ինչ, մենք Զիզրեն գյուղը մտանք ու գիշերեցինք բացօթյա լճի ափին գտնվող մի կիսավեր բակում:

-2-

Դեռ մուտք էր, երբ մորս լուռ հառաչանքից ես արթնացա: Բաց արի աչքերս ու տեսա նրան եղբորս կողքին ծնկած լուռ

հեկեկալիս: Գիշերվա ընթացքում մորս ցամաքած ու ոսկրացած կրծքի վրա նա մահացել էր: Կիսավեր այդ բակի մի անկյունում մորս հետ միասին, մեր ձեռքերով մի փոս փորեցինք ու հողին հանձնեցինք եղբորս՝ փոքրիկ, դեռ մեկ տարեկան չեղած, խանձարուրում:

Այդ ամբողջ օրը մենք բակից դուրս չեկանք՝ վախենում էինք բրդերից: Մեր բախտից նրանցից ոչ ոք այդ օր այնտեղ չմտավ:

Զիզրեն Նազիկի փոքրիկ թերակղզին էր: Նա երեք կողմից շրջապատված էր Նազիկի ջինջ ջրերով. նրա ալիքները տարվա բոլոր եղանակներին փշրվում էին գյուղի քարակառույց տների պատերի տակ, և բնակչությունը առատորեն օգտվում էր լճից դուրս նետված կարմրախայտ ձկից: Ժամանակին այս գյուղը ինչ-որ հայ իշխանի ապարանքն է եղել. այդ էին վկայում սրբատաշ կարմիր տուֆից բարձր պատերով կրաշաղաղ կառուցված շենքերի դեռևս կիսավեր մնացորդները և արևելյան կողմից ապարանքը մտնելու համար կառուցված շքեղ կամարը, որը մինչև այդ օրերին էլ կար և այնքան մեծ էր, որ տակից ազատորեն անցնում էին ցորենով ու խոտով բարձած սալերը:

Գյուղից փոքր ինչ հեռու՝ դեպի արևմուտք, կար մի փոքրիկ կղզի, որ անգամ շատ հեռվից էլ էր երևում: Նա հայտնի էր նրանով, որ այստեղ էին հավաքվում լճում լողացող բազմաթիվ ու բազմատեսակ թռչուններ:

Հաջորդ առավոտյան մենք, որ ուրվականների էինք նման, մահը աչքի առաջ ունենալով, դուրս եկանք կիսավեր բակից:

- Գնանք, գնանք, գնանք, - ասաց մայրս, - մեկին սովից թաղեցի, մի քանի օրից հետո կգրկվեմ նաև ձեզանից: Գնանք մեր ծանոթ քուրդ Բինբոյի մոտ. ես կաղաչեմ-կպաղատեմ, որ քեզ վերցնի իր մոտ տավար, ոչխար պահելու, միայն թե կենդանի մնաս, միայն թե թույլ չտա, որ քեզ սպանեն:

Մեր ծանոթ քուրդ Բինբոն, որի մոտ մի երկու տարի հայրս ինձ հոտաղ էր սովել (այս մասին ես պատմեցի սույն հի-

շողությունների առաջին մասում), տեղի տվեց մորս արտասուքներին՝ ասելով.

- Լավ, ես քո տղային կվերցնեմ, գիտեմ աշխատող և խելոք տղա է: Ես ամեն հնարավոր բան կանեմ, որ նրան չսպանեն, բայց քեզ ու աղջկանդ ոչ մի բանով օգնել չեմ կարող:

Այսպես քուրդը ինձ վերցրեց, իսկ մայրս ու քույրս, ոչ մի օթևան չգտնելով, կրկին վերադարձան ավերակ բակը՝ փոքր եղբորս թարմ շիրիմի մոտ:

Չէր անցել մի քանի օր, երբ մի առավոտ քրդերը, խուճապի մատնված, սկսեցին արագությամբ փախչել դեպի Մշո դաշտ: Այո, Նիկոլայ Երկրորդը և նրա գեներալները ճշտությամբ, քայլ առ քայլ կենսագործում էին իրենց վաղեմի ծրագրերը՝ տիրել Տաճկահայաստանին առանց հայերի: Հիմա ռուսական բանակը առաջ էր շարժվում, որովհետև հայաշատ մեր Խլաթ գավառում ոչ մի հայի շունչ չկար: Նրա բոլոր գյուղերի բնակիչներին սրի էին քաշել: Հիմա հերթը հասնում էր Մշո դաշտին ու նրա լեռնային մասին՝ Սասունին:

Քրդերը արագությամբ ու խառնաշփոթ փախչում էին: Քուրդ Բինբոյից գաղտնի այդ առավոտ ես գնացի մորս ու քրոջս վերջին անգամ տեսնելու: Երբ ես բակ մտա, տեսա մայրս քրոջս գրկած ընկած էր եղբորս թարմ շիրիմի վրա ու ամբողջ մարմնով դողում էր:

- Մարե, - բարձրաձայն դիմեցի նրան, - քրդերը փախչում են, գնում են դեպի Մշո դաշտ: Ասում են, որ ռուսները արագությամբ առաջ են շարժվում: Ոչ մի տեղ չգնաս, կմնաս այստեղ. այսօր երեկոյան կամ առավոտյան դուք ազատված կլինեք:

- Բեզ տանո՞ւմ են, - նվաղած ձայնով հարցրեց մայրս՝ դեղնած, փոս ընկած, համարյա մարած աչքերը հառնելով վրաս: - Առանց քեզ ազատվեմ ինչի՞ համար, ո՞ւմ համար: Չէ, չէ, որդիս, աշխարհի որ ծայրն էլ տանեն քեզ, մեկ է, կգամ քո հետևից: Առանց քեզ ես ինչի՞ եմ պետք, օր ու արև չի լինի, ես կգամ քո հետևից:

Մի կերպ ես պոկվեցի նրա ոսկրացած գրկից: Եվ այսպես փախստական քուրդ Բինբոյի հետ 1915 թվականի հունիսին, որպես գերի, ես ճամփա ընկա դեպի Մշո դաշտ:

-3-

Զիզրեն գյուղի ահաբեկված քրդերը փախչում էին առանց հետ նայելու: Սայլերին բարձած տնային իրերի վրա նստած էին երեխաներ, կանաչք, ծերեր: Քուրդ Բինբոն իր սայլին լծել էր չորս եգներ. վերջին գույգի լծան վրա նստած՝ ես քշում էի եգներին: Անցնում էինք մեր գյուղի դաշտասահմանի մոտով՝ ինձ հարազատ ու ծանոթ վայրերով, ուր անցել էին իմ կյանքի տաս տարիները, ուր մի երջանիկ օր հորս հետ վարուցանք էինք կատարել, ուր իմ պատանի ընկերների հետ տավար ու ոչխար էի պահել: Նայում էի մառախուղը ճակատին մեր մռայլ Նեմրուծ լեռանն ու թաքուն հոսող արցունքներս էլ կոլ տալիս: Ոչինչ, ոչ մի կենդանություն չկար: Կյանքով, աշխատանքային երգերով ու աղմուկով լի հովիտը մեկ ամիս առաջ անապատի էր վերածված:

Փոքր ինչ հեռու՝ Նեմրուծի փեշերին, երևում էր մեր գավառի ամենամեծ գյուղերից մեկը՝ Տափավանքը. ոչ մի ծուխ դուրս չէր գալիս նրա երդիկներից:

Մի երկու ժամից հետո Նեմրուծի հյուսիսային լանջը կտրելով փախստական քրդերը իջան Նեմրուծի արևմտյան լանջին նստած Զիթաղ կոչվող մի գյուղ⁷⁰, որից հինգ-վեց կիլոմետր հեռավորության վրա արդեն Մշո դաշտն էր: Ինչպես երևում է անունից՝ այդ գյուղը քրդական գյուղ էր, քանի որ ոչ եկեղեցի ուներ, և ոչ էլ մեջիթ (մզկիթ - ծնթ. խմբ.): Թուրքիայում ապրող քրդերը թեն մահմեդական են, բայց նրանց և ոչ մի գյուղում աղոթատեղ՝ մեջիթ չկար:

⁷⁰ *Զիթաղ*, նաև՝ *Չաթախ*, *Չթախ*: Գտնվել է Խլաթի գավառակի արևելյան մասում, Նեմրուծ եռան հյուսիս-արևմտյան փեշերին:

-4-

Չիթաղում փախստական քրդերը երկու-երեք օրից հետո համոզվեցին, որ վախենալու ու տազնապի ենթարկվելու կարիք չկա, որովհետև ռուսական բանակի առաջ շարժվելը սահմանափակվեց միայն Խլաթ գավառով: Այստեղ՝ Չիթաղում, քուրդ Բինբոյի տանը, ես ամեն ինչով արդեն քուրդ պատանու էի նման: Ամենից առաջ փոխեցին անունս՝ Սոկրատը դարձավ Ավղըբադի, մազերս խուզեցին քրդական ձևով և գլուխս դրին քրդական քուրդ:

Չիթաղ գալուց մի շաբաթ դեռ չէր անցել, երբ հիվանդացա և մի երկու-երեք օր չկարողացա տեղից վեր կենալ: Տաքությունը այրում էր ինձ, շարունակ հետ էի տալիս: Մի օր, ուշ երեկոյան, երբ ճրագները մարել էին, քուրդ Բինբոն իր երիտասարդ կնոջը ասաց.

- Եթե մի երկու օրից հետո հայի տղան չվերկենա, Մասոյին կասեմ նրան ոչնչացնի:

Կինը պատասխանեց՝

- Տըշտի ոսան մտկյա գունայա (նման բան մի արա՝ մե՛ղք է):

Այս լսելուց հետո առավոտյան մի կերպ վեր կացա, որովհետև ապրել էի ուզում: Կամաց-կամաց թեթևացա և սկսեցի աշխատել: Վաղ առավոտյան տնային գործերը կատարելուց հետո տավարն ու ոչխարն էի դաշտ տանում, բայց ամեն կերպով խուսափում էի քուրդ լամուկներից, որոնք իմացել էին իմ հայ լինելը և ամբողջ օր ինձ տանջում էին՝ ստիպելով խաչին հայիոյել: Ես այդ պահանջը համառորեն չէի կատարում՝ հավատացած լինելով, որ եթե հայիոյեմ՝ իսկույն աչքերս կկուրանան և ես կգրկվեմ աշխարհն ու մարդկանց տեսնելուց: Մի օր էլ մի քանի քուրդ պատանիներ առաջս դրեցին խաչ արած երկու փայտի կտոր և մի մեծ կոտ⁷¹ ոչխարի կաթ:

- Եթե խաչը չհայիոյես, մենք այս բոլոր կաթը կլցնենք քո գլխին. - սպառնական տոնով ասացին նրանք և այդպես էլ

⁷¹ Կոտ, այստեղ՝ աման:

վարվեցին: Երկու հոգի բռնեցին ձեռքերս և ամբողջ կաթը շուռ տվին գլխիս ու հռհռալով հեռացան: Բայց նրանցից մեկը, որ համեմատաբար ավելի մեծ էր, մի քանի բոպե մնաց ինձ հետ և երբ լամուկները ձորը իջան, հանկարծ կատաղած գազանի նման հարձակվեց վրաս:

- Տո շան տղա, տո անասուն, - ասաց նա հայերեն, - ի՞նչ կա այդ հաչած փայտերի մեջ, քֆրիր, համոզված ու սրտով քֆրիր, թե չէ քեզ շան սատակ կանեն:

Հանկարծակի եկած՝ ես շշմել էի, որովհետև հավատացած էի, որ աշխարհի երեսին այլևս հայ չկա: Միայն կարողացա հարցնել.

- Դու խա՞յ ես:

- Խայ եմ, քեզ պես խայ, քֆրիր, ինչքան կարող ես քֆրիր, - ասաց նա և արագությամբ հեռացավ:

-5-

Հուլիսյան մի երեկո քուրդ Բինբոյի տան մի անկյունում նստած հաց էի ուտում, երբ հանկարծ դրսից ինձ կանչեցին: Իսկույն դուրս եկա: Սոսկումով դռանը ես տեսա կմախքացած, ցնցոտիներով ու միջատներով պատած, մարած աչքերով, այրոտակները դուրս ցցված, մազերը գլխին թաղկացած, հազիվ-հազ ոտքի վրա կանգնած մորս՝ կմախքացած, նույն պատկերով չորս-հինգ տարեկան քրոջս իր ձեռքից բռնած:

Ինչպիսի հրաշք՝ այդ եղեռնի օրերին, երբ յուրաքանչյուր հայի ճրագով էին ման գալիս՝ հոշոտելու և ոչնչացնելու համար, իմ խեղճ մայրը, ուրվական դարձած, հետևել էր ինձ:

Չիմանալով ոչ թուրքերեն և ոչ էլ քրդերեն, անձանոթ ճամփեքով, սոված ու ծարավ, օր ու գիշեր բացօթյա, անձրևի ու ամռան կիզիչ արևի տակ, քրոջս ձեռքը բռնած, լեռներ ու հովիտներ կտրած, եկել-հասել էր Չիթաղ գյուղ ու մի ինչ-որ հանելուկային ձևով գտել այն տունը, ուր ինձ գերած փախստական քուրդ Բինբոն էր ապրում:

Երկար ու ձիգ տարիներ են անցել, աշխարհը կրկին անգամ այրվեց Երկրորդ համաշխարհային՝ ավելի ավերիչ

պատերազմով, զլխիս արդեն ձյուն է նստել, բայց մինչև հիմա էլ չեմ կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս կատարվեց այդ հրաշքը՝ ինչպե՞ս մայրս գտավ ինձ եղեռնի այդ սուկալի օրերին: Ի՞նչ ուժ էր նրան մղում այդ լուռ սխրագործության: Երկար, շատ երկար եմ մտածել այդ մասին և եկել եմ այն համոզման, որ այդ ուժը մայրական սրբազան սերն էր, մայրական անշեջ սրտի կրակն էր, որ ոչ մի արգելք և ոչ մի վտանգ, ոչ մի վախ չի ճանաչում:

Ես ընկա քուրդ Բինբոյի ոտքերը, աղաչեցի, պաղատեցի թույլ տա մորս ու քրոջս իր գոմի մի անկյունում ապրելու: Քուրդը նայեց-նայեց և ասաց.

- Լավ, թող մի երկու օր ապրի, հետո կտեսնենք:

Ես երջանիկ էի, որ վերջապես մայրս և քույրս ինձ մոտ էին: Բայց այդ երջանկությունը երկար չտևեց: Մի քանի օրից հետո Բինբոն կանչեց ինձ և հրամայեց.

- Վաղը առավոտվանից այլևս մորդ՝ այդ նեխած դիակին իմ գոմում չտեսնեմ. եթե նա չհեռանա, նրան ոչնչացնել կուսամ:

Մեր ապրած տնից փոքր ինչ հեռու մի լքված տավարի թավլա⁷² կար, որի մի մասը ըստ երևույթին օգտագործվել էր որպես օդա. դրա համար էլ նա բուխարի ուներ: Ամբողջ այդ թավլայում միայն և միայն բուխարին էր չոր, մնացածը պատած էր անասունների լարձուն առատ թրիքով: Երբ մուրթը վրա հասավ, ես մորս ու քրոջս մի կերպ տեղավորեցի այդ գարշահոտ դժոխքում, ուր նրանք ապրեցին մոտ քսան օր: Ինձ տրված հացն ու ճաշը ես գաղտագողի տանում էի նրանց: Բացի այդ, հարկադրված գիշերները սկսեցի գողություն անել: Գողանում էինք ցորեն, գարի, ժածիկ, պանիր՝ մի խոսքով ուտելու ինչ որ ձեռքս ընկներ:

Շուտով քուրդ լամուկները իմացան մորս տեղը: Բարձրանալով տան կտուրը՝ նրանք բուխարիկի անցքից քարեր էին գցում, տանջում էին նրանց: Ի՞նչ արած, ոչինչ անել չէի կարող, բացի խնդրելուց:

⁷² Թավլա, գոմ:

Գլուխ V.

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Անցնում էին օրեր, դժնի ու մռայլ օրեր:

1915 թ. հուլիս ամիսն էր: Նեմրութ լեռան արևմտյան լանջին ոչխար էի արածացնում: Այնտեղ լավ էր. չէ՞ որ Նեմրութը մեր սարն էր: Հայրենի հողն ու ջուրը մազնիսի նման քաշում էին ինձ:

Հանկարծ նկատեցի, որ Չիթաղից մի ձիավոր քառատրոպի դեպի ինձ էր գալիս: Դա քուրդ Բինբոյի բարեկամն էր: Նա ինձ հրամայեց ոչխարն առանց մի բոպե ուշացնելու քշել դեպի գյուղ: Երբ գյուղ մտա, տեսա փախստական քրդերը կրկին խուճապի են մատնված: Նրանք սոսկումով ժամ առ ժամ սպասում էին, որ գլավոր մոսկովցիները գյուղ կմտնեն: Շփոթված քուրդ Բինբոն հայերից գողացած ոչխարը և իր ունեցածը խառնեց իր ազգականի ոչխարների հետ և իր հովիվ Մըստոյի հետ օր առաջ մեզ ուղարկեց մոտակա Կանեռը⁷³ գյուղ՝ պատվիրելով այնտեղ սպասել ընդհանուր քոչին, որի մեջ կլինի նաև ինքը:

Ժամանակ չկար մտածելու, թե ի՞նչ կլինի մորս ու քրոջս վիճակը. չէ՞ որ ես հեռանում էի նրանցից, գնում էի դեպի Մշո դաշտ: Իսկույն ինձ տրված հացն ու գողացած ցորենը հանձնեցի մորս՝ ասելով, որ վաղը անպայման նա և քույրս ազատված կլինեն:

Նա փորձեց ոտքի կանգնել, բայց չկարողացավ՝ ուժը չպատեց... Միայն իր ոսկրացած, ուժահատ ձեռքերը մեկնեց, ինձ իր գրկի մեջ առավ ու վերջին անգամ, այդ՝ վերջին անգամ, իր անգոր մայրական սրբազան շուրթերով համբուրեց ինձ ու ասաց.

⁷³ *Կանեռը*, քրդաբնակ գյուղ էր Բիթլիսի գավառակի Չուխուրի շրջանում: Համաձայն 1899 թ. վերաբերող վիճակագրության՝ բնակավայրում կար 25 տուն քուրդ (տե՛ս В. Т. Маевский, *Военно-Статистическое описание Ванскаго и Битлискаго вилаетовъ, Отдѣлъ приложений* (Тифлисъ, Типографія Штаба Кавк. воен. окр., 1904), 89):

- Եթե մի երկու օրից հետո չմեռնեմ, էլի կգամ քո հետևից, էլի կգտնեմ քեզ:

Ես հեռացա...

Եվ այսպես, մենք հեռացանք Չիթաղ գյուղից: Ճամփան ընթանում էր մեկը մյուսին հաջորդող անտառապատ բլուրներով, և դեռ Կանեռը զյուղը չհասած արևը մայր մտավ, իսկ երբ գյուղ մտանք՝ արդեն ուշ երեկո էր: Հայերից թալանած մոտ հազար գլուխ ոչխարը երիտասարդ քրդերը քշեցին մի մեծ բակ ու ինձ հրամայեցին մնալ ոչխարի մոտ մինչև լուսաբաց, իսկ իրենք գնացին:

Մնալով մենակ՝ քաղցր ինձ ստիպեց մտնել առաջին իսկ հանդիպած քրդի տուն: Այդ տանը բացի մի երիտասարդ քրդուհուց ոչ ոք չկար: Ես նրանից հաց խնդրեցի: Լեզվիցս նա իսկույն հասկացավ, որ հայ եմ:

- Ոչինչ, - ասաց նա, - մի վախենա:

Մի քիչ հաց ու պանիր տվեց ինձ ու անմիջապես տանից դուրս հանեց:

- Գնա, գնա, - ասաց նա, - քանի տղամարդիկ չեն իմացել: Նրանք քեզ կսպանեն:

Այդ գիշեր ես լուսացրեցի ոչխարի հոտին մոտ գտնվող մի խոտի դեզի մեջ: Բայց դեռ լուսն ու մութը իրարից չէին գատվել, երբ հանկարծ հրացանների ու գնդացիրների համազարկից դուրս թռա խոտի դեզից:

Գիշերվա ընթացքում ռուսական զորամասերը արագությամբ շարժվելով Նեմրութ լեռան հյուսիս-արևմտյան լանջերով՝ գրավել էին Չիթաղ գյուղը, ուր իմ մայրն ու քույրն էին, և, շարունակելով առաջխաղացումը, լուսաբացին գրավել էին Կանեռը շի բարձունքները, որտեղից ամբողջ Մշո դաշտը ծայրից-ծայր երևում էր՝ ինչպես ավիդ մեջ:

Քնաթաթախ քրդական Կանեռը զյուղը ահաբեկված, հենց անկողնուց դուրս պրծած, շատերը կիսամերկ, ոմանք առանց տրեխների ու գլխարկի, մոռացած ամեն ինչ, երեխանների ձեռքերից բռնած ով ինչպես կարող էր, անտառի

միջով գնացող նեղ գյուղական ճանապարհով փախչում էր դեպի Մշո դաշտի արևելյան ծայրի առաջին մեծ Սարի գուլի գյուղը:⁷⁴ Անհամար, անտեր մնացած ոչխարի մայրնով ու տավարի բառաչով լցվել էր գյուղն ու անտառը: Այլևս ոչ որ չէր մտածում հայերից կողոպտված այդ հարստության մասին: Ոչ որ չէր փորձում զենքի դիմելու՝ չնայած բոլորն էլ զինված էին ու մեծ ուժ էին ներկայացնում: Նրանք միայն անզեն ու անօգնական հայ կանանց, երեխաների ու ծերերի նկատմամբ էին առյուծ դարձել, իսկ հիմա բոլորն էլ լաչակ գցած կին էին ու կանանցից առաջ էին փախչում: Փախչում էին նապաստակի պես, որովհետև ասում էին, որ Կանեռըջի վրա հարձակվող զորամասի մեծ մասը հայ կամավորներ էին, իսկ կամավորների դեմ կռվել քրդերը չէին համարձակվում:

Մնալով բոլորովին անպաշտպան՝ ակամա ես էլ սկսեցի քրդերի հետ փախչել դեպի Մշո դաշտ:

Մշո դաշտի արևելյան ծայրի առաջին գյուղը՝ Սարի գուլին անցնելուց հետո, փորձեցի հետ ընկնել փախչող քրդերից: Վճռեցի անպայման հետ փախչել, քանի որ ռուսներն արդեն գրավել էին Կանեռըջ գյուղը և հրացանների համազարկերն էլ դադարել էին:

Ես դեմքս դեպի ռուսները արագությամբ առաջ էի վազում: Հանկարծ անտառից դուրս գալով՝ առաջս կանգնեց մի երիտասարդ քուրդ.

- Հայի լակոտ ես, հա՞, - բղավեց նա, - ո՞ւր-ո՞ւր ես գնում: Չե՞ս իմանում, որ Կանեռըջը արդեն գլավուրների ձեռքն է:

Ես ինձ քուրդ ձևացնելով՝ պատասխանեցի, որ հայրս վիրավորված ընկած է Կանեռըջից այս կողմ, գնում եմ օգնելու նրան փախչելու:

- Մուտ ես խոսում, հայի լակոտ, - սաստեց նա, և ապա ձայն տվեց կնոջը, որ սայլի վրայից հրացանը բերի: Նա մի

⁷⁴ Խոսքը գնում է *Սարեգուլե* կամ *Էրմն* բնակավայրի մասին, որը գտնվում էր Չոլխուրի շրջանում, Կանեռըջից մոտ 5 կմ դեպի հարավ-արևմուտք: Մեծ եղեռնի նախօրյակին ունեցել է 13 տուն, 92 շունչ հայ բնակչություն:

քանի քայլ հեռու էր ինձանից: Լսելով այդ՝ ես իսկույն հետ դարձա, խելագար արագությամբ նույն ճամփով փախա դեպի փախստական քրդերը: Մինչ քրդի կինը հրացանը կբերեր՝ ես արդեն թեքվեցի բլուրի հետևը, և արյունռուշտ քուրդը ծածկվեց իմ աչքից: Նա իմ հետևից ընկնել այդ տազնապալի բոպեներին չէր կարող, որովհետև չէր կարող իր քոչը թողնել: Այդ օրը փախստական քրդերի հետ միասին ես Մշքան⁷⁵ գյուղ մտա, որտեղից սկսվում են Սասնա լեռների հարավ-արևելյան փեշերը: Այստեղից դեպի հյուսիս-արևմուտք ամառային տոթի մեջ լուռ ձգվել էր Մշո դաշտը:

Այստեղ-այնտեղ երևացող հայ գյուղերից ոչ մի ծուխ դուրս չէր գալիս: Մարդկային շունչ չկար, գերանդուն ու մանգաղին սպասող ցորենի արտերում ամեն ինչ լուռ է անապատի նման:

Այստեղ ես կրկին հանդիպեցի այն հայ տղային, որ Չիթաղ գյուղի դաշտում ինձ ասաց. «քեզ շանսատակ կանեն՝ հայիոյի, համոզված ու սրտանց հայիոյի խաչին»: Նա մոտեցավ ինձ ու մայրենի լեզվով պարզ ու որոշակի ասաց.

- Այս գիշեր կլինի մեր փրկության գիշերը: Ինձանից չհեռանաս. հենց որ մութը ընկնի՝ կփախչենք. ռուսները շատ մոտ են:

Ես արդեն անպաշտպան էի մնացել: Քուրդ Բինբոն իր երիտասարդ կնոջ հետ, հավանաբար, գերի էր ընկել ռուսներին, իսկ ինձ հանձնված ոչխարը փախստական քրդերի բոլոր անատունների հետ միասին նույնպես ընկել էր ռուսների ձեռքը: Այնպես որ ինձ փրկության ուրիշ միջոց չկար, բացի փախչելուց:

Մութն արդեն ամեն ինչ առել էր իր քողի տակ: Մշքան գյուղի լեռան փեշերին ու լանջերին վառվեցին քուրդ փախստականների կրակները: Այդ կրակների վրա սաջեր դրած նրանք հաց էին թխում ու ճաշ եփում: Ես սրտատրոփ

⁷⁵ *Մշքան*, քրդաբնակ գյուղ Չուխուրի շրջանում: Համաձայն 1899 թ. տվյալների՝ գյուղն ունեցել է 15 տուն բուրդ բնակչություն (տե՛ս Маевский, *Военно-Статистическое описание Ванскаго и Битлискаго вилайетовъ*, 89):

սպասում էի իմ ավագ հայ ընկերոջ հրամանին փախչելու համար, բայց վճռական պահին չհամարձակեցի փախչել, քանի որ մտածեցի, որ դիմացի ձորերը ամբողջովին լցված էին քուրդ փախստականներով:

Փախչելու միտքը ինձ չէր լքում: Բայց ինչպե՞ս, ե՞րբ փախչել՝ գիշերո՞վ, թե՞ ցերեկով, այդ ոչ մի կերպ չէի կարողանում որոշել: Սաստիկ քաղցած էի՝ ամբողջ օրը ոչ մի պատառ հաց չէի կերել: Բայց սհա մթության մեջ կրակի շուրջը նստած մի խումբ քրդեր գազազած, վայրի կատաղությամբ խոսում էին հայ կամավորների մասին: Ասում էին, որ վաղ առավոտյան Կանեոքը գյուղի վրա հարձակվող ռուսական զորամասերի մեծ մասը հայ կամավորներ են եղել: Փոքր ինչ հեռու թաքնըված՝ ես լսում էի քրդերի խոսակցությունները: Ես լավ էի հասկանում, որ եթե այդ ռուսներն են նրանց ձեռքը ընկնելի և իմանային իմ հայ լինելը, ինձ կրակի վրա կխորովեին:

Կամաց հեռացա քրդերի մոտից, բարձրացա ավելի վերև ու մի խոշոր քարակույտի հետևում հոգատանջ մեկնվեցի արդեն կիսաշոր կանաչի վրա: Քունս չէր տանում: Չէի իմանում ի՞նչ անեմ: Երկար մտածելով իմ անելանելի վիճակի մասին՝ այդպես էլ բաց երկնքի տակ Մշքան գյուղի լեռան լանջին քնեցի տաս տարեկան պատանու խոր ու սովատանջ քնով:

Հանկարծ, կարծես ինչ-որ մեկը չանգռեց դեմքս: Տեղիցս սարսափած վեր թռա, կանգնեցի ոտքի, նայեցի չորս կողմս: Ոչ ոք չկար: Արևը բավականին բարձրացել էր երկնականաբար ու գլուխս արևից շատ խիստ ցավում էր: Աչքերս չէի կարողանում բացել: Երբ գաղտագողի քարակույտի հետևից դուրս եկա, մնացի ավելի զարմացած. ոչ մի քուրդ չկար, բոլորն էլ գիշերվա ընթացքում փախել էին:

Իմ ուրախությանը չափ չկար՝ ես մենակ էի և, կարծես թե, ազատ: Միայն մոտիկ գյուղից անընդհատ հրացանների կրակոցներ էին լսվում: Համոզված լինելով, որ այդ գյուղն էլ ռուսների ձեռքում է, առանց վախենալու ուղղություն վերցրեցի դեպի այդ գյուղ:

Գնում էի համարյա վազելով ու վատահ, բայց երբ թեքվեցի գոգավոր մի ձորի մեջ, հանկարծ առաջս կանգնեց մի սայլ և երկու արածող եզներ: Սայլի ստվերում բերդանկա հրացաններով զինված երկու քրդեր ինձ իրենց մոտ կանչեցին:

- Ո՞վ ես, ո՞ր ես գնում, - ասաց նրանցից ավելի երիտասարդը, որի մի աչքը չկար ու դեմքի վրա առողջացած մի մեծ վերքի սալ կար:

- Քիրվա, - ասացի ես, - գնում եմ մեր քոչը գտնելու:

«Քիրվա» բառը լսելու պես նա հրացանն ուղղեց կրծքիս ու փականը հետ տարավ. ես չգիտեի, որ քուրդը քրդին «քիրվա» չի ասում, այլ «խալո» է ասում:

- Հայ, օձու ճուտ ես, հա՞: Փախչում ես ձեր կամավորների մոտ:

Այդ մահ ու կենաց պահին տարիքավոր քուրդը վայրկենապես նետվեց առաջ, հետ պահեց կրծքիս սեղմած հրացանը ու սկսեց համոզել երիտասարդ քրդին, որ խեղճ երեխա է, պետք չէ նրան սպանել:

Ես քարացած մեխվել էի տեղում: Մեր գյուղի կոտորածի առաջին իսկ թույններից գլխումս մի անմիտ երևակայական միտք էր մտել, թե ի՞նչ պետք է անի ինձ գնդակը՝ շատ-շատ պետք է ծակի ու անց կենա: Այդ վայրկյանին էլ այդպես էի մտածում: Երևի դրա համար էր, որ չեմ խելագարվել, հոգեկան ցնցումներ չեմ ունեցել: .

Բանն այնտեղ հասավ, որ սկսեցին իրար վիրավորել: Երիտասարդը ուզում էր անպայման սպանել, իսկ մյուսը համոզում էր նրան դա իրականացնել քիչ հետո: Երիտասարդ քուրդը ինձ հանգիստ թողեց: Երկուսն էլ դարձյալ նստեցին սայլի ստվերում. ինձ թույլ տվեցին եզներին մոռիկ անեմ: Անցավ մի կես ժամ: Երիտասարդ քուրդը կանչեց ինձ, փարչը տվեց ձեռքս ու հրամայեց գնալ աղբյուրից ջուր բերելու: Աղբյուրը գտնվում էր մի այգու մոտ՝ երեք-չորս հարյուր քայլի վրա: Հասակ առած քուրդը ոչինչ չասաց: Համոզված էի, որ հետևիցս խփելու համար են ինձ ջրի ուղարկում և դրա համար

յուրաքանչյուր քայլից հետ էի նայում: Վերջապես հասա աղբյուրը, որ ինձ տարի թվաց:

Այստեղ փախստական քրդերի քոչից հետ մնացած հիվանդ կանայք ու երեխաները ծառերի վրայից ու տակից թթու սալոր էին հավաքում ու ազահությամբ ուտում: Երբ համոզվեցի, որ նրանք ինձ վրա ուշադրություն չեն դարձնում, հանկարծ գլխումս փրկության մի միտք ծագեց: Որոշեցի քարին խփելով ջարդել փարչը ու փախչել, գյուղի մի տան մեջ թաքնվել: Եթե այդ քրդերը հետևեն ինձ ու գտնեն, կասեմ, որ փարչը հանկարծ ջարդվելու պատճառով վախեցա վերադառնալ իրենց մոտ: Առանց տատանվելու վճիռս ի կատար ածեցի ու փախա գյուղ: Մշքան գյուղի բնակիչները փախել էին, միայն հատուկենտ հիվանդ մարդիկ էին երևում:

Գյուղի ամենահեռավոր ծայրի մի տուն մտնելիս ես արդեն լսում էի քրդերի ձայնը. նրանք ինձ էին կանչում.

- Լո տղա, լո տղա, - բղավում էին:

Այդ նշանակում էր, որ նրանք մի ինչ-որ հայի տղա են փնտրում:

Այդ տանը, որի մեջ ես պատսպարվեցի, հիշում եմ մի կավե պուտուկ մածուն կար և մի թուխս իր մի քանի ճուրղով: Տան մի անկյունում ես մի քրքրված ու կեղտոտ վերմակ նկատեցի. պինդ փաթաթվեցի այդ վերմակի մեջ ու պառկեցի, որպես ծանր հիվանդ:

Քիչ հետո մտավ լղար ու գունատ մի քուրդ. ըստ քրդական սովորության նա ուշադրությամբ աչքով արագությամբ խուզարկեց տունը և, տանելու ոչ մի բան չգտնելով, մոտեցավ ինձ.

- Ի՞նչ է եղել, ինչո՞ւ ես պառկել, - սասց նա:

Ես պատասխանեցի, որ ծանր հիվանդ եմ փորս է ցավում:

- Այս բոլորի պատճառը հայերն են՝ նրանք են մեր երկիրը ծախել գյավուրներին, նրանք են սկսել պատերազմը: Երանի թե հիմա մի հայ ընկներ ձեռքս՝ ատամներիս տակ կտոր-կտոր կանեի:

Ես համաձայնվեցի նրա՝ ինձ ասած այս «իմաստության» հետ: Երիտասարդ թուրքերը քրդերին կույր գործիք էին դարձրել իրենց ձեռքում. իսկ քրդերը չէին հասկանում, որ առանց հայերի քրդերը ապրել չէին կարող, որ հայերից հետո թուրքերը ավելի դաժանությամբ իրենց կոկորդից կբռնեն: Երբ քուրդը տանից հեռացավ, արևն արդեն մայր էր մտնում: Ես համոզվեցի, որ ինձ փնտրող քրդերը գյուղից հեռացել են՝ վախենալով, որ կարող են գերվել ռուսների կողմից:

-2-

Հենց որ մութն ընկավ, դուրս եկա տանից, ուշադիր զննելով շրջապատս՝ համոզվեցի, որ վտանգ չկա, արագությամբ գյուղից հեռացա: Գյուղի հենց այդ վերջին տնից ձգվում էին մեկը մյուսին հաջորդող արդեն հնձելու պատրաստ ցորենի արտերը:

Հանկարծ գիշերային խաղաղության մեջ ականջիս հասավ ինչ-որ խոսակցության ձայներ և ձիու խրխինջ: Անմիջապես խորացա ցորենի արտերի մեջ, ծնկեցի գետնին ու ուշադիր հետևեցի, թե ի՞նչ է կատարվում ճամփի վրա: Պարզվեց, որ տաճկական զորամասեր էին շարժվում: Ես պարզ տեսնում էի քայլող մարդկանց և եզներով լծված սայլերի շարժումը, որն ըստ երևույթին նրանց ռազմամթերքի գամակն էր:

Երբ զորամասը հեռացավ ու ես ինձ ապահով զգացի, մի քիչ էլ խորացա ցորենի արտի մեջ ու կանգ առա: Գիշերով փախչել չէի կարող: Մեկնվեցի ցորենի արտի մեջ ու փորձեցի քնել: Բայց աչքս փակել չկարողացա՝ պատճառը այն էր, որ Մշո դաշտի ավելի քան հարյուր հիսուն գյուղերի բնաջնջումից հետո դաշտերում, ճամփեքի վրա, գյուղերում ընկած դիակները սնուցել էին ճանճերի մի տեսակի, որոնք բավականին մեծ էին, թափանցիկ ու կապույտ գույն ունեին, կծելու պես մարդու մարմնից արյուն էին բերում և տանջալի քոր առաջացնում: Այդ ճանճերը մինչև լույսը բացվելը դեմքս, ձեռքերս քրքրեցին, աչքերս առել էին, գլուխս ծանրացել էր

ուսերիս վրա, ամբողջ մարմինս թուլացել, տեղից շարժվել չէի ուզում: Բայց երբ հանկարծ դիմացի գյուղից, որը մոտ երկուերեք կիլոմետր էր հեռու, կրկին անգամ լսեցի հրացանների իրար հաջորդող կրակոցներ, առանց մի բոպե կորցնելու ոտքի ելա ու շարժվեցի դեպի այդ գյուղ՝ համոզված լինելով, որ կրակողները ռուսական զորամասերի զինվորներ են:

Մինչև այդ գյուղ հասնելը՝ ես արագությամբ անցա Մեղրագետը ու ցորենի արտերի միջով դուրս եկա այդ գյուղի բոստանները: Բոստաններից մեկի մոտ մի մեծ շենք կար. փորձեցի դռնից ներս մտնել: Այն երկու դուռ ուներ: Երբ դռներից մեկից նայեցի ներս, սարսափը պատեց ինձ: Յուրաքանչյուր դատարկ տուն այդ արյունոտ օրերին սարսափ էր ազդում. թվում էր, թե հազարավոր այրված հայ երեխաների, աղջիկների, կանանց ու ծերերի աչքեր են քեզ նայում: Չէ՞ որ նրանց տաննյակ հազարներով այրում էին այդպիսի տներում:

Արագությամբ հեռացա այդ սարսափելի տնից ու մտա ձմերուկի մի մեծ բոստանի մեջ: Դեռ չէի հասցրել թաղից մի ձմերուկ պոկել, երբ հանկարծ նկատեցի, որ սրարշավ, առատ փոշի բարձրացնելով դեպի բոստանն են գալիս ինչոր ձիավորներ: Կյանքս վտանգի տակ էր: Չմերուկ ուտելու ժամանակ չէր: Կուզեկուզ մի կերպ ինձ զցեցի ձմերուկի ու ցորենի արտի ջրառատ առվի մեջ: Սողալով, ցեխի միջով բավականին հեռացա այդ տանից ու ձմերուկի բոստանից ու հենց առվի մեջ ինձ քողարկեցի առվի վրա առատորեն կոացած ցորենի հասկերով:

Նրանք տաճկական ոստիկաններ էին: Հավանական է, դուրս էին եկել հրաշքով փրկված հայերին որսալու:

Բոստանի մոտ նրանք արագությամբ ցած իջան ձիերից, ստուգեցին այն մեծ տունը և, ոչինչ չգտնելով, քաղցած գայլերի նման հարձակվեցին անտեր մնացած բոստանի վրա, կուշտ ձմերուկ լափելուց հետո շտապ հեռացան դեպի արևմուտք:

Ես խոր շունչ քաշեցի: Փրկվելու էի և այս անգամ: Գյուղի տները ինձ շատ մոտ էին. ես պարզ լսում էի ու հասկանում

քրդերի խոսակցությունը ու նրանց տազնապարձ՝ գյուղից փախչելու, հենց որ մուրթը ընկնի:

-3-

Երկու օր էր ոչինչ չէի կերել. քաղցը տանջում էր ինձ: Սկսեցի ցորենի հասկերը փշրել բոխ մեջ ու հատիկները բերանս գցելով ծամել ու մի կերպ հագեցնել քաղցս:

Կեսօր էր արդեն: Աչքիս առաջ փոխված էր Մշո դաշտը, որ կեսօրվա տոթից կարծես թե դողդողում էր: Առատ բերքը արդեն չորանում էր արմատի վրա: Նա, ով դարեր շարունակ սերնդեսերունդ ծով քրտինք, ով շունչ էր տվել այդ դաշտերին, նա, ով կուրծքը դեմ էր տվել անթիվ ու անհամար վայրագ նվաճումներին, ծով արյուն թափելով՝ պաշտպանել իր հայրենի հողն ու ցուրը ու ամեն զարուն արդար վաստակի երգով լցրել նրա դաշտն ու հովիտը, այդ ժողովուրդը՝ մշեցի ստեղծագործ հայ գյուղացին, այդ դաշտում այլևս չկար: Նրան հուշոտեցին մարդ-բորենիները ամբողջ առաջադեմ և քաղաքակիրթ Եվրոպայի առաջ:

Մտիկ էի անում և ահա Նեմրուս լեռան արևմտյան փեշերից մի խումբ ձիավորներ իջան դաշտ ու մոտեցան այն գյուղին, որի ցեխոտ առվի մեջ ես թաքնվել էի: Նրանք այնքան մոտ էին ինձ, որ ես շատ պարզ տեսնում էի, որ նրանք օտար էին տեղանքին, որովհետև առաջանում էին զգույշ՝ վայրերին անծանոթ մարդու նման: Ես նկատեցի, որ նրանց ձիերի պոչերը կարճ էին խուզված. ուրեմն ռուսներ էին՝ ազատարար բանակի զինվորներ: Այդպես էր ասել ինձ մայրս: Թե այդ մասին նրան ո՞վ էր ասել և ի՞նչ հանգամանքներում, այդ մասին չգիտեմ:

Գյուղից քրդերը սկսեցին անկանոն կրակ բացել նրանց վրա: Բայց նրանք ոչ մի զնդակով չպատասխանեցին: Հետ դարձան և արագությամբ հեռացան: Արևի մայր մոտնելուց առաջ այդ ձիավորները դարձյալ հայտնվեցին և դարձյալ քրդերի անկանոն կրակոցներին չպատասխանեցին ու հեռացան:

Դե ես ինչպե՞ս իմանայի, որ նրանք փրկարար բանակի

հեծյալ հետախույզներն էին: Ես իմ տեղից դուրս գալ չէի կարող, որովհետև անմիջապես քրդերի գնդակների բաժին կդառնայի:

Հենց որ մուրն իր փեշերի տակ առավ ամեն ինչ, քրդերը խառնաշփոթ ու գլխիկոր լքեցին գյուղը, փախան դեպի Մամնա սարերը: Առանց վախի դուրս եկա առվից: Հագուստներիս վրա չորացած առատ ցեխը մաքրելուց հետո անհուն հավատով ու ջերմությամբ մի քանի անգամ խաչակնքվեցի և առանց շունչ առնելու սկսեցի վազել դեպի արևելք, դեպի ռուսական բանակ, որն արդեն Մշո դաշտի արևելյան մասում էր՝ Սարի գյուղի գյուղում: Փախչում էի անտառի միջով, վազում էի առանց հանգրվանի, առանց փոքր-ինչ շունչ առնելու: Աշխատում էի որքան հնարավոր է մի քայլ ավելի մոտ լինելու ռուսներին, մեր գյուղին, մորս:

Քանի-քանի անգամ որոշեցի մի ծառի տակ կանգ առնել, բայց ամեն անգամ էլ չէի կատարում որոշումս: Կարծես, ինչ-որ մի աննկատ բարեկամ ասում էր ինձ՝ «առա՛ջ, առա՛ջ, առանց կասկածի ու վախի՝ առա՛ջ»:

Ոտքերս այլևս չէին շարժվում, ուժահատ էին: Վերջապես, մի ծառի տակ ես կանգ առա: Այդ տեղից դեպի արևմուտք, դեպի Մամնա լեռները դեռ հազարավոր հայ մարտիկներ զենքը ձեռքներին մահ ու կենսաց կոհիվ էին մղում թուրքական կանոնավոր բանակի ու թալանի տենչով հարքած անհամար քրդական խուժանի դեմ:

Թվում էր, թե հասել է փրկության ժամը, չէ՞ որ փրկարար բանակը արդեն Մշո դաշտում էր, չէ՞ որ մահամերձ Թուրքիան գալարվում էր իր անգորության մեջ, վերջին շնչում էր:

Օ՛հ երջանիկ պատմական բոպե...

Բայց դառնակակիծ ինչպիսի խաբվածություն, հույսերի ու երազանքների ինչպիսի խորտակում... Մեր «քեռին» մեզ լքելու էր... Նա էլ իր հատուկ նպատակն էր հետապնդում տիրել մեր հող ու ջրին առանց հայերի:

Քնից արթնացա հոգնամ ու ջարդված: Գլուխս ծանրացել էր, դժվարությամբ էի աչքերս բացում: «Թող բռնեն, թող ոչնչացնեն. ես այլևս ուժ չունեմ անտառով փախչելու» - այս եղավ իմ որոշումը և ես սկսեցի քայլել գյուղական բաց ճանապարհով: Հանկարծ նկատեցի ծառից կապված երկու ձիերի, որոնց պոչերը կարճ խուզված էին: Նորից հիշեցի մորս խոսքերը, որ ռուսները ձիերի պոչերը կարճ են խուզում: Մրտապնդված առաջ շարժվեցի: Հանկարծ անտառից դուրս եկան երկու շիկահեր ռուս հեծյալներ: Նրանք ինչ-որ հարցեր տվեցին ինձ: Պատասխանել, իհարկե, չէի կարող և սկսեցի անընդհատ կուրծքս խաչակնքել:

Ես արդեն ազատ էի:

Եվ հանկարծ ուրախանալու և հրճվելու փոխարեն մի անհուն տխրություն պատեց ինձ: Թե ինչո՞ւ, ևս հետո հասկացա, երբ Կանեռը գյուղում հայ կամավորները շրջապատեցին ինձ:

Ձեռքերի շարժումով ռուս հեծյալներն ինձ հասկացրին, որ դիմացի Մարի գլուխ գյուղ գնամ: Ճանապարհը ինձ ծանոթ էր, գյուղն էլ ամբողջ Մշո դաշտում հայտնի էր իր աճեցրած ձմերուկով:

Այդ գյուղից ես իսկույն ճանապարհ ընկա դեպի Կանեռը գյուղ, իսկ նրան հաջորդող երրորդ գյուղը Չիթաղն էր, ուր թողել էի մորս ու քրոջս: Աշխատում էի որքան հնարավոր էր ժամ առաջ լինել նրանց մոտ, կենդանի տեսնել մորս:

Երբ հասա Կանեռը գյուղ, հորդաբուխ ու ջրառատ աղբյուրի մոտ տեսա հրացանները բուրգ արած զինվորների՝ ազատարար բանակի ինչ-որ զորամաս էր հանգստանում: Տեսնելով ինձ՝ զինվորներից մեկը ընդառաջ վազեց դեպի ինձ ու հայերենով հարցրեց.

- Հա՞ն ես:

- Խա, - պատասխանեցի ես:

Մի քանի լոպեից հետո ամբողջ զորամասը, որի զգալի

մասը հայ կամավորներ էին, շրջապատեց ինձ: Հենց այդ թույլին էր, որ քարացած սիրտս հանկարծ քանդվեց: Ես ամբողջ կոտորածի ընթացքում մի կաթիլ արցունք չէի թափել: Սկսեցի բարձրաձայն, հիվանդագին, խոր ցնցումներով հեկեկալ: Աչքիս առաջ կանգնեց մեր գյուղի կոտորածը՝ արյուն շառնեցնող կոտորածի պատկերը:

Կամավորներից մեկը, որ ավելի հասակով էր, ինձ իր գիրկը առավ և սկսեց մխիթարել:

- Մենք ձեր փրկության համար ենք եկել, լաց մի լինի, մենք ձեր վրեժը կլուծենք, - ասաց նա:

- Այո, այո, ձեր փրկության համար ենք եկել, - կրկնեցին նրանք միաբերան:

Միամիտ, վառվռուն, անձնագոհ երիտասարդներ էին նրանք, որ կամավոր զենք էին վերցրել իրենց հայ եղբայրներից ու քույրերին փրկելու համար: Բայց նրանք չէին իմացել, որ խաբել են իրենց, չէին հասկանում, որ ցարական Ռուսաստանին Տաճկահայաստանը պետք է, բայց առանց հայերի, և 1915 թվականին ռուսական բանակի ռազմական ամբողջ գործողությունների ընթացքը ապացուցեց այդ ճշմարտությունը:

-5-

Մի քանի ժամ չէր անցել, երբ հանկարծ անսպասելիորեն ազատարար բանակի զորամասերը սկսեցին արագությամբ նահանջել, ավելի ճիշտ՝ սկսեցին ուղղակի հետ փախչել:

Ամեն ինչ խառնվեց, ամեն ինչ վայրիվեր եղավ, կարծես Միփանը շուռ եկավ, Նեմրույթը շարժվեց տեղից: Փախչում էր մեր երազած ազատարար բանակը: Ընդամենը մեկ օր նա մնաց Մշո դաշտում: Դա 1915 թվականի հուլիսի 16-ն էր:

Հաջորդ գյուղը, որ մտան փախչող բանակի զորամասերը, Չիթաղն էր՝ այն գյուղը, որ երկու-երեք օր առաջ թողել էի մահամերձ մորս ու քրոջս:

Հենց որ զորամասերը գյուղ մտան, ես սրտատրոփ մտա

այն տուն-դժոխք-ախոռը, որտեղ մորս էի թողել: Բայց ես նրան այնտեղ չգտա: Մտանք Բինբոյի ապրած տունը: Այստեղ միջանցքում իմ քրոջ հասակին մեռած մի հայ աղջկա մարմին էր ընկած, իսկ տան մեջ անկողնում անշարժ պառկած էր մայրս:

Նրա աչքերը անշարժ էին ու բաց...

Զգիտեմ ինչու՝ մտածեցի, որ մայրս ծարավ է, դրա համար խոսել չի կարող: Ես ամբողջ տան մեջ չկարողացա մի անվնաս աման ճարել, որպեսզի գյուղի հեռավոր աղբյուրից ջուր բերեի մորս:

Հանկարծ ներս մտավ պապիս եղբոր տղան՝ Զազոն. նա ազատվել էր ջարդից և ռուսական առաջավոր զորամասերի հետ մտել էր Մշո դաշտ: Զազոն մի ընդամենը գարմացավ՝ չէր հավատում, որ այդ ես եմ, հետո ձեռքս բռնելով խստությամբ ասաց.

- Ինչի՞ ես սպասում, չէ՞ որ ամբողջ գաղթականությունը նահանջող զորամասերի հետ արդեն հեռացել է գյուղից: Ի՞նչ է, ուզում ես նորից գերի ընկնե՞լ՝ ամեն ժամ այստեղ քրդերն ու թուրքերը կարող են երևալ:

Արտասուքն աչքերիս ես նրան բացատրեցի, որ անկողնում պառկած կինը իմ մայրն է, ծարավ է, ես ջուր պետք է բերեմ նրան:

- Էսթե՞րն է, - ընդհատեց նա:

- Այո, մայրս է, - պատասխանեցի ես: - Դուք գնացե՞ք՝ ես մորս այս վիճակում թողնել ու հեռանալ չեմ կարող:

Բայց նա ինձ լսել անգամ չուզեց: Բռնի կերպով ինձ բաժանեց մորիցս ու այսպես ես հաստատորեն չիմացա՝ մեռա՞ծ էր նա, թե՞ կենդանի, ծարավ էր, թե՞ հանգած:

Ոչ մի վայրկյան չեմ կարող մոռանալ մորս բաց մնացած աչքերը, որ երևի սպասում էր իր գերված, իր ապերախտ որդուն, որ ենթարկվեց ուրիշին ու անթաղ թողեց իր հարազատ մոր դին...

Ինձ մնում էր փնտրել ու գտնել քրոջս:

Նեմրութ լեռան հյուսիս-արևմտյան փեշերով առանց դադարի սրընթաց դեպի արևելք էր նահանջում ռուսական բանակը, և նրան կրնկակոխ հետևում էին զարհուրելի օրեր ապրած, շամբուտներում, անտառների թաքստոցներում, քարայրներում ու գազանների որջերում պատսպարված և մի կերպ թուրքական ու քրդական սրից ճողոպրած հազարավոր մշեցիներ: Ոտաբոքիկ, հյուծված, հարյուր անգամ իրենց մահը տեսած Մշո դաշտի ավելի քան հարյուր քսանհինգ հայկական գյուղերի ոչնչացված ազգաբնակչության այդ չնչին բեկորների հետ քայլում էի և ես...

Մենք չէինք քայլում, այլ վազում էինք, որ հասնենք նահանջող բանակին, որին այնքան տառապանքներով, հույսով ու այրվող սրտով սպասել էինք: Բայց նա երազի նման եկավ ու երազի նման էլ փախչում էր մեր խորտակված հայրենիքի հող ու ջրից: Շատերը՝ ծերեր, երեխաներ ու կանայք, չէին կարողանում քայլել: Կրած զրկանքները՝ սովը, անն ու սարսափը, հյուծել էին նրանց ուժերը: Շատերը ընկնում էին ճանապարհին ու աղիողորմ հայացքով նայում փախչողներին՝ օգնություն աղերսելով նրանցից:

Արևը դեռ վայր չէր մտել, երբ ազատարար բանակի գորամասերը կանգ առան մեր գավառի Տաբավանք կործանված գյուղում, որ ընկած էր Նեմրութ լեռան փեշերին. այստեղ մոտ երկու ժամով հանգիստ տրվեց զորամասերի զինվորներին՝ ճաշելու և հանգստանալու համար: Այդ կարճատև դադարը ինձ հնարավորություն տվեց հազարավոր մշեցի գաղթականների մեջ փնտրել քրոջս: Արագությամբ ես եղա գաղթականների տարբեր խմբերում, բայց ոչ մի տեղ նրան չգտա: Զորամասերը արդեն սկսեցին շարժվել՝ շարունակել նահանջը: Սկսեցին շարժվել նաև գաղթականների խմբերը. ես այդ ընթացքում մտա լքված գյուղի վերջին տունը: Օ՛հ, Աստված. հենց այդ տան մի անկյունում ես գտա իմ կորած քրոջը:

Չիթաղ գյուղից, ուր մայրս մնացել էր, մի մշեցի կին, խղճա-

լով քրոջս, նրան այս գյուղն էր հասցրել:

Քույրս ինձ պատմեց, որ մայրս մի օր առաջ մահացել էր, և ինքը վախից թողել էր նրան անկողնու մեջ և մշեցի կնոջ հետ միասին փախել էր Չիթաղից: Իմացա նաև ինձ գերած քուրդ Բինբոյի ու նրա երիտասարդ կնոջ վախճանի մասին: Գիշերը ուշ երեկոյան, երբ ռուսական զորամասերը գյուղ են մտնում, նրանք այլևս չեն կարողանում փախչել, ընկնում են հայերի ձեռքը ու ոչնչացվում են:

Քրոջս ձեռքից բռնած՝ գնացի իմ ազգական Զազոյի մոտ, որ մի քանի ընկերների հետ պատրաստվում էր հետևելու նահանջող բանակին: Տեսնելով փոքրիկ հինգ-վեց տարեկան քրոջս՝ նա շատ հանգիստ ու անտարբեր տոնով ասաց.

.. Տեսնո՞ւմ ես, ինչպես են ռուսները փախչում: Մերը մանկան ուրացել է: Այդ երեխայի ոտքի հետ մենք չենք կարող ճամփա ընկնել. քրդերը կհասնեն և բոլորիս էլ նոչնչացնեն: Չգիր քրոջդ: Նրանով մի ամբողջ գերդաստանի կորուստը հետ չենք բերելու:

Ես կտրականապես մերժեցի այդ պահանջը՝ ասելով.

- Դուք կտող եք գնալ: Ես չեմ կարող լքել քրոջս:

Եվ նա լքեց մեզ: Ես դարձյալ մնացի մենակ՝ հույսս ինձ վրա դրած:

Դիմացում դարձյալ մառախուղը ճակատին, մռայլ ու ահազոու կանգնել էի Նեմրութ լեռը, որ իր բարձունքից իշխում էր բնաջնջված և ավերակ հայկական գյուղերին կծղած արտերին, Վանա ու Նազիկ լճերի լուրթ ջրերին:

Մուրթ իջավ Նեմրութի խորխորատներից, ու գաղթակա-նությունը շարժվեց գյուղից՝ տագնապով հետևելով սրընթաց նահանջող ռուսական զորամասերին:

Գիշեր էր. 1915 թվականի հուլիսի վերջն էր... Ահավոր լուսնյակ գիշեր... Նահանջող զորամասերը լքված գաղթա-կանության հետ միասին մտան մեր գյուղի հողային սահմանը: Մտան ինձ համար միս ու արյուն դարձած հարազատ ու սրբազան վայրերը... Մտան, ու ինձ թվաց, որ ականջիս արդեն

հնչում են հարազատներիս, ընկերներիս, բարեկամներիս քաղցր ձայները:

Ինձ թվում էր, որ տեսնում էր բոլորի դեմքերը... Տեսնում էի չարքաշ, միշտ հոգսերի տակ կոացած հորս՝ մանգաղը ձեռքին ցորեն հնձելիս:

Ահա և միշտ անձայիտ⁷⁶ մայրս. նա անդորր ու խաղաղ կլանված նայում էր դեմքիս ու չէր հագնում:

Ահա և մեր «Խորու գլուխ» կոչված հանդը, անտառի պես կանգնած մեր ցորենի ու տարեկանի արտերը:

Ահա «ծովոնիկ» կոչված մեր գետակը, Մեղկի աղբյուրը ու հազիվ նշմարվող մեր «տուրամա» քոեն⁷⁷:

Ամեն, ամեն բան իր տեղում էր, բայց զարհուրելի գերեզմանի նման լուռ ու անկենդան...

Բայց դա մի քանի րոպե էր. միրաժը անցավ, երազը ցնդեց և ես ինձ էլի գտա դառն ու հոգեմաշ գաղթականի ճամփի վրա:

Տեղ-տեղ շալակում էի քրոջս: Նա լաց էր լինում, ջուր էր ուզում: Տեղ-տեղ համոզում էի, որ քայլի: Քայլում ու քայլում էինք, հետևում թողած սրբազան վայրերի անմար կրակները և, վերջապես, դեռ լույսը չբացված մտանք մեր գյուղը, որ լքել էինք չորս ամիս առաջ:

Մինչև լույսը բացվելը մշեցի գաղթականների հետ մի երկու ժամ մնացինք մեր գյուղի գերեզմաններում: Թեև մեր տունը գերեզմանոցից մի քանի քայլի վրա էր, բայց ես վախեցա այդ ժամին մենակ տուն մտնել՝ դա սարսափելի կլիներ ինձ համար: Եվ այդպես, երկու ժամ մենք մնացինք գերեզմանոցում մեռելների հետ, որոնց երանի էինք տալիս, որ ծածկված էին հայրենի հողով ու չէին տեսնում այդ զարհուրելի տեսարանը:

Եվ երբ արևը ծագեց, քրոջս թողած ես իջա մեր գյուղի կամարակապ «Ջոջեն» աղբյուրը, որ մեր տան մոտ էր:

Ես սովոր էի այստեղ լսել կժերն առած երիտասարդ, կենսախիհնդաղջիկների կատակն ու ծիծաղը, տեսնել ամոթխած

⁷⁶ *Անձայիտ*, անձայտուն:

⁷⁷ *Քոեն*, քարածայր:

Նորահարսերի դեմքերը: Հիմա լռություն էր, ահավոր լռություն էր տիրում: Ծնկեցի աղբյուրի վրա, խմեցի-խմեցի նրա ջուրը կարոտով ու անհոգ: Յուրաքանչյուր ծառ, յուրաքանչյուր քար, յուրաքանչյուր թուփ այրող վշտի մեջ թաթախված սրի նման մեխվել էին սրտումս, և ես ականա քայլերս ուղղեցի դեպի մեր տուն:

Զարհուրելի էր գյուղում. ոչ մի շուն, ոչ մի կատու չկար: Ասում էին, որ նրանք, կոտորածից հետո առանց անդի մնալով, սովորում են մարդկային մսին, բոլորն էլ կատաղում են, դուրս են գալիս գյուղից, ընկնում լեռներն ու դաշտերը և մարդու հանդիպելիս՝ շրջապատում ու հոշոտում էին:

Փողոցներում, դռների առաջ, պատերի տակ, արևի տակ, չորս ամիս շարունակ դեռ խանձվում էին մարդկային մարմնի զանազան մասերը՝ ձեռքերի, ոտքերի ու գանգի ոսկորները:

Ահա և մեր տունը՝ իմ մանկության օրորանը, ուր առաջին անգամ աչք եմ բաց արել, տեսել եմ արևի լույսը, տեսել եմ այս հրաշալի հեքիաթային ու արյունոտ աշխարհը: Նրա դուռը բաց էր մնացել: Ես ամբողջ մարմնով սարսուռ զգացի ու վախենում էի ներս մտնել:

Վայրկենապես աչքերիս առջևով անցան մեր ընտանիքի բոլոր անդամները: Բայց կաց՝ ինձ թվաց, որ մորս ձայնն եմ լսում: Նանախատում է ինձ՝ ասելով. «Գարնան վարար ջրերում մի լողանա»:

Հորս ձայնն եմ լսում: Ասում է. «Եզները լծենք, արտ գնանք, վար ու ցանք անենք»:

Մի կերպ ուժերս հավաքելով, ինձ սիրտ տալով՝ ոտքս զցեցի շենքը և ներս մտա...

Օ՛հ սրբազան մասունքներ՝ հանգած թոնիր, այլուրի դատարկ փեթակ, ջարդուփշուր արված ամանեղեն, պատի տակ ընկած խաչերկաթ... Լեզու-լեզու առեք, պատմեք հարազատներիս, ընկերներիս ու մեր հարևանների, մեր գյուղացիների մասին՝ ես լսում եմ ձեզ: Բայց քար-քար լռություն էր տիրում. ամեն ինչ դատարկ էր:

Լռություն-լռություն, ահավոր լռություն էր տիրում:

Ահա այստեղ՝ մտռանում, թթվի կարասի տեղն այնքան էին փորել մարդ-բորենիները, որ վախենում էի մոտենալ ու մտիկ անել: Երևի առատ ոսկի են փնտրել մի տան մեջ, որի բնակիչները, օր ու գիշեր աշխատելով, չէին կարողանում կուշտ փորով անգամ ցամաք տարեկանի հաց ուտել: Ամեն ինչ խլվում, ամեն ինչ կողոպտվում էր այդ թշվառ երկրում:

Հանկարծ հիշեցի իմ մանկության մոտիկ ընկերոջը՝ մեր հարևան Տիգրանին: Կոտորածի օրերին նա տիֆով հիվանդ պառկած էր. պատմում էին, որ քրդերը նրան սպանել են հենց անկողնում:

Խելագար մի միտք ծագեց իմ գլխում գնալ նրանց տուն ու տեսնել նրան: Դուռը ծածկված էր. մի քանի րոպե քարացած սպասեցի դռան մոտ: Թվում էր, թե ուժ չունեմ դուռը բացելու. ակամա ձեռքս մեկնեցի դեպի դուռը և դուռը բացվեց:

Այո, նրան խփել էին հենց անկողնու մեջ: Նրա խոշոր կենսախիհնդ աչքերի փոխարեն, չորացած դեմքի վրա ես տեսա աչքերի երկու դատարկ խոռոչներ: Չորացած ծնոտի վրա երևում էր ատամների սպիտակ շարանք:

Ամբողջ մարմնովս մի սարսուռ անցավ: Սկսեցի ամբողջ մարմնով ցնցվել ու ճչալով դուրս փախա և, չգիտեմ ինչպես, երբ սթափվեցի, ինձ գտա գերեզմանոցում քրոջս մոտ, որ չէր հասկանում, թե ինչ էր կատարվել ինձ հետ ու վախեցած երեսիս էր նայում:

-7-

Փոքր ինչ հանգստից հետո փրկարար բանակի զորամասերը շարունակեցին իրենց սրընթաց նահանջը. էլ ժամանակ չունեցա վերջին անգամ հայրական օջախ մտնել, համբուրել նրա շենքը, թոնրի շուրթը ու այնպես հեռանալ: Արտասուքս զսպած ես հոգու խորքում «մնաս բարև» էի ասում գյուղի բոլոր հանգած օջախներին, մանկությանս սրբազան բոլոր վայրերին, քարին ու թփին, գյուղի բարձրակատար

բարդիներին, հաստաբուն հին բարդի ծառերի վրա օրորվող հինավուրց մեր սիրելի արագիլների բներին: «Մնաս բարև» էի ասում մեր «Ավազան» կոչված փոքրիկ գետակին, այն ամենին, ինչ-որ մանկուց նստել էր իմ հոգում:

Մի բլուր ես և գյուղը անտեսանելի մնաց հետևում ու իր կուրծքը բացեց մեր ծովակը՝ Նազիկ լիճը: Մի քանի լողակ բարացած մեխվեցի տեղում, կարծես աշխարհից վերացած՝ նայեցի լճի լուրջ ջրերին:

Մանկական թարմ ու վառ հուշերը քրքրում էին սիրտս, ու ես սկսեցի բարձրաձայն հեկեկալ: Ակամա հարց էի տալիս ինքս ինձ, թե ո՞ւմ ենք թողնում այս բլուրը, ո՞վ խունկ կվառի մեր գերեզմաններում և ո՞վ հորովել կերգի մեր դաշտերում:

Այդ օր գաղթի ճանապարհին ես տեսա մի անմիտ, մի ապերախտ ու դաժան դատաստան: Հազարավոր գաղթականների հետ միասին գաղթում էին նաև երկու քրոջեր, որ շատ բան էին արել ոչնչացումից ու տանջանքից փրկելու հայ կանանց, երեխաներին ու ծերերին: Նրանք գաղթում էին մեզ հետ և ուզում էին ապրել հայկական շրջապատում: Բայց չեմ իմանում ինչպես պատահեց, որ կույր վրեժի ցատումով լցված մի հայ իմ աչքի առաջ գնդակահարեց նրանց: Ես տեսա նրանց վերջին գալարումները: Անեծք նրան, ով մարդկության, եղբայրության դիմաց ոճրագործություն կատարեց...

Եվ այսպես, 1915 թվականի հուլիսյան օրերին, քաղցած ու ծարավ, օր ու գիշեր, առանց հանգստի, քայլում էի ես քրոջս ձեռքից բռնած, հազարավոր, ամեն ինչից զրկված Մուշի, Բլանուխի գավառների գաղթականության հետ դեպի Կովկաս՝ դեպի Երևան: Անձանոթ վայրեր, անձանոթ երկիր: Եվ մի օր առավոտյան մենք կանգ առանք մի մեծ գյուղի մոտ, մի մեծ գետի ափին: Այդ գյուղը հին Բայազետի մեծ Ղարաքիլիսա գյուղն էր, իսկ գետը Արևմտյան Եփրատն էր կամ, ինչպես ժողովուրդն էր անվանում, Մուրադ գետը՝ իր վերին հոսանքում:

Աչստեղ կուտակված հինգ-վեց հազար գաղթականությունը օրերով չէր կարողանում կամուրջի վրայով գետը անց-

նել՝ ռուս ժամապահին հրահանգված էր թույլ չտալ: Մահվան սարսափը աչքերում, ռոտաբոբիկ, քաղցած, առանց քուն ու հանգստի, տանջահար հազարավոր գաղթականության համբերության բաժակը լցվեց: Այլևս ուշադրություն չդարձնելով հրացանը ձեռքին կամուրջի վրա կանգնած ռուս ժամապահին՝ մեկանց⁷⁸ ահեղ թափով գետը մտան: Սկսվեց աղիհողորմ, սրտաճմլիկ մի տեսարան, երբ հարազատը մոռացավ հարազատին, երբ գետի կատաղի ալիքները սպառնում էին տակով անել յուրաքանչյուր փախստականի:

Խառնիճադանջ աղաղակների ու ճիչերի մեջ ոչ մեկը մյուսին հասկանում, ոչ մեկը մյուսին օգնել չէր կարողանում: Օրհասական վայրկյանին մարդկային ուժեղ մի ալիք բաժանեց ինձ քրոջիցս, ու ես կորցրեցի նրան: Երկար, շատ երկար փնտրեցի նրան, բայց գտնել չկարողացա:

Չէի կարող հաշտվել այն մտքի հետ, որ այդքան տառապանքից հետո, երբ արդեն հասել ենք փրկության ափը, զրկվեցի նաև քրոջիցս՝ վերջին հարազատիցս: Բայց դեպքից մի երկու օր հետո, երբ տանջահար եղած գաղթականությունը մի հովտում, ճամփի երկու կողմերում թափված հանգստանում էր, ես երջանկացա՝ ես գտա քրոջս. մի բարի մարդ փրկել էր նրա կյանքը՝ գետից ափ հանել:

Մեր գաղթի սև ճամփան կարծես թե վերջանում էր:

Մի առավոտ փախստական-գաղթականների մեր քարավանը կտրեց մի լեռնաշղթա ու հանկարծ աչքիս առաջ ձգվեց ամառային տոթի մեջ հևացող Արարատյան դաշտը:

Եվ ես տեսա մեր ջրնաղ Սիփանին շատ նման, բայց ավելի բարձր ու ներշնչող՝ հազարավոր սերունդների հայացքը ճակատներին՝ Արարատ լեռը, իսկ հեռվում՝ նուրբ ամպաշողի տակից շողշողում էին Արագածի ձյունափառ գագաթները: Այդ օրը ես տեսա իր խոր հունի մեջ գալարվող Արաքս գետը, որ գալիս էր մեր սրբազան հայրենի հողից, որ արդեն թիկունքում էր մնացել:

⁷⁸ Մեկանց, անմիջապես:

Մենք կտրեցինք այդ լեռնաշղթան, որ կոչվում էր Հայկական պար և իջանք Արարատյան դաշտ:

Եվ ահա Իգդիրը՝ փախստականների առաջին կայանը, որտեղից դեպի Էջմիածին էր հոսում գաղթականների հյուծված հոսանքը:

Իգդիրի վատառողջ օդն ու ջուրը, գիշերներին մոլեգնող մոծակների խայթը մեծ չափով նպաստեցին գաղթական փախստականների նոր, ավելի վատթար ջարդին. երբ գաղթականների յուրաքանչյուր խումբ Էջմիածին էր հասնում, արդեն տառապում էր մալարիայով և դիզենտերիայով:

Իգդիրում, իհարկե, ոչ մի գաղթական-փախստական սովից չէր մեռնում: Այդ օրերին մեր ռուսահայ եղբայրները և քույրերը ամեն ինչ արեցին, որպեսզի կարողանան Մեծ եղեռնից փրկված իրենց եղբայրներին ու քույրերին փրկեն մահվան համաճարակից: Առավոտվանից մինչև ուշ երեկո նրանք աշխատում էին սպահովել փախստականներին սնունդով, դեղորայքով, իջևանատեղերով: Մի քանի օր Իգդիրում մնալուց հետո, մի առավոտ քրոջս հետ միասին գաղթականների մի խմբի հետ ճամփա ընկանք դեպի Էջմիածին: Երբ հասանք տեղ, արդեն երեկո էր: Մենք գիշերեցինք բաց երկնքի տակ՝ մի մեծ փողոցում:

Առավոտյան, երբ աչքերս բաց արի, առաջին բանը, որ հանկարծ նկատեցի, դա մի շենքի պատի երկարությամբ, կրակի վրա կողք-կռոքի շարած շատ մեծ, մոտ հիսուն պղնձե կաթսաներն էին: Ամեն օր այդ կաթսաներում ճաշ էին պատրաստում հազարավոր գաղթականների համար:

Բայց շատ շուտով՝ 1915 թվականի ամռանը՝ օգոստոս ամսին, Էջմիածնում բռնկվեց Մեծ եղեռնից մի կերպ փրկված տաճկահայության այդ չնչին բեկորի նոր ջարդը: Մեկանց փոխված կլիմայական պայմանները, օդն ու ջուրը, գաղթականների հյուծված վիճակը և Էջմիածնի սանիտարական վատթար պայմանները տեղի տվին բռնկվող խոլերային, տիֆին, դիզենտերիային և տանջամահ սնող

մալարիային. Էջմիածինը դարձավ գաղթականության համընդհանուր գերեզմանոց:

Վաղ առավոտյան, մեռել փոխադրող սայլակները, անցնելով փողոցից փողոց, գաղթականության մեկը մյուսի վրա թափված խմբերի մոտով, շատ հանգիստ, արդեն սովորական դարձած ձայն էին տալիս.

- Ո՞վ մեռել ունի, շուտ բերեք, սպասել չենք կարող, ժամանակ չկա: Դեհ շուտ արեք, քանի՞ մեռել ունեք, բերեք:

Եվ բերում էին այդ մեռելներին՝ երիտասարդ կանանց, աղջիկների, պատանիների, ծերերի, տղամարդկանց և կանանց:

Այդ մեռելներին՝ ինչպես սովորական վառելափայտ բեռնում էին իրար վրա ու տանում ընդհանուր գերեզմանոց:

Շատ դեպքերում, սայլերին բարձած այս կամ այն անձը մեռած չէր լինում, նվաղած կամ ուշաթափ եղած էր, շարժվել չէր կարողանում, ձայն հանել չէր կարողանում: Բայց ո՞վ էր մեր ժողովրդի դժնի այդ օրերին նման ավելորդ գործի ստուգման մասին մտածում. բեռնում էին ու քշում գերեզմանոց:

Սուրբ հայրերը այդ սև օրերին վանքի դռները պինդ փակել էին մեռնող, արնաքամ եղած ժողովրդի առաջ, որովհետև նա այլևս ժողովուրդ չէր, այլ ընդհանուր մի սոսկալի վարակ էր նրանց համար⁷⁹:

⁷⁹ Մեծ եղեռնի ժամանակ և հետագա տարիներին, Հայ առաքելական եկեղեցին օգնել է աղետից մազապուրծ եղած հազարավոր արևմտահայերի: Փախստական հայերին խնամելու ուղղությամբ Մայր Աթոռի գործունեությունը համակարգում էր 1914 թ. դեկտեմբերի 28-ին Գևորգ Ե Սուրենյանցի անմիջական նախագահությամբ ստեղծված Եղբայրական իրականացման ժամանակ փախստականներից վարակվում են տարբեր հիվանդություններով և վախճանվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անդամներ Եփրեմ եպիսկոպոս Սուրբիայանը (Եղբայրական օգնության կոմիտեի գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահ), Վահան վարդապետը, Բաբկեն վարդապետ Աղավելյանը (Սբ. Էջմիածնի որբանոցի կառավարիչ) և այլոք (դրա մասին մանրամասն տե՛ս մասնավորապես Ստեփան Ստեփանյանց, «Հայոց ցեղասպանությունը և Հայ

Բայց չէ՞ որ պատերազմի առաջին ամիսներին ու դրանից առաջ այստեղ էջմիածնում այդ մարդիկ առանց քաղաքական չնչին խոհեմության, առանց չնչին պատասխանատվության զգացմունքի ու զգուշության, պոռոտախոս դաշնակ ջոջերի հետ օրը ցերեկով ամբողջ աշխարհի առաջ կամավորական ջոկատներ էին կազմում:

- Գնանք Տաճկաստան, կոտորենք թուրքերին, փրկենք Հայաստանը:

Այս բոլորը յուղ էր լցնում կրակի վրա, գենք էր տալիս տաճկական արյունոտ կառավարությանը՝ Թալեաթ և Էնվեր փաշաներին և մյուս դահիճներին, պաշտպանելու իրենց կատարած ոճիրը՝ մի ամբողջ ժողովուրդի ոչնչացումը:

Եվ ահա գնացին և փրկեցին Հայաստանը:

Արդեն մի քանի օր էր, ինչ էջմիածնում էինք: Չէի իմանում, ինչ է լինելու իմ և քրոջս վիճակը, երբ հանկարծ պատահեցի իմ մանկական ընկեր Լորո Միսակին: Իմանալով իմ անորոշ վիճակի մասին՝ նա ասաց.

- Գնա որբանոց, - բայց ես չհասկացա այդ որբանոց բառը: Նա բացատրեց՝ որբանոց նշանակում է «եթիմ խանա»:

- Գնա, - կրկնեց նա, - մեր գյուղից շատերն են այստեղ: Որբանոցում կարդալ, գրել են սովորեցնում:

Կարդալ, գրել սովորելու համար հաջորդ օրը ես արդեն այնտեղ՝ վանքի որբանոցում էի: Այստեղ էին մեր հարևան. մանկությանս ընկեր Հարոյի Մեսրոպը, մեր գյուղացի Պետիկ Ադիյանը, Փռոտի Նուրեյի աղջիկ Ազնիվը, որի մայրը՝ Նուրեն, որբանոցում մայրապետ էր աշխատում:

Առաջին օրերին սուկալի էր լինել որբանոցում: Արդեն որոշել էի փախչել անասունների գարնանային այդ փառախից⁸⁰: Բայց մի քանի օրից հետո մեզ տեղափոխեցին

առաքելական եկեղեցին 1915-1918 թթ.», *Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր* 6 (2002), 87-93):

⁸⁰ Հեղինակն ըստ երևույթին ակնարկում է որբանոցի սաների մեծ թվի համեմատ շենքային պայմանների սղության վրա:

Էջմիածնի մի ինչ-որ դպրոցի շենք, և դրությունը միանգամից փոխվեց: Շատ կարճ մնացինք այդ դպրոցում: Շուտով մեզ փոխադրեցին Աշտարակ, որը դարձավ իմ բախտակից հարյուրավոր ծնողագուրկ երեխաների երկրորդ ծննդավայրը: Սիրեցինք նրա այգաբացը ու այգեքաղը, նրա բնակիչներին՝ իրենց կենսուրախ ու խնդալի բնավորությամբ, սիրեցինք նրանց երգն ու ծիխաղը:

1915 թվականի աշնան վերջին Աշտարակում արդեն հինգ-վեց որբանոց կար՝ երեք հարյուրից ավել երեխաներով: Այդ մանկատները գտնվում էին Մոսկվայի հայկական կոմիտեի⁸¹ խնամքի տակ: Աշտարակի ամենալավ ու մեծ շենքերը հատկացվեցին որբանոցներին: Յուրաքանչյուր ննջարանում տեղավորված էին հինգ-վեց երեխաներ:

Ճիշտն ասած, դրանք ըստ էության որբանոցներ չէին, ինչպես օրինակ ամերիկյան որբանոցները, ուր ամեն մի որբանոցում ապրում էին հազար հինգ հարյուրից երկու հազար երեխաներ: Աշտարակի Մոսկվայի հայկական կոմիտեի որբանոցները նման էին հայ բազմանդամ ընտանիքներին: Կարճ ժամանակում որբանոցները ապահովվեցին դպրոցներով և անհրաժեշտ ուսուցչական կազմով: Դրանց մեծ մասը Վան քաղաքի հայկական դպրոցների փորձառու ուսուցիչներ էին, որոնք իրենց ընտանիքներով հաստատվել էին Աշտարակում: Վանեցիներ էին նաև երեխաներին սպասարկող մայրապետների մեծ մասը, որոնց մեջ չեմ կարող մոռանալ Սաբեթ մայրիկին:

⁸¹ Մոսկվայի հայկական կոմիտեն արևմտահայ գաղթականներին օգնություն կազմակերպելու հարցերով զբաղվող հայկական հասարակական կազմակերպություն էր: Ստեղծվել է 1914 թ. հոկտեմբերի 26-ին՝ մոսկվաբնակ հայերի կողմից: Կազմակերպության գործունեությունը շարունակվել է մինչև 1918 թ. մարտը (որբերի խնամքի ուղղությամբ կազմակերպության աշխատանքների մասին տե՛ս, մասնավորապես, Մարիամ Կիրակոսյան, «Մոսկվայի հայկական կոմիտեի որբախնամ գործունեությունը (1915-1920 թթ.)», *Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր* 10-11 (2005), 197-204):

Թե՛ ուսուցիչները և թե՛ մայրապետները հարազատ, հոգատար ու սրտակից էին երեխաների նկատմամբ: Նրանցից յուրաքանչյուրը հայրենիքում ապրել էր Մեծ եղեռնը և որբացած երեխաներին նայում էր ինչպես իր հարազատ զավակներին: Նրանց զավակներից շատերը նույնպես որպես որբեր ապրում էին որբանոցներում: Այսօր էլ այդ ուսուցիչներից շատերն են ապրում Աշտարակի նախկին որբերի հիշողության մեջ. ահա նրանցից մի քանիսը՝ Բարունակ Տեր-Հովհաննիսյան, Արփիար Արփիարյան, Տիգրան Զրբաշյան, Լևոն Բաղայան: Վերջինս նկարչության դասատու էր և ամեն մի երեխայի, որ խանգարում էր դասը կամ դպրոցական կարգը, ասում էր.

- Խելոք կաց, թե չէ գլխիցդ կարմիր ջուր կհանեմ:

Բայց նա այդպիսինը չէր, սրամիտ, սրտամոտ էր երեխաների նկատմամբ: Դրա համար էլ երեխաները սիրում և հարգում էին նրան:

Բայց առավել անմոռաց է կյանք մտած Աշտարակի որբանոցի յուրաքանչյուր սանի համար իր ամբողջ կյանքը հայ որբերին նվիրած Ուկրաինայի դուստր Նինա Ատրուշենկոն: Նա երկար ժամանակ ղեկավարեց Աշտարակի ամբողջ որբանոցների ցանցի աշխատանքը: Որպես հարազատ մայր՝ նա ապրում էր երեխաների ուրախությամբ, հրճվում նրանցով: Նա հարուստ և ջերմ սիրտ ունեցող մի կին էր: Չնայած իր պատկառելի տարիքին՝ երեխաներին ուրախացնելու համար արջորի նման կանչում էր, շան նման հաչում և կիսատ-պռատ հայերենով զվարճացնում նրանց: Եվ այդ երեխաները, երբ արդեն ընտանիք կազմած տարիքավոր մարդիկ էին, իրենց ուսերի վրա վերցրած նրա հանգած մարմինը իրենց ձեռքով հանձնեցին հողին: Մի կին, որ մասնակցել էր ռուսական հեղափոխական շարժումներին, որպես սոցիալ-դեմոկրատ բանտ էր ընկել և վերջում մնացած ամբողջ կյանքը նվիրեց հայ որբացած երեխաների խնամքին ու դաստիարակությանը: Այսօր էլ նրա գերեզմանը այդ նախկին որբերի ուշադրությունից չի վրիպում:

Մոսկվայի հայկական կոմիտեի Աշտարակի մանկատան երեխաների խնամքի և դաստիարակության գործում մեծ հոգատարություն էր ցուցաբերում ճեմարանավարտ և Գերմանիայում իր բարձրագույն մասնագիտական կրթությունը ստացած Մկրտիչ Տեր-Մկրտչյանը, որ զենքը ձեռքին Մեծ եղեռնի օրերին քաջությամբ մարտնչել էր թուրք և քուրդ մարդասպանների դեմ: Նա Աշտարակի որբանոցների երեխաների հոգատար հայրն է եղել: 1919 թ. գարնանը նա հիմնադրեց Թաքիայի (Բազմադրյուր)⁸² կոմունան և երեխաներին սովորեցրեց գործնական բանջարաբուծության:

Մենք՝ Աշտարակի նախկին մանկատան սաներս, անսահմանորեն հպարտ ենք, որ մեր շարքերից է դուրս եկել Հայկական №89 դիվիզիայի հրամանատար Նվեր Սաֆարյանը, որն իր ռազմական հարուստ գիտելիքներով, հայ մարտիկների խիզախությամբ ու քաջությամբ, հայ ժողովրդի պատիվը հասցրեց մինչ Բեռլին: Հիմա էլ նրա դուռը կրնկի վրա բաց է Աշտարակի մանկատան սաների, իմ մանկության և պատանեկության ընկերների առաջ, մեծ հաճույքով է լսում անցած-գնացած, բայց վառ մնացած մանկատան և պատանեկան հուշերը:

Այո, հիմա էլ, երբ Աշտարակի նախկին մանկատաների սաները ընտանիքներ են կազմել, պիտանի մարդիկ են դարձել հայրենիքի համար, երբ նրանցից շատերը արդեն թոռներ են աճեցնում, ծերության օրերն են ապրում, մեծ՝ շատ մեծ հարգանքով ու ակնածությամբ են նրանք ոտք դնում իրենց երկրորդ ծննդավայր Աշտարակի հողի վրա:

1975-1980 թթ., ք. Երևան

⁸² *Բազմադրյուր*, գյուղ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ տարածաշրջանում, Արագածի հարավարևմտյան լանջին:

Հավելված 1.

Ռոբերտ Ա. Թաթոյան

ՄԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՂԵՌՆԸ. ԻՎԱԹԻ ԳԱՎԱՌԱԿԻ ՓՐԻՈՒՍ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ՝

Վերջին տարիներին հետզհետե ավելի է աճում Հայոց ցեղասպանության ժամանակ առանձին շրջանների, անգամ բնակավայրերի հայ բնակչության բնաջնջման պատմության նկատմամբ հետաքրքրությունը¹: Նշված ուղղությամբ ուսումնասիրությունները թույլ են տալիս առավել լիարժեք բացահայտել Հայոց ցեղասպանության իրականացման մեխանիզմները, դրան մասնակցած տարբեր կառույցների և խմբերի՝ բանակ, տեղական իշխանություններ, մուսուլման բնակչության տարբեր խմբեր (թուրքեր, քրդեր, չեքքեզներ) դերակատարությունը, այդ խմբերի միջև գործառույթների բաշխումը, հայերի՝ մահվանից խուսափելու նպատակով գործադրված ջանքերը և այլն:

Փրիսուսի բնաջնջման պատմության ուսումնասիրությունը կարող է հետաքրքրություն ներկայացնել նաև հատկապես

¹ Հոդվածն առաջին անգամ հրատարակվել է «Ցեղասպանագիտական հանդեսում» (տե՛ս Ռոբերտ Ա. Թաթոյան, «Մեկ բնակավայրի եղեռնը. Խլաթի գավառակի Փրիսուս գյուղի բնաջնջումը 1915 թվականին», *Ցեղասպանագիտական հանդես* 7, թիվ 2 (2019), 45-57):

² Yves Ternon, *Mardin 1915: Anatomie pathologique d'une destruction* (Paris: Geuthner, 2007), տե՛ս նաև Hilmar Kaiser, *The Extermination of Armenians in the Diarbekir Region* (Istanbul: Istanbul Bilgi University Press, 2014): Ըստ Օսմանյան կայսրության վարչատարածքային մանր միավորների (սանջակ (գավառ) և կազա (գավառակ)) և բնակավայրերի Հայոց ցեղասպանության ընթացքն է ներկայացնում նաև ֆրանսահայ ուսումնասիրող Ռայմոն Հարություն Գևորգյանն իր «Հայոց ցեղասպանություն. լիակատար պատմություն» աշխատությունում, Raymond H. Kevorkian, *The Armenian Genocide: A Complete History* (London-New York: I. B. Tauris, 2011):

հետևյալ երկու պատճառներով. այն Խլաթի գավառակի ամենախոշոր հայաբնակ բնակավայրն էր, և այդ բնակավայրի ոչնչացումն իրականացվել է նույն կաղապարով, ինչ Խլաթի գավառակի այլ հայկական գյուղերի դեմ գործողությունները, այսինքն, Փրիսուսի օրինակով մենք կարող ենք պատկերացում կազմել գավառակի բոլոր հայկական գյուղերի եղեռնի մասին:

Փրիսուսի բնաջնջման պատմության ուսումնասիրության համար որպես առաջնային սկզբնաղբյուր ծառայել են փրիսուսցի վերապրածների վկայությունները և դրանցից հատկապես՝ Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը (պահվում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերում):

Ա. Փրիսուս գյուղը Հայոց ցեղասպանության նախօրյակին

Փրիսուսը Բիթլիսի (Բաղեշ) նահանգի Բիթլիսի գավառի Խլաթի գավառակի 24 հայաբնակ բնակավայրերից մեկն էր, դրանցից առավել խոշորը: Գյուղը զուտ հայաբնակ էր, տեղակայված էր կենտրոնական Խլաթ գյուղաքաղաքից մոտ 12 կիլոմետր հյուսիս-արևմուտք՝ Նազիկ լճակի հարավկողմի ոչ բարձրադիր լեռների ստորոտներում³:

1880-1881 թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հրահանգով Բաղեշի առաջնորդարանի կողմից կազմված վիճակագրությամբ՝ Փրիսուսն ուներ 107 տուն, 1311 շունչ հայ բնակչություն⁴, նույն ժամանակաշրջանին վերաբերող մեկ այլ հաշվարկով՝ 115 տուն, 1000 շունչ հայ⁵:

³ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հայրակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, Տ-Ց* (Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2001), 281:

⁴ *Արձագանք* (Թիֆլիս), 1882, թիվ 18, 279, տե՛ս նաեւ Սուրբիաս Էփրիկեան, *Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, Հատոր առաջին, Ա-Ը* (Վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1902), 365:

⁵ Էփրիկեան, *Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, Հատոր երկրորդ, Թ-Կ* (Վենետիկ, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1907), 175:

Վանում ռուսական փոխհյուպատոս Վլադիմիր Մանսկու՝ 1899 թ. վերաբերող տվյալներով՝ բնակավայրն ուներ 140 տուն, 1120 շունչ հայ բնակչություն (հեղինակը որպես մեկ տան համար շնչերի միջին թիվ ընդունում է 8)⁶:

Ըստ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի հյուսիսանգով 1913 թ. Բաղեշի առաջնորդարանի կազմած վիճակագրության (մասնագիտական գրականության մեջ հայտնի է նաև 1913-14 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամար)՝ Փրխուսում կար 207 տուն, 2016 շունչ հայ բնակչություն (այդ թվում 77 պանդուխտ)⁷: Այլ վկայություններով՝ Մեծ եղեռնի նախօրյակի դրությամբ գյուղի հայ բնակչության թիվն ավելի բարձր էր. այսպես, ըստ Մշո առաջնորդարանի քարտուղար Նազարեթ Մարտիրոսյանի տվյալների՝ Փրխուսն ուներ 284 տուն, 2154 շունչ հայ⁸, իսկ Փրխուս գյուղից վերապրած հայ փախստականները հաղորդում են գյուղում 300⁹, 350¹⁰

⁶ Վլադիմիր Մանսկին հաղորդում է, որ անձամբ մի քանի անգամ այցելել և ուսումնասիրել է Խվաթի գավառակը, Владимир Маевский, Военно-Статистическое описание Вансакого и Битлинскаго вилаетовъ (Тифлисъ: Типографія Штаба Кавк. воен. окр., 1904), 220: Գավառակի գյուղացուցակը տե՛ս նույն տեղում (отдел приложений), 93:

⁷ ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, f. 50:

⁸ *Վան-Տուս* (Թիֆլիս), 1916, թիվ 15, 8:

⁹ Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը (Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդեր, բաժին 8. ֆ.հ. 24, թղթապանակ 29-30), թերթ 61:

¹⁰ *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու*, Հատոր II, Բիթլիսի նահանգ, հեղինակ և կազմողներ՝ Ամատունի Վիրաբյան, Գոհար Ավագյան, գլխ. խմբ. Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 57:

և անգամ 400¹¹ տուն և 2700¹²-3000¹³ շունչ հայ բնակչության առկայության մասին:

Ընդամենը Խլաթի գավառակում, ըստ Հայոց պատրիարքարանի 1913 թ. վիճակագրացի տվյալների, կար 1679 տուն, 13432 շունչ հայ բնակչություն¹⁴: Գավառակի մուսուլման բնակչության թիվը (ճնշող մեծամասնությունը՝ քրդեր, առանձին գյուղերում՝ չերքեզներ, Խլաթ քաղաքում՝ թուրքեր) ըստ 1914 թ. օսմանյան վիճակագրության՝ 10190 էր¹⁵:

Ըստ Վանում ռուսական փոխիյուպատոս Վ. Մանսկու դիտարկման՝ Փրիուսը Խլաթի գավառակի հայաբնակ առավել հարուստ և բարեկեցիկ գյուղն էր¹⁶: Ինչպես և Արևմտյան Հայաստանի այլ գյուղական բնակավայրերում բնակչության հիմնական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էր: Գյուղում ցանում էին ցորեն, գարի, կտավատ, կանեփ: Հացահատիկի տարեկան բերքը մոտ 45000 կոտ ցորեն էր (մեկ կոտը 2 լիտր է) և 20000 կոտ գարի և տարեկան¹⁷:

1915 թ. դրությամբ գյուղում պահվում էր մոտ 20000 գլուխ ոչխար, 2500 ամեն տեսակի այլ անասուն-սևատավար

¹¹ Գեղամ Բաղայան, «Վարագղատ Տերոյանի վիճակագրական նյութերն Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ», *Բանբեր Հայաստանի արխիվների* 1 (2005): 220:

¹² Եղիազար Ղարիբյանի և Ղուտրադ Ավետիսյանի վկայությունները, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 55:

¹³ Բաղդասար Մելքոնյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 54:

¹⁴ Հաշվարկը ֆրանսահայ ուսումնասիրող Ռայմոն-Հարություն Գևորգյանի, Raymond Kévorkian, Paul Paboudjian, *Les arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide* (Editions d'Art et d'Histoire ARHIS, Paris, 1992), 59, 474:

¹⁵ Kemal Karpat, *Ottoman Population 1830-1914: Demographic and Social Characteristics* (Wisconsin: The University of Wisconsin Press, 1985), 174.

¹⁶ Маевский, *Военно-Статистическое описание, отдел армяноземли*, 93:

¹⁷ Եղիազար Ղարիբյանի և Ղուտրադ Ավետիսյանի վկայությունները, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 55:

(եզներ, գոմեշներ, կովեր, մատակներ), 30 ձի, 300 ավանակ¹⁸: Շրջանում հայտնի էր Փրխուսի «բալբաս» ցեղի սպիտակ դմակավոր ոչխարը, ինչպես և «ղուռիկ» կոչված այծը, որից ստանում էին թանկարժեք գգած նուրբ բուրդ («ղֆուռիկ»)՝¹⁹:

Փրխունս ուներ մոտ 700 տարվա հնության Ա. Ստեփանոս անունով քարաշեն եկեղեցի: Կային ձեռագիր ավետարաններ և «Կարմիր-կող» կոչված Ավետարանը, որին ուխտի էին գալիս հիվանդություններ ունեցողները²⁰: Մեծ եղեռնի նախօրյակին գյուղի եկեղեցում սպասավորում էր տեր Հարություն (աշխարհական անվամբ՝ Հովհաննես) քահանա Ղուկասյանը²¹:

Գյուղում գործում էին երկու քարաշեն դպրոցներ, որոնցից մեկը՝ բողոքականների կողմից բացված: Համաձայն 1913 թ. վիճակագրության՝ համայնքային-«ազգային» դպրոց էր հաճախում մոտ 100 երեխա²², մեկ այլ տվյալով՝ դպրոցներ հաճախող աշակերտների թիվը 520 էր²³:

Բ. Փրխուսի բնաջնջման ընթացքը

Դեռևս նախքան պատերազմի մեջ մտնելը՝ օսմանյան իշխանությունները 1914 թ. օգոստոսին հայտարարում են գորահավաք, որին Փրխուսից սկզբում հավաքագրվում են մոտ 150 տղաւնարդ²⁴: Շատերը գերադասում են գումար վճարել և ազատվել զինվորագրությունից, սակայն Օսմանյան

¹⁸Նույն տեղում, 57:

¹⁹ Սուկրատ Մկրտչյանի հուշագրություն, 61:

²⁰ Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, 57:

²¹ Թեղիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան և իր հօտին աղէտալի 1915 տարին (Նի Եորք, 1985), 63:

²² ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի արխիվ, APC/BNu, DOR 3/3, ֆ. 50:

²³ Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, 57:

²⁴ Եղիազար Ղարիբջանի և Ղուտրաղ Ավետիսյանի վկայությունը, Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, 55:

կայսրության՝ պատերազմական գործողությունների մեջ ներգրավվելուց հետո, փրկագնով ազատվածները նույնպես զորակոչվում են: Փրխուսի տղամարդկանց հաջորդ խոշոր զորահավաքը տեղի է ունենում արդեն Սարիղամիշում օսմանյան բանակի կրած պարտությունից հետո՝ 1915 թ. փետրվարին. այդ ժամանակ բանակ է զորակոչվում մոտ 300 տղամարդ²⁵: Ընդհանուր առմամբ, գյուղից զորակոչված տղամարդկանց թիվը մոտ 500, առավելագույնը՝ 600 հոգու սահմանում էր²⁶:

Պատերազմ հայտարարելուց քիչ անց զինվորագրված տղամարդկանց զինաթափում են և, ընդգրկելով աշխատանքային գումարտակներում («ամելի թաբուրի»), ուղարկում ճանապարհներ հաստատելու և խրամատներ կառուցելու աշխատանքների՝ կանոնավոր զորքի հսկողության ներքո: Զինվորագրված փրխուսցի տղամարդկանց դրությունը գնալով անտանելի էր դառնում. նրանք աշխատում էին առանց հանգստանալու, տաժանակիր պայմաններում անօթի, ծարավ, մերկ և ոտաբոքիկ, գիշերները քնում առանց անկողնի՝ խոնավ ու սառը հողի վրա: Նման պայմաններում գնալով ավելանում են մահվան դեպքերը, շատերը դիմում են դասալքության՝ վերադառնալով գյուղ կամ անցնելով ռազմաճակատը և հանձնվելով ռուս զինվորներին²⁷:

1914 թ. վերջերին – 1915 թ. սկզբներին իշխանությունները, որպես զինվորական պատերազմական տուրք, գյուղացիներից բռնագրավում են 20000 կոտ ցորեն, 600 ոչխար, 100 լիոր յուղ, 40 տավար մսացուիի համար, 50 սալ և 100 եգ, 500 գույգ գուլյա, 370 գույգ ձեռնոց, 100 սալ խոտ, 100 սալ հարդ, 120 սալ ցան (որպես վառելիք օգտագործվող չոր աղբ, աթաբ)²⁸:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, 58:

²⁷ Նույն տեղում, 55:

²⁸ Նույն տեղում:

Տղամարդկանց զինվորագրման գործընթացին զուգահեռ՝ 1915 թ. գարնանը գյուղախմբի մյուզիքը (կառավարիչ) ոստիկանների ուղեկցությամբ մտնում է Փրխուս և, սպառնալիքների ու մատնության գործադրմամբ, հավաքում գյուղացիների մոտ սլահվող զենքը՝ հրացաններ և ատրճանակներ: Ըստ շրջանառվող լուրերի, հավաքված զենքը փոխանցվում է քրդերին²⁹: Տղամարդկանց զինվորագրման և զենքերի բռնագրավման գործողություններով Փրխուսի հայերը զրկվում են ինքնապաշտպանություն կազմակերպելու գործնական հնարավորությունից:

1915 թ. ապրիլի 24-ին (նոր տոմարով՝ մայիսի 7) ռուսական բանակի Կովկասյան չորրորդ բանակային կորպուսը հարձակողական գործողություն է նախաձեռնում Մանազկերտի ուղղությամբ, որը ապրիլի 27-ին (մայիսի 10) անցնում է ռուսական բանակի վերահսկողության տակ³⁰: Ռուսական զորքերի հարվածների տակ օսմանյան զորքերի հետ դեպի հարավ են նահանջում նաև Ալաշկերտի շրջանի քրդական աշիրեթները: Օսմանյան իշխանությունները նրանց փաստացի արտոնում են, ըստ որոշ տվյալների, առաջնորդվելով «վառված հողի» մարտավարությամբ՝ ուղղակի կարգադրում բնաջնջել ռուսների առաջխաղացման շրջանների բոլոր հայկական բնակավայրերը³¹:

²⁹ Զենքերի հավաքման մասին տես տարբեր վկայություններ նույն տեղում, 47, 48, 53, 56:

³⁰ *Ашот Арутюнян, Кавказский фронт 1914-1917 гг.* (Ереван: изд. «Айастан», 1971), 175.

³¹ Տ. Շահբազ, «Բիթլիսի տարեդարձին թրքական զազանություններից», *Համբարաբեր հասարակական-գրական շաբաթաթերթ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության* (Թիֆլիս), 26 հունիսի 1916, թիվ 26, 826: Տե՛ս նաև Վաղարշակ Օլսիկեան, «Բաղէշի ընդհանուր կոտորածը», *Հորիզոն հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ* (Թիֆլիս), 20 սեպտեմբերի 1915, թիվ 212: Բիթլիսում ամերիկացի միսիոներ Գրեյս Կնասպը. ակամատես լինելով, թե ինչպես են Խլաթի գավառակի գյուղերի կոտորածից մազապուրծ եղած և Բիթլիսի Դատվան բնակավայրում ապաստանած փախստական հայերը բողոքներ հղում տեղական իշխանություններին, արձանագրում

Փրիսուսի և Խլաթի այլ հայաբնակ բնակավայրերի եղեռնն իրականացվում է Հասնացի կոչվող քրդական աշիրեթի³² և նրան միացած որոշ տեղացի քրդերի խմբերի միջոցով³³: Քրդերը մոտենում են Փրիսուս գյուղին 1915 թ. մայիսի 1-ին (մայիսի 14)՝ Համբարձման տոնի հաջորդ օրը³⁴: Մայիսի 2-ին (մայիսի 15) կողոպտվում են գյուղից դուրս՝ դաշտերում գտնվող գյուղացիների անասունները³⁵: Գյուղը շրջապատվում է, սակայն քանի որ օրն արդեն մթնում էր, քրդերը առժամանակ չեն համարձակվում մտնել գյուղ՝ վախենալով հնարավոր դիմադրությունից³⁶: Մի քանի ուղղություններով քրդերի ներխուժումը Փրիսուս տեղի է ունենում հաջորդ օրը՝ 1915 թ. մայիսի 3-ի (մայիսի 16) առավոտյան: Սկսվում է գյուղի բնակչության կոտորածն ու թալանը³⁷:

Ջարդի առաջնային թիրախը բոլոր տղամարդիկ էին՝ առանց տարիքային սահմանափակման: Չէին խնայվում ո՛չ անչափահասները և ո՛չ էլ ծերերը: Ըստ վերապրած փրիսուսցի Սոկրատ Մկրտչյանի վկայության՝ գործում էր «տղա է՝ բավական է, պետք է ոչնչացնել» սկզբունքը³⁸: Քրդերը մեկ առ մեկ մտնում էին յուրաքանչյուր տուն: Սպանվում էր յուրաքանչյուր ոք, ով համարձակվում էր ցույց տալ թեկուզ աննշան դիմադ-

էր. որ հայերը և ոչ մի գաղափար չունեին, որ նրանց դեմ ուղղված այս գործողությունները հենց իշխանությունների կողմից ին հրահանգված: Si' u Grace H. Knapp, *The Tragedy of Bitlis* (New York-Chicago-London and Edinburgh: Fleming H. Revell Company, 1919), 41:

³² Որպես աշիրեթապետ նշվում է ոմն Աբդուլ Մեջդիի անունը:

³³ Տե՛ս մասնավորապես վերապրած Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 44:

³⁴ Տե՛ս *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 58:

³⁵ Նույն տեղում, 56, 58:

³⁶ Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 44; նաև՝ վերապրած Միսակ Սեդրակյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 48:

³⁷ Նույն տեղում, 59:

³⁸ Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 46:

րություն, չհայտնել հարազատների և մտերիմների տեղը, ունեցվածքի, դրամի թաքստոցները³⁹: Վերապրած Սոկրատ Սկրոչյանի պատկերավոր արտահայտությամբ՝ «րոպե առ րոպե փողոցներում և տներում բարձրանում էին դիակների կոյտերը»⁴⁰:

Ջարդն ու թալանն ուղեկցվում էին կանանց բռնաբարություններով և գերմամբ: Բազմաթիվ գեղեցիկ ու երիտասարդ աղջիկներ մրոտում ու ցեխոտում էին իրենց դեմքերը, որպեսզի խուսափեն գերությունից ու հետագա հնարավոր բռնի ամուսնությունից, սակայն դա ոչ միշտ էր օգնում և շատերին մազերից քարշ տալով բաժանում էին իրենց հարազատներից ու տանում⁴¹:

Փրխուսի կոտորածին և թալանին որոշակի մասնակցություն են ունենում նաև քուրդ կանայք. այդ մասնակցությունը արտահայտվում էր հատկապես տղամարդկանց քաջալերելով (այսպես, համաձայն մի վկայության՝ քրդուհիները, տեսնելով որևէ գեղեցիկ հայ աղջիկ, կանչում էին իրենց տղամարդկանց, բղավելով՝ «Եկեք, այստեղ ալ գեղեցիկ կին մը կա»)՝⁴²:

Գյուղի հայ բնակչության կոտորածի ու թալանի գործողությունը տևում է մինչև մայիսի 3-ի ուշ երեկո: Մութն ընկնելու պես քրդերը հետ են քաշվում բնակավայրից: Կոտորածը վերապրած Փրխուսի հայության խլյակները, ուժ չգտնելով մնալ ավերված և թալանված բնակավայրում, նահատակված հարազատների և հարևանների դիակների կողքին, ինչպես նաև երկյուղ կրելով քրդերի նոր հարձակումներից, հաջորդ օրը՝ մայիսի 4-ին, խումբ առ խումբ տարբեր ուղղություններով

³⁹ Միսակ Սեդրակյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 49:

⁴⁰ Նույն տեղում, 47:

⁴¹ Սոկրատ Սկրոչյանի հուշագրությունը, 47:

⁴² Աղալիսի Հղաթյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում*, 51:

թողնում են բնակավայրը⁴³: Փրիսուսի հայ բնակչության կոտորածին զուգահեռ՝ նույն օրերին սրի են քաշվում գավառակի բոլոր հայկական գյուղերը:

Սկսվում է փրիսուսցիների՝ վերապրելու համար պայքարի փորձությունը, որը ոչ բոլորին է հաջողվում հաղթահարել: Փախուստի հիմնական ուղղությունը Փրիսուսից հյուսիս գտնվող Նազիկ լճի շրջակա քրդաբնակ և չերքեզաբնակ բնակավայրերն էին (Նազիկ, Ջեզիրե, Խիարդանք, Խուլիկ): Փախուստի ճանապարհին փրիսուսցիների խմբերը հաճախ շրջապատվում էին քրդերի կողմից. թաքնված դրամ գտնելու նպատակով կանայք խուզարկվում էին, դեռահաս տարիքի տղաները՝ սպանվում⁴⁴: Քրդերը հաճախ ափսոսում էին գնդակ ծախսել և շատերին դաշույնով, կացինով, անգամ փայտե մահակներով էին սպանում կամ ողջ-ողջ գցում հորերը, գետերը և Նազիկ լիճը⁴⁵: Մի վկայության համաձայն՝ Ջեզիրե (Ջիզրեն) բնակավայրում ապաստանված փրիսուսցիներից շուրջ 100 հոգի ողջակիզման է ենթարկվում⁴⁶:

Ոմանք, ճանապարհները շրջանցելով, լեռներով ու ձորերով կարողանում են հասնել հիմնականում չերքեզաբնակ Խուլիկ գյուղը (Փրիսուսից հյուսիս-արևելք), որը գտնվում էր ռազմաճակատի գծին մոտ, անցնել ռուսների կողմից վերահսկվող տարածք և փրկվել⁴⁷: Նշենք, որ Խուլիկի չերքեզական բնակչությունը թեև չէր մասնակցել Խլաթի գավառակի հայ բնակչության կոտորածին, սակայն անսալով

⁴³ Տե՛ս Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 51:

⁴⁴ Նույն տեղում, 53:

⁴⁵ *Հայոց ցեղասպանությունը օսմանկան Թորքիայում*, 59:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Դա ոչ բոլորին է հաջողվել: Այսպես, վերապրած Աղալնի Հլրաթյանի հայրը սպանվել է Խուլիկի ճանապարհին: Տե՛ս նույն տեղում, 52: Դեպի Խուլիկ գնացող որոշ կանանց կանգնեցնում են քրդերը և ստիպում վերադառնալ Փրիսու: Տե՛ս վերապրած Բելո Մխիթարյանի վկայությունը, նույն տեղում, 53:

կառավարության հրամանին, չվաննելով կապել և թուրքական բանակին է հանձնել իրենց գյուղում թաքնվող շուրջ 200 հայ տղամարդու⁴⁸:

Կոտորածից խուսափած փրխուսցի հայ տղամարդկանցից մի քանիսը ապաստանվում են սարերում փորած թաքըստոցներում սնվելով գիշերները հավաքած բանջարով: 1915 թ. հունիսի սկզբներին նրանցից ոմանց հաջողվում է անցնել Մանազկերտի գավառակի Լաթար գյուղը, որն արդեն գտնվում էր ռուսական զորքերի վերահսկողության տակ⁴⁹:

Որոշ փրխուսցիներ, Խլաթի հայկական բնակավայրերի կոտորածից մազապուրծ եղած այլ հաչերի հետ միասին, թաքնվում են Բուլանուխին սահմանակից Խլաթի լեռներում (Եղոնակա սար): Այնտեղ նրանք ստիպված են լինում սնվել բանջարով ու կանկառով՝ ամեն օր ենթարկվելով քրդերի և ոստիկանների հարձակումներին: Կանայք բռնաբարվում էին. գեղեցիկ աղջիկները՝ գերվում և ենթարկվում բռնի ամուսնության և իսլամացման: Նման պայմաններում օրական տասնյակ մարդ էր մահանում, ողջ մնացածները ուժ չէին ունենում նրանց հողին հանձնելու: Ի վերջո, Բուլանուխի տեղական իշխանությունների հրամանով նրանք տեղափոխվում են գավառակի Փիոնք գյուղը, որտեղ հայերի նկատմամբ բարյացակամ տրամադրված մի քրդական առաջնորդի հովանու ներքո նրանք կարողանում են պահպանել իրենց կյանքը մինչև ռուսական բանակի գալը⁵⁰:

Սոտ 150 փրխուսցի փախստականներ՝ հիմնականում կին և երեխա, առժամանակ ապաստանում են Նազիկ լճից արևելք գտնվող Խիարդանք գյուղում: Վերապրած Սոկրատ Մկրտչյանը այնտեղ փախստական փրխուսցիների վիճակի մասին վկայում է հետևյալը. «Մենք բոլորս արդեն

⁴⁸ Միսակ Սեդրակյանի վկայությունը, Նույն տեղում, 50:

⁴⁹ Նույն տեղում, 59:

⁵⁰ Նույն տեղում, 47, 56:

մուրացկաններ էինք: Սարսափով, գաղտագողի քրդական փոքրիկ գյուղում տնից-տուն թափառելով՝ հաց էինք մուրում ու ախոռների մեջ անցկացնում անորոշ ու տազնապալի օրեր՝ մտածելով, թե վաղը, արդյոք, կտեսնե՞նք լուսաբացը»⁵¹:

Հունիսի սկզբներին իշխանությունները հրահանգում են Խիարդանքում ապաստանած փախստական փրխուսցիներին վերադառնալ հայրենի գյուղ՝ հայտարարելով, որ, իբր, սուլթանի նոր հրամանով հայերի կոտորածն արգելված է: Ոստիկանների ճնշման տակ ավերված Փրխուս է տեղափոխվում թվով մոտ հարյուր մարդ⁵²: Ըստ երևույթին, օսմանյան իշխանությունների նշված կարգադրությունը պայմանավորված էր ռուսական զորքերի հետագա առաջխաղացման հետ, որոնք արդեն մոտեցել էին Խլաթի գավառակի սահմաններին:

1915 թ. հունիսի 10-ին (հունիսի 23) ռուսական զորքերը (Կովկասյան Չորրորդ բանակային կորպուս) և նրանց ուղեկցող հայկական կամավորական ջոկատները ջարդում են թուրքական դիմադրությունը և գրավում Բուլանլիսի Կոպ բնակավայրը⁵³, իսկ հունիսի 17-ին (հունիսի 30) նույն կորպուսի հարավային ստորաբաժանումները գրավում են Խլաթը⁵⁴: Ռազմաճակատը առժամանակ կայունանում է մոտավորապես Խլաթ գետակի երկայնքով⁵⁵: Փրխուսը հայտնրվում է ռազմաճակատի գծի վրա:

Նշված ժամանակաշրջանում իրենց հայրենի գյուղ բռնի վերադարձված փրխուսցիների (ինչպես արդեն նշեցինք, դրանք մոտ 100 հոգի էին՝ հիմնականում կին ու երեխա) վիճակի մասին մանրամասն տեղեկություններ են առկա Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունում: Ըստ սկանառեսի,

⁵¹ Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 55:

⁵² Նույն տեղում:

⁵³ Евгений Масловский, *Мировая война на Кавказском фронте 1914-1917 г. Стратегический очерк* (Փարիզ: Возрождение, 1933), 166.

⁵⁴ Նույն տեղում, 171: Նաև՝ Մշակ (Թիֆլիս), 21 հունիսի 1915, թիվ 133:

⁵⁵ Арутюнян, *Кавказский фронт*, 178:

հասնելով բնակավայր, հայերը լցվում են գյուղի վերին մասում գտնվող մի մեծ տան մեջ: Հաջորդ օրն այդ տուն են մտնում մի քանի զինված թուրքեր (ըստ երևույթին՝ թուրքական բանակի զինվորներ) և իրենց հետ տանում բոլոր տղամարդկանց (նրանք շատ չէին՝ 3-4 հոգի): Մահվան սպառնալիքի տակ, քաղցած ու ծարավ՝ տարվածներին երեք-չորս օր ստիպում են փողոցներում ընկած դիակները ծածկելու համար փոսեր փորել՝ խոստանալով, որ աշխատանքը կատարելուց հետո նրանք ազատ կթողնեն: Վերջին փոսը փորելուց և դիակները թաղելուց հետո, փրխուսցի տղամարդիկ կանգնեցվում են այդ փոսի եզրին ու գնդակահարվում⁵⁶:

Մինչդեռ գյուղ վերադարձված կանայք ու երեխաները, ըստ ականատեսի վկայության, կորցրել էին մարդկային կերպարանքը, դարձել էին շրջապատի ու մահվան հանդեպ անտարբեր՝ խելագարությանը մոտ վիճակում: Սաստիկ քաղցը ստիպում էր նրանց հողի մեջ փնտրել ցորենի, գարու, տարեկանի և անգամ կորեկի հատիկներ, որ գյուղը կողոպտելու ժամանակ թալանչիները թափել էին տների մեջ, փողոցներում, հացահատիկի հորերի շրջակայքում: Նրանք հավաքում էին այդ հողը և մեկառմեկ ընտրում հատիկները, աղանձ անում և մի փոքր սպանում քաղցը⁵⁷:

Վերադարձածների շրջանում շուտով սկսում են տարածվել հիվանդությունները՝ տիֆն ու փորահարությունը: Տունը, որտեղ կենտրոնացվել էին վերադարձած փրխուսցիները, ականատեսի պատկերավոր բնութագրությամբ վերածվել էր «տուն-դժոխքի», որտեղ տիրում էին «համատարած տնքոցը, ջերմարյուն գառանցանքը, և ...ննջեցյալների մարող ահավոր լռությունը»⁵⁸:

Դրան ավելանում է այն, որ թալանի նպատակով պարբե-

⁵⁶ Սոկրատ Մկրտչյանի հուշագրությունը, 57:

⁵⁷ Նույն տեղում, 57-58:

⁵⁸ Նույն տեղում:

ըստ Գյուլ մտնող քրդերը ներս էին մտնում այդ տուն, բոլորի աչքի առաջ բռնաբարում ջերմության մեջ այրվող երիտասարդ կանանց ու աղջիկներին ու հեռանում⁵⁹: Նշված գործողություններից մեկի ընթացքում քրդերը հայտնաբերում ու սպանում են կանացի հագուստ հագած մի տղայի⁶⁰:

Նման պայմաններում ոմանք նախընտրում են նորից փախչել բնակավայրից՝ փորձելով անցնել դեպի ռուսական բանակի կողմից վերահսկվող տարածք կամ գնալ քրդաբնակ գյուղեր՝ ապավինելով ծանոթ քրդերի պաշտպանությունը⁶¹:

Ռուսական բանակը, համարելով ուժերը, 1915 թ. հունիսի վերջերին նոր լայնածավալ հարձակողական գործողություն է նախաձեռնում⁶²: Հաղթահարելով թուրքական բանակի դիմադրությունը՝ 1915 թ. հուլիսի 3-ին (հուլիսի 16) ռուսները մտնում են Փրիսու⁶³, որը նրանց վերահսկողության տակ է մտնում մոտ 10 օր: Ռուսական հարձակողական գործողության առավելագույն ծավալման՝ հուլիսի 8-ի (հուլիսի 21) դրությամբ ռուսական բանակին հաջողվում է զբաղեցնել Խլաթի գավառակի գրեթե ամբողջ տարածքը, իսկ առանձին հետախուզական ջոկատներ հասնում են անգամ մինչև Մուշի գավառակի արևելյան մատույցները (Աղբենիս բնակավայր)⁶⁴:

Ռուսական բանակի այս առաջխաղացումը կարճատև բնույթ է կրում: Արդեն հուլիսի 10-ին (հուլիսի 23) սկսում է օսմանյան բանակի հակահարձակողական գործողությունը:

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ Վերջին միջոցին է դիմում նաև Սոկրատ Մկրտչյանի մայրը, որը վերցնելով իր երեխաներին գնում է Զիզրեն գյուղ և հանձնում Սոկրատին քրդական ընտանիքի՝ որպես ծառա:

⁶² Масловский, *Мировая война*, 171: Տե՛ս նաև Арутюнян, *Кавказский фронт*, 178-179:

⁶³ *Մշակ*, 5 հուլիսի 1915, թիվ 144:

⁶⁴ Арутюнян, *Кавказский фронт*, 179: Տե՛ս նաև Մշակ, 11 հուլիսի 1915, թիվ 149:

թուրքական գերագանցող ուժերի ճնշման տակ ռուսական ստորաբաժանումները ստիպված են լինում հետզհետե նահանջել⁶⁵: Նահանջող բանակին են հետևում Փրիսուսի և Խլաթի գավառակի այլ հայկական գյուղերի, ինչպես նաև Բիրթլիսի ու Մուշի բնակչության վերապրած մնացորդները:

Գաղթի ճանապարհի պատկերավոր նկարագրությունը դարձյալ գտնում ենք Սոկրատ Մկրտչյանի հուշերում. «Մենք չէինք քայլում, այլ վազում էինք, որ հասնենք նահանջող բանակին, որին այնքան տառապանքներով, հույսով ու այրվող սրտով սպասել էինք: Բայց նա երազի նման եկավ ու երազի նման էլ փախչում էր մեր խորտակված հայրենիքի հող ու ջրից: Շատերը՝ ծերեր, երեխաներ ու կանայք, չէին կարողանում քայլել: Կրած զրկանքները՝ սովը, ահն ու սարսափը, հյուծել էին նրանց ուժերը: Շատերը ընկնում էին ճանապարհին ու աղիողորմ հայացքով նայում փախչողներին՝ օգնություն աղերսելով նրանցից»⁶⁶:

Ըստ մի վկայության՝ գաղթի ճանապարհին կյանքից զրկվել են մոտ 20 փրիսուսցիներ⁶⁷:

Գ. Փրիսուս գյուղի եղերնի հետևանքները

Արևելյան Հայաստանի տարածք հասած փրիսուսցիները տեղակայվում են Երևանի նահանգի տարբեր գավառների հայաբնակ գյուղերում (Աղախատուն, Փաշաքենը, Բյոսսա Մամեդ, Ղզլթամիր, Եղվարդ և այլն)⁶⁸, ծնողագուրկ մնացած երեխաները՝ սկզբում Էջմիածնի, այնուհետև՝ Մոսկվայի հայկական կոմիտեի կողմից կազմակերպված Աշտարակի

⁶⁵ Арутюнян, Кавказский фронт, 181-182:

⁶⁶ Սոկրատ Մկրտչյանի հուշագրություն, 92-93:

⁶⁷ Ղուտրաղ Ավետիսյանի վկայությունը, *Հայոց ցեղասպանությունը օսմանկյան Թորքիպում*, 57:

⁶⁸ Վերապրած փրիսուսցիների հարցման թերթերի համապատասխան նշումները, *Հայոց ցեղասպանությունը օսմանկյան Թորքիպում*, 47, 48, 50, 51, 53, 54, 57, 60:

որբանոցում: Ըստ 1916 թ. մայիսի 14-ին կազմված Աշտարակի որբանոցի սաների անվանացանկի՝ հաստատությունում պահվում էր 28 փրխուացի որբ⁶⁹, Փրխուացի երկուական երեխայի անուն առկա է նաև Բաշ-գյուղից Ալեքսանդրապոլ տեղափոխված որբերի և Սանահինի որբանոցի ցուցակներում⁷⁰, ընդամենը՝ 32 փրխուացի որբ:

Համաձայն վերապրած Բաղդասար Մելքոնյանից 1916 թ. օգոստոսին ստացված տվյալի՝ բնաջնջումից մազապուրծ է եղել մոտ 800 փրխուացի՝ հավասար թվով կին և տղամարդ⁷¹: Մեկ այլ՝ ավելի մանրամասն և, թերևս, ավելի ճշգրիտ տվյալի համաձայն՝ վերապրածների թիվը 675 էր, որից մոտ 400-ը՝ կին ու աղջիկ, 200-ը՝ մինչև 20 տարեկան երեխաներ և պատանիներ, 75-ը՝ 20 տարեկանից բարձր տղամարդիկ (այդ թվից 60-ը՝ նախքան ցեղասպանությունը Կովկաս գնացած պանդուխտներ և թուրքական բանակից դասալիքներ)⁷²: Վերջին տվյալից կարելի է եզրահանգել, որ եղեռնին զոհ է գնացել փրխուացիների երկու երրորդից ավելին: Խլաթի գավառակի այլ՝ հատկապես գավառակի արևմտյան կողմն ընկած հայաբնակ գյուղերի վերապրածների թիվը ավելի ցածր է՝ տատանվելով նախաեղեռնյան հայ բնակչության մեկ հինգերորդի սահմաններում (2500-3000)՝ ներառյալ նախքան ցեղասպանությունը Ռուսական կայսրության տարածք պանդխտաձևերը⁷³:

1916 թ. փետրվարի 3-ին ռուսական բանակը գրավում է Մուշը, իսկ փետրվարի 17-ին՝ Բիթլիսը. սրանով

⁶⁹ *Համբաւարեր*, 4 դեկտեմբերի 1916, թիվ 49, Յաւելուած, 3:

⁷⁰ *Համբաւարեր*, 30 հոկտեմբերի 1916, թիվ 44, Յաւելուած, 4: *Համբաւարեր*, 7 փետրվարի 1916, թիվ 7, Յաւելուած, 2:

⁷¹ *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թորքիայում*, 54:

⁷² Նույն տեղում, 58:

⁷³ Եզրահանգումն ըստ Խլաթի գավառակից վերապրածների համապատասխան վկայությունների, *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թորքիայում*, 35-61:

Խլաթի գավառակի տարածքը նորից անցնում է ռուսների վերահսկողության տակ⁷⁴: Օգտվելով ընձեռված հնարավորությունից՝ վերապրած փրխուսցի տղամարդկանցից մի քանիսը 1916 թ. մարտին մեկնում են հայրենի բնակավայր՝ այնտեղ տիրող վիճակին ծանոթանալու, վերահաստատվելու հնարավորությունն ուսումնասիրելու նպատակով⁷⁵: Վերադարձածները գտնում են գյուղը բոլորովին ամայի, իսկ շինությունները, բացի եկեղեցու և բողոքական դպրոցի շենքերից, ամբողջովին այրված և ավերված⁷⁶: Ռազմաճակատի գծին մոտ գտնվելու պատճառով ռուսական հրամանատարությունն արգելում է փրխուսցիներին տևական ժամանակով մնալ և վերահաստատվել իրենց հայրենի բնակավայրում: Դեպքերի հետագա ընթացքը՝ 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը, դրան հետևած Կովկասյան ռազմաճակատի կազմալուծումը, 1918 թ. փետրվարին թուրքական հարձակումն ու Արևմտյան Հայաստանի գրավումը, ավարտին է հասցնում վերապրած փրխուսցիների և Խլաթի գավառակի այլ հայկական գյուղերի հայ բնակչության հայրենազրկումը:

Ամփոփելով՝ փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել Փրխուսում և Խլաթի գավառակի այլ հայաբնակ բնակավայրերում Հայոց ցեղասպանության իրականացման ընթացքը և մեխանիզմները.

1. Ինչպես և Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ շրջաններում, Փրխուսում և Խլաթի գավառակի այլ հայաբնակ բնակավայրերում ևս՝ Հայոց ցեղասպանության մեկնարկը տրվել է պատերազմի կարիքների համար հայերի ունեցվածքի բռնագրավումներով, հայերի մոտ պահվող զենք-զինամթերք գտնելու ակնկալիքով

⁷⁴ Арутюнян, *Кавказский фронт*, 237-238; նաև՝ Масловский. *Мировая война*, 309-311.

⁷⁵ Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, 47, 57:

⁷⁶ Նույն տեղում, 54, 57:

խուզարկություններով և դրանք ուղեկցող ճնշումներով, հայ տղամարդկանց զինվորագրմամբ և դրան հաջորդած ոչնչացմամբ:

2. Փրխուսի և Խլաթի գավառակի այլ հայաբնակ բնակավայրերի հայերի բնաջնջումն իրականացվել է տեղում կազմակերպված կոտորածների միջոցով, որի անմիջական իրագործողները հյուսիսից գաղթած քրդերն էին: Ջարդն ուղեկցվել է հայերի ունեցվածքի թալանով: Հայերի մնացորդների բնաջնջման և թալանի գործողությանը միացել է նաև տեղի մուսուլման բնակչությունը: Խլաթի գավառակի հայ արական բնակչության խլյակների ոչնչացման գործողությանն իր մասնակցությունն է բերել թուրքական բանակը:
3. Ըստ բազմաթիվ վկայությունների՝ Խլաթի գավառակի հայերի կոտորածը հրահանգվել էր իշխանությունների կողմից: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ օսմանյան կենտրոնական և տեղական իշխանություններն անգամ նախքան 1915 թ. մայիսի վերջերին տեղահանության մասին օրենքի ընդունումն արդեն իսկ ծրագրավորված իրականացնում էին հատկապես Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական ներկայության լիակատար վերացմանն ուղղված գործողություններ:
4. Խլաթի գավառակի հայերի բնաջնջումն իրականացվել է շարունակական և հետևողական կերպով 1915 թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում: Հայերը մահացել են նաև սովից, հիվանդություններից և այլ զրկանքներից, որոնք ևս պետք է դիտարկել որպես ցեղասպանության իրականացման բաղկացուցիչ մաս:
5. Խլաթի գավառակի հայ բնակչության հազիվ մեկ հինգերորդին է հաջողվել վերապրել կոտորածները (2500-3000), այն էլ շնորհիվ ռուսական զորքերի առաջխաղացման: Խլաթի գավառակի վերապրած հայությունը կորուստներ է ունեցել նաև գաղթի ճանապարհին, ինչպես նաև

Արևելյան Հայաստանի ու Կովկասի տարածքում թեր-
անվաճությունից և հիվանդություններից:

**Հավելված 2. Վերապրած Սոկրատ Մկրտիչյանի՝
Հայաստանի ազգային արխիվում պահվող վկայությունը**

9 օգոստոսի 1916 թ.,
Աշտարակ

Աշտարակի I որբանոցի որբ, Փրխուս գիւղացի (Ախլաթ) Սոկրատ Մկրտիչեանի (15 տարեկան) պատմաձմերը՝ իրենց գիւղին կոտորածին և իր գլխ[ուն եկած] անցքերուն մասին.

Համբարձման տօնին քիւրտերը յարձակեցան մեր գիւղին վրայ (կոտորածին մանրամասնութիւնը նախորդ պատմողի ըսածներուն համաձայն): Հայրս տարած էին Բաղէշ, ուր և սպաննած են հաւանաբար: Մայրս ինձի աղջկան զգեստ հագցուց: Ես, փոքրիկ եղբայրս և քոյրս մօրս հետ միասին փախանք Խիարտանք գիւղը: Հոն կառավարութիւնը մեզ ստիպեց Փրխուս դառնալ՝ դիակները թաղելու, յայտարարելով, թէ՛ այսուհետև խաղաղութիւն է: Բայց երբ Փրխուս հասանք, նոյն կոտորածն սկսեցաւ: Քիւրտերը ինկան կանանց մէջ և բոլորի մազերն ու ստիւնքները կը խուզարկէին՝ տղամարդիկ կանանցմէ զատելու համար: Իմ գլխիս երկար մազերը զիս փրկեցին: Մենք նորէն փախանք ճեզիրէ գիւղը, ուր մնացինք 4 օր: Երբ ռուս բանակը այդ գիւղին վրայ յարձակեցաւ, Աւդլլահ անուն քիւրտ մը զիս գերի տարաւ Չիթաղ գիւղ: Թէև նա իմացաւ որ ես տղայ եմ, բայց ինձայեց ինձի և իր ծառայութեան մէջ պահեց:

Մայրս, չնայած որ ռուսերուն մէջ կը գտնուէր արդէն, իմանալով իմ տեղը, քրոջս հետ մէկտեղ եկաւ զիս գտնելու: Սակայն իմ աղան չթողուց, որ զանոնք մեր ախոռին մէջ առնէի, այնպէս որ խեղճ մայրս ու քոյրս այդ ցուրտերուն պատերու տակ կծկտալով՝ օր ու գիշեր կու լային: Ես իմ հացէն անոնց ալ բաժին կը հանէի թէև, բայց անոնց այդ վիճակը զիս կը կսկծեցնէր սաստիկ: Մայրս շուտով հիւանդացաւ և գիւղի ուրիշ քիւրտի մը ախոռը գնաց՝ պառկելու: Ռուսերը նորէն մօտեցան մեզի: Այս

անգամ ալ քիւրտերը փախսան Կանխաշ գիւղը՝ զիս ալ իրենց հետ տանելով: Մայրս այդ ժամանակ ջերմի մէջ էր և ջուր կը խնդրէր: Քիւրտերը չժողին մօրս այդ ցանկութիւնը կատարէի և ես փոքրիկ քրոջս դրկեցի ջուր տալու: Մայրիկս այդ վիճակին մէջ թողնելով՝ ստիպուած, քիւրտերուն հետ գացի: Կանխաշէն անցանք Սարէ-Գէօլէ, ապա Շքա գիւղերը: Մի օր քիւրտերը զիս դրկեցին ջուր բերելու: Առիթն օգտուելով՝ ես կոտրեցի ջրամանը ու փախայ, անցայ ռուսերուն մէջ: Գացի տեսնելու մայրս, որն արդէն լեզուէ ինկած էր և միայն կը տեսնէր: Ճիշդ այդ օրը քիւրտերը իմ սև բաղդէն նորէն մօտեցան և ռուսերը պատրաստուեցան նահանջել: Ես ուզեցի մօրս քովը նստիլ. սպասել անոր մահուան, որպէսզի թաղէի՝ ապա անցնէի, բայց երբ տեսայ, որ ռուսերը արդէն քաշուեցան գիւղէն, ես ալ ստիպուեցայ մայրս թողուլ այդ վիճակին մէջ ու քրոջս հետ փախչիլ Մանազկերտի կողմ: Անկէ ալ մեզ ուղարկեցին Կովկաս և բերին այստեղի որբանոցը:

Պատմող՝ Սոկրատ Մկրտիչեան

Տե՛ս Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, հեղ. և կազմ.՝ Ա.Վիրաբյան, Գ. Ավագյան, գլխավոր խմբագիր Ա. Վիրաբյան, հատոր II, Բիթլիսի նահանգ (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 50-51 (քննագիր փաստաթուղթը տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 227, ց. 1, գ. 428, թթ. 5 շրջ.-7, քննագիր, ձեռագիր):

«Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններ» մատենաշարով լույս են տեսել հետևյալ գրքերը.

1. Ravished Armenia: The Story of Aurora Mardiganian, the Christian Girl Who Lived Through the Great Massacres. Interpreted by H. L. Gates, with a Foreword by Nora Waln. Yerevan: Armenian Genocide Museum-Institute Foundation, 2020, XII+204 pages, 26 Ill. Preface by Lousine Abrahamyan, references by Lousine Abrahamyan, Robert Tatoyan. Memoires of Survivors of the Armenian Genocide, 1.

2. L'Arménie ravagée; L'histoire d'Aurore Mardiganian, jeune chrétienne rescapée des grands massacres. Transcrit par H. L. Gates (Comité américain de secours aux Arméniens et aux Syriens). Préfacé par Nora Waln, New York, 1918. Traduit de l'anglais par Elodie Denis, Thomas Dilan et Armen Baghdasaryan. Introduction par Thomas Dilan. Avant-propos par Loussiné Abrahamian. Références par Elodie Denis, Thomas Dilan, Loussiné Abrahamian et Robert Tatoïan. Erevan : Fondation Musée-institut du génocide des Arméniens, 2020, XVI+216 pages, 26 Ill. Mémoires des survivants du génocide des Arméniens, 2.

3. Հոշոտված Հայաստան. Ավրորա Մարդիգանյանի պատմությունը/ Պատմությունը գրի է առել Հարվի Լ. Գեյթսը, նախաբանը՝ Նորա Վալնի; Առաջաբանը՝ Լուսինե Աբրահամյանի, ծանոթագրությունները՝ Լուսինե Աբրահամյանի և Ռոբերտ Թաթոյանի. - Եր.: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, 2020. - XXX+234 էջ, 26 նկ. — («Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններ», 3):

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՐԱՊՐԱՇՆԵՐԻ
ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ», 4

ԱՐԱՄ ՄԱՆԹԱՇՅԱՆ
ԱՐԱՄԸ ՉԷՐ ԿԱՐՈՂ ՍԵՅՏՈ ԼԻՆԵԼ

Խմբագիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ
ՌԵԳԻՆԱ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՈՒՇԵՐ

Խմբագիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ
ՌՈՒԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Բրիստինե Վարդանյանի
Կազմի ձևավորումը՝ Բրիստինե Վարդանյանի

Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը օֆսեթ:
Ծավալը՝ 11.5 տպագր. մամուլ:

Հասցե,՝ ՀՀ, 0028, Երևան, Կիևյան 18/6
Հեռ.՝ +374 43 10 70 90
Էլ. հասցե՝ haykarli@mail.ru

[2000 ԴԲ]

ԳԱՄ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0645159

107022

ISBN 978-9939-822-87-7



9 789939 822877



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ARMENIAN GENOCIDE MUSEUM-INSTITUTE FOUNDATION